ՔԱՂԱՔԱՑԻՐԻ ՀԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920 – 1970


ՀԱՍԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

Академия наук армянской ССР
институт истории

К. С. КОЗМОЯН

РАЗВИТИЕ ГОРОДОВ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

1920 – 1970

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН – 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
պատմության ինստիտուտ

Կ. Ս. ԿՈՋՄՈՅԱՆ

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920 – 1970



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ – 1977

9 (С 43)
Կ 63

Աշխատությունը նվիրված է Հանրապետության քաղաքների պատմությանը: Մեկնաբանված են սոցիալիստական քաղաքների զարգացման նախադրյալներն ու օրինաչափությունները, նրանց դերը երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, հայ ժողովրդի սոցիալական-տնտեսական կյանքի առաջընթացի ու վերածննդի գործում:

Աշխատությունում օգտագործված հարուստ փաստական նյութերով լուսաբանված են Հանրապետության քաղաքների ինդուստրացման՝ բազմաճյուղ արդյունաբերության ստեղծման ու զարգացման, նոր քաղաքների առաջացման ու կառուցապատման, ինչպես նաև քաղաքային բնակչության աճի և զբաղմունքի, տնտեսության, կուլտուրայի, լուսավորության, առողջապահության և նյութական բարեկեցության հարցերը:

Պատասխանատու խմբագիր՝
Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Կ $\frac{10601}{703\ (02)-77}$ 31—77

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքները երկրի սոցիալ-տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքի, արտադրողական ուժերի կազմակերպման ու զարգացման կենտրոններն են։ Նրանք խոշոր դեր են կատարում սոցիալական հարաբերությունների զարգացման գործում և երկրի տնտեսական կյանքում։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեր երկրում քաղաքաշինությունը ստացավ համաժողովրդական ուղղություն և համապետական նշանակություն։ Դրա համար էլ քաղաքների պատմության ուսումնասիրությունը կազմում է պատմագրության կարևորագույն հարցերից մեկը։

Ժամանակակից քաղաքների առաջացման ու զարգացման գլխավոր գործոնը տնտեսությունն է, ամենից առաջ արդյունաբերությունը, որը և ապահովում է քաղաքային բնակչության զբաղվածությունը։ Մեր երկրում արդյունաբերության տեղաբաշխման ու նրա պլանային զարգացման շնորհիվ հիմնովին փոխվեցին հին քաղաքները և առաջացան նորերը, որոնք ապահովում են բնակչության տնտեսական ու կուլտուրական պահանջմունքները։

Սոցիալիստական նոր հասարակարգի կառուցման առաջին նախապայմանը հանդիսացավ աշխատանքի արտադրողականության բարձրացումը։ Վ. Ի. Լենինը, մեծ ուշադրություն դարձնելով աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա, նշել է, որ «...աշխատանքի արտադրողականությունը, վերջին հաշվով, ամենակարևորը, ամենագլխավորն է նոր հասարակարգի հաղթանակի համար»[1]։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 523։

Կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը արտադրությունն ավելի մոտեցրին հումքի և էներգիայի աղբյուրներին, ինչպես նաև սպառման շրջաններին, հաշվի առնելով ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր ճյուղի առանձնահատկությունները։

Սոցիալիստական արտադրության ճիշտ տեղաբաշխման, մեր երկրի յուրաքանչյուր տնտեսական շրջանի տնտեսության արդյունավետ մասնագիտացման և կոմպլեքսային զարգացման հետևանքով ամեն մի տնտեսական շրջանում առաջացան արդյունաբերության մեկ կամ մի քանի առաջատար ճյուղեր։ Մեր երկրում տնտեսության կոմպլեքսային զարգացման շնորհիվ արտադրության բոլոր հիմնական ճյուղերը բազմակողմանի և փոխադարձ կապերի մեջ դնելով, լայն հնարավորություններ ստեղծեցին բնական հարստություններն ավելի արդյունավետ օգտագործելու, բնակչության պահանջմունքներն ավելի լավ բավարարելու, հումքի, վառելիքի և պատրաստի արտադրանքի փոխադրումների վրա կատարվող ծախսերը կրճատելու համար։ Երկրամասերում գտնվող հումքի հարուստ պաշարները հաճախ չէին օգտագործվում, ասպա սովետական իշխանության օրոք դրանք օգտագործվեցին։ Դրա համար մեր երկրի ազգային ծայրամասերում հումքի անսպառ պաշարների բազայի վրա կառուցվեցին բազմաթիվ գործարաններ ու ֆաբրիկաններ, հանքահորեր ու հիդրոկայաններ, ջերմաէլեկտրակայաններ։ Այդ կառույցների շնորհիվ երկրում բուռն թափով զարգացավ ժողովրդական տնտեսությունը։ Երկրում առաջացան սոցիալիստական նոր քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ։ Դրա լավագույն օրինակներից է Սովետական Հայաստանը, ուր զարգացան արդյունաբերության միանգամայն նոր ճյուղեր՝ էներգետիկ, քիմիական, մեքենաշինական, էլեկտրատեխնիկական, շինանյութերի և այլն։

Եթե մինչև Հայրենական մեծ պատերազմը Հանրապետության արդյունաբերական կենտրոններն էին Երևանն ու

Լենինականը, Կիրովականը, Ղափանն ու Ալավերդին, ապա հետպատերազմյան տարիներին Հայաստանում ստեղծվեցին արդյունաբերական նոր կենտրոններ, որոնց շնորհիվ առաջացան սոցիալիստական նոր քաղաքներ՝ Հոկտեմբերյանը, Քաջարանը, Հրազդանը, Չարենցավանը, Աբովյանը, Սևանը, Արթիկը, Ջերմուկը, Սպիտակը, Իջևանը և այլն։ Արդյունաբերության զարգացումը փոխեց Սովետական Հայաստանի ժողովրդական անտեսության կառուցվածքը։ Հանրապետության ժողովրդական անտեսության համախառն արտադրանքի հասարակական ամբողջական արդյունքի մեջ արդյունաբերության բաժինը 1970 թ. կազմից 70 տոկոս։ Հայաստանում գործող ավելի քան 700 արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը սպառվում է ոչ միայն մեր երկրում, այլև արտահանվում է արտասահմանյան մի քանի տասնյակ երկրներ։

Մեր երկրի բանվոր դասակարգի պատմությունն ստեղծելու համար կարևոր է երկրի գործարանների ու ֆաբրիկաների, քաղաքների ու քաղաքատիպ ավանների պատմության ուսումնասիրությունը։

Բարձր գնահատելով մեր երկրի բանվոր դասակարգի հերոսական աշխատանքը, դեռևս 1931 թ. հոկտեմբերի 10-ին Համկ(բ)Կ Կենտկոմը հատուկ որոշում ընդունեց գործարանների պատմության մատենաշարի հրատարակության մասին։ Դրա նախաձեռնությունը պատկանում է պրոլետարական մեծ գրող Մ. Գորկուն։ Այդ որոշման մեջ ցույց են արված մատենաշարի լույս ընծայման անհրաժեշտությունը, նպատակները ու խնդիրները։ Այն գործի վերածելու համար Մոսկվայում և Լենինգրադում ստեղծվեցին ստեղծագործական կոլեկտիվներ, որոնցում ընդգրկվեցին հեղափոխության վետերաններ, բանվոր-նորարարներ, ինժեներատեխնիկական աշխատողներ։ Այդ կոլեկտիվների աշխատանքները գլխավորում էին անվանի գրողները։ Կարճ ժամանակաշրջանում լույս տեսան գործարանների պատմությանը նվիրված առաջին աշխատությունները։

Քաղաքների ու գյուղերի, գործարանների ու ֆաբրիկա-

ների, սովխոզների ու կոլտնտեսությունների պատմությունը, որը երկրի բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության պատմությունն է, արժանացել է սովետական պատմագրության ուշադրությանը: Հատկապես վերջին երկու տասնամյակներում այդ թեմատիկային նվիրված բազմաթիվ աշխատություններ են լույս տեսել:

Առաջինը Ուկրաինական ՍՍՀ-ն է, որ հրատարակեց 26 տավարածավալ հատորներ՝ նվիրված հանրապետության 380 քաղաքների, շուրջ 10 հազար բնակավայրերի, գործարանների ու ֆաբրիկաների, կոլտնտեսությունների ու սովխոզների պատմությանը: Հատկապես ուսանելի են Մոսկվայի ու Լենինգրադի, Կիևի, Մինսկի, Բաքվի, Բրեստի, Աշխաբադի, Ալմա-Աթայի, Դուշամբեի, ինչպես նաև Օդեսայի, Սևաստոպոլի, Խարկովի, Սմոլենսկի, Կույբիշևի, Սարատովի, Վոլգոգրադի և այլ քաղաքների պատմությանը նվիրված աշխատությունները, որոնք ուշադրություն են հրավիրել սույն աշխատությունը գրելիս:

* * *

Հայաստանի նախասովետական շրջանի քաղաքների պատմությամբ են զբաղվել վաստակաշատ դիտնականներ Հ. Մանանդյանը, Ն. Մառը, Հ. Օրբելին, Լեոն, Բ. Պիոտրովսկին, Ս. Երեմյանը, Ս. Տեր-Ավետիսյանը, Բ. Առաքելյանը, Գ. Սարգսյանը, Ճարտարապետ Վ. Հարությունյանը և ուրիշներ: Նրանք հանգամանորեն մեկնաբանել են այդ քաղաքների դերը երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, խոշոր նշանակություն արտաքին աշխարհի հետ ունեցած կապերի և սոցիալական հարաբերությունների զարգացման գործում:

Սովետական Հայաստանի պատմաբանները զգալի աշխատանք են կատարել նաև Հայաստանի սոցիալիստական քաղաքների, հատկապես մայրաքաղաք Երևանի պատմության ուսումնասիրության գործում:

Հայաստանի քաղաքների պատմությանը նվիրված աշխատությունները ուսումնասիրել ենք դրանք բաժանելով

երեք խմբի։ Առաջին խմբում ընդգրկված են պատմագիտական, երկրորդում՝ քաղաքների ճարտարապետության պատմությանը և քաղաքաշինությանը նվիրված ուսումնասիրությունները, իսկ երրորդում՝ այլ բնույթի աշխատությունները։ Այդ աշխատություններին անդրադարձել ենք ժամանակագրական կարգով։

Դեռևս 1931 թ. լույս տեսավ բանասեր Երվանդ Շահազիզի «Հին Երևանը»[2] աշխատությունը։ Ե. Շահազիզը լավատեղյակ լինելով Երևանի տնտեսությանը, քաղաքական ու մշակութային կյանքին և բնակչության կենցաղին, գրել է փաստական նյութերով հարուստ մի աշխատություն։ Սակայն Ե. Շահազիզը, անծանոթ լինելով մարքսիստական պատմագրության մեթոդոլոգիային, չի կարողացել վերլուծել իր ձեռքի տակ եղած հարուստ նյութերը, անել եզրակացություններ և ընդհանրացումներ։ Նա իր աշխատության մեջ հարցերը քննարկել է «ազգերի» շահերի տեսակետից, դասակարգային պայքար չի տեսել։ Հեղինակն ինքը իրավացիորեն ասում է. «Համենայն դեպս ապագա պատմագրողն ունենալով յուր ձեռքին մեր այս աշխատանքը, դրա մեջ կգտնի հավաքված, ստուգված և որոշ սիստեմի վերածված բազմաթիվ աղբյուրներ, մի բան, որ շատ ու շատ կդյուրացնի նրա կատարելիքը»[3]։

Երևանի նախասովետական շրջանի պատմությանն է նվիրված Թադևոս Հակոբյանի արժեքավոր մենագրությունը, բաղկացած չորս ստվար հատորներից[4]։

Աշխատության հեղինակը երկար տարիներ քրտնաջան կերպով հետազոտելով Երևան քաղաքի մասին եղած պատմական բազմաթիվ աղբյուրներ, հավաքելով արխիվային հարուստ նյութեր, գրել է մի արժեքավոր աշխատություն։

---

2 Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931։

3 Նույն տեղում, էջ 5—6։

4 Թ. Ս. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879), Երևան, 1959, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), Երևան, 1963, Երևանի պատմությունը (հնագույն ժամանակներից մինչև 1500 թ.), Երևան, 1969, Երևանի պատմությունը (1500—1800), Երևան, 1971։

Այս բազմահատոր աշխատության մեջ ընթերցողը կգտնի Երևանի տնտեսությանը, քաղաքաշինությանը, մշակույթին ու կենցաղին, հասարակական ու քաղաքային կյանքին նվիրված շատ ու շատ հետաքրքիր նյութեր ու մեկնաբանություններ։

Երևանի նորագույն պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ են լույս տեսել։ Դրանց մեջ ամենածավալունը և արժեքավորը, որը գրված է արխիվային փաստական հարուստ նյութի հիման վրա և գիտական բարձր մակարդակով, Աբել Սիմոնյանի «Երևան»[5] մենագրությունն է, որը Ռ. Հակոբյանի աշխատության օրգանական շարունակությունն է կազմում։ Այդ աշխատությունը նվիրված է մայրաքաղաքի սովետական շրջանի պատմությանը։ Նրանում պատշաճ տեղ է տրված Երևանի բնական պայմանների նկարագրությանը, քաղաքի պատմական անցյալին, հեղափոխական շարժումներին, սովետական կարգերի հաստատմանը, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի վերականգնմանն ու զարգացմանը և, հատկապես, քաղաքաշինությանը։

Ա. Սիմոնյանի աշխատության մեջ բացահայտված են սոցիալիստական Երևանի զարգացման նախադրյալներն ու օրինաչափությունները, տնտեսության զարգացումը։ Հեղինակը լուսաբանել է Երևանի դերը որպես Հանրապետության խոշորագույն արդյունաբերական, վարչական, քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական կենտրոնի, Հանրապետության ժողովրդական տնտեսության անբակտելի մասի։ Ա. Սիմոնյանը հաջողությամբ է պարզաբանել նաև մայրաքաղաքի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ազգային, սոցիալական և պետական վերածննդի գործում։ Այս աշխատության մեջ հաջողությամբ են լուսաբանված հատկապես, գիտության, գրականության ու արվեստի նվաճումները սովետական իշխանության տարիներին։ Համեմատաբար քիչ են լուսաբանված արդյունաբերության տարբեր

5 *А. И. Симонян,* Ереван. Очерк истории экономики и культуры города Еревана, Ереван, 1965, նույնի, *Երևան, 1920—1970, Երևան, 1968։*

ճյուղերի, բնակարանային շինարարության և կոմունալ տնտեսության զարգացման պատմությունը, ինչպես նաև քաղաքի կառուցապատման ու բարեկարգման հարցերը։

1968 թ. լույս տեսավ Թ. Հակոբյանի և Ա. Սիմոնյանի համատեղ հեղինակությամբ «Երևան»[6] աշխատությունը՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։ Այս աշխատությունը գրված է հեղինակների նախորդ տարիների գիտական ուսումնասիրությունների հիման վրա։

Ա. Հարությունյանը «Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին»[7] աշխատության մեջ հանրագումարի է բերել 1941—1945 թթ. մայրաքաղաքի աշխատավորների հերոսական աշխատանքը թիկունքում և Երևանի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին։

Քաղաքների պատմության ուսումնասիրության գործում զգալի աշխատանք է կատարել նաև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության 1961 թ. նոյեմբերի 15-ի որոշմամբ ստեղծվեց Սովետական Հայաստանի քաղաքների ու գործարանների պատմության մատենաշար։ Այդ մատենաշարով գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել տողերիս հեղինակի աշխատությունները[8]։ Վերոհիշյալ աշխատություններում համառոտ կերպով տրված է Հանրապետության մի շարք քաղաքների նախասովետական և սովետական շրջանի պատմությունը, լուսաբանված է, թե ինչպես կոմունիստական կուսակցության Լենինյան ազգային քաղաքականության

---

6 Թ. Հակոբյան, Ա. Սիմոնյան, Երևան 2750 (782 մ. թ. ա.—1968 թ.), Երևան, 1968։

7 Ա. Լ. Հարությունյան, Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, 1941—1945 թթ., Երևան, 1958։

8 Կ. Ս. Կոզմոյան, Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Երևան, 1956, Լենինական, Երևան, 1957, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի 25 տարին, Երևան, 1958, Կիրովական, Երևան, 1960, Ալավերդի, Երևան 1966, Հոկտեմբերյան, Երևան, 1971։

կենսագործման շնորհիվ Սովետական Հայաստանում զարգացել է ժողովրդական տնտեսությունը, հատկապես արդյունաբերությունը, որի անմիջական ծնունդն են հանրապետության սոցիալիստական քաղաքները։ Հիմնականում արխիվային նյութերով ցույց է տրված արդյունաբերության ու տրանսպորտի զարգացումը, քաղաքների աճող դերը սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման, քաղաքաշինության, աշխատավորության կուլտուր-կենցաղային մակարդակի անշեղ բարձրացման, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում։

* * *

Բացի պատմաբաններից, Սովետական Հայաստանի քաղաքաշինության պատմության հարցերով զբաղվել են նաև ճարտարապետները, որոնք լույս են ընծայել մի շարք աշխատություններ՝ նվիրված Երևանի քաղաքաշինության, հատկապես ճարտարապետության պատմությանը։ Մոսկվայում հրատարակվել է Լ. Իոֆայի և Ս. Դուլյանի «Երևանը Հայկական ՍՍՀ մայրաքաղաք»[9] վերնագրով գրքույկը։ 1948 և 1960 թթ. նույնպես Մոսկվայում հրատարակվեցին Յու. Յարալովի «Երևան»[10] վերնագրով պատկերազարդ երկու գրքույկները։ Այս երեք գրքույկներն էլ համառոտակի ակնարկներ են՝ նվիրված սովետական իշխանության տարիներին մայրաքաղաքի ճարտարապետության զարգացմանն ու կառուցապատմանը։

Երևանի 2750-ամյակի առթիվ Մոսկվայում լույս տեսավ «Երևան»[11] աշխատությունը՝ նվիրված Երևանի սոցիալիստական վերակառուցման, բնակարանային շինարարության, ճարտարապետության, քաղաքի անսամբլի ու կանաշապատ տարածության ձևավորման ու զարգացման պատ-

9 *Л. Е. Иофа* и *С. М. Дулян*, Ереван—столица Армянской ССР, М., 1950.

10 *Ю. Яралов*, Ереван, М., 1948, *его же*, Ереван, М., 1960.

11 *В. М. Арутюнян, М. М. Асратян, А. А. Меликян*, Ереван, М., 1968.

մությանը: Հեղինակները (ճարտարապետներ՝ Վ. Հարությունյան, Մ. Հասրաթյան և Ա. Մելիքյան) նկարներով, մակետներով, հատակագծերով, սխեմաներով և բազմաթիվ այլ նյութերով ընթերցողին են ներկայացրել Սովետական Հայաստանի քաղաքաշինության, մասնավորապես ճարտարապետության, նվաճումները: Հեղինակները միութենական քաղաքաշինության ֆոնի վրա ցույց են տալիս Երևանի աճն ու բարգավաճումը:

Երևանի 2750-ամյակի առթիվ լույս է ընծայվել ՀՍՍՀ վաստակավոր ճարտարապետ Հ. Խաբեկյանի «Էրեբունի-Երևան»[12] գրքույկը, ուր հեղինակը պատմական համառոտ ակնարկով անդրադառնում է քաղաքի անցյալին և ապա լուսաբանում քաղաքաշինության, Երևանի կառուցապատման հարցերը, նշում հատկապես ճարտարապետության բնագավառում ձեռք բերված նվաճումները:

Մեր ուսումնասիրած աշխատությունների երրորդ խմբի մեջ մտնում են այլ բնույթի աշխատություններ: Դրանցից առաջինը Ա. Երզնկյանի գրքույկն է[13], որտեղ հեղինակը վերլուծելով քաղաքային տնտեսության վիճակը, վեր է հանում մայրաքաղաքի սոցիալիստական վերակառուցման հարցերը և զարգացման հեռանկարները:

1960 թ. լույս տեսավ Ստ. Կուրտիկյանի «Երևան»[14] աշխատությունը: Այս պատկերազարդ աշխատության էջերում պատմական շատ համառոտակի ակնարկ է կատարված Երևանի հեռավոր ու մոտիկ անցյալի պատմությունից: Աշխատությունը հիմնականում նվիրված է մայրաքաղաքի գիտության ու մշակութային նվաճումներին: Հանգամանորեն ներկայացված են գրադարանները, թանգարանները, թատրոնները, գիտական և երաժշտական օջախները և մշտական գործող ցուցահանդեսները, բուսաբանական ու կենդանաբանական այգիները և քաղաքի ճարտարապետությունը:

12 Հ. Խաբեկյան, *Էրեբունի—Երևան*, Երևան, 1968:

13 Ա. Երզնկյան, *Երևանի զարգացման հեռանկարները և մեր խնդիրները*, Երևան, 1932:

14 Ստ. Կուրտիկյան, *Երևան*, Երևան, 1969:

Ստ. Կուրտիկյանի «Երևան» աշխատությունը գրված է դիւղեցիկ լեզվով և կարդացվում է մեծ բավականությամբ։ Այն հատկապես լավ ուղեցույց է սիյուռքահայ զբոսաշրջիկների համար։

Երևանի 2750-ամյակին է նվիրված Արտավազդ Խաչիկյանի (հեղինակ-կազմող) «Երևանի հոբելյանը»[15] գիրքը։ Ա. Խաչիկյանը շատ շնորհակալ գործ է կատարել, իր գրքի մեջ զետեղելով տոնակատարությանը մասնակից եղբայրական հանրապետությունների մայրաքաղաքների պատվիրակների ելույթները, տարբեր ժամանակներում Երևան այցելած արտասահմանյան հյուրերի ասույթները, Մոսկվայում և աշխարհի տարբեր ծայրամասերում կայացած տոնակատարությունների նյութերը, ինչպես նաև էրեբունի-Երևան տարեգրության էջերը։

Հայկական ՍՍՀ քաղաքական և դիտական դիակիցների տարածման ընկերության վարչությունը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակի առթիվ հրատարակել է շուրջ երկու տասնյակ անուն գրքույկներ[16]։ Դրանց հեղինակները մեծ մասամբ կուսակցության շրջում-

---

15 «Երևանի հոբելյանը», Քաղաքի 2750-ամյակի հոբելյանական տարեգրություն. Երևան, 1972։

16 Հ. Եկիլիկյան, Արթիկը 40 տարում, Երևան, 1960, Փր. Պետրոսյան, Քարանձավից դեպի լույս, Երևան, 1966, Գ. Նախկյան, Ալավերդին Մեծ Հոկտեմբերի ծնունդն է, Երևան, 1967, Ս. Հարությունյան, Վերածնված Վայոց ձորը, Երևան, 1967, Կ. Մովսիսյան, Ախուրյանը երեկ, այսօր և վաղը, Երևան, 1967. Պ. Սաֆյան, Բ. Դասպարյան, Սիսիանի այգեպարը, Երևան, 1967, Հ. Ավագյան, Մ. Սաղումյան, Գեղատեսիլ Շամշադինի բարգավաճումը, Երևան, 1967, Օ. Սարգսյան, Դիլիջան, Երևան, 1967, Լ. Հովսեփյան, Եղեգնաձոր, Երևան, 1967, Վ. Նուրյան, Շիրակի հովտի գեղեցկուհին, Երևան, 1967, Հ. Թարչումանյան, Կիրովական, Երևան, 1968, Ս. Պողոսյան, Խոպանը այգեստան է դարձել, Երևան, 1969, Լ. Ղարիբջանյան, Երևան, Երևան, 1968, Ա. Կարապետյան, Ղափան—Քաջարան, Երևան, 1969, Ս. Հակոբյան, Հ. Դանիելյան, Ձեզ կանչում է Սևանը, Երևան, 1969, Վ. Թովմասյան, Մեծ Հոկտեմբերի ծնունդը, Երևան, 1970, Մ. Պողոսյան, Հրազդանի այգաբացը, Երևան, 1970, Հ. Մակարյան, Խավարից դեպի լույս, Երևան, 1970։

քաղհմների քարտուղարներ և մասամբ գյուղական մտավորականության ներկայացուցիչներ են։ Այդ գրքույկները գերազանցապես նվիրված են քաղաքների, շրջանային կենտրոնների և շրջանների ձեռք բերած նվաճումների լուսաբանմանը և չեն անդրադառնում քաղաքների պատմության ու քաղաքաշինության հարցերին։

Երևանի մասին կան նաև վիճակագրական աշխատություններ։ Դրանցից առաջինը անտիսագետ Ս. Հակոբջանյանի «Երևան»[17] աշխատությունն է, որը նվիրված է 1920—1930-ական թվականների Երևանի արդյունաբերության, կոմունալ-բնակարանային տնտեսության և քաղաքային կուլտուրայի նվաճումներին։ Այս աշխատության մեջ մեծ մասամբ վիճակագրական տվյալների ամփոփումներ են, որոնք ցույց են տալիս սովետական իշխանության գոյության 20 տարիներին մայրաքաղաքի բարգավաճումը։ Վիճակագրական աշխատություններ են «Երևանը 40 տարում թվերով»[18], «Երևանը 1958—1963 թվականներին»[19], «Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը և Երևան քաղաքը»[20]։ Դրանցում ցույց են տրված Երևանի արդյունաբերության տարբեր ճյուղերի, տրանսպորտի, կապիտալ շինարարության, ժողովրդական կրթության, գիտության, արվեստի և աշխատավորության նյութական բարեկեցության բնագավառներում ձեռք բերված նվաճումները։

Երևանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև բնագետները[21], բուսաբանները[22], երկրաբանները,

---

17 Ս. Հակոբջանյան, *Երևան, Երևան, 1940։*

18 «Ереван за 40 лет в цифрах», под редакцией *Ц. Магтесяна*, Ереван, 1960.

19 «Ереван за 1958—1963 годы» (статистический сборник), Ереван, 1965.

20 *«Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակը և Երևան քաղաքը», Երևան, 1967։*

21 *А. Г. Нерсисян*, Климат города Еревана, Л., 1950.

22 Ա. Լ. Թախտաջյան և Ա. Ա. Ֆյոդորով, *Երևանի ֆլորան, Երևան, 1946։*

տնտեսագետները, լրագրողները[23] և այլ մասնագետներ[24]։ Նրանք կազմել են մայրաքաղաքի բնությանը և ֆլորային վերաբերող աշխատություններ, զբոսաշրջիկների համար ուղեցույցներ, հատակագծեր, վիճակագրական գրքույկներ, տեսարժան վայրերի պատկերազարդ գրքեր, գիտա-մասսայական տարբեր բնույթի գրքույկներ և այլն։

Ինչպես տեսանք, Հանրապետության քաղաքների պատմության ուսումնասիրությունը պատշաճ տեղ ունի սովետա-հայ պատմագրության էջերում, բայց լույս տեսած աշխատությունների մեծ մասը նվիրված է Երևանին և մասամբ էլ Լենինականի, Կիրովականի, Ալավերդի ու Հոկտեմբերյանի քաղաքներին։ Հանրապետության մյուս քաղաքների ու քաղաքատիպ ավանների ամբողջական պատմությունը չի գրվել։ Այդ բացը մասամբ լրացնելու նպատակով էլ մենք ձեռնարկեցինք գրելու Հանրապետության քաղաքների զարգացման պատմությանը նվիրված սույն ուսումնասիրությունը։ Մեր աշխատության մեջ փորձել ենք բացահայտել սոցիալիստական քաղաքների զարգացման նախադրյալներն ու օրինաչափությունները, դրանց դերը Հանրապետության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում և հայ ժողովրդի վերածննդի գործում։

Մայրաքաղաք Երևանի (իբրև վարչական, քաղաքական, արդյունաբերական, մշակութային կենտրոնի) ֆոնի վրա լուսաբանել ենք Հանրապետության հին քաղաքների խոշորացման և նոր քաղաքների առաջացման ու զարգացման հարցերը։

Սույն աշխատության սկզբնաղբյուրներն են եղել ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների, կուսակցության Համագումարների և սովետական կառավարության որոշումները, կուսակցական և պետական գործիչների զեկուցումները, Հայկական ՍՍՀ

---

23 Ստ. Կուրտիկյան, *Երևան, Երևան, 1952*, Ն. Հարությունյան, *Երևան—2750, Երևան, 1968*։


24 *А. Агаян*, Ереван, достопримечательные места, справочник-путеводитель, Ереван, 1957.

Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի, Հանրապետության մինիստրությունների և պետական կոմիտեների, աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետների որոշ գործադիր կոմիտեների, Հայաստանի ճարտարապետների միության, պետական նախագծային ինստիտուտների արխիվները։

Օգտագործել ենք հանրապետական, մասնավորապես քաղաքային պարբերական մամուլը, թեմային առնչվող մասնագիտական ամսագրերը, հանրապետության արդյունաբերությանն ու մշակույթին, ինչպես նաև Միության տարբեր քաղաքների պատմությանը նվիրված գրականությունը։

Հայերեն օգտագործել ենք նաև Միության, հանրապետության կենտրոնական և Երևանի քաղաքային վիճակագրական վարչության հրատարակած ժողովածուները։

Ա II
60093



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

XIX դ. վերջերին և XX դ. սկզբին Արևելյան Հայաստանը (Սովետական Հայաստանի ներկա տարածքում) ուներ 4 քաղաք՝ Երևանը, Ալեքսանդրապոլը (Լենինական), Նոր Բայազետը (Կամո) և Գորիսը։ Չնայած այդ տարիներին Ալավերդին և Ղափանը արդյունաբերական, Մեծ Զարաքիլիսան (Կիրովական), Դիլիջանը ամառանոցային, իսկ էջմիածինը մշակութային կենտրոններ էին, սակայն դրանք իրավականորեն քաղաքներ չէին կոչվում։

Երևանն այդ ժամանակ գավառական հետամնաց քաղաք էր և ուներ շուրջ 30 հազար բնակիչ։ Տները հողաշեն էին, փողոցները նեղ ու անբարեկարգ։ Այդ նույն ժամանակաշրջանում, երկաթուղագծի կառուցումից հետո, Ալեքսանդրապոլի ռազմա-սարատեգիական նշանակությունը մեծացավ։ Այն դարձավ Կարսի, Երևանի, Ջուլֆայի, Թիֆլիսի միջև կատարվող առևտրի հանդուցակետը։ Դա նպաստեց քաղաքի զարգացմանն ու բնակչության ավելացմանը։ Ալեքսանդրապոլն այդ տարիներին Անդրկովկասի արհեստավորական խոշորագույն կենտրոններից էր։ Նոր Բայազետն ու Գորիսը չունենալով արտադրական կարևոր ձեռնարկություններ և գտնվելով երկաթուղագծից հեռու՝ հիմնականում ծայրամասային առևտրական կենտրոններ էին։

Երևանը[1] *գտնվում է ծովի մակերևույթից շուրջ հազար*

1 *Աշխատության այս գլխում օգտագործել ենք Երվանդ Շահազիզի «Հին Երևանը» աշխատությունը։*

մեծ բարձրություն ունեցող մի գոգավոր տափարակի վրա, որի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան կողմերում գտնվում են բարձրություններ, իսկ հարավային և հարավ-արևմտյան կողմերում այդ տափարակը հետզհետե ցածրանալով լայնանում է՝ խառնվելով Արարատյան դաշտավայրին, որի միջով հոսում է Հրազդանը: Երևանի կլիման մոռանը շատ շոգ է, ձմռանը՝ ցուրտ: Երևանը համարյա գարուն չունի, բայց աշունը շատ երկար է, բարեխառն:

XX դ. սկզբներին Երևան քաղաքի բռնած տարածությունն իր արվարձաններով, այգիներով, բանջարանոցներով, մշակելի հողերով, խոտհարքներով և արոտավայրերով կազմում էր 9450 դեսյատին[2]: Այդ հողերը հյուսիսից և արևելքից հասնում էին Քանաքեռին, Ավան և Ջրվեժ գյուղերի հողերին, արևմուտքից՝ Նորագավիթ, Վերին և Ներքին Շենգավիթներ, Ջաֆարապատ և Փարաքար գյուղերի հողերին, իսկ հարավից՝ «Ղզլար» հողամասին:

Քաղաքի մերձակայքում ընկած էին բլուրներ ու բլրակներ, որոնք պատմական նշանակություն ունեն. «Մուխանաթ թեփե», «Հերակլյան բլուր», «Կոզեռ» և այլն:

Հրազդան և Գետառ գետերից հանված բազմաթիվ մեծ ու փոքր առուները ճյուղավորվելով քաղաքի մեջ, անցնում էին փողոցներով ու բակերով, առատությամբ ոռոգելով բազմաթիվ այգիներ ու պարտեզներ:

Երևանը շատ հին քաղաք է: Այդ են վկայում գտնված արձանագրությունները: Արինբերդում գտնված քարե մի սալի վրա կա մ. թ. ա. 782 թ. ուրարտական սեպագիր արձանագրություն, ըստ որի «խալդ աստծո մեծությամբ Մենուայի որդի Արգիշտին այս հոյակապ ամրոցը կառուցեց և անվանեց էրեբունի քաղաք ի փառս Բիայնայի, ի սարսափ թշնամական երկրների»[3]:

Ինչպես նկատում ենք, էրեբունի-Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է, Հռոմի ու Բաբելոնի հասա-

2 Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), էջ 280:

3 Մ. Խորայելյան, էրեբունի բերդաքաղաքի պատմությունը, Երևան, 1971, էջ 5 և 9:

կակիցը։ Երևանն ունեցել է ծաղկման և անկման ժամանակաշրջաններ, սակայն կյանքը այստեղ երբեք չի դադարել։

XVI դ. Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի սահմանագլխին գտնվող Երևանը դառնում է ռազմական խոշոր նշանակություն ունեցող քաղաք։

1735 թ. Երևանը Պարսկաստանի կազմում դառնում է Երևանի խանության կենտրոն, իսկ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո սկզբում Հայկական մարզի, ապա՝ Երևանի նահանգի կենտրոն։ Չնայած վարչական կենտրոն լինելուն, Երևանը մնում է իբրև խուլ, գավառական հետամնաց մի քաղաք։ Ականատեսը հետևյալ կերպ է նկարագրում Երևանը. «Կավե տներ, կավե տափակ կտուրներով, կավե փողոցներով, կավե հրապարակներով, կավե շրջապատ—ամեն ինչ կավից ու կավից»[4]։

Ի. Շոպենի վկայությամբ Երևանը վերջին սարդարի ժամանակ ունեցել է 2400 ընտանիք։ Յուրաքանչյուր ընտանիք, եթե բազկացած լիներ 5 հոգուց, ապա Երևանը պետք է ունենար 12 հազար երկսեռ բնակչություն։ 1828—1829 թթ. մահմեդական բնակչության ունևոր ընտանիքների մի մասը փոխադրվել է Պարսկաստան, իսկ այնտեղից հայերը գաղթել ու եկել են Երևան։ Քաղաքի բնակչության թիվը կազմել է 11.463 մարդ[5]։

1804 թ. հայերը Երևանից գաղթել են գլխավորապես Վրաստան։ Երևանից գաղթած հայերը բնակություն են հաստատել Թիֆլիսում, հիմնադրելով Հավլաբար թաղամասը[6]։

Երևանի բնակչությունը XIX դ. սկզբին բազկացած էր արհեստավորներից, հողագործներից, այգեգործներից, վաճառականներից և հոգևորականությունից։

Խաների, բեգերի, սուլթանների, մելիքների և աղաների թիվը 1827 թ. եղել է 63, իսկ հոգևորականներինը՝ 1125 մարդ (124 ընտանիք)։ Քաղաքի մնացյալ բնակչությունը այդ

4 Ա. Սիմոնյան, Երևան, էջ 55։

5 Եվաևդ Շահազիզ, նշվ. աշխ., էջ 29։

6 Նույն տեղում, էջ 33—34։

ժամանակ կազմել է 9017 հոգի՝ արհեստավորներ, հողագործներ, վաճառականներ և այլն։

XIX դ. սկզբներին Երևանը դառնում է առևտրի կենտրոն, ուր կենտրոնացվում են երկրում արտադրվող մթերքը, ինչպես և Պարսկաստանից բերված ապրանքները՝ բամբակ, բուրդ, կաշի, ձեթ, մետաքս, չոր մրգեր, գորգեր և այլ ապրանքներ, որոնք արտահանվում են Հարևան երկրները, իսկ այդ երկրներից ներմուծվում են բամբակե, բրդե, մետաքսե գործվածքներ, ապակյա իրեր և այլն։ Առևտուրը զարգացնելու նպատակով կառուցվում են քարվանսարաներ (իջևանատներ), որոնք ունեցել են բազմաթիվ խանութներ, հրապարակներ և այլ շինություններ։

Սրանք բոլորը կառուցված էին քաղաքի գլխավոր շուկայում, ուր եղել են ծածկված խանութաշարքերը՝ «չարսուները»։ Խանութները դասավորված էին ըստ ապրանքի տեսակների։

Երևանն ունեցել է փոքր հրապարակներ։ Դրանցից էին Մզկիթի հրապարակը, որը շրջապատված էր կամարակապ խանութներով, Ջալ-խանի հրապարակը, Ֆահլաբազարը, ուր հավաքվել են աշխատանք որոնող մշակները, Մեյդանը՝ մեծ հրապարակը, որը գտնվել է բերդի և շուկայի միջև։ Այդ հրապարակներում եղել են խանութներ, ուր կատարվել է մանր առևտուրը։ Հողագործները մշակել են քաղաքապատկան հողերը։ Նրանք գլխավորապես ցանել են հացահատիկ, իսկ զգալի մասը զբաղվել է բանջարաբուծությամբ, այգեգործությամբ, պարտիզպանությամբ։ Յուրաքանչյուր երևանցի իր տան առաջ ունեցել է այգի-պարտեզ։ Երևանի բնակչության մի մասն էլ զբաղվել է արհեստներով։ Այդ տարիներին Երևանում տարածված էին կաշեգործությունը, օճառագործությունը, ներկարարությունը, կավագործությունը։ Երևանում շատ տարածված է եղել նաև վաշխառությունը, որի միջոցով վաշխառուները մեծ հարստություն են կուտակել, դառնալով տների, այգիների և գյուղերի տեր։

Երևանում գործել են ատաղձագործների, մաշկակարների, կաշեգործների, դարբինների, ներկարարների, քարտաշ-

ների, ոսկերիչների, գդակ կարողների, դերձակների, վարսավիրների և այլ արհեստավորների համքարությունները։ Դրանք իրենց անդամներին ցույց են տվել բազմակողմանի օգնություն, սահմանել գներ, ամեն ինչով նպաստել արհեստների զարգացմանը, արգելել են վատորակ արտադրանքի վաճառքը և այլն։

Հայկական նահանգի հկամուտների և արքունի դույքերի կառավարչության նախագահ Ի. Շոպենը 1829 թ. Պասկևիչի հանձնարարությամբ գրել է իր աշխատությունը, որը հետագայում լույս է տեսել՝ «Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения к Российской империи» վերնագրով։ Այդ աշխատության մեջ Ի. Շոպենը նկարագրում է, որ Երևանը առաջին հայացքից տպավորություն էր թողնում տեսնողի վրա։ Դա մի հետամնաց սովորական ասիական քաղաք էր նեղ, ծուռ ու մուռ փողոցներով, երկու կողմից հում աղյուսից և մանր կլոր քարերից շինված, հաճախ և կավակերտ, ցածր, տգեղ պատերով փողոցների մեջ աջ ու ձախ, պատերի միջից բացված էին ցածր և միշտ ամուր փակված դռներ, որոնք տանում էին տների բակերը։ Գլխավոր փողոցների միջով անցնում էին առուներ, որոնց միջոցով ջուրը բաշխվում էր պարտեզներին։ Այդ ջուրը քանդելով ճանապարհը և պատերի հիմքը՝ փողոցների մեջ ստեղծում էր խորդուբորդություն և վտանգավոր փոսեր. դրանք ամառվա ամիսներին դառնում էին նեխած, գարշահոտ ճահիճներ, իսկ ձմեռը սառչում էին, փակում ճանապարհը։

Երևանի շինություններից ուշադրության արժանի էին Սարդարի ապարանքը (հատկապես ապակյա դահլիճը), բերդի մզկիթները, իրենց յուրահատուկ ճարտարապետությամբ, և վերջապես, սարդարի «Թալար» կոչված քյոշկը, որը գտնվում էր Հրազդանի աջ ափին, «Թիլղուշա-Թալար» կոչված սարդարական ապարանքի դեմ-դիմաց։ Քյոշկը շինված էր չինական ոճով և ճարտարապետությամբ։

Քաղաքի տարածքի մի ընդարձակ մասն էլ բռնում էին

այգիներն ու պարտեզները։ Պարտեզները գտնվում էին տների առաջ, իսկ այգիները՝ քաղաքի շրջակայքում։

Քաղաքապատական հողերում աճեցնում էին բամբակ, բրինձ, ցորեն, կորեկ, գարի, քունջութ, սեխ ու ձմերուկ, բազմատեսակ բանջարեղեն։

Երևանը բաժանված էր 3 թաղի՝ Հին թաղ, Կոնդ և Քարահանք։ Հին թաղն ամենաընդարձակն էր և բռնում էր քաղաքի հյուսիս-արևելյան մասը։ Պարսիկների օրոք այն կոչվել է «շահար», այսինքն՝ քաղաք։

Կոնդը կազմում էր քաղաքի արևմտյան բարձրադիր մասը։ Այս թաղը ընդարձակվել է, երբ այնտեղ բնակություն են հաստատել նստակյաց դարձած 100 տուն հայ բոշաներ։ Այդտեղ են բնակվել նաև հայ մելիքները։ Պարսկական տիրապետության տարիներին այդ թաղը կոչվել է «Թափաբաշ», որը հայերեն «կոնդ» բառի թարգմանությունն է։

Քարահանքը բռնել է քաղաքի հարավ-արևելյան մասը։ Այն սկզբում եղել է քարհանք, իսկ հետո բնակելի է դարձել, միացել քաղաքին և կազմել առանձին թաղամաս։ Դա հետագայում իր ունեցած աղբյուրի ջրի հատկության պատճառով կոչվել է «Դամիր բուլաղ», այսինքն՝ երկաթ-աղբյուր։ Հետագա տարիներին այդ երեք թաղերին ավելացել են Ջորագեղը և Նոր թաղը։ Ջորագեղը բռնում էր Հրազդանի ձորի մի մասը։ Այն սկզբում գյուղ է եղել և հետագայում միացել է քաղաքին։ Այդ գյուղը հետո կոչվել է «Խնկելոց-ձոր», իսկ պարսկական տիրապետության օրոք՝ «Դարաքյանդ»։

Երևանն ունեցել է նաև Միրանի թաղ, Ջուհարենց թաղ, Խանի թաղ և այլն։ Ավելի նոր են Սպահանցոնց և Շիլաչի թաղերը, որտեղ բնակվել են «շիլաչի» (ներկարար) արհեստավորները, ինչպես և Շեն թաղը, Ղարադաղ կամ հետագայում Խորոմ-Բուլաղ թաղը, Թոխմախան գյոլը, Հին Բայազետի թաղը և այլն։

Երևանը շրջապատված էր այգիներով, որոնք կոչվել են

նույն թաղերի անուններով՝ Շահարի, Դալմայի, Կոնդի, Նորքի, Քարհանքի, Դամիր-բուլաղի և այլն։

Երևանը XX դ. սկզբներին ուներ հայոց վեց եկեղեցի՝ Պողոս-Պետրոս, Ս. Աստվածածին (Կաթողիկե), Ս. Սարգիս, Ս. Գևորգ, Ս. Հովհաննես, Ս. Անանիա առաքյալ և վեց մզկիթ՝ Զալ խանի, Նովրուզ Ալի բեկի, Հյուսեին Ալի խանի, Հաջի Իմամվերդի, Հաջի Ջաֆար բեկի և Մահմադ Սարդիլ խանի։

Այդ տարիներին Երևանում Հրազդանի վրա կար երեք կամուրջ. մեկը Քանաքեռի տակ, որից միայն մի կամար է մնացել, մյուսը՝ Զորագեղում, որը լրիվ ավերվել է, իսկ երրորդը՝ տարդարի ապարանքի տակ, որը մինչև հիմա էլ կա։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո և հատկապես XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Երևանի տնտեսական կյանքում կատարվում են էական փոփոխություններ։ Կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման հետևանքով Հայաստանում ևս սկսում են երևան գալ արդյունաբերական ձեռնարկություններ։ Ռուսական և մասամբ արտասահմանյան գործարանային էժան ապրանքների մրցակցությանը չդիմանալով, իսպառ վերանում են տեղական մի քանի արհեստներ։ Ռուսական կապիտալը ներհոսում է արդյունաբերության մեջ, ավելանում է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը՝ արդյունաբերական վերամշակման նպատակով։

Երևանը մինչև 1880-ական թվականները արհեստագործական, մանյնագործական և մանուֆակտուրային ոչ մեծ ձեռնարկությունների քաղաք էր։ 1890-ական թվականներին Երևանում առաջ են գալիս որոշ չափով մեքենայացված ձեռնարկություններ։ Խոշոր գործարանային տիպի գինու, կոնյակի և օղու արտադրության զարգացում կապված է ռուս կապիտալիստ Շուստովի անվան հետ։ Երկաթուղին խթանեց ռուսական կապիտալի ներթափանցումը Երևանի տնտեսական կյանքի մեջ և միաժամանակ լայն հեռանկարներ բացեց գինեգործական արտադրանքի վաճառահանման համար։

Առաջին կատարելագործված գործարանը Երևանում

1887 թ. հիմնել է Ն. Թայիրյանը։ Գործարանն ուներ գինուկոնյակի և օղու արտադրություն։ 1899 թ. «Ն. Շուստով և որդիներ» ընկերությունը գնում է Թայիրյանի գործարանը[7]։ 1893 թ. Երևանում հիմնվում են Աֆրիկյանների և Գյոզալյանների կոնյակի գործարանները, իսկ 1894 թ.՝ Սարաջևի գործարանը։ Սրանք արտադրում էին կոնյակ, գինիներ, օղի, դոշաբ։ Երևանի 5 գործարանները 1913 թ. արտադրել են կոնյակի սպիրտ։ Երևանի կոնյակը մեծ համբավ ուներ Ռուսաստանի և արտասահմանյան շուկաներում։ Սրանց զուգահեռ Երևանում գործում էին օղու մի քանի մանր գործարաններ։

Արդյունաբերական մյուս, համեմատաբար, աչքի ընկնող ձեռնարկությունը Ե. Տեր-Ավետիքով եղբայրների 1891 թ. բացված արհեստանոցն էր, որը 1905 թ. վերածվեց թուջաձուլական մեխանիկական գործարանի[8]։ Այդ գործարանը սպասարկում էր գինու գործարաններին և բավարարում քաղաքացիների մեատաղյա իրերի պահանջները։ Տեր-Ավետիքով եղբայրների թուջաձուլական մեխանիկական գործարանում 1913 թ. աշխատել է 50 բանվոր։

XX դ. սկզբին Երևանում գործել է կաշվի տնայնագործական տիպի 23 ձեռնարկություն (դաբախանա)։ Դրանցում 1912 թ. աշխատել է շուրջ 100 բանվոր, տարեկան արտադրանքը կազմել է ավելի քան 51 հազար ռուբլի։ Այդ ձեռնարկությունների թվին էին պատկանում Գաբրիելյան եղբայրների «Զանգի» և Տեր-Սարգսյան եղբայրների «Զարյա» կաշվի գործարանները[9], որոնք ունեին կաշվի մշակման մասամբ մեքենայացված արտադրություն։

Արդյունաբերական մյուս բոլոր ձեռնարկությունները՝ բամբակազտիչ, բրնձազտիչ, գարեջրի, պահածոների, հան-

---

7 Թ. Խ. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1879—1917 թթ.)*, էջ 55—56։

8 Կ. Կազմայան, *Երևանի Ֆ. է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին*, էջ 85։

9 Այս գործարանների մասին մանրամասնությունները տե՛ս Կ. Կազմայան, *Երևանի Ստ. Շահումյանի անվան կաշվի գործարանի 75 տարին*։

քային ջրերի, օշարակի, աղյուսի, դաջի, կրի գործարանները, տնայնագործական տիպի կամ մանուֆակտուրային մանր ձեռնարկություններ էին, որոնք չնչին բացառությամբ վերամշակում էին տեղական էժան հումքը։

XIX դ. երկրորդ կեսից Երևանում ծավալվում են քաղաքաշինական աշխատանքներ։ Քաղաքային տեխնիկ Մեհրաբյանը կազմում է Երևան քաղաքի սխեմատիկ հատակագիծը (1906—1911 թթ.)։ Հատակագծում արտահայտված են բուն քաղաքի՝ Շահարի, Դեմիր-բուլաղի և Կոնդի բնակելի ու ոչ բնակելի տարածությունները, ինչպես և շատ թե քիչ բարեկարգ բոլոր փողոցները՝ Գուբերնսկայա (այժմ Ալավերդյանի), Տեր-Ղուկասովի (Նալբանդյանի), Աստաֆյան (Աբովյանի), Մալյարների (Տերյանի), Քարվանսարայի (Տեր-Գաբրիելյանի), Հայկական (Լենինի պողոտա), Նազարովի (Ամիրյանի), Բեհբուդովի (Սվերդլովի), Ցարական (Սպանդարյանի), Դոկտորսկայա (Թումանյանի) և այլն[10]։

Այդ տարիներին հատկապես քաղաքի կենտրոնում կառուցվում էին դպրոցներ, հյուրանոցներ, ռեստորաններ, արդյունաբերական ձեռնարկություններ։ Դրանք երկհարկանի էին, կառուցված սրբատաշ տուֆով։ Քաղաքի կենտրոնում էին գտնվում վաճառականների, առևտրականների և արդյունաբերական ձեռնարկատերերի՝ Աֆրիկյանների, Տեր-Ավետիքովների, Գյոզալյանների, Տեր-Գաբրիելյանների, Ջանփոլադյանների և ուրիշների երկհարկանի գեղեցիկ տները։

Երևան մտնող առուները հասնում էին ծայրամասերը՝ առեղծելով արհեստական մի մեծ ջրամբար՝ «Բոխմախան գյոլը», որը ջուր էր մատակարարում քաղաքի ցանքատարածություններին։ Մեծ առուներ էին Աբուհայաթը, Մամռոն, Դալման և այլն։ Հին Երևանը խմելու համար օգտագործել է Հրազդանի, Գեղառի և ջրհորների ջրերը, որոնք վտանգավոր էին բնակչության առողջության համար։

Երկար տարիների համառ ջանքերից հետո՝ 1912 թ.

---

10 Թ. Ես. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), էջ 295—296։

հունվարին, երևանցիներին հաջողվում է քաղաք հասցնել մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Քառասուն (Կըրխբուլաղ) աղբյուրների ջուրը[11]:

1906 թ. սեպտեմբերից սկսեց աշխատել ձիաքարշը, որը մինչև 1918 թ. օգոստոսը Աստաֆյան փողոցը կապում էր երկաթուղային կայարանի հետ: Այդ տարիներին շահագործման հանձնվեցին երեք փոքր էլեկտրակայաններ:

1913 թ. մայիսին շահագործման հանձնվեց հեռախոսակայանը՝ 80 համար կարողությամբ: Այդ տարիներին քարվանսարաների կողքին կառուցվեցին հյուրանոցներ: Երևանում կար 3 զբոսայգի, որոնցից միայն մեկն էր բարեկարգված: Դա Անգլիական (26 Կոմիսարների անվան) այգին էր:

Երևանում գործում էին գիմնազիաներ, թեմական ու Գայանյան դպրոցները և ուսուցչական սեմինարիան: Բացի այդ Երևանի ամեն մի ևկեղեցուն ու մզկիթին կից գոյություն ուներ դպրոց: Այդ դպրոցներում հոգևորականների և մոլլանների ղեկավարությամբ աշակերտները գրագիտություն և կրոն էին սովորում:

Առաջին երկդասյա պետական գավառական դպրոցը Երևանում բացվել է 1832 թ., իսկ 1908 թ. գործել է 31 դպրոց 3724 աշակերտով[12]:

Երևանցիների կյանքում խոշոր իրադարձություն էր 1880 թ. մարտի 15-ին երևանյան առաջին թերթի՝ «Պատկ»-ի հրատարակումը: Թերթը գրական, հասարակական և մանկավարժական ուղղություն ուներ: Ապա լույս տեսան «Առողջապահական թերթ» (1881—1884 թթ.) ամսագիրը, «Երևանի հայտարարություններ» (1883—1885 թթ.) երկօրյա թերթիկը, «Эриванские объявления» թերթը (1900—1917 թթ.): Այնուհետև երևան եկան գրական, հասարակա-

---

11 «Эриванские объявления» թերթի 1909 թ. 16 և 17 համարներում տե՛ս էմին Տեր-Գրիգորյանի հոդվածաշարը՝ Երևանի խմելու ջրի մասին:

12 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), էջ 384:

կան, տնտեսական, քաղաքական բնույթի պարբերականներ («Հրազդան», «Эриванский вестник» և այլն)։

Այս թերթերն ու ամսագրերը տպագրվում էին Երևանում գործող «Լույս», «Կուլտուրա», էդիլսոնի և այլ տպարաններում։

Երևանում մեծ ընդհատումներով գործել են թատերական մի քանի խմբեր։ Դրանք եղել են դպրոցականների, թատերասերների (հայկական, ռուսական և ադրբեջանական), Թիֆլիսից, Բաքվից և այլ վայրերից պարբերաբար եկող խմբեր։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը նվազում է։ Այդ տարիներին Երևանում բարեկարգման և շինարարական ոչ մի աշխատանք չի կատարվում։ Արդյունաբերությունը զրկվում է բանվորական ուժից։ Այգիները մնում են անտեր և անմշակ։

Պատերազմի տարիներին աննդամթերքների ու լայն սպառման առարկաների գների բարձրացման պատճառով աշխատավորության նյութական դրությունը խիստ վատանում է հատկապես 1916—1917 թթ. ու դրանից հետո։ Ծանրանում է քաղաքի ներքին վիճակը, վատանում է առանց այն էլ ոչ բարվոք վիճակում գտնվող կոմունալ ցանցը։ Փակվում են դպրոցները, որոնք վեր են ածվում որբանոցների ու գաղթականների կայաններին։

XIX դ. 90-ական թվականներից Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում ստեղծված մարքսիստական խմբակներին ակտիվորեն մասնակցում էին նաև հայ բանվորները։ Նրանք Հայաստանի քաղաքներում ու գյուղերում տարածում էին մարքսիստական գաղափարներ։ Մարքսիստական գաղափարների տարածմանը նպաստում էին նաև Ռուսաստանի քաղաքներում և արտասահմանի բարձրագույն դպրոցներում սովորող հայ երիտասարդները, որոնք գալով հայրենիք, իրենց հետ բերում էին մարքսիստական գրականություն և հեղափոխական տրամադրություններ։

1899 թ. Ստ. Շահումյանը Ջալալօղլիում (Ստեփանա-

վան) հիմնեց մարքսիստական առաջին խմբակը, իսկ 1902—1903 թթ. մարքսիստական խմբակներ ստեղծվեցին Հայաստանի մի շարք այլ վայրերում, այդ թվում նաև Երևանում։ Սոցիալ-դեմոկրատական այդ խմբերն ու կազմակերպությունները զգալի աշխատանք կատարեցին հայ աշխատավորության մեջ մարքսիզմի գաղափարները տարածելու, ցարիզմի դեմ մղվող պայքարը գլխավորելու ուղղությամբ։

1904 թ. սեպտեմբերին Ստ. Շահումյանը եկավ Երևան։ Ծանոթանալով քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությանը, նա կոչ արեց վճռական պայքար ծավալել ինքնակալության և բուրժուազիայի դեմ։ 1905 թ. հեղափոխության նախօրյակին ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունները կապված էին Անդրկովկասյան կենտրոնների՝ Բաքվի, Թիֆլիսի, Բաթումիի, Շուշիի և այլ քաղաքների կոմիտեների և ընդհատակյա տպարանների հետ, դրանցից ստանում էին հեղափոխական գրականություն, կոչեր և թռուցիկներ։

Ռուսական առաջին հեղափոխության արձագանքները հասան Երևան։ 1905 թ. փետրվար-մարտին Երևանի բանվորները քաղաքական ելույթներ ունեցան, ապրիլին գործադուլ արեցին Շուստովի, Սարաջևի և Տեր-Ավետիքովի գործարանների բանվորները։ Հեղափոխական շարժումներ ծավալվեցին նաև Երևանի նահանգի գյուղերում։

1906 թ. հոկտեմբերին գործադուլ արեցին Երևանի գինու և կոնյակի գործարանի, 1907 թ.՝ տպարանի և հրուշակեղենի ձեռնարկության բանվորները։

Երևանի սոցիալ-դեմոկրատական խմբերի միասնական ղեկավար կենտրոն ստեղծելու համար 1905 թ. մայիսին ընտրվեց ՌՍԴԲԿ Երևանի կոմիտե[13]։ Կոմիտեի նիստը ղեկավարում էր Ստ. Շահումյանը, որը նոր էր վերադար-

13 ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության աշխատանքի մասին մանրամասնությունները տե՛ս Խ. Բարսեղյանի և Ռ. Մովսիսյանի հոդվածաշարում. «Երեկոյան Երևան», 1960, №№ 158, 161, 166, 174, 178, 181, 184, 192, 196, 202, 213։

ձել Բեռլինից։ Կոմիտեի կազմում էին Ա. Մալխասյանը, Գ. Սոկոլովսկին, Կ. Ալավերդովը, Մ. Միրաքյանը, Բաբաժանսկին, Ա. Մռավյանը, Լ. Տեր-Հովսեփյանը և ուրիշներ։

ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի ստեղծումով քաղաքի սոցիալ-դեմոկրատական անջատ խմբերը միավորվեցին մի միասնական ղեկավար կենտրոնի շուրջ։ Երևանի կոմիտեն սերտ կապերի մեջ գտնվելով Թիֆլիսի և Բաքվի ՌՍԴԲԿ կազմակերպությունների հետ, նրանցից ստանում էր թերթեր, թռուցիկներ, ծավալում կուսակցական-քաղաքական աշխատանք։

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը ՌՍԴԲԿ IV համագումարի պատգամավոր ընտրեց Ստ. Շահումյանին։ Նա 1906 թ. այդ համագումարի արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Երևանի կազմակերպության ընդհանուր ժողովում։ Ստ. Շահումյանը ելույթներով հանդես եկավ նաև Տեր-Գաբրիելյանի կաշեգործարանում, գինու-կոնյակի և այլ ձեռնարկություններում։

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը կուսակցության V համագումարի պատգամավոր ընտրեց Գ. Սոկոլովսկուն։ Երևանի բոլշևիկյան կազմակերպությունը ակտիվ մասնակցություն ունեցավ հակամարքսիստական կուսակցությունների դեմ մղված պայքարին, միշտ հավատարիմ մնալով լենինիզմին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունները չարանենգ բլոկ կազմեցին սովետական իշխանության դեմ, ստեղծեցին Անդրկովկասյան կոմիսարիատը և ապա Սեյմը։

1918 թ. հունվարին Երևանի բոլշևիկները որոշեցին բոյկոտի ենթարկել կոմիսարիատը և ճանաչել միայն սովետական իշխանությունը։

1918 թ. մայիսին ստեղծվեց Հայաստանի բուրժուական հանրապետությունը։ 1918—1919 ԹԹ. Երևան փոխադրվեցին Ստ. Ալավերդյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և ուրիշ փորձված բոլշևիկներ, որոնց օգնությամբ Երևանի

բոլշևիկները վերջնականապես կազմակերպչորեն անջատվեցին մենշևիկներից և ստեղծեցին իրենց ինքնուրույն կազմակերպությունը իր ղեկավար օրգանով՝ Երևանի կոմիտեով։

1918—1920 թթ. Հայաստանում իշխանության գլուխ կանգնած էին հայ աշխատավոր ժողովրդի թշնամիները՝ դաշնակցականները, որոնց տիրապետությունը (մինչ այդ համաշխարհային պատերազմը և քաղաքացիական կռիվները) անհամար զրկանքներ պատճառեց հայ ժողովրդին։ Համատարած կոտորածը, սովը, համաճարակները, թշվառությունն ու գաղթը, բռնություններն ու ապօրինությունները, ինչպես նաև տնտեսության քայքայումը հայ ժողովրդին կանգնեցրին կործանման եզրին։

1919 թ. ստեղծվեց ընդհանուր ղեկավար օրգան՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն (Արմենկոմը), որը ղեկավարում էր Երևանի, ինչպես նաև Հայաստանի հեղափոխական շարժումները։ 1920 թ. դաշնակցականներին հաջողվեց արյան մեջ խեղդել Մայիսյան ապստամբությունը։ Բռնություններն ու դաժան հաշվեհարդարը Հայաստանի աշխատավորության մեջ հեղափոխական նոր թափ առաջացրին։ Հայաստանի աշխատավորներն էլ ավելի սերտորեն համախմբվեցին կոմունիստական կուսակցության շուրջը, 11-րդ կարմիր բանակի օգնությամբ տապալեցին դաշնակցականների ատելի տիրապետությունը և 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատեցին սովետական իշխանություն։ Դրանով Հայկական ՍՍՀ-ի մայրաքաղաք Երևանի համար հետագա վերածնման ու բարեկարգման նոր դարաշրջան սկսվեց։

* * *

Ալեքսանդրապոլը (Կումայրի, Գյումրի) Հայաստանի հնագույն բնակատեղիներից մեկն է, սկսած բրոնզե դարից։ Այդ են ապացուցում այնտեղ կատարված պեղումները։

Ռուսական բանակի կողմից Գյումրին գրավվելուց հետո, այնտեղ պահվում էր կազակներից կազմված մշտական կայազոր։ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Գյումրին ռուսական զորքերի համար ծառայում էր

որպես ստրատեգիական նշանակություն ունեցող բերդ, ուր զորային միավորումներից բացի, պահվում էին մեծ քանակությամբ զինամթերք ու սննդամթերք։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Էրզրումից, Կարսից, Բայազետից և Արդահանից 90 հազար հայեր գաղթեցին ռուսական տիրապետության տակ գտնվող շրջաններ։ Նրանց մի մասն անցնելով Ախուրյան գետը, բնակություն հաստատեց Գյումրիում։ Գաղթածների մեծ մասը արհեստավորներ, գյուղացիներ և մասամբ առևտրականներ էին։ Գյումրի գաղթածները բնակության վայր ընտրեցին քաղաքի հարավային մասում գտնվող ընդարձակ դաշտը։

1837 թ. հոկտեմբերի 3-ին Գյումրին վերանվանվեց ռուսական կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անվամբ՝ Ալեքսանդրապոլ[14]։ Այդ տարիներին էլ Գյումրի քաղաքի բարձունքներից մեկի վրա կառուցվեց ռազմական խոշոր նշանակություն ունեցող բերդ։ Սա իր ժամանակի ամենաամուր բերդերից էր, որտեղ կարող էր տեղավորվել մոտ 15 հազար մարդ։ Բերդի աջ ու ձախ մասերում կառուցված էին երկու քարաշեն մեծ աշտարակներ, պատրաստված մեկը կարմիր, մյուսը՝ սև քարից, որի համար էլ կոչվում էին «կարմիր» և «սև դուլաներ»։ Բերդից արևելք ընկած էր Ալեքսանդրապոլը, որը 1845—1846 թթ. ուներ 16.337 բնակիչ, որից 15.297 հայ, 575 ռուս և հույն, 430 թուրք և 35 հրեա[15]։


Ալեքսանդրապոլի տների գերակշռող մասը միհարկանի էր։ Քաղաքի կենտրոնում էր գտնվում շուկան, որի շուրջը կային միաձև կառուցված բազմաթիվ խանութներ։

Փողոցներն ուղիղ էին ու երկար, քիչ նրբանցքներով։ Կանաչ տարածությունը քիչ էր։ Տները մեծ մասամբ կառուցված էին քաղաքի շրջակայքում գտնվող սև տուֆից։ Քաղաքի տարբեր մասերում բարձրանում էին Ալեքսանդրապոլի եկեղեցիները։

---

14 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 8223, թ. 138 բ։

15 «Кавказский календарь за 1849 г.», отд. III, стр. 27.



Ակադեմիկոս, ճարտարապետ
Ա. Թամանյան



Քաղաքի արևմտյան կողմում Ջերքեզի ձորն է, արևելյան մասում, հարթ տարածության վրա, երկաթուղային կայարանը։ Քաղաքի երեք կողմերում ընկած էին գորանոցները, արևմուտքում՝ Ախուրյանի ափին, Սևվերակին, հյուսիսում՝ Գալիդոնը, հարավում՝ Կազաչի պոստը։ Քաղաքով հյուսիսից հարավ զուգահեռ հոսում են Գյումրի չայն ու Բոշի չայը։

Ալեքսանդրապոլը XIX դ. վերջին ուներ 3.825 տուն, մոտ 25 հազար բնակչով, որոնց մեծ մասը հայեր էին, ինչպես նաև 60 տուն հույներ, 100 տուն թուրքեր և 100 տուն ռուս պինվորականների բնտանիքներ։

Ռուս պինվորականները, երկար տարիներ ապրելով Ալեքսանդրապոլում, գորկա զբոսայգու մոտ բնակարաններ են կառուցում և հաստատվում այդ թաղում, որը և կոչվում է Սլոբոդկա։ Քաղաքի հարավ-արևելքում՝ բլրակի վրա, բնակություն են հաստատում թուրքերը։ Այդ թաղն էլ անվանում են Թուրքի մահլա, իսկ դրանից հյուսիս հույն բնակիչների թաղն էր, որ կոչվում էր Ռումոնց մահլա, իսկ հայ կաթոլիկների թաղը կոչվում էր Ֆրանկների մահլա։ Հողի բարձունքից հյուսիս՝ ձորակում, բնակություն են հաստատում գաղթական հայ բոշաները, որոնց թաղը կոչվում էր Բոշի մահլա։ Քաղաքի կենտրոնական մասում խմբվում են Արևմտյան Հայաստանի քաղաքներից գաղթած հարուստները։ Երբ բերդը կառուցվում է, Գյումրին ընդարձակվում է։ Այդ տարիներին առաջանում է մի նոր թաղ, որը կոչվում է Ջորի բողազ կամ Ռանչպարների մահլա։

Ալեքսանդրապոլը հիմնականում արհեստավորական քաղաք էր. բնակչության ճնշող մեծամասնությունը արհեստավորներ էին՝ քարտաշներ, որմնադիրներ, ատաղձագործներ, անագագործներ, դարբիններ, պղնձագործներ, կոշկակարներ, դերձակներ և այլն։ Արհեստավորները համախմբված էին համքարական կազմակերպությունների մեջ և զբաղեցնում էին առանձին փողոցներ։

1850-ական թվականներին, երբ Ալեքսանդրապոլը դարձավ Երևանի նահանգի գավառական քաղաք, արդեն ուներ

28 համքարություն, որոնց մեջ ընդգրկված էին 2602 արհեստավորներ՝ վարպետներ, ենթավարպետներ և աշակերտներ։ Քաղաքի բնակիչների մեծացած մասն էլ զբաղվում էր առևտրով և հողագործությամբ։ Շնորհիվ կայազորի և երկաթուղային հանգույցի, քաղաքում առևտուրը մեծ չափերի էր հասնում և խոշոր տեղ բռնում նրա տնտեսական կյանքում։

1895—1900-ական թվականներին Ալեքսանդրապոլում եղել են 435 առևտրական կետեր, որոնք տարեկան կատարել են 3,5 միլիոն ռուբլու շրջանառություն։

1905 թ. Ալեքսանդրապոլում գործում էին օճառի՝ 4, կաշվի՝ 3, գարեջրի՝ 2, աղյուսի՝ 3, բրդագործական՝ 5, կրի՝ 3, ճարպահալոցի՝ 1 և հանքային ջրերի 3 ձեռնարկություններ, ինչպես նաև 3 ալրաղաց և 4 ձիթհան, ուր աշխատում էր 181 բանվոր[16]։ Սրանց տարեկան արտադրանքը հասնում էր 90 հազար ռուբլու։ Մինչև 1912 թ. սկսում են գործել 6 նոր ձեռնարկություններ՝ մեկ ջուլհականոց, սպիրտի արտադրության 3 ձեռնարկություն, չուգունի ձուլարան[17] և մեխանիկական գործարան։

XX դ. սկզբին Ալեքսանդրապոլում խոշոր գործարաններ չկային. ամբողջ արդյունաբերական արտադրանքը ստացվում էր մանր ձեռնարկություններից, որոնք ոչ միայն բավարարում էին քաղաքի ու գավառի պահանջները, այլև արտադրանքի մի մասն արտահանվում էր։

1850—60-ական թվականներին Ալեքսանդրապոլում գործել են մի քանի խալֆայական ու ծխական դպրոցներ։ 1870—80-ական թվականներին դպրոցների վիճակը որոշ չափով բարելավվում է։ XX դ. սկզբին քաղաքում գործում էին առևտրական դպրոցը, քաղաքային ուսումնարանը, հոգևոր դպրոցը, Արղության և Սահականուշյան օրիորդաց ուսումնարանները, իգական գիմնազիան, կովկասյան հայ կաթոլիկների ուսումնարանը և տասից ավելի ծխական դպրոցներ։ Ալեքսանդրապոլում գործել է քաղաքային հիվանդանոցը մի քանի բժիշկներով։

16 «Обзор Эриванской губернии за 1905 г.», стр. 4.

17 «Обзор Эриванской губернии за 1911 г.», вед. № 4.

Քաղաքում եղել են նաև մասնավոր տպարաններ, որտեղ տպագրվել են գրքեր, թերթեր, օրացույցներ, ամսագրեր և այլն։ Ալեքսանդրապոլում եղել է ջերմային մի էլեկտրակայան, որն էներգիա է մատակարարել ինչպես արտադրական ձեռնարկություններին, այնպես էլ քաղաքի ունևոր բնակչությանը։ Քաղաքում եղել են մի շարք հյուրանոցներ, իջևանատներ, պանդոկներ, ինչպես նաև մի քանի բաղնիքներ։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո 1918—1920 թթ. թուրքական զավթիչների կողմից Ալեքսանդրապոլը բազմանի է ենթարկվում, քայքայվում են արդյունաբերական ձեռնարկություններն ու երկաթուղային հանգույցը, բնակչությունը սովի է մատնվում։

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության գլխավորությամբ և 11-րդ կարմիր բանակի զորամասերի օգնությամբ տապալեցին մուսավաթականների իշխանությունը և Անդրկովկասում առաջինը հաստատեցին սովետական իշխանություն։ Սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում հեղափոխական վերելքի նոր ալիք առաջացրեց Հայաստանի աշխատավորության մեջ՝ սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարում։

Մայիսմեկյան ցույցեր տեղի ունեցան Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում և Հայաստանի այլ վայրերում։ Ամենուրեք ցուցարարները փորձ էին դուրս գալիս դաշնակցական կառավարությունը տապալելու և երկրում սովետական իշխանություն հաստատելու կոչերով։

Մայիսի 1-ի առավոտյան Ալեքսանդրապոլի կայարանում տեղի ունեցած միտինգում ելույթներ ունեցան կոմունիստ հռետորները։ Միտինգի մասնակիցները շարժվեցին քաղաքի կենտրոնը, և ապա դեպի զորանոցները։ Միտինգում հանդես եկավ Ալեքսանդրապոլի կայարանում կանգնած «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար կապիտան Ս. Մուսայելյանը։ Նա զինվորների կողմից պատրաստակամություն հայտնեց պայքարելու սովետական կարգերի

հաստատման համար։ Յուլյեր տեղի ունեցան Երևանում, Նոր Բայազետում, Շամշադինում, Դիլիջանում, Ջանգեզուրում, Կարսում, Սարիղամիշում. վերջինիս մասնակցում էին նաև կայազորի զինվորները։

Մայիսի 7-ին Ալեքսանդրապոլում կայացած խորհրդակցությունում զինված ապստամբությունը դիակավարելու համար ընտրվում է Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն։ Այդ կոմիտեն մայիսի 10-ին դիմում է Հայաստանի աշխատավորներին և հայտնում, որ դաշնակցականների կառավարությունը տապալված է և հռչակված սովետական իշխանություն։ Այնուհետև Ալեքսանդրապոլի կոմիտեն կոչ է հրատարակում, որտեղ մերկացնում է դաշնակցականների բախտախնդիր մտայնությունը և օտարերկրյա իմպերիալիստների գաղութային քաղաքականությունը Հայաստանում։ «Միակ փրկության ճանապարհը,— ասված է կոչում,— ամբողջ աշխարհի ճնշվող դասակարգի միությունն է։ Հայաստանի հեղափոխական մասսաների փրկության ճանապարհը՝ միությունն է Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական մասսաների հետ»[18]։

Մայիսյան ապստամբությունը ծավալվում է նաև Հայաստանի բազմաթիվ վայրերում։ Ապստամբության կենտրոնը դառնում է Ալեքսանդրապոլը։ Սակայն դաշնակցականներին հաջողվեց Ալեքսանդրապոլում ապստամբությունը ճնշել։ Այդ գործում իրենց սուր դերը կատարեցին անգլո-ամերիկյան իմպերիալիստները։ Սակայն Մայիսյան ապստամբությունը խոշոր պատմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում։ Հայաստանի աշխատավորները պայքարի հարուստ փորձ ձեռք բերելով հերոսական պայքար ծավալեցին դաշնակցականների սանձի տիրապետությունը տապալելու և սովետական կարգեր հաստատելու համար։ Նրանք կրկին համոզվեցին, որ իրենց միակ փրկությունը սովետական կարգերի հաղթանակի մեջ է։

---

18 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, Երևան, 1967, էջ 89։

* * *

Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո՝ 1830 թ., Արևմտյան Հայաստանի Բայազետի շրջանից մեծ թվով ընտանիքներ գաղթեցին և վերաբնակություն հաստատեցին Սևանի ավազանի մի փոքրիկ բնակավայրում, որը հետագայում կոչեցին Նոր Բայազետ:

Նոր Բայազետը եղել է արհեստավորական և առևտրական կենտրոն Սևանի ավազանի բնակավայրերի համար:

XX դ. սկզբին Նոր Բայազետում գործել են 60 արհեստանոցներ, ուր աշխատել են 150 արհեստավորներ՝ մաշկակարներ, դերձակներ, արծաթագործներ, կոշկակարներ, կաշեգործներ, բրուտագործներ, թիթեղագործներ և այլն[19]: Նոր Բայազետի բնակչությունը զբաղվել է նաև առևտրով, երկրագործությամբ և անասնապահությամբ: Տները եղել են ցածրահարկ, փողոցներն ուղիղ, բայց նեղլիկ: Նախասովետական տարիներին, Նոր Բայազետի անտեսական զարգացմանն արգելակել են տրանսպորտային մայրուղիներից կտրված լինելը և հանածո հարստությունների բացակայությունը:

* * *

Վարարակ գետի հովտում տարածված Գորիսը գտնվում է ծովի մակերևույթից 1300—1400 մետր բարձրությամբ լեռներով շրջապատված մի փոքրիկ հարթության վրա: Բնությունն այստեղ գեղեցիկ է, օդը՝ մաքուր, խմելու ջուրը՝ առատորակ:

Գորիսի բնակչության գլխավոր մասն ապրում էր բնական և արհեստական այրերում ու քարանձավներում: Ամեն մի ժայռ համարվում էր մի ընտանիքի սեփականությունը: Այդպիսին է եղել հին Գորիսը:

Անցյալ հարյուրամյակի կեսերից Հայկական ՍՍՀ ներկա տարածքի սահմաններում ծավալվում է խճուղային ճա-

19 Թ. Ս. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1879—1917 թթ.)*, էջ 98:

նապարհների շինարարություն։ Դրանցից մեկը Գորիս—Սիսիան—Նախիջևան—Եվլախ—Ջուլֆա, իսկ մյուսը՝ Գորիս—Ղափան խճուղին էր[20]։

Որոտանի հովտի ճանապարհների խաչմերուկում՝ մի հարթության վրա, նախկին Կյորես բնակավայրի ուղիղ դիմաց, 1870-ական թվականներին հիմնադրվում է նոր Գորիսը՝ Զանգեզուրի գավառի կենտրոնը։ Գետի աջ ափի մշակելի հողերում՝ «Կալեր» կոչվող վայրում, իրենց բնակարաններն են կառուցում դրսևի առևտրականները, վաճառականները, ինչպես նաև Գորիսի հարևան գյուղերի հարուստները։ Դրա պատճառով տարեցտարի մշակելի հողերը պակասում են։ Երկրագործական վաղեմի բնակավայրի փոխարեն հանդես է գալիս նոր Գորիսը, որը 1890-ական թվականներին դառնում է քաղաք[21]։ 1885 թ. Գորիսն ուներ 124 խանութ, ծածկած շուկա, բնակելի աններ, վարչական և այլ կառույցներ։

1873 թ. Գորիսն ուներ 2570 բնակիչ, իսկ 1897 թ.՝ 3799։ Բնակչության մեծամասնությունը հայեր էին. կային նաև ռուսներ, ադրբեջանցիներ և այլ ազգության բնակիչներ։

1897 թ. մարդահամարի տվյալներով, քաղաքի բնակչության 16 տոկոսը եղել է զրագետ։ Բնակչության հիմնական զբաղմունքը եղել է առևտուրը, արհեստները, հողագործությունն ու անասնապահությունը։

Գորիսն ունեցել է լիմոնադի գործարան, զանազան արհեստանոցներ, տպարան և երկդասյա դպրոց[22]։

* * *

Ցարիզմի քաղաքականության հետևանքով Հայաստանի քաղաքներում արդյունաբերությունը դանդաղ էր զարգանում։ Չնայած ցարական Ռուսաստանի տիրապետության տարիներին համեմատաբար բարենպաստ պայմաններ

20 Ա. Ասլանյան, Խ. Ավետիսյան, Զանգեզուր, Երևան, 1975, էջ 118։

21 Ե. Լազարյան, Զանգեզուրի գավառ, հ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 53—54։

22 Խ. Ավետիսյան, Զանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում (1920—1960), Երևան, 1963, էջ 66։

ստեղծվեցին արտադրական հարաբերությունների զարգացման համար, Հայաստանն ընդգրկվեց կապիտալիստական արտադրության ոլորտը, արդյունաբերությունը որոշ վերելք ապրեց, սակայն նրա բնական հարուստ պաշարները մնացին անօգտագործելի։

Նախասովետական Հայաստանի արդյունաբերությունը հիմնականում ձեռնագործական բնույթ ուներ և բավարարում էր ներքին շուկայի պահանջները։ Արդյունաբերության մեջ գլխավոր տեղերը բռնում էին գինի և կոնյակի արտադրությունը։ Արդյունաբերության մեջ որոշակի տեղ ունեին նաև պահածոների, կաշվի, օճառի արտադրությունը և բամբակի զտումը։

Հայաստանի արդյունաբերության բոլոր ճյուղերում 1913 թ. աշխատում էր 4956 բանվոր[23], որից 4400-ը՝ գինձարդյունաբերության, 290-ը՝ սննդարդյունաբերության, 100-ը՝ կաշվի և կոշկեղենի արտադրության մեջ, 152-ը՝ մեխանիկական արհեստանոցներում, իսկ 14-ը՝ էլեկտրակայաններում։ Այդ տարիներին Հայաստանում գործել են 10 փոքր էլեկտրակայաններ, որոնց տված տարեկան էլեկտրաէներգիան կազմել է 51,1 միլիոն կիլովատ ժամ։ Հայաստանում ժողովրդական տնտեսության մյուս կարևոր ճյուղը գյուղատնտեսությունն էր, որը, սակայն, գտնվում էր հետամնաց վիճակում։

Առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակցականների միջամտության տարիներին Արևելյան Հայաստանի տասնյակ այլ էլ հետամնաց ժողովրդական տնտեսությունը կազմալուծվեց և քայքայվեց։ Դրա հետևանքով Հայաստանի արդյունաբերության արտադրանքը 1919 թ., 1913 թ. համեմատությամբ, 12 անգամ պակասեց[24]։ Լրիվ քայքայվել էին գինձարդյունաբերությունը, գինու, կոնյակի և կաշվի ար-

---

23 «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», Ереван, 1940, стр. 29.

24 Ա. Մ. Հակոբյան, *Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.)*, Երևան, 1955, էջ 116։

տադրությունը։ Նույնպիսի վիճակում էին գտնվում երկաթուղային տրանսպորտը, խճուղային ճանապարհները և կապի ցանցը։ Եթե 1913 թ. Հայաստանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 20,7 միլիոն ռուբլի, ապա 1920 թ. այն իջավ մինչև 1,7 միլիոն ռուբլու[25]։

Հայաստանի ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ արդյունաբերության արտադրանքը կազմում էր 23,9, իսկ գյուղատնտեսությանը՝ 76,1 տոկոս. այսինքն՝ Հայաստանը հետամնաց ագրարային մի երկիր էր։

Սովետական Հայաստանի ժառանգությունն առացած քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում և Գորիսում քաղաքաշինական նկատելի աշխատանք չէր կատարվել։ Քաղաքներում բավարար քանակությամբ բնակելի ֆոնդ և հասարակական շենքեր չկային, իսկ նզածները էլ պատկանում էին մի խումբ հարուստների։ Այդ քաղաքներից ոչ մեկում կոմունալ-բնակարանային տնտեսություն, մասնավորապես կոմունալ տնտեսության քիչ թե շատ բարվոք ցանց գոյություն չուներ, տրանսպորտի միջոցները սայլերն ու կառքերն էին (չհաշված Երևանի ձիաքարշը)։ Քաղաքային բնակչության համար ապրելու ամենատարրական հարմարություններ չկային։ Բացի այդ, առաջին համաշխարհային պատերազմի, քաղաքացիական կռիվների, ազգամիջյան ընդհարումների և դաշնակցականների տիրապետության տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսությունը քայքայվել էր, կուլտուրական կյանքը դադարել։ Գաղթը, սովը և համաճարակային հիվանդությունները բռնել էին երկիրը։

Այսպիսով, Սովետական Հայաստանը ժառանգեց դավառական մի քանի քաղաք, հետամնաց տեխնիկայով մի շարք գործարաններ, սակավաթիվ բանվոր դասակարգ, աշխատավորների կյանքի անտանելի ծանր պայմաններ, բնակչության անգրագիտություն ու հետամնացություն։

---

25 «Социалистическое строительство Армянской ССР» (1920—1940 гг.), стр. 62.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Հանրապետության աշխատավորները ձեռնամուխ եղան ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։ Սովետական կառավարությունը Վ. Ի. Լենինի առաջարկությամբ 1921—1922 թթ. 3,5 միլիոն ռուբլի[1] ոսկով օգնություն ցույց տվեց Հայաստանին։ Այդ ծանր տարիներին Հայաստանն իբրև օգնություն Ռուսաստանից ստացավ մեծ քանակությամբ պարենամթերք, արդյունաբերական ապրանքներ, գյուղատնտեսական գործիքներ, դեղորայք և այլն։

1921 թ. նոր տնտեսական քաղաքականության հիման վրա, ինչպես ողջ երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում սկսվեց քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Ազգայնացվեցին արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները։

Պետականացված գործարանների բազայի վրա 1922 թ. հիմնադրվեց դինու և կոնյակի «Արարատ» տրեստը։ Արտադրանքը իրացնելու նպատակով «Արարատ» տրեստը նոր գինեգործարաններ բաց արեց 1922 թ. Մոսկվայում,

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 192։

1923 թ.՝ Լենինգրադում, 1924 թ.՝ Ռոստովում, իսկ ավելի ուշ՝ Կիևում և Սարատովում։

1922—1923 թթ. Երևանում սկսեցին աշխատել կաշվի երկու փոքր գործարանները (ուր աշխատում էին ավելի քան 100 բանվոր-ծառայողներ), տպարանները, ինչպես նաև Երևանի ու Ալեքսանդրապոլի մեխանիկական և պահածոների գործարանները։ ՍՍՀՄ ժողովրդական անտեսության գերագույն խորհուրդը 2.200 հազար ռուբլի արամադրեց պղնձարդյունաբերության վերականգնման համար[2]։ Համակցված միջոցների շնորհիվ 1924—1925 անտեսական տարում Հայաստանում պղնձի արդյունաբերությունը սկսեց զարգանալ, իսկ հետագա տարիներին այն լրիվ վերականգնվեց։ Միաժամանակ սկիզբ դրվեց արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի՝ անքսային, շինանյութերի, էլեկտրատեխնիկական շինարարության և կաբբիդի արտադրության զարգացմանը։

Սովետական Հայաստանի արդյունաբերության արագ վերականգնումն արդյունք էր կուսակցության և կառավարության լենինյան ազգային քաղաքականության, ՍՍՀՄ-ի ժողովուրդների միջև հաստատված բարեկամության ու սերտ համագործակցության։

1921—1925 թթ. խոշոր աշխատանքներ կատարվեցին հանրապետության արդյունաբերության և երկաթուղային տրանսպորտի վերականգնման, ինչպես նաև արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման ուղղությամբ։ Դրա շնորհիվ Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքը դրամական արտահայտությամբ (1927—1928 անտեսական տարում (1926—1927 թթ. անփոփոխ գներով) հասավ 28,2 միլիոն ռուբլու, 1913 թ. 20,7 և 1919 թ.՝ 1,7 միլիոն ռուբլու դիմաց[3]։

Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ 1921—1928 թթ. կատարվել է 73,1 միլիոն ռուբլու կապիտալ

---

2 Ա. Մ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 259։

3 «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», стр. 62.

ներդրում, որից 27,2 միլիոնը արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի, 4,2 միլիոնը՝ տրանսպորտի, 17,8 միլիոնը՝ գյուղատնտեսության, 12,2 միլիոնը՝ բնակարանային շինարարության մեջ[4]։

1921—1928 թթ. ընդհանուր առմամբ վերականգնվեց արդյունաբերական ձեռնարկությունների արտադրության թողարկումը. այն հասցվեց 1913 թ. մակարդակին, իսկ 1926—1928 թթ. որոշակի աշխատանքներ սկսվեցին տնտեսության վերակառուցման ուղղությամբ։

ՀԿ(բ)Կ IV համագումարը 1925 թ. դեկտեմբերին հանրագումարի բերեց հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի արդյունքները, որոնք դեռևս անբավարար էին ծանր ինդուստրիայի զարգացման համար։

ՍՍՀՄ-ի տեխնիկատնտեսական անկախությունն ու հայրենիքի պաշտպանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր երկրում զարգացնել ծանր արդյունաբերությունը։ «Մենք գիտենք, որ առանց ծանր արդյունաբերության փրկելու, առանց այն վերականգնելու մենք չենք կարող կառուցել ոչ մի արդյունաբերություն,— գրել է Վ. Ի. Լենինը,— իսկ առանց ծանր արդյունաբերության մենք ընդհանրապես կկործանվենք, որպես ինքնուրույն երկիր»[5]։

Երկրի ինդուստրացումը, սեփական ծանր արդյունաբերության զարգացումը ժողովրդական տնտեսության արագ վերելքի առաջին նախապայմանն էին, ՍՍՀՄ-ի ինքնուրույնության ու տնտեսական անկախության երաշխիքը, երկրի պաշտպանության ամուր հիմքը։ Դրա համար էլ 1925 թ. դեկտեմբերին կայացած ՀամԿ(բ)Կ XIV համագումարը նշեց ՍՍՀՄ-ի սոցիալիստական ինդուստրացման ծրագիրը, որի նպատակն էր պատմական ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել ՍՍՀՄ-ի տնտեսական հետամնացությունը։

Երկրում արդյունաբերության ռացիոնալ տեղաբաշխումը կապահովեր երկրի շրջանների տնտեսական զարգացման

4 Նույն տեղում, էջ 19։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 506։

մակարդակների հետագա համահարթումը։ Այդ կապակցությամբ առաջին հնգամյա պլանի վերաբերյալ Համկ(բ)կ XV համագումարի դիրեկտիվներում ազգային հանրապետությունների զարգացման մասին ասված էր. «Հնգամյա պլանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ազգային հետամնաց ծայրամասերի և հետամնաց շրջանների էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքի հարցերին, ելնելով նրանց տնտեսական և կուլտուրական հետամնացությունը աստիճանաբար վերացնելու անհրաժեշտությունից, համապատասխանաբար նախատեսելով նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման ավելի արագ տեմպ, ելնելով այդ շրջանների կարիքներն ու պահանջները Միության կարիքների ու պահանջների հետ շաղկապելուց»[6]։

Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը ժամանակին առաջ էր քաշել արտադրողական ուժերի նոր, արդյունավետ տեղաբաշխման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտար յուրացնելու երկրի բնական անսպառ հարստությունները և արագացնելու ընդլայնված վերարտադրության տեմպերը բոլոր ազգային հանրապետություններում։ Դրա լավագույն օրինակներից է Սովետական Հայաստանը, որն ապրելով սոցիալ-տնտեսական մեծ վերափոխումներ և զարգանալով արդյունաբերության վերարտադրության առավել արագ տեմպերով, ագրարային հետամնաց երկրից դարձավ ինդուստրիալ հզոր հանրապետություն։ Այսպես, 1970 թ. արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1913 թ. համեմատությամբ ՍՍՀՄ-ում աճել է 92, Վրաստանում՝ 85, Ուկրաինայում՝ 61, Ուզբեկստանում՝ 41, Ադրբեջանում՝ 33, իսկ Հայաստանում՝ 184 անգամ։ Միության 15 հանրապետությունների մեջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճման տեմպերով առաջինը Կիրգիզական հանրապետությունն է 188 անգամ, երկրորդը՝ Հայաստանը 184 անգամ, իսկ երրորդը՝ Ղազախստանն ու Մոլդավիան՝ 146 ան-

6 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս II, Երևան, 1955, էջ 586։

գամ։ Եթե նույնիսկ համեմատելու լինենք վերջին երեք տասնամյակների արդյունքները, ապա կնկատենք, որ 1940 թ. մինչև 1970 թ. ՍՍՀՄ-ի արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացել է 11 անգամ[7], իսկ Սովետական Հայաստանինը՝ 20 անգամ[8]։

Սովետական Հայաստանի տնտեսական հետամնացությունը վերացնելու նպատակով տարեցտարի ավելացան կապիտալ ներդրումները Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ։ Եթե 1921—1925 թթ. դրանք տարեկան 5 միլիոն ռուբլի էին, ապա 1927—1928 տնտեսական տարում հասան 25 միլիոն ռուբլու[9]։

Հայաստանի աշխատավորությունը առաջին հերթին ձեռնամուխ եղավ էլեկտրիֆիկացման աշխատանքներին։ Կառուցվեցին մի շարք հիդրոկայաններ, որոնց շնորհիվ Հանրապետությունում սկսեց զարգանալ պղնձարդյունաբերությունը և շինանյութերի արդյունաբերությունը։

Հայաստանում սկսեց զարգանալ նաև թեթև, հատկապես տեքստիլ արդյունաբերությունը, որը գերազանցապես կենտրոնացած էր Լենինականում։ Հանրապետությունում պայմաններ ստեղծվեցին Հայաստանի սննդարդյունաբերության ճյուղային կառուցվածքը արմատապես փոխելու և արտադրանքի քանակը զգալիորեն ընդլայնելու համար։ Հանրապետության արդյունաբերությունը համախառն արտադրանքի 1913 թ. մակարդակին հասավ 1928 թ. այսինքն, արդյունաբերության վերականգնման շրջանը Հայաստանում, Սովետական Միության արդյունաբերության համեմատությամբ, ավարտվեց ավելի ուշ, իսկ գունավոր մետալուրգիայի բնագավառում՝ 1937 թ.։

Սոցիալիստական ինդուստրացման բնագավառում ձեռք բերված հաջողությունները մեծ դեր կատարեցին երկրում

---

7 «Народное хозяйство СССР в 1970 г.», М., 1971. стр. 138.

8 «Սովետական Հայաստանը 50 տարում» (վիճակագրական նյութերի ժողովածու), Երևան, 1970, էջ 12։

9 «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)», стр. 19.

գյուղատնտեսությունը սոցիալիստական հունով զարգացնելու գործում։

Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը 1927—1928 թթ. 28,2 միլիոն ռուբլուց հնգամյակի վերջին տարում հասցվեց 110 միլիոն ռուբլու։ Այդ գումարի 2/3-ը ստացվել էր խոշոր արդյունաբերությունից[10]։

Անցյալում հետամնաց ագրարային Հայաստանը առաջին հնգամյակի տարիներին արդյունաբերության առաջատար դերի ապահովման շնորհիվ դարձավ ինդուստրիալ-ագրարային երկիր։ Ստեղծվեցին նոր պայմաններ՝ երկրորդ հնգամյակում արդյունաբերության հետագա խոշոր վերելքի համար։

Երկրորդ հնգամյակում Հայաստանի արդյունաբերությունը հիմնականում զարգացավ էլեկտրաէներգիայի արտադրության, գունավոր մետաղների, քիմիական, շինանյութերի, սննդի և թեթև արդյունաբերության գծով։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքը 1932 թ. 111 միլիոն ռուբլուց 1937 թ. հասավ 255 միլիոն ռուբլու, այսինքն՝ աճեց 2,3 անգամ[11]։ Հայկական ՍՍՀ պետական բյուջեն 1933 թ. համեմատությամբ 1937 թ. աճեց 3,5 անգամ։ Երկրորդ հնգամյակում Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ ավելի արագ աճեց, քան միութենականը։ Հայկական ՍՍՀ-ում այն աճեց 12,5 անգամ, իսկ ՍՍՀՄ-ում՝ 8,5 անգամ[12]։

Կուսակցությունը մեր երկրի ժողովուրդների առաջ դրեց կարևոր խնդիր՝ ինդուստրացնել երկիրը։ 1939 թ. մարտին կայացած Համ(բ)Կ XVIII համագումարը հաստատեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա

---

10 Վ. Մելիխսեթյան, Հ. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության (1926—1934 թթ.), պրակ 2, Երևան, 1958, էջ 47։

11 Մ. Ազայան, Ն. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 3 (1935—1945 թթ.), Երևան, 1960, էջ 36։

12 Նույն տեղում։

պլանը, որը նախատեսում էր ծանր ինդուստրիայի, հատկապես պաշտպանական արդյունաբերության խոշոր զարգացում։ Երրորդ հնգամյակի երեք տարիներին Հայաստանում կապիտալ ներդրումները կազմեցին 840 միլիոն ռուբլի։ Այդ տարիներին ընդարձակվեցին լեռնահանքային և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները։ Երևանում և Լենինականում ավարտվեց մի շարք գործարանների շինարարությունը, վերակառուցվեցին որոշ գործարաններ, որոնք հագեցվեցին նորագույն տեխնիկայով։ Աճեց խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների քանակը։ 1913 թ. աշխատող 5 հազար բանվորի դիմաց 1939 թ. կար 25 հազար բանվոր։

Ինդուստրացման հետ կապված խնդիրները Սովետական Հայաստանում լուծվում էին մեծ դժվարություններ հաղթահարելու գնով, որովհետև Հայաստանը անցյալից ժառանգեց խղճուկ և քայքայված տնտեսություն։ «Որքան ավելի հետամնաց է այն երկիրը,— գրում է Վ. Ի. Լենինը,— որին վիճակվել է պատմության դիպվածների հեղափոխություն սկսել, այնքան ավելի դժվար է նրա համար հին, կապիտալիստական հարաբերությունների սոցիալիստական հարաբերություններին անցնելը։ Այստեղ խորտակման խնդիրներին ավելանում են նոր, չլսված դժվար խնդիրներ՝ կազմակերպական խնդիրներ»[13]։

Հանրապետության ինդուստրացման տեղական դժվարություններին ավելանում էին Միության բոլոր հանրապետություններին հատուկ դժվարությունները։ Դրանք էին՝ կապիտալիստական համապարփակ շրջապատման պայմաններում անկախությունը պահպանելու և սոցիալիզմի հաղթանակն իրականացնելու համար ինդուստրացման բարձր տեմպերի ապահովումը, կարճ ժամկետներում ծանր ինդուստրիայի ստեղծումը, ինդուստրացման համար աղբյուրների հայտնաբերումը, ներքին ու արտաքին բշնամիների դիմագ-

13 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 27, էջ 90։

բության հաղթահարումը[14]։ Այդ առթիվ ահա թե ինչ է գրված ՍՄԿԿ ծրագրում. «Դժվարին և անծանոթ էր այն ուղին, որը պետք է անցներ սովետական ժողովուրդը...։ Սոցիալիզմի կառուցումն անչափ դժվարանում էր երկրի սոցիալ-տնտեսական, տեխնիկական և կուլտուրական հետամնացության հետևանքով։ Հաղթանակած բանվորներն ու գյուղացիները չունեին պետական կառավարման համապատասխան կադրեր և նոր հասարակարգի կառուցման փորձ։ Սոցիալիզմի կառուցման դժվարությունները ստանապատկվում էին նրանով, որ ՍՍՀՄ-ը դրեթե երեսուն տարի աշխարհում միակ սոցիալիստական պետությունն էր, հնարավորություն էր ընձեռնում կապիտալիստական շրջապատման կատաղի դրոհներին»[15]։ Արդյունաբերության զարգացման սոցիալիստական տեղաբաշխման պահանջներից ելնելով, նախատեսվում են նախկին ազգային ծայրամասերի ինդուստրացման ավելի բարձր տեմպեր։ Հայաստանի տնտեսական զարգացման տեմպերը ՍՍՀՄ-ի միջինից բարձր էին[16]։

Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներից սկսած, Հայաստանում արագ կերպով զարգացավ էլեկտրաէներգիայի արտադրությունը։ Սակայն հղած էլեկտրաէներգիան չէր բավարարում հանրապետության արագ տեմպերով զարգացող արդյունաբերության պահանջները։ Այդ իսկ պատճառով առաջադրվեց Հրազդան գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու հարցը։ 1938 թ. մի սիստեմի մեջ միացվեցին Երևանի, Լենինականի, Զորագետի, Քանաքեռի հիդրոէլեկտրակայանները։ Հանրապետությունում արդյունաբերության էներգատար ճյուղերը զարգանում էին արագ տեմպերով, որի հետևանքով էլեկտրաէներգիան դարձյալ չէր բավարարում։ Ուստի, փոքր

---

14 Լ. Գ. Աճեմյան, Հայկական ՍՍՀ ինդուստրացման առանձնահատկությունները (ՀՍՍՀ ԳՄ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1967, № 2, էջ 4)։

15 «Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը», Երևան, 1974, էջ 16։

16 «Հոկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը», Երևան, 1967, էջ 33։

գետերի վրա կառուցվեցին մի քանի նոր էլեկտրակայաններ։

1940 թ. Հանրապետության սննդի արդյունաբերության արտադրանքի կեսը տալիս էին «Արարատ» արևսաի սիստեմում գտնվող ձեռնարկությունները, որոնց արտադրած բազմատեսակ գինիներն ու կոնյակները մեծ պահանջարկ ունեին երկրում։ Նախապատերազմյան տարիներին տարեցտարի աճեց կաթի, պանրի, յուղի, պահածոների և հրուշակեղենի արտադրանքը։

1940 թ. Հանրապետության արդյունաբերության արտադրանքի 40 տոկոսը տալիս էր սննդարդյունաբերությունը։

Վերականգնման տարիներին սննդարդյունաբերության զարգացմանը զուգընթաց կառուցվեցին և շահագործման հանձնվեցին նոր գործարաններ, որով ստեղծվեցին սննդի արդյունաբերության նոր ճյուղեր։ Յուրացվեցին արտադրանքի բազմաթիվ նոր տեսակներ։ Առաջին և երկրորդ հընգամյակների տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Երևանի ձկնօճառի, պահածոների, հրուշակեղեն-մակարոնի, կաթի, հացի, ծխախոտի գործարանները, Երևանի ու Լենինականի մսի կոմբինատները։ Արզնիում շարք մտավ հանքային ջրերի, Կալինինոյում՝ շվեյցարական պանրի արտադրության գործարանը և մի շարք այլ գործարաններ ու ֆաբրիկաներ։

Հանրապետության սննդարդյունաբերության 1940 թ. համախառն արտադրանքը 1913 թ. մակարդակը գերազանցից ավելի քան 8 անգամ. այդ թվում՝ գինու արտադրությունը՝ 6, գարեջրինը՝ 9,7, օճառինը՝ 15,8, պահածոներինը՝ 17,3 անգամ[17]։

Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը 1940 թ. թողարկեց 5.700 տոննա մանվածաթել և 26,8 միլիոն մետր զանազան բամբակյա գործվածքներ[18]։ Լենինականը դարձավ բամբակե գործվածքեղենի արդյունաբերության կենտրոն, որը տալիս էր հան-

17 Նույն տեղում, էջ 185։

18 Նույն տեղում, էջ 164։

բապետության բամբակյա գործվածքեղենի արտադրանքի 87 տոկոսը։ Նախապատերազմյան տարիներին գործագործական արհեստանոցներ կազմակերպվեցին Երևանում, Գորիսում, Կիրովականում, Լենինականում, Մարտունիում, Արթիկում և այլուր։

Թեթև արդյունաբերությունը զարգացնելու նպատակով Երևանում, Սարդարապատում (Հոկտեմբերյան) և Արտաշատում շահագործման հանձնվեցին բամբակազտիչ գործարաններ, իսկ Լենինականում հիմնադրվեց մանվածքային ֆաբրիկա, որը տարեցտարի ընդարձակում էր իր արտադրական կարողությունը։ Առաջին, երկրորդ և երրորդ հնգամյակների տարիներին հանրապետության բոլոր քաղաքներում, մասնավորապես Երևանում, Լենինականում և Կիրովականում հիմնադրվեցին տեքստիլ և կարի արդյունաբերության ձեռնարկություններ, որոնք հագեցվեցին տեխնիկական նորագույն սարքավորումներով։

Հանրապետությունում զարգացավ նաև կաշվի և կոշիկի արտադրությունը։ Եթե 1930 թ. արտադրվել է 155 հազար զույգ կոշիկ, ապա 1940 թ.՝ մոտ մեկ միլիոն զույգ։

Կապիտալ ներդրումները պղնձարդյունաբերության մեջ երկրորդ հնգամյակում կազմեցին 20,7 միլիոն ռուբլի։ Դրա շնորհիվ Հայաստանում պղնձի արտադրությունը 1928 թ. համեմատությամբ 1932 թ. աճեց 2,5 անգամ, իսկ 1940 թ.՝ 4,8 անգամ։

1930-ական թվականներին Հայաստանում սկսեց զարգանալ քիմիական արդյունաբերությունը, որը տեղաբաշխվեց Երևանում, Ալավերդում և Կիրովականում։ 1933 թ. շահագործման հանձնվեցին Կիրովականի քիմիական գործարանը՝ Անդրկովկասի քիմիական արդյունաբերության առաջնեկը, 1935 թ.՝ Ալավերդու պղնձարջասպի, 1936 թ.՝ Երևանի խրոմպիկի և կարբիդի նոր գործարանները։ Սովետական Միության մեջ թողարկվող կարբիդի 64 տոկոսը տալիս էր Հայաստանը։ 1940 թ. հանրապետությունում քիմիական արդյունաբերությունն ուներ առաջատար դեր։ Նրա արտադրանքը արտահանվում էր եղբայրական մյուս հանրա-

պետությունները։ Սակայն մեքենաշինության և մետաղամշակման ասպարեզում հանրապետությունը ետ էր մնում։ Նախասովետական շրջանում Երևանում գործում էր Տեր-Ավետիքովի թուջաձուլական մեխանիկական գործարանը, որը պատրաստում էր տարբեր տեսակի տարաններ և գյուղատնտեսական գործիքներ։ Սովետական իշխանության տարիներին այդ գործարանը վերակառուցվեց, ընդարձակվեց և վերածվեց մեքենաշինական գործարանի, որը կատարում էր հանրապետության գործարանների ու ֆաբրիկաների պատվերները։ Մետաղամշակման մյուս ձեռնարկությունը Լենինականի Հեքիմյանների նախկին մեխանիկական գործարանն էր, որը սովետական իշխանության տարիներին սպասարկում էր Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններին, մասնավորապես տեքստիլ կոմբինատին։

Մինչև պատերազմը հանրապետությունում մեքենաշինական նոր ձեռնարկություններ չեն կառուցվում. եղած գործարանները ընդարձակվում, վերակառուցվում և հագեցվում են տեխնիկական նորագույն սարքավորումներով։ Մետաղամշակման արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ 1940 թ. ավելացավ 15 անգամ։

Ժողովրդական տնտեսության և բնակարանային շինարարության վերելքը պահանջում էր ստեղծել շինանյութերի հարուստ բազա։ Սովետական իշխանության առաջին տարիներին հանրապետությունում հայտնաբերվեցին տուֆաքարերի խոշոր պաշարներ, որոնց օգտագործումը կբավարարեր կատարվող հսկա շինարարության պահանջը։ Տուֆաքարերի պաշարներն ավելի լավ օգտագործելու նպատակով 1928 թ. շահագործման հանձնվեց Լենինական-Արթիկ երկաթգիծը։

1933 թ. շահագործման հանձնվեց Արարատի ցեմենտի գործարանը, որը 1940 թ. հանրապետությանը տվեց 95 հազար տոննա ցեմենտ, ապա կիր, շիֆեր և այլ շինանյութեր։ Տարեցտարի տեխնիկապես հագեցվեց Արթիկտուֆի հանքավայրը։ Դրա շնորհիվ 1940 թ. նրա տված քարի կեսից

ավելին գնում էր Հանրապետությունից դուրս՝ տարբեր քաղաքներ։ 1930—1940 թթ. շահագործման հանձնվեցին շինանյութերի նոր ձեռնարկություններ՝ Երևանի պեմզաբլոկի գործարանը, մարմարի ֆաբրիկան, Դավալուի (Արարատ) կրի գործարանը, աղյուսի և կղմինդրի արտադրության օբյեկտները, որոնք տարեցտարի ավելացնում էին իրենց արտադրանքը։ Հայաստանի շինանյութերի արդյունաբերությունը 1928 թ. համեմատությամբ 1940 թ. աճել էր 120 անգամ։ Չնայած դրան, այն դեռևս չէր բավարարում հանրապետության աճող պահանջները։ Նախկինում հետամնաց փայտամշակման արհեստանոցների փոխարեն նախապատերազմյան տարիներին շահագործման հանձնվեցին Իջևանի փայտամշակման, Երևանի Կիրովի ու Կույբիշևի անվան կահույքի ֆաբրիկանները և «Հաղթանակ» կահույքի արտելը։ 1940 թ. փայտամշակման և կահույքի արտադրության ծավալը 1913 թ. մակարդակը գերազանցեց 7 անգամ։ Հանրապետությունում զարգացավ նաև պոլիգրաֆ արդյունաբերությունը։

Սովետական Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը, եթե 1928 թ. համեմատությամբ 1940 թ. աճել է 9 անգամ, ապա էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 34 անգամ, մեքենաշինությանն ու մետաղամշակությանը՝ 17 անգամ[19]։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման և արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման շնորհիվ մեր երկիրը հասավ անտեսական խոշոր հաջողությունների։ Յարական Ռուսաստանի նախկին ծայրամասային անտեսապես հետամնաց շրջանները, որպես իրավահավասար հանրապետություններ, տնտեսության զարգացման առավել արագ տեմպերով հասան Միության տնտեսական զարգացման մակարդակին։ Սոցիալ-տնտեսական վերափոխումներն ամբողջո-

---

19 Պ. Ոսկերչյան, *Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1920—1940 թթ.*, Երևան, 1966, էջ 38։

վին փոխեցին ազգային Հանրապետությունների, այդ թվում՝ Հայկական ՍՍՀ-ի, դեմքը։

1920—1940 ԹԹ. Հայկական ՍՍՀ կապիտալ շինարարության մեջ ներդրվել է մոտ 2,3 միլիարդ ռուբլի։ Դրա շնորհիվ արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ բարձրացավ, հասնելով 78,1 տոկոսի։ Սովետական Հայաստանը դարձավ առաջավոր արդյունաբերական երկիր, զարգացած դյուղատնտեսությամբ։ Բարձրացավ աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակը։ Վերացան շահագործող դասակարգերը։ Ամրապնդվեց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը։ Նախապատերազմյան տարիներին կառուցված արդյունաբերական ձեռնարկությունների, հիդրոէլեկտրակայանների շնորհիվ Հանրապետությունում զարգացան արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր՝ քիմիական, մեքենաշինական, շինանյութերի։ Արդյունաբերության զարգացումը խթան հանդիսացավ Հանրապետության հին քաղաքների խոշորացման և նոր քաղաքների ու քաղաքատիպ ավանների առաջացման ու զարգացման համար։

* * *


Նախապատերազմյան տարիներին Երևանը դարձավ Սովետական Միության ինդուստրիալ կենտրոններից մեկը։ Երևանի արդյունաբերական ձեռնարկությունները էլեկտրաէներգիայով ապահովելու նպատակով 1926 թ. շահագործման հանձնվեց Երևանի հիդրոէլեկտրակայանը։ Վերջինիս արտադրած էժան էներգիայի բազայի վրա 1927 թ. գործարկվեց Երևանի կարբիդի գործարանը, որը Սովետական Միությանը ազատեց արտասահմանյան երկրներից ոսկով կարբիդ գնելուց։ 1926—1930 ԹԹ. շարք մտան Երևանի մեխանիկական, բամբակաղաիչ, պահածոների, կաթի գործարանները։ Վերակառուցվեց կաշվի, գինու-կոնյակի արտադրությունը։ Այնուհետև շահագործման հանձնվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում Երևանի

Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանը, որի վրա ներդրվել էր 152 միլիոն ռուբլի։ Այդ գործարանի կառուցման շնորհիվ 1940 թ. աշխարհում առաջին անգամ սկսեց արտադրվել սինթետիկ քլորոպրենային կաուչուկ, որն անվանվեց նաիրիտ։ Այսպիսով, նախապատերազմյան տարիներին Երևանում ստեղծվեց մեքենաշինական, քիմիական, փայտամշակման, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերություն։

Սովետական իշխանության առաջին օրերին Ալեքսանդրապոլում պետականացվեցին դարեջրի և մեխանիկական գործարանները, ապա շահագործման հանձնվեցին ոսմնեի, լիմոնադի, օճառի գործարաններն ու էլեկտրակայանը։ Սովետական Ռուսաստանի Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքից 1922 թ. վերջերին Հայաստան այցի եկան մի խումբ բանվորներ։ Նրանք ծանոթացան հանրապետության աշխատավորության կյանքի պայմաններին։ Վերադառնալուց հետո նրանք Վ. Ի. Լենինի ցուցումով Հայաստանին նվեր ուղարկեցին 2172 իլիկ ունեցող մանող մեքենաներ և գործող 32 հաստոցներ՝ տեքստիլ արդյունաբերություն հիմնելու համար։

Վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու նպատակով 1924 թ. հունվարին Ալեքսանդրապոլը վերանվանվեց Լենինական։

Լենինականցիները կառուցեցին մանվածքային առաջին ֆաբրիկան, որը 1924 թ. հունիսի 15-ին թողարկեց առաջին մետր կտավը։ Այդ օրն էլ դարձավ Լենինականում տեքստիլ արդյունաբերության ստեղծման օրը։ Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունները և երկաթուղային տրանսպորտն էլեկտրաէներգիայով ապահովելու նպատակով Շիրակի ջրանցքի վրա կառուցվեց և 1928 թ. նոյեմբերի 29-ին շահագործման հանձնվեց հիդրոէլեկտրակայանը։ Նույն օրն էլ շահագործման հանձնվեց նորակառույց տեքստիլ ֆաբրիկան։ Հետագա տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին տեքստիլ կոմբինատի, դուլպա-արիկոտաժի ֆաբրիկայի արտադրական շենքերի խոշոր հա-



Երևանի համայնապատկերը

մալիրները, որոնք հագեցված էին ժամանակակից տեխնիկայով։ Տարեցտարի ավելացան այդ ձեռնարկությունների արտադրական կարողությունները։ Լենինականում 1921—1940 թթ. կատարվեցին 165 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ[20]։ Այդ ներդրումների շնորհիվ Լենինականում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին մի քանի տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք տարեկան տալիս էին 8 միլիոն ռուբլու համախառն արտադրանք[21]։

Սովետական իշխանության առաջին տարիներին Մեծ Ղարաքիլիսայում գործում էին տնայնագործական մի քանի արհեստանոցներ, աղյուսի և կղմինդրի գործարանները։

1924 թ. մայիսին շահագործման հանձնվեց 125 ձիաուժ կարողությամբ հիդրոէլեկտրակայանը։ 1929 թ. սկսվեց Մեծ Ղարաքիլիսայի քիմիական գործարանի շինարարությունը։ Դժվարին պայմաններում, արտաահմանյան ֆիրմաների օգնությամբ կառուցված և 1932 թ. նոյեմբերին շահագործման հանձնված Զորագեսի էլեկտրաէներգիայի բաղայի վրա 1933 թ. մարտին գործարկվեց Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի կրի արտադրամասի առաջին վառարանը։ Այնուհետև շահագործման հանձնվեցին մոբթումուշտակի, կարի, կոշիկի արտելները, կահույքի ֆաբրիկան և մեխանիկական գործարանը։

1935 թ. հունվարին Մեծ Ղարաքիլիսան վերանվանվեց Ս. Մ. Կիրովի անվամբ՝ Կիրովական։

Կիրովականի քաղաք դառնալը և սոցիալիստական վերակառուցումը կապված են Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի, նրա հետագա ընդարձակման ու զարգացման հետ։ Այդ գործարանի կառուցման կապակցությամբ Կիրովականում ծավալվեցին քաղաքաշինական խոշոր աշխատանքներ։

Ինչպես տեսնում ենք, նախապատերազմյան 20 տարիներին հանրապետության տարբեր վայրերում կառուցվեցին

---

20 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 4, էջ 126։

21 Նույն տեղում, էջ 127։

ու շահագործման հանձնվեցին արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ և հիդրոէլեկտրակայաններ, որոնց շնորհիվ Սովետական Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր վերածվեցին արդյունաբերական կենտրոնների և դարձան սոցիալիստական նոր քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1938 թ. հրամանագրերով քաղաքներ կոչվեցին (Երևանից, Լենինականից և Կիրովականից բացի) Ալավերդին, Դափանը, Գորիսը, Կամոն, Դիլիջանը, Ստեփանավանը և Էջմիածինը[22], իսկ Անիպեմզան, Արզնին, Ախթալան, Շամլուղը և Քուլափերանը կոչվեցին քաղաքատիպ ավաններ։

Սոցիալիստական շինարարության տարիներին ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ Սովետական Հայաստանում քաղաքային բնակչության աճի տեմպերը գերազանցեցին ամբողջ բնակչության աճման տեմպերին։ Դրա հետևանքով աստիճանաբար փոխվեց քաղաքային ու գյուղական բնակչության տոկոսային հարաբերակցությունը։ 1926 թ. Սովետական Հայաստանի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 1913 թ. 10,4 տոկոսից բարձրացավ 19 տոկոսի։ Հանրապետության ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումների շնորհիվ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 1940 թ. հասավ 30 տոկոսի[23]։

Եթե Սովետական Հայաստանի բնակչությունը 1913 թ. մինչև 1940 թ. մեկ միլիոնից հասել էր 1,3 միլիոնի, ապա

22 Դեռևս 1924 թ. ապրիլի 8-ի ՀՍՍՀ կենտգործկոմի որոշմամբ հանրապետությունում քաղաքներ են համարվել Երևանը, Լենինականը, Մեծ Ղարաքիլիսան (Կիրովական), Նոր-Բայազետը (Կամո), Դիլիջանը, Գորիսը և Վաղարշապատը (Էջմիածին), քաղաքներին վերապահված բոլոր իրավունքներով ու պարտականություններով («Ժամանակագրական ժողովածու, 1920—1938», էջ 197)։ Այն ժամանակ Երևանից և Լենինականից բացի, մյուսները փաստորեն քաղաքներ չէին, որովհետև չունեին իրենց արդյունաբերական ձեռնարկությունները, քաղաքի պահանջվող կոմունալ տնտեսությունը և ոչ էլ քաղաքային բնակչության բավարար քանակ։ Բնակչությունը դեռ ապրում էր գյուղատնտեսությունից ստացվող եկամուտներով։

23 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 369։

նույն ժամանակամիջոցում քաղաքային բնակչությունը 104 հազարից հասել էր 390 հազարի կամ աճել էր 3,3 անգամ[24]։

Քաղաքային բնակչության աճի աղբյուրներ հանդիսացան բնական աճը՝ 40 տոկոս, գյուղական վայրերը քաղաքների վերածվելը՝ 9 տոկոս, գյուղական բնակչության քաղաքգալը՝ 40 տոկոս և դրսից եկածները՝ 11 տոկոս։

Եռապատերազմյան տարիներին քաղաքային բնակչությունը շարունակից բարձր տեմպերով աճել և նրա տեսակարար կշիռը 1970 թ. հասավ 60 տոկոսի։

* * *

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունն իր աշխատանքները վերակառուցեց հայրենիքի պաշտպանության շահերին համապատասխան՝ ռազմաճակատի կարիքները հոգալու, ռազմապաշտպանական գործը ամուր հիմքերի վրա դնելու, ռազմաճակատն անհրաժեշտ ամեն ինչով ապահովելու համար։

Ելնելով Համկ(բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի 1941 թ. հունիսի 29-ի դիրեկտիվներից[25], Հայաստանի արդյունաբերության բոլոր ճյուղերն իրենց աշխատանքները վերակառուցեցին։ Վերադաս մարմինների կարգադրությամբ մեծաքանակ ձեռնարկություններն սկսեցին զենք ու զինամթերք արտադրել։ Բացի այդ, նրանք արտադրում էին կարբիդ-կալցիում, պղնձարջասպ, պղնձալար և այլ նյութեր, որոնք անհրաժեշտ էին երկրի ռազմական արդյունաբերության համար։

Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարությամբ արեց անհրաժեշտ ամեն ինչ՝ թիկունքում նորմալ աշխատանք կազմակերպելու, ռազմաճակատի կարիքները բավարարելու՝ ռազմամթերքի, զենքի, հանդերձանքի արտադրանքն ավելացնելու համար։

---

24 Նույն տեղում։

25 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VIII, Երևան, 1970, էջ 21։

Հայրենական մեծ պատերազմի վերջին տարիներին վերակավեցին Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի, Շամշադինի ծխախոտի ֆերմենտացիոն, Շահումյանի շրջանի մետաքսի, Երևանի մահուդի և նուրբ գործվածքեղենի ֆաբրիկաների, Քանաքեռի ալյումինի, Երևանի ժամացույցի, հատատոցաշինական գործարանների, Կիրովականի ապոտային պարարտանյութերի, Սպիտակի շաքարի և արդյունաբերական այլ ձեռնարկություններ կառուցման աշխատանքները։ 1944—1945 թթ. գործարկվեցին Երևանի ավտոպահեստամասերի, ավտոդողերի, էլեկտրամեքենաշինական գործարանները, Կիրովականի կորդի ֆաբրիկան և մի շարք այլ ձեռնարկություններ[26]։

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի ծանր ու դժվարին տարիներին շինարարական աշխատանքները չդադարեցին, և Հանրապետության քաղաքներում շահագործման հանձնվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ։

2. ԲԱԶՄԱՃՅՈՒՂ, ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ՀԱԳԵՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հանրապետության էներգետիկ պաշարներն ավելացնելու նպատակով հետպատերազմյան տարիներին շահագործման հանձնվեցին Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանները։ Այդ կասկադի առաջնեկը՝ Քանաքեռգէսը, շահագործման հանձնվեց 1936 թ., Սևանի ստորերկրյա էլեկտրակայանը՝ 1949 թ., իսկ ամենախոշորը՝ Գյումուշգէսը, 1953 թ., Արզնիգէսը՝ 1956 թ., Աթարբեկյանգէսը՝ 1959 թ., իսկ Երևանի հիդրոէլեկտրակայանը՝ 1960 թ.[27]։ Սրանց հետ միասին հանրապետության տարբեր մասերում ձգվեցին հաղորդման բարձրավոլտ գծերը՝ Երևան—Սևան, Դիլիջան—Կիրովական, Լենինական—Հոկտեմբերյան—էջմիածին, ապա

26 Նույն տեղում, էջ 102։

27 Ս. Ջուրաբյան, Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը 50 տարում, Երևան, 1971, էջ 93։

Սպիտակ—Նախիջևան, Մարտունի—Վարդենիսի լեռնաշղթայով դեպի Տաթև—Ղափան—Քաջարան և այլն:

1964 թ. էլեկտրաէներգիա արտադրվին նաև ջերմաէլեկտրակայանները: Երևանի, Կիրովականի և Հրազդանի ջերմաէլեկտրակայանների արտադրած էներգիան 1969 թ. կազմում էր Հանրապետության ամբողջ էլեկտրաէներգիայի արտադրության 80 տոկոսը: Ներկայումս Երևանի ջերմաէլեկտրակենտրոնը 1,5 անգամ ավելի էլեկտրաէներգիա է արտադրում, քան Սևան-Հրազդան կասկադի բոլոր հիդրոէլեկտրակայանները միասին[28]:

Հանրապետության վառելիքա-էներգետիկ բալանսը բարելավվեց սկզբում (1960 թ.) Ղարադաղ—Երևան գազամուղի միջոցով, իսկ հետագայում՝ Ստավրոպոլից և Իրանից ստացվող բնական գազով:

Հայաստանը բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ միութենական հանրապետությունների մեջ գրավում է առաջին տեղերից մեկը: 8-րդ հնգամյակում սկսվեց Սրփա-Սևան ջրատարի և Հրազդանի պիտական շրջանային էլեկտրակայանի շինարարությունը:

1970 թ. էլեկտրաէներգիայի պահանջը Հանրապետությունում եղել է 8,9 միլիարդ կիլովատ ժամ, իսկ սեփական արտադրանքը հասնում էր 6,1 միլիարդ կիլովատ ժամի: Պակասում էր 2,8 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրաէներգիա: Այդ պակասը լրացվում էր հղբայրական մյուս հանրապետություններից ստացվող էլեկտրաէներգիայով:

Էլեկտրաէներգիայի աճը Հայկական ՍՍՀ-ում

1940 թ.	0,4	միլիարդ	կիլովատ	ժամ
1950 »	0,9	»	»	»
1960 »	2,7	»	»	»
1965 »	2,9	»	»	»
1970 »	6,1[29]	»	»	

28 Նույն տեղում, էջ 97:

29 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 180.

Հանրապետության էներգետիկայի զարգացման համար 9-րդ հնգամյակում ներդրվեց 479 միլիոն ռուբլի կամ երկու անգամ ավելի, քան 8-րդ հնգամյակում: Հրազդանի պետական շրջանային, Մեծամորի ատոմային էլեկտրակայանները և Շամբի հիդրոկայանը, երբ լրիվ գործարկվեն, էլեկտրաէներգիայի արտադրությունը հանրապետությունում կհասնի 10,5 միլիարդ կիլովատ ժամի[30], որի 18 տոկոսը կարտադրվի հիդրոկայաններում, իսկ 82 տոկոսը՝ ջերմային էլեկտրակայաններում[31]:

Կոմունիստական կուսակցությունը իրականացնելով ինդուստրացման լենինյան պլանը, երկրում զարգացրեց բազմաճյուղ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերությունը:

Եթե ՍՍՀՄ-ի մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության արտադրանքը 1940 թ. ընդունենք 100 տոկոս, ապա 1970 թ. այն հասավ 2831 տոկոսի, այդ թվում մեքենաշինությանը՝ 3838 տոկոսի[32]:

Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերական խոշոր կենտրոններ դարձան ՌՍՖՍՀ-ը, Ուկրաինան, Բելոռուսիան, Հայաստանը, Վրաստանը և Լիտվան:

Ազգային հանրապետություններում մեքենաշինության արագ զարգացման օրինակ կարող է ծառայել Սովետական Հայաստանը, որի մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության համախառն արտադրանքի աճի տեմպերը ամենաբարձրերից էին երկրում: Հանրապետության ամբողջ արդյունաբերությունը 1940 թ. համեմատությամբ 1970 թ. աճել է մոտ 20 անգամ, իսկ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերությունը՝ ավելի քան 200 անգամ[33], միութենականը՝ 28 անգամ: Մեքենաշինության առանձին

---

30 Բ. Մուրադյան, «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թվականների հնգամյա պլանի վերաբերյալ ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվների մասին», էջ 23:

31 «Սովետական Հայաստան», 22 դեկտեմբերի, 1971:

32 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 204.

33 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 10:

ենթաճյուղեր՝ էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, հաստոցաշինությունը, տաքքաշինությունը և հատկապես հաստոցների արտադրությունը զարգացել են շատ ավելի բարձր տեմպերով, իսկ վերջին տարիներին ռադիոտեխնիկական և էլեկտրոնային արտադրության թողարկումը նույնպես ավելացել է բարձր տեմպերով:

Մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերությունը դարձավ Հանրապետության արդյունաբերության ամենատարածված ճյուղերից մեկը:

Հանրապետության մեքենաշինական ձեռնարկություններում 1970 թ. աշխատում էր 94 հազար մարդ (արդյունաբերության մեջ աշխատողների 32 տոկոսը), իսկ համախառն արտադրանքի մեջ մեքենաշինության բաժինը հասնում էր 22,8 տոկոսի[34]:

Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերությունը ՀՍՍՀ-ում զարգանում է մի քանի ենթաճյուղերով:

Հանրապետությունում 1965 թ. կային 82 մեքենաշինական գործարաններ, որոնցից 48-ը գտնվում էր Երևանում, 11-ը՝ Լենինականում, 5-ը՝ Կիրովականում, 18-ը՝ Հանրապետության այլ շրջաններում:

Հանրապետության մեքենաշինության զարգացմանը մեծ չափերով նպաստում են մասնագիտացված գիտահետազոտական 10 ինստիտուտները և կոնստրուկտորական 5 բյուրոները:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը մեր մեքենաշինության հիմնական ճյուղերից մեկն է, որի համախառն արտադրանքը կազմում է Հանրապետության մեքենաշինության համախառն արտադրանքի 50 տոկոսը: Արդեն 1970 թ. Հայաստանի էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը թողարկվող արտադրանքի ծավալով ՍՍՀՄ-ում գրավեց երրորդ տեղը, զիջելով միայն ՌՍՖՍՀ-ին և Ուկրաինական ՍՍՀ-ին: Միայն Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկ-

34 «Армения в единой семье народов СССР», Ереван, 1972, стр. 35.

տրամեքենաշինական գործարանը Թողարկում էր 170 անուն մեքենա։

Քիմիական արդյունաբերությունը Հայաստանում առավել արագ տեմպերով զարգացավ հատկապես յոթնամյակի և նրան հաջորդած 8-րդ հնգամյակի տարիներին։ Հիմնովին վերակառուցվեցին և նորագույն սարքավորումներով հագեցվեցին գործող ձեռնարկությունները, որոնք իրենց արտադրանքը մի քանի անգամ ավելացրին։ Միաժամանակ կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին Կիրովականի արհեստական մանրաթելի, Սևանի ապակեթելերի, Հրազդանի ցեմենտի, Երևանի քիմիական ռեակտիվների, վիտամինների, դեղամիջոցների, գիննեթվի գործարանները։

Հանրապետության քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները 1970 թ. արտադրել են 150 տեսակի արտադրանք և շուրջ 700 քիմիական ռեակտիվներ, օրգանական բարդ պրեպարատներ։ Երևանի Կիրովի անվան քիմիական կոմբինատը սինթետիկ կաուչուկի կարևոր տեսակի՝ նաիրիտի, հիմնական մատակարարողն է։

Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը դարձավ սարքաշինության, ռադիոէլեկտրոնիկայի և ոսկերչական արդյունաբերության ձեռնարկություններին սինթետիկ կորունդի հիմնական մատակարարողը։

Հայաստանի կառավարության միջնորդությամբ ՍՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց Հայկական ՍՍՀ-ում էլեկտրատար արդյունաբերության զարգացումը որոշ չափով սահմանափակելու մասին[35] (Սևանա լճի պաշարները ավելի խնայողաբար ծախսելու և հանրապետության բանուժը ռացիոնալ օգտագործելու նպատակով)։ Հանրապետության քիմիական արդյունաբերության զարգացումը 1955 թ. իր ուղղությունը փոխեց դեպի ոչ-էլեկտրատար արտադրությունը։

Քիմիական արդյունաբերության հումքային բազայի ապահովման տեսակետից խոշոր նշանակություն ունեցավ Ղա-

35 «ՀԿՊ կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XIX համագումարին», Երևան, 1958, էջ 20։

բադաղ-Երևան գազամուղի կառուցումը: Դրա շնորհիվ լայն հնարավորություններ ստեղծվեցին Հանրապետության քիմիական արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման և մի շարք հին ճյուղերի տեխնոլոգիայի փոփոխման ու կատարելագործման համար:


Կիրովի անվան ֆոսֆորական կառուցվածքի գործարանում բնական գազի հիման վրա կազմակերպվեց ամոնիակի արտադրությունը: Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատում ևս գազը սկսեց լայնորեն օգտագործվել:

1970 թ. Հանրապետության քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները մի քանի օրում ետ են ստացել այնքան արտադրանք, որքան ետ են ստացել 1940 թ.: Հայաստանը քիմիական արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալով Սովետական Միության հանրապետությունների շարքում ՌՍՖՍՀ-ից և Ուկրաինայից հետո գրավում էր 3-րդ տեղը, իսկ բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի ետ ստացվածքով՝ առաջին տեղը:

Հանրապետության քիմիական արդյունաբերության ինտենսիվ զարգացմանը և նրա տեխնիկական մակարդակի բարձրացմանը մեծապես օգնում են գիտատեխնոլոգիական մի շարք հիմնարկներ՝ օրգանական և անօրգանական քիմիայի, նաև օրգանական քիմիայի, կենսաբանական քիմիայի, ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտները և քիմիական ֆիզիկայի լաբորատորիան, որտեղ աշխատում են բարձրորակ գիտատեխնիկական կադրեր:

Անցյալում Հայաստանում գունավոր մետալուրգիան ներկայացվում էր միայն պղնձարդյունաբերությամբ, իսկ ետպատերազմյան տարիներին՝ մոլիբդենի, ալյումինի, ինչպես նաև այլ գունավոր մետաղների արտադրությամբ: Գունավոր մետալուրգիայի զարգացման համար Հայաստանում կան հումքի պաշարներ:

Ետպատերազմյան տարիներին առավել կատարելագործվեց լեռնահանքային արդյունաբերությունը, իսկ պղնձա-



Աշխատավորների դեպուտատների Երևանի բազաբային սովետի գործադիր կոմիտեի նախկին նախագահ Ա. Երզնկյան



արդյունաբերության տեխնիկան մեծ առաջադիմություն ապրեց։

Ալավերդու գործարանը տալիս էր ևս չզտված պղինձ, որը վերամշակվում էր Միության այլ գործարաններում։ 1948 թ., երբ շահագործման հանձնվեց էլեկտրալիզի արտադրամասը, տեղում սկսեցին արտադրել տարբեր չափերի ռաֆինացված պղինձ, որը տրվում էր Երևանի կաբելի գործարանին՝ էլեկտրալարերի արտադրության համար։ Պղնձարդյունաբերությունը զարգացնելու նպատակով Քաջարանում, Ղափանում, Ագարակում, Դաստակերտում և Ախթալայում ստեղծվեցին հանքահարստացման կոմբինատներ։

Յոթնամյակի և նրան հաջորդող 8-րդ հնգամյակի տարիներին պետությունը մի քանի տասնյակ միլիոն ռուբլի ներդրեց Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի վերակառուցման համար։ 1970 թ. երկրում առաջին անգամ Ալավերդում նոր տեխնոլոգիայով իրագործվեց պղնձի էլեկտրաձուլումը։ Կոմբինատի վերակառուցումից հետո նրա կարողությունն ավելացավ մի քանի անգամ։ Այժմ Սովետական Հայաստանը պղնձի արտադրանքով Միության մեջ գրավում է երրորդ տեղը՝ Ղազախստանից և ՌՍՖՍՀ-ից հետո։

Քաջարանում, Դաստակերտում և Ագարակում հայտնաբերված պղնձամոլիբդենային պաշարների բազայի վրա հանրապետությունում ամենաարագ տեմպերով զարգացավ մոլիբդենի արտադրությունը։ Լրիվ կարողությամբ 1953 թ. գործարկված Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի համար ներդրվել է ավելի քան 500 միլիոն ռուբլի, այն դարձել է Միության խոշորագույն առաջավոր ձեռնարկություններից մեկը։

Մոլիբդենի արտադրությամբ Սովետական Հայաստանը կարևոր տեղ է գրավում ՍՍՀՄ-ում։ Այժմ այն դարձել է հանրապետության գունավոր մետալուրգիայի՝ կարևոր ճյուղը, որը տալիս է նրա եկամտի մոտ 70 տոկոսը։

Երևանի ալյումինի գործարանի առաջին հերթը շահագործման հանձվեց 1950 թ., իսկ երկրորդ հերթը՝ 1953 թ.։

Գործարանը թողարկում է սալիկներ, գլանվածք, փայլաթիթեղ, ալյումինալար և կոնդենսատորային փայլաթիթեղ։ Երևանի ալյումինի գործարանը երկրի նման տիպի գործարանների շարքում առաջնակարգ ձեռնարկություններից մեկն է։

Հանրապետությունում հայտնաբերվել են նաև ոսկու պաշարներ։ Վերջինիս ստացման համար 1966 թ. Բասարգեչարի (Վարդենիս) շրջանի Զոդի ոսկու հանքավայրում շահագործման հանձնվեց հարստացուցիչ ֆաբրիկա, որը մշակում է Զոդից և հանրապետության այլ վայրերից ստացված հանքաքարը։ Սկսեց կառուցվել ոսկու հանքային կոմբինատը Զոդում, իսկ Արարատի շրջանում՝ ոսկեկորզման ֆաբրիկան, որը մշակելու է հանրապետության բոլոր վայրերից ստացված ոսկու հանքաքարը։

Կառուցվում է Երևան—Սևան—Շորժա երկաթգիծը 120 կիլոմետր երկարությամբ, որը մեծապես կնպաստի Զոդում եղած արդյունաբերական ձեռնարկությունների զարգացմանն ու բանվորական ավանի բարգավաճմանը։

Հանրապետության արդյունաբերության հիմնական ֆոնդերի կառուցվածքում 1970 թ. գունավոր մետալուրգիային բաժին էր ընկնում շուրջ 11 տոկոսը։ Գունավոր մետալուրգիայի զարգացումը խթանում է Սովետական Հայաստանի ինդուստրացումը և նրա տնտեսության ծաղկումը։

Ետպատերազմյան տարիներին թեթև արդյունաբերության հիմնական կենտրոններ դարձան Լենինականն ու Երևանը, ապա Կիրովականը, Կամո և Գորիս քաղաքները։ 1970 թ. Լենինականում արտադրվել է 80 միլիոն քառակուսի մետր գործվածք, որը կազմում է հանրապետության բամբակե գործվածքների համախառն արտադրանքի 77 տոկոսը։

Սովետական իշխանության տարիներին զարգացավ նաև գորգագործությունը։ Գորգի արտադրությունը 1970 թ. հասավ 1.300 հազար քառակուսի մետրի, որի կեսը տալիս է 1963 թ. շահագործման հանձնված Իջևանի մանրաթենական ամենախոշոր գորգագործական կոմբինատը։ Հայաստանի



Ալեքսանդրապոլի Համազգեստատեսիլը

գորգերն արտահանվում են Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, և այլ երկրներ։

Թեթև արդյունաբերության մեջ առաջատար տեղ է գրավում տրիկոտաժի արտադրությունը։ Այն կազմում է թեթև արդյունաբերության համախառն արտադրանքի 30 տոկոսը։ Հայաստանում տրիկոտաժի արդյունաբերության առաջնեկն է 1924 թ. հիմնված Լենինականի գուլպա-տրիկոտաժի ֆաբրիկան, որը հետագա տարիներին հիմնովին վերակառուցվեց։ Երևանում, Կիրովականում, Ստեփանավանում, Նոր Բայազետում և Գորիսում շահագործման հանձնվեցին տրիկոտաժեղենի արտադրության ֆաբրիկաներ։ Տրիկոտաժեղենի արդյունաբերությամբ Հայաստանը Միության մեջ գրավում է առաջատար տեղերից մեկը։

Փոքր քաղաքներում աշխատանքային ռեսուրսները օգտագործելու նպատակով տրիկոտաժի արտադրության ձեռնարկությունների մասնաճյուղեր են կազմակերպվել Արթիկում, Չարենցավանում, Թալինում, Արարատում։ Լենինականի գործվածքային ֆաբրիկայի մասնաճյուղը գործում է Հոկտեմբերյանում, Երևանի երրորդ կարի ֆաբրիկայի մասնաճյուղը՝ Էջմիածնում։ Կառուցվել են մանվածքային-տրիկոտաժի կոմբինատը Արտաշատում, թիկնոցների ֆաբրիկան Ալավերդում և այլն։

Հանրապետությունում արագ զարգացավ կարի արդյունաբերությունը։ Եթե 1940 թ. կար 86 կարի ձեռնարկություն, որի մեծ մասը կենտրոնացված էր Երևանում, ապա ետպատերազմյան տարիներին նման ձեռնարկություններ ստեղծվեցին Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ստեփանավանում, Նոր Բայազետում, Գորիսում և այլ քաղաքներում ու շրջանային կենտրոններում։

Հանրապետության կաշվի արդյունաբերությունը արագ զարգացավ հատկապես 1960-ական թվականներին։

Երևանի Ստ. Շահումյանի անվան կաշվի գործարանը հիմնովին վերակառուցվեց, տեղադրվեցին ժամանակակից սարքեր, ընդարձակվեցին արտադրամասերը, ավտոմատաց-

վեցին տեխնոլոգիական պրոցեսները։ Գործարանը դարձավ Մխուրյան առաջավոր և խոշոր ձեռնարկություններից մեկը։

Կաշվի գործարանի արտադրության բազայի վրա հանրապետությունում արագ տեմպերով զարգացան կոշկեղենի, կաշվե-գալանտերեայի արդյունաբերությունը, կիրովականում մորթու-մուշտակի, ինչպես նաև լայն սպառման ապրանքների արտադրությունը։ Դրան նպաստեց 1962 թ. վերջերին «Մասիս» ֆիրմայի կազմակերպումը, որի մեջ մտան 12 ֆաբրիկաններ։ Հանրապետությունում կոշիկի արտադրությունը 1970 թ. հասավ մոտ 10 միլիոն զույգի, 1940 թ. 0,9 միլիոնի դիմաց[36]։

Սովետական Հայաստանի թեթև արդյունաբերության շուրջ 48 ձեռնարկություններում 1970 թ. աշխատել են 70 հազար[37] բանվորներ, 1940 թ. 12.509-ի դիմաց։ 1940 թ. 44 միլիոնի դիմաց թեթև արդյունաբերության ձեռնարկությունները 1970 թ. տվել են 499 միլիոն ռուբլու համախառն արտադրանք, որը կազմում է հանրապետության ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի 21,5 տոկոսը[38]։

Եռպատերազմյան տարիներին հանրապետության քաղաքներում, քաղաքատիպ ավաններում ու շրջաններում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին սննդարդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ, վերակառուցվեցին, ընդլայնվեցին ու նորագույն տեխնիկայով հագեցվեցին գործող ձեռնարկությունները։ Դրանց շնորհիվ Հայաստանի սննդի արդյունաբերությունը դարձավ բազմաճյուղ, որի մեջ առաջատարը գինեգործությունն է, որը տալիս է ամբողջ ճյուղի համախառն արտադրանքի 40 տոկոսը։ Հանրապետության սննդարդյունաբերական ձեռնարկությունները 1970 թ. թողարկել են հացաբուլկեղեն և հրուշակեղեն, պահածոներ, շաքար, բուսական և եթերային յուղեր, մսամթ-

---

36 *В. И. Кисляков,* Легкая индустрия за 50 лет, М., 1967, стр. 86.

37 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 31.

38 «Армения в единой семье народов СССР», стр. 35.

թերք, կաթնամթերք, գինի, կոնյակ, գարեջուր, հանքային ջրեր, օրգանական ներկեր և այլն։ Դրանք ուղարկվել են նաև Սովետական Միության տարբեր շրջաններ և արտասահմանյան երկրներ։

Սովետական Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները 1970 թ. տվել են խորդենու յուղի միութենական արտադրանքի 40, կոնյակի՝ 14, հանքային ջրերի՝ 10 և գինու՝ 5 տոկոսը[39]։

Տարեցտարի ավելացել է գինիների, կոնյակի և պահածոների արտադրությունը, բարձրացել է դրանց որակը։ Դրա լավագույն վկայությունն այն է, որ վերջին 15 տարում հայկական գինիներն ու կոնյակները միջազգային ցուցահանդեսներում ու տոնավաճառներում շահել են 63 ոսկի, 33 արծաթե և 2 բրոնզե մեդալներ[40]։

Եթե 1940 թ. հանրապետության պահածոների գործարանները արտադրել են 17,3 միլիոն, ապա 1970 թ.՝ 241,4 միլիոն[41] պայմանական տուփ պահածո։

Հանրապետության սննդարդյունաբերության մեջ կապիտալ ներդրումներն առաջին հնգամյակում կազմել են մեկ միլիոն 140 հազար ռուբլի, իսկ 1970 թ.՝ 71 միլիոն ռուբլի։ Աճել է աշխատանքի արտադրողականությունը՝ հիմնականում նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման, արտադրական պրոցեսների մեքենայացման և ավտոմատացման շնորհիվ։

Եռապատերազմյան հնգամյակների տարիներին հանրապետությունում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին սննդի արդյունաբերության բազմաթիվ խոշոր ձեռնարկություններ, այդ թվում՝ Երևանի գինու և շամպայն գինիների և Հոկտեմբերյանի կոնյակի, Կիրովականի, Մասիսի, Սևանի և Էջմիածնի պահածոների, Շահումյանի անալկահոլ

---

39 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ սննդարդյունաբերության մինիստրության պլանֆինբաժնից։

40 «Սովետական Հայաստան», 15 դեկտեմբերի, 1970։

41 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 261.

խմիչքների, Ջերմուկի և Սևանի հանքային ջրերի գործարանները, Լենինականի հրուշակեղենի ֆաբրիկան և բազմաթիվ այլ ձեռնարկություններ։

Սննդի արդյունաբերությունը 1970 թ. միավորում էր 170 պետական խոշոր և 270 մանր (կոլտնտեսություններում) ձեռնարկություններ։ Դրանցում աշխատում էին շուրջ 25 հազար մարդ, այդ թվում՝ մոտ 12 տոկոս ինժեներատեխնիկական աշխատողներ[42]։ Սննդարդյունաբերության ձեռնարկությունները 1970 թ. տվել են Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի 24,2 տոկոսը[43],

Հանրապետությունում արագ տեմպերով զարգացավ նաև փայտամշակման արդյունաբերությունը։ Սովետական իշխանության տարիներին Երևանում, Դիլիջանում, Լենինականում, Կիրովականում, Ստեփանավանում, Ղափանում, Կամոյում և այլուր ստեղծվեցին անտառարդյունաբերական տնտեսություններ, սղոցարաններ, փայտամշակման և կահույքի ֆաբրիկաներ։ Այնուհետև բացվեցին թղթի և ստվարաթղթի, ավելի ուշ՝ հայելիների, կահույքի ֆուրնիտուրայի ֆաբրիկանները, իսկ 1956 թ. կառուցվեց դաշնամուրի գործարանը, տարեկան 5 հազար դաշնամուրի արտադրողականությամբ։ Այս ձեռնարկությունները հագեցված են ժամանակակից բարձր արտադրողական սարքավորումներով։ Իջևանի, Երևանի, Կողբի և Թումանյանի փայտամշակման կոմբինատներից ամենախոշորը Իջևանինն է, որը թողարկում է մեծ քանակությամբ փայտասալիկ, տախտակ և այլն։ Երևանի ու Դիլիջանի ճկած կահույքի ֆաբրիկանները, Թումանյանի ու Կողբի փայտամշակման կոմբինատները, հայելու և դաշնամուրի, փայտամշակման ֆաբրիկանները մասնագիտացված են, իսկ մյուսները կմասնագիտացվեն 10-րդ հնգամյակում։

Անտառային և փայտամշակման արդյունաբերության

---

42 «Армения в единой семье народов СССР», стр. 35.

43 *Նույն տեղում, էջ 35։*

մինիստրության 22 ձեռնարկություններ 1970 թ. տվել են 33 միլիոն ռուբլու[44] համախառն արտադրանք:

Լայն սպառման ապրանքների նկատմամբ բնակչության աճող պահանջմունքները բավարարելու նպատակով Հանրապետությունում կազմակերպվեց տեղական արդյունաբերության մինիստրություն, որին հանձնվեց 13 ձեռնարկություն: Մինիստրությունը վերակառուցեց ու ընդլայնեց հին ձեռնարկությունները, դրանք զինեց նորագույն տեխնիկայով, ինչպես նաև ստեղծեց նոր ձեռնարկություններ: Տեղական արդյունաբերության մինիստրությունը 1970 թ. ընդգրկել է 10 ենթաճյուղ՝ սև մետալուրգիայի, մեքենաշինության և մետաղամշակման, քիմիական, կաշվի-կոշիկի, տեքստիլ-կարի, հախճապակու և այլն: Առաջիկա տարիներին տեղական արդյունաբերության ձեռնարկություններ են բացվելու Հանրապետության միջին ու փոքր քաղաքներում ու գյուղական վայրերում: Տեղական արդյունաբերության կապիտալ ներդրումները 8-րդ հնգամյակի 21,2 միլիոն ռուբլու դիմաց 10-րդ հնգամյակում հասնելու են 40 միլիոն ռուբլու, իսկ արտադրական անձնակազմը կրկնապատկվելու է, հասնելով 15 հազար հոգու[45]:

Այսպիսով, տեղական արդյունաբերական 45 ձեռնարկություններ (արտադրական անձնակազմը 7.850 հոգի) 1970 թ. տվել են 58,7 միլիոն ռուբլու համախառն արտադրանք[46]:

Սովետական իշխանության 50 տարիներին (1921—1971 թթ.) Հանրապետության արդյունաբերության մեջ կատարվեց 3,2 միլիարդ ռուբլու կապիտալ ներդրում[47]: Այդ ներդրումներով կառուցվեցին 404 նոր խոշոր գործարաններ: Վերակառուցվեցին, ընդարձակվեցին և նորագույն սարքե-

---

44 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ առտառային և փայտամշակման արդյունաբերության մինիստրությունից:

45 «Սովետական Հայաստան», 22 օգոստոսի, 1972:

46 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ տեղական արդյունաբերության մինիստրության պլանֆինբաժնից:

47 «Армения в единой семье народов СССР», стр. 29.

րով հագեցվեցին շուրջ 230 գործարաններ։ Դրա շնորհիվ Հանրապետությունում ստեղծվեց բազմաճյուղ արդյունաբերություն, իսկ վերջին 15 տարում Հանրապետությունում զարգացան արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են էլեկտրոնիկան, էլեկտրատեխնիկական սարքաշինությունը, ճշգրիտ մեքենաշինությունը, քիմիան, մանրէակենսաբանական արդյունաբերությունը։ Այսինքն, հիմնադրվեցին ժողովրդական տնտեսության տեխնիկական առաջադիմությունը որոշող ճյուղեր։

Հայկական ՍՍՀ-ն այժմ ավտոմատացման միջոցների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, սարքերի, ապարատների մի շարք տեսակների արտադրությամբ երկրում գրավում է առաջին տեղերից մեկը[48]։

Արագ տեմպերով աճեց ՀՍՍՀ արդյունաբերաարտադրական անձնակազմը։ Այն 1940 թ. միջին տարեկան 44 հազարից 1970 թ. հասավ 273 հազարի[49]։ Բնականաբար, խոշոր չափերով աճեց նաև աշխատանքի արտադրողականությունը։ Վերջինս, եթե 1940 թ. ընդունենք 100 տոկոս, ապա 1970 թ. այն հասավ 412 տոկոսի[50]։

Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ 1970 թ. աշխատում էին 31 հազար բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներ, որոնց կեսը Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի սաներն են։ Պոլիտեխնիկական ինստիտուտը կադրեր է պատրաստում շինարարության-ճարտարապետության, քիմիական արդյունաբերության, մեքենաշինության, հաշվողական տեխնիկայի, ռադիոտեխնիկայի, էլեկտրոնիկայի, թեթև արդյունաբերության, մետալուրգիայի և լեռնային և այլ մասնագիտությունների գծով։ Պոլիտեխնիկական ինստիտուտը մինչև 1970 թ. երկրի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառնե-

---

48 «Правда», 5 августа, 1971.

49 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 159.

50 Նույն տեղում, էջ 163։

րին տվել է 15.700 շրջանավարտ[51]։ Նրանք մեծ հաջողությամբ աշխատում են ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում, ինչպես Հանրապետությունում, այնպես էլ նրանից դուրս։

Աշխատանքի արտադրողականության բարձրացմանը մեծապես նպաստում են գյուտարարներն ու ռացիոնալիզատորները։

1958 թ. հոկտեմբերին ստեղծվեց գյուտարարների և ռացիոնալիզատորների համամիութենական ընկերությունը, որի տեղական կազմակերպությունները ստեղծվեցին Հանրապետության գործարաններում, կառույցներում, գիտահետազոտական հիմնարկներում և գյուղատնտեսության մեջ։ Այդ կազմակերպությունները զգալի աշխատանք կատարեցին արտադրության տեխնիկական առաջընթացը ապահովելու ուղղությամբ։ 1970 թ. Հանրապետությունում դրանց թիվը 532 էր՝ 42.240 անդամով։ Դրանցից վաստակավոր գյուտարարներ էին 7-ը, վաստակավոր ռացիոնալիզատորներ՝ 182-ը։ 1970 թ. արվել է 19.600 ռացիոնալիզատորական առաջարկություն, ընդունվել է 19 հազարը, ներդրվել է 15.240-ը։ Ստացված տնտեսական օգուտը կազմել է 24.800 հազար ռուբլի[52]։

Հայաստանի արդյունաբերության զարգացման մեջ նոպատարազմյան տարիներին ակնառու են արդյունաբերության համակողմանի զարգացումը, ճյուղային կառուցվածքի դրական փոփոխությունները, արդյունաբերության տարածքային տեղաբաշխման միակողմանիության հաղթահարումը և աշխատանքի որակական ցուցանիշների բարելավումը։

Արդյունաբերության նման աճը պայմանավորված է հանքային և հումքային հարուստ պաշարներով, ինչպես նաև որակյալ աշխատուժի առկայությամբ։ Հանրապետությունում 1950 թ. արտադրության միջոցների արտադրությունը կազ-

---

51 Տվյալները վերցված են Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի կադրերի բաժնից։

52 Տվյալները վերցված են գյուտարարների և ռացիոնալիզատորների համամիութենական ընկերության հանրապետական խորհրդից։

մում էր ընդհանուրի 53, իսկ 1970 թ.՝ 32 տոկոսը։ Այդ նույն ժամանակ սպառման առարկաների արտադրությունը 47 տոկոսից հասավ 68 տոկոսի[53]։ Ժողովրդի կենսամակարդակի բարձրացման նպատակով կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ սպառման առարկաներ արտադրող ճյուղերի զարգացման տեմպերը առաջ անցան արտադրության միջոցների արտադրության տեմպերից։

Այսպիսով, արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման հետևողական կենսագործման, տեղական հումքային և էներգետիկ պաշարների օգտագործման շնորհիվ Սովետական Հայաստանում ստեղծվեց միութենական արդյունաբերության հետ փոխադարձորեն կապված, ժամանակակից առաջնակարգ տեխնիկայով հագեցված և մասնագիտացված բազմաճյուղ արդյունաբերություն։

Հանրապետության ժողովրդական տնտեսության և քաղաքային բնակչության խոշոր աճը, հասարակության կառուցվածքի մեծ տեղաշարժերը, բանվոր դասակարգի և գյուղացիության քանակական և որակական փոփոխությունները, մտավորականության, հատկապես գիտատեխնիկական մտավորականության արագ աճը խոշոր հաջողություններ բերեցին Հայաստանի աշխատավորությանը։

* * *

Ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում հայ ժողովրդի ձեռք բերած խոշոր հաջողությունները չի կարելի պատկերացնել առանց սովետական բազմազգ ժողովուրդների համագործակցության։ ՍՍՀՄ բոլոր հանրապետություններն իրար հետ զոդված են եղբայրական անշահախնդիր կապերով։ Բարեկամական օգնությունը, կուլտուրական, տնտեսական, ինչպես նաև գիտական մտքի նվաճումների փոխանակումը մեր կյանքի հիմնական օրենքն է։

Հանրապետության արդյունաբերական արտադրության բազմաճյուղ բնույթը և տեխնիկական բարձր մակարդակը

53 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 26.

պայմանավորում են Սովետական Միության բոլոր շրջանների հետ Հայաստանի սերտ և ավելի ընդլայնվող տնտեսական կապերը և նպաստում արտադրանքի հարաճուն արտահանությանը արտասահմանյան բազմաթիվ երկրներ։

Սովետական Հայաստանը տնտեսական սերտ կապերի մեջ է անդրկովկասյան եղբայրական հանրապետությունների հետ։

Ադրբեջանը Վրաստանին և Հայաստանին տալիս է ավելի քան 200 տեսակի արտադրանք (նավթ ու նավթամթերքներ, պողպատյա խողովակներ, հորատման սարքեր և այլն)։ Հայաստանն ու Ադրբեջանը Վրաստանից ստանում են սև մետաղի գլանվածքի և մետաղահատ հաստոցների որոշ տեսակներ, սննդարդյունաբերությանը և լեռնահանքային արդյունաբերությանն անհրաժեշտ սարքեր, բեռնատար ու ինքնաթափ ավտոմեքենաներ, թուղթ և այլն։ Հայաստանը Վրաստանին և Ադրբեջանին մատակարարում է արդյունաբերական ավելի քան 100 տեսակի արտադրանք. Հայաստանի մեքենաշինությունը և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը Վրաստանին և Ադրբեջանին տալիս է ավելի քան 45 տեսակի արտադրանք։ Սովետական Հայաստանը Վրաստանին և Ադրբեջանին մատակարարում է նաև գունավոր մետաղներ, բարձրորակ տեքստիլ արտադրանք, կաշվեղեն, տուֆ, պեմզա, բազալտ, պեռլիտ, հանքային ջրեր և այլն։

Եռպատերազմյան տարիներին մեծ չափերով զարգացան Սովետական Հայաստանի տնտեսական կապերը ՍՍՀՄ տնտեսական շրջանների՝ հատկապես Ռուսաստանյան Ֆեդերացիայի հետ։ ՍՍՀՄ-ի բոլոր հանրապետություններից Հայաստան ներմուծվող արտադրանքի մեջ ամենամեծ բաժինը (53 տոկոս) ընկնում է Ռուսաստանյան Ֆեդերացիային։ Հանրապետությունը ՌՍՖՍՀ-ից ստանում է տարբեր տեսակի ավտոմեքենաներ և հաստոցներ, շուրջ մի քանի տասնյակ տեսակի սև և գունավոր մետաղներ, պողպատ և մեծ քանակությամբ փայտ։

Սովետական Հայաստանը, փոխադարձ տնտեսական

սերտ կապերի մեջ գտնվելով Ռուսաստանյան Ֆեդերացիայի հետ, նրան մատակարարում է ուժային տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, մետաղահատ և շաղափող հաստոցներ, կոմպրեսորներ, ներտաշ հղկող հաստոցներ, էլեկտրաճշգրիտ չափիչ գործիքներ, էլեկտրական լամպեր, կաբել և այլն։

Հայաստանը տնտեսական սերտ կապեր ունի նաև Ուկրաինայի հետ և այնտեղից ստանում է սև և գունավոր մետաղներ, Ուկրաինայից բերվում են էլեկտրատեխնիկական, քիմիական և սննդի արդյունաբերության, ինչպես նաև մետաղամշակության համար բազմատեսակ մեքենաներ, հաստոցներ և սարքավորումներ։ Ուկրաինան Հայաստանին տալիս է նաև ավտոբուսներ, ավտոմեքենաներ, էքսկավատորներ, բուլդոզերներ, տարբեր մակնիշի տրակտորներ, կոմբայններ, շարքացաններ, էլեկտրական վերամբարձ կռունկներ և այլն։

Մերձբալթյան հանրապետությունները ևս տնտեսական սերտ կապեր ունեն Հայկական ՍՍՀ-ի հետ։ Լատվիան Հայաստանին տալիս է սննդի արդյունաբերության տարբեր ճյուղերի համար անհրաժեշտ սարքավորումներ, տրամվայներ, փոքր տարողությամբ ավտոբուսներ, բարձրորակ ռադիոսարքավորումներ, կապի միջոցներ և այլն։ Լատվիայից և Լիտվայից Հայաստանը ստանում է ստվարաթուղթ, տպագրական և պիտակային թուղթ։ Մերձբալթյան հանրապետություններին Հայաստանի տված արտադրանքի 60 տոկոսը կազմում է էլեկտրատեխնիկական և մեքենաշինական արդյունաբերության արտադրանքը։

Սովետական Հայաստանը ՌՍՖՍՀ-ին, Ուկրաինային, Բելոռուսիային, միջինասիական և մերձբալթյան մյուս հանրապետություններին տալիս է նաև գինիներ, կոնյակներ, հանքային ջրեր և պահածոներ։

Սովետական Հայաստանի մասնագետներն ակտիվ մասնակցություն են ունեցել Արաբական Միացյալ Հանրապետության Ասուանի հզոր համալիրի, Բաղդադում՝ էլեկտրատեխնիկական, Չեխոսլովակիայում՝ քիմիական գործա-

րանների, Կանադայի ու Աֆղանստանի հիդրոէլեկտրակայանների, Հնդկաստանի, Կուբայի, Նեպալի, Ալժիրի և այլ երկրների արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման աշխատանքներին։

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները մասնակցել են Լայպցիգի, Պրագայի, Բելգրադի, Պոզնանի, Իզմիրի, Կասաբլանկայի, Աբրայի, Թունիսի և այլ քաղաքների տոնավաճառներին ու ցուցահանդեսներին։ Ներկայացված արտադրանքի տարբեր տեսակներ շահել են ոսկի, արծաթե մեդալներ և դիպլոմներ։

3. ՀԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ժողովրդական տնտեսության զարգացման հետպատերազմյան հնգամյա պլաններով Սովետական Միության բոլոր հանրապետություններում նախատեսված էր ավերված քաղաքների ու արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնում, արտադրողական ուժերի, բնակչության նոր, ավելի ռացիոնալ պլանավոր տեղաբաշխում, ինչպես նաև արդյունաբերական ու բնակելի նոր կենտրոնների՝ քաղաքների ու քաղաքատիպ ավանների ստեղծում։

Ժամանակակից պայմաններում քաղաքների գոյացման, առաջացման ու զարգացման գլխավոր գործոնը տնտեսությունն է, ամենից առաջ՝ արդյունաբերությունը, որը և ապահովում է քաղաքային բնակչության հիմնական զբաղվածությունը։

Արտադրության սոցիալիստական եղանակը լայն հնարավորություններ ստեղծեց սովետական երկրի բոլոր հանրապետությունների զարգացման համար։ Սովետական Միությունում արդյունաբերության զարգացման հետ արմատապես փոխվեցին, խոշորացան ու զարգացան մեր երկրի հին քաղաքները, առաջացան մեծ թվով խոշոր, մեծ, միջին և փոքր նոր քաղաքներ։

1940 թ. Սովետական Միությունում եղել է 1241, իսկ Հայաստանում՝ 9 քաղաք, 1950 թ. համապատասխանաբար՝ 1451 և 11 քաղաք, 1960 թ.՝ 1685 և 15 քաղաք, 1965 թ.՝ 1832 և 23 քաղաք, 1970 թ.՝ 1943 և 23 քաղաք[54]։

Ինչպես հայտնի է, քաղաքները բաժանվում են հինգ խմբի՝ փոքր, միջին, մեծ, խոշոր և խոշորագույն։

1. Փոքր քաղաքներ. ա) որոնք ունեն մինչև 10 հազար բնակիչ.

բ) ունեն 10—20 հազար բնակիչ։

2. Միջին քաղաքներ.ա) ունեն 20—50 հազար բնակիչ։

բ) ունեն 50—100 հազար բնակիչ։

3) Մեծ քաղաքներ. ա) ունեն 100—250 հազար բնակիչ։

բ) ունեն 250—500 հազար բնակիչ։

4) Խոշոր քաղաքներ. ունեն 500 հազարից մինչև մեկ միլիոն բնակիչ։

5) Խոշորագույն քաղաքներ, որոնք ունեն մեկ միլիոնից ավելի բնակիչ[55]։

Ըստ այս նորմաների, 1970 թ. տվյալներով Հանրապետությունում կար մեկ խոշոր քաղաք. դա Հանրապետության մայրաքաղաք Երևանն է։ Մեծ քաղաքներն են Լենինականը և Կիրովականը, որոնք համարվում են Հանրապետության արդյունաբերական երկրորդ և երրորդ խոշոր կենտրոնները։ Միջին քաղաքներն են Էջմիածինը, Դավիանը, Հրազդանը, Հոկտեմբերյանը, Ալավերդին և Աբովյանը։ Փոքր քաղաքներն են Դիլիջանը, Կամոն, Քաջարանը, Գորիսը, Արթիկը, Արտաշատը, Սևանը, Սպիտակը, Իջևանը, Սևանը, Աշտարակը, Չարենցավանը, Արարատը և Ջերմուկը։

Քաղաքների՝ սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի խոշոր կենտրոնների առաջացումն ու զարգացումը, բնույթն ու դերը որոշվում են հասարակական արտադրության եղանակով։ Վերջինով է պայմանավորված

54 ЦСУ СССР «Жилищно-коммунальное хозяйство». (Статистический сборник), М., 1971, стр. 5.

55 «Научные проблемы географии населения», М., 1967, стр. 119.

նաև բնակչության տեղաբաշխումը, ինչպես և դրա հետ անմիջականորեն կապված՝ պատմական տվյալ ժամանակաշրջանում և երկրի տվյալ մասում բնակելի խոշոր կենտրոններ ստեղծելու անհրաժեշտությունը: Դրա համար էլ կոնկրետ պատմական պայմաններում ամեն մի քաղաք ունի իր ծագման ու զարգացման պրոցեսը, իր ընդհանուր օրինաչափությունները: Դրանք որպես վճռական գործոններ խթանում կամ խոչընդոտում են զարգացման պրոցեսը, իրենց կնիքը դնելով տվյալ քաղաքի սոցիալ-անտեսական բնույթի վրա և որոշելով նրա դերն ու տեղը այդ երկրի կյանքում: Դրա հետ միաժամանակ յուրաքանչյուր քաղաք, որպես առանձին մի կենդանի օրգանիզմ, ունի իր յուրահատկությունները, ուրույն վարչաքաղաքական ու տնտեսական-կուլտուրական դեմքը, որով տարբերվում է մյուս քաղաքներից:

Քաղաքների զարգացման ուղղությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրանց առանձնահատկությունները: Քաղաքները հանդիսանում են արտադրողական ուժերի տարածքային կազմակերպման կարևոր տարրեր, աշխատանքի բաժանման օղակներ, միաժամանակ, այդ սիստեմի զարգացման գլխավոր գործոններ: Բացի այդ, քաղաքները հանդիսանում են բնակեցման (տեղաբաշխման) ձևի ապրելու միջավայր: Այս ձևերը միշտ տարբեր են, բայց կա նաև ընդհանրություն, որը բնորոշ է բոլոր քաղաքներին: Դրանք են. 1) քաղաքի արտադրական պրոֆիլը. 2) շրջանի բնական պայմանները. 3) քաղաքի մեծությունը[56]: Քաղաքի մեծությունը, մարդաշատությունը բնորոշում է նրան որպես ապրելու միջավայր: Դրա համար էլ առաջացել է մեծ ու փոքր քաղաքների պրոբլեմը: Միաժամանակ, քաղաքի համար շատ կարևոր են շրջապատի բնական պայմանները, արտադրության պրոֆիլը և այլ առանձնահատկություններ:

Սովետական Միության բոլոր հանրապետությունները զարգանում են ըստ տնտեսության ու բնակչության սոցիա-

---

56 *Г. М. Лаппо, Ф. М. Листенгурт,* О путях развития в СССР городов разных типов («География населения», М., 1967, стр. 118).

լիստական տեղաբաշխման սկզբունքների։ Ընդ որում, հաշվի են առնվում հանրապետությունների ընդհանուր շահերը՝ միասին վերցրած և յուրաքանչյուրինը՝ առանձին։ Այդ սկզբունքները ուղղված են այն բանին, որպեսզի՝ ա) խելացի, առավել եկամտաբեր օգտագործվեն երկրի հարստությունները, բնական պաշարներն ու մարդկային ուժը. բ) զարգանան Միության բոլոր հանրապետությունները, երկրի բոլոր մասերը. գ) արտադրություն կազմակերպվի այն վայրերում, ուր աշխատանքը կլինի ավելի արտադրողական։

Այսպիսով, երկրի բոլոր բնակելի կենտրոնների զարգացումը ՍՍՀՄ-ում գործող իրավաքաղաքական և տնտեսական նորմերի պայմաններում դադարում է զուտ տեղական հարց լինելուց և ստանում է համամիութենական նշանակություն։ Դա թույլ է տալիս քաղաքի տնտեսությունը դիտելու որպես ընդհանուր ժողովրդական տնտեսության բաղկացուցիչ մաս, որը զարգանում է ընդհանուր տնտեսությունից ստացված եկամուտներով։ Այսպիսով, սոցիալիստական հասարակարգի պայմաններում քաղաքաշինությունն ստանում է համապետական նշանակություն ու բնույթ։

Ինչպես մեր երկրի մյուս քաղաքներին, այնպես էլ Երևանին, իբրև խոշոր քաղաքի, բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ ա) տնտեսական-աշխարհագրական բարենպաստ դիրքը. քաղաքը մեծանալով ձեռք է բերում ընդունակություն՝ սեփական ուժերով բարելավելու իր տնտեսա-աշխարհագրական վիճակը. բ) բազմաֆունկցիոնալությունը. գ) հսկայական կազմակերպական դերը, որ բխում է վարչական, քաղաքական, տնտեսական ու կուլտուրական պարտականությունների կենտրոնացումից. դ) բնակչության տեղաշարժը ձևավորելու ունակությունը (ագլոմերացիա). ե) քաղաքում առկա մի քանի արդյունաբերական շրջանների գոյությունից բխում է նախագծային կառուցվածքի բարդությունը, որովհետև այդ շրջանները քաղաքի կենտրոնի հետ կապվելու անհրաժեշտություն ունեն և կարիք է զգացվում լրացուցիչ կենտրոններ

ստեղծելու. ղ) քաղաքային կոմունալ տնտեսության, հատկապես տրանսպորտի բարդությունը[57]։

Խոշոր քաղաքների զարգացումը ժողովրդական տնտեսության տարածքային կառուցվածքի կատարելագործման օրինաչափ ձևն է։ Արտադրողական ուժերի զարգացման հետ մեկտեղ աճում է հենակետային կենտրոնների պահանջը, որի բավարարումը տնտեսակազմակերպական իմաստով ամրացնում է տարածքները։ Խոշոր քաղաքներին յուրահատուկ է առաջնորդող, գլխավորող դերը ինչպես տարածքային, այնպես էլ ճյուղային արտադրողական ուժերի կազմակերպման գործում։ Դրանցում կենտրոնացված են գլխամասային ձեռնարկությունների գործարանները՝ տվյալ բնագավառի հետանկարային զարգացման համար։

Մեր երկրում քաղաքների առաջացման ու զարգացման խոշոր տեմպերը ձեռք են բերվում երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պայմաններում։

Սոցիալիստական քաղաքների զարգացման գլխավոր պայմանը արդյունաբերության ճիշտ տեղաբաշխումն է, նրա պլանային զարգացումը, արտադրողական ուժերի պլանային աճը։ Այս ուղղությամբ մեր հանրապետությունում խոշոր աշխատանքներ են ծավալվել, ելնելով կուսակցության և կառավարության դիրեկտիվներից, որտեղ նշված է. «Հանրապետության արդյունաբերությունը տեղաբաշխել այն հաշվով, որ կառուցվող ձեռնարկությունները ավելի մոտ լինեն հումքի աղբյուրներին, զարգացնել արդյունաբերությունը ոչ միայն քաղաքներում, այլև առանձին շրջաններում և բնակավայրերում[58]։ Այժմ ցույց տանք, թե ինչպես է կատարվել արդյունաբերության տեղաբաշխումն ու զարգացումը Հանրապետության մայրաքաղաք Երևանում։

---

57 *Г. М. Лаппо, Е. Х. Троицкая,* Пути развития крупных городов в СССР («Научные проблемы географии населения», М., 1967, стр. 125—126).

58 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 699։

Երևանի արդյունաբերությունը բուռն վերելք ապրեց հատկապես նախապատերազմյան տարիներին և այն դարձավ երկրի արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը։ Եթե սովետական իշխանության գոյության 50 տարիներին պետական կապիտալ ներդրումների ծավալը Երևանում կազմել է ավելի քան երկու միլիարդ ռուբլի, այդ թվում 1921—1928 թթ.՝ 3 միլիոն, 1959—1965 թթ.՝ 857 միլիոն, ապա միայն 1970 թ. այն կազմել է 234,1 միլիոն ռուբլի[59]։

Այդ կապիտալ ներդրումների շնորհիվ մայրաքաղաքում այժմ գործում են 225 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք երկրին տալիս են 500 տեսակի հիմնական արտադրանք։ Երևանի գործարաններն ու ֆաբրիկաները 1970 թ. տվել են 1 միլիարդ 581 միլիոն ռուբլու համախառն արտադրանք, 1940 թ. 200 միլիոնի և 1913 թ.՝ 15 միլիոնի դիմաց[60]։

Սովետական իշխանության տարիներին Երևանը դարձավ Սովետական Միության ինդուստրիալ խոշոր կենտրոններից մեկը։ Արդյունաբերական բազմաթիվ նոր ձեռնարկությունների գործարկումը, ժամանակակից տեխնիկայի պահանջների ոգով հին գործարանների վերակառուցումը, դրանց կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը մեծապես նպաստեցին ամբողջ երկրի մասշտաբով Երևանի՝ որպես կարևոր արդյունաբերական խոշոր կենտրոնի, դերի հետագա բարձրացմանը։ Նախապատերազմյան տարիներին Երևանում բուռն զարգացում սկսեց ապրել ճշգրիտ մեքենաշինությունը, սարքաշինությունը, էլեկտրամեքենաշինությունը, ռադիոէլեկտրոնիկան, գունավոր մետալուրգիան, ավտոմոբիլաշինությունը, հաշվիչ-մաթեմատիկական և ժամանակակից էլեկտրոնային սարքերի արտադրությունը։ Եթե այսօր Հայաստանն էլեկտրամեքենաշինական արդյունաբերության արտադրանքով Ռուսաստանյան Ֆեդերացիայից և Ուկրաինայից հետո Միության մեջ գրավում է երրորդ տեղը, ա-

59 Տվյալները վերցված են Երևանի քաղաքային վիճակագրական վարչությունից։

60 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 1, էջ 242։

պա դրանում հիմնական դերը պատկանում է Երևանին։ Նրան բաժին է ընկնում Հանրապետությունում արտադրվող ճշգրիտ սարքերի և ռադիոտեխնիկական արդյունաբերական արտադրանքի մեծ մասը[61]։ Հատկանշական է, որ այդ արտադրանքի բազմաթիվ տեսակների արտադրության տեխնոլոգիան մշակվում է Երևանում, նրա գիտահետազոտական ինստիտուտներում ու լաբորատորիաներում։

Երևանը Սովետական Միության այն խոշոր քաղաքներից է, որը կարճ ժամանակամիջոցում աճել է ավելի արագ, քան ազգային հանրապետությունների ցանկացած մայրաքաղաք։ Այսպես, մինչև 1970 թ., Կիևը և Բաքուն աճել են 1,4, Թբիլիսին՝ 1,5, Ռիգան՝ 1,8, Վիլնյուսը և Տաշքենդը՝ 1,3, իսկ Երևանը՝ 3 անգամ[62]։ Այդ աճը հետևանք է հանրապետությունում արտադրողական ուժերի անհամաչափ տեղաբաշխման և Երևանում չափից ավելի կենտրոնացման։

Երևան քաղաքի բնակչության աճի աղբյուրների կառուկտուրան 1920—1970 թթ. (տոկոսներով)։

Տարիները	Ի հաշիվ	
	բնական աճի	միգրացիայի
1920—1926	50,0	50,0
1926—1939	19,4	80,6
1939—1959	33,4	66,6
1959—1970	46,6	53,4[63]

1927—1970 թթ. Երևան եկածների թիվը կազմում է 800 հազար, իսկ մեկնածներինը՝ 400 հազար մարդ։

Մայրաքաղաքի արդյունաբերության աննախընթաց վե-

61 Լ. Զարիբջանյան, Երևան, Երևան, 1969, էջ 14։

62 Ռ. Հովսեփյան, Երևան քաղաքի զարգացման հարցի շուրջ («Վեհինյան ուղիով», 1968, № 12, էջ 91)։

63 Ռ. Վարդանյան, Երևանի աճի և զարգացման կարգավորման ու կառավարման հարցեր («Հայաստանի արդյունաբերություն», 1975, № 3, էջ 54)։

բնլքը արդյունք է նրա բանվոր-ծառայողների անդուլ աշխատանքի։ Երևանում 1970 թ. աշխատում էին 369 հազար բանվոր-ծառայողներ[64]։

Երևանը դարձել է նաև հանրապետության գիտահետազոտական, առողջապահական հիմնարկների, բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական հաստատությունների, արվեստի, գրականության ու կուլտուրայի զարգացման գլխավոր օջախը, հայ ժողովրդի մշակույթի իսկական կենտրոնը, որի ազդեցությունը տարածվում է ամբողջ հայության մշակութային կյանքի վրա։

Երևանի—մայրաքաղաքի տնտեսական զարգացումը, բազմաճյուղ արդյունաբերության ստեղծումը նրան դարձրել են համապետական նշանակություն ունեցող քաղաք, որը բացառիկ դեր է կատարում Հանրապետության ժողովրդական տնտեսության, քաղաքների ու շրջանների զարգացման գործում։ Առանց Երևանի, նրա հզոր արդյունաբերության չի կարելի պատկերացնել Հանրապետության քաղաքներում արդյունաբերության զարգացումը, ինչպես նաև գյուղի սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնց վրա են խարբսխվում աշխատավորության նյութական բարեկեցությունը և կուլտուր-կենցաղային պայմանների բարելավումը։

Երևանը, իբրև խոշոր քաղաք, ունի շատ առավելություններ։ Այն ժամանակակից տրանսպորտի բոլոր տեսակներով կապված է դրսի հետ։ Ունի մատակարարման լայն ցանց, էներգետիկ հզոր բազա, քաղաքային պատշաճ կոմունիկացիաներ, դպրոցական, առողջապահական և կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց, գիտահետազոտական և նախագծային ինստիտուտներ, բնակարանային ընդարձակ ֆոնդ, որակյալ բանվորական և ինժեներատեխնիկական կադրեր, նպաստավոր պայմաններ՝ արտադրության մասնագիտացման, կոոպերացման ու համակենտրոնացման համար։ Այս բոլորը հիմք են հանդիսանում արտադրողական

---

64 «Ереван в цифрах (статистический сборник)», Ереван, 1972, стр. 103.

ուժերի զարգացման համար և տնտեսական մեծ արդյունք են տալիս։ Այդ իսկ պատճառով Երևանի աճը չի դադարում[65]։

Քաղաքի աճը ունենում է նաև բացասական հետևանքներ. կեղտոտվում են օդն ու ջուրը, աճում է քաղաքային աղմուկը, առաջանում են տրանսպորտային դժվարություններ և այլն։ Երկրի խոշոր քաղաքներում տեղ գտած նման բացասական հետևանքներից խուսափելու նպատակով, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 9-րդ հնգամյա պլանի դիրեկտիվներում ասված է. «Անշեղորեն իրականացնել խոշոր քաղաքների աճը սահմանափակելու կուրսը, որպես կանոն, դադարեցնել այդ քաղաքներում արդյունաբերական նոր ձեռնարկությունների տեղաբաշխումը, բացի բնակչության ու քաղաքային տնտեսության սպասարկման հետ կապված օբյեկտներից»[66]։

Ազգային հանրապետությունների մայրաքաղաքների աճը բարձրացնում է ժողովրդի թե՛ տնտեսական, թե՛ կուլտուրական և թե քաղաքական կյանքի զարգացման մակարդակը։ Երևանի աճը դանդաղեցվում է ոչ միայն այնտեղ արդյունաբերական նոր ձեռնարկություններ չտեղադրելու, այլ նրա շուրջը քաղաք-արբանյակներ ստեղծելու միջոցով։

Ինչպես նշվեց, Սովետական Հայաստանի մեծ քաղաքներն են Լենինականը և Կիրովականը։ Արդյունաբերության և տրանսպորտի զարգացումը Լենինականում մեծ վերելք ունեցավ 5—8-րդ հնգամյակների տարիներին, երբ կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին հզկող հաստոցների, էլեկտրատեխնիկական, սարքաշինական, միկրոէլեկտրաշարժիչների, կենցաղային էլեկտրասարքավորումների և այլ գործարաններ։ Սրանց շնորհիվ Լենինականում ծնունդ առան արդյունաբերության նոր ճյուղեր։ Ընդարձակվեց, հիմնովին վերակառուցվեց ու նորագույն տեխնիկայով հագեց-

65 Մ. Ադոնց, Հանրապետության քաղաքների հետագա զարգացման հարցերը («Սովետական Հայաստան», 11 դեկտեմբերի, 1969)։

66 «ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 9-րդ հնգամյակի պլանի վերաբերյալ», Երևան, 1971, էջ 69։

վից Լենինականի երկաթուղային հանգույցը: Երկաթուղային գծի էլեկտրիֆիկացման կապակցությամբ ստեղծվեց էլեկտրաքարշային դեպո: Լենինական կայարանից տարբեր ուղղություններով 1970 թ. ամեն օր դուրս էր գալիս 22 գնացք: Քաղաքում գործող արդյունաբերական 45 ձեռնարկությունները 1970 թ. տվել են մոտ 400 տեսակի արտադրանք՝ գործվածքեղեն, դուլպաներ, միկրոշարժիչներ, դարբնոցամամլիչային և էլեկտրական սարքեր, գորգեր և այլն: Դրամական արտահայտությամբ Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունները 1970 թ. տվել են 245 միլիոն ռուբլու համախառն արտադրանք, 1940 թ. 8 միլիոնի և 1913 թ.՝ 90 հազար ռուբլու դիմաց[67]:

Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը արտադրական պլանները բարձր ցուցանիշներով կատարելու համար 1966 թ. պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով: Կոմբինատի կոլեկտիվը 1968 թ. տվեց 85 միլիոն մետր գործվածք, իսկ գուլպա-նասկեղենի «Արշալույս» ֆիրման՝ 41 միլիոն զույգ գուլպա, տրիկոտաժի ֆաբրիկան՝ 15 միլիոն մետր սպիտակեղենի տրիկոտաժ: Լենինականի դարբնոցամամլիչային սարքավորումների գործարանի արտադրանքը ուղարկվում է Ֆրանսիա, Անգլիա, Շվեդիա, Հնդկաստան, Ավստրիա, իսկ սարքաշինական գործարանի արտադրանքը՝ Ինդոնեզիա, Գանա, Աֆղանստան, հղկող հաստոցների արտադրանքը՝ արտասահմանյան 10 երկրներ: Լենինականում տարեցտարի ավելացել է բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների քանակը: Այնտեղ 1970 թ. աշխատում էին 60 հազար բանվոր-ծառայողներ, 1955 թ.՝ 29 և 1923 թ.՝ 5 հազարի դիմաց[68]:

Եռափուլ հաղորդակցության տարիներին կիրովականը դարձավ Հանրապետության արդյունաբերական երրորդ խոշոր կենտրոնը: Այդ տարիներին Ա. Մյասնիկյանի անվան քիմիական

---

67 Տվյալները վերցված են աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի վիճակագրական բաժնից:

68 Նույն տեղում:

կոմբինատում շահագործման հանձնվեցին մի շարք նոր արտադրամասեր՝ մելամինի, կորունդի, ամոնիակի և այլն, որոնց շնորհիվ Կիրովականի քիմիական կոմբինատը դարձավ երկրի արդյունաբերական խոշորագույն ձեռնարկություններից մեկը։ Կոմբինատի արտադրած կարբիդը, քիմիական պարարտանյութերը, կորունդը, ցիանական միացությունները ոչ միայն հայտնի են մեր երկրում, այլև արտասահմանյան երկրներում։

Կիրովականում արագ կերպով զարգացավ ճշգրիտ հաստոցաշինությունը, ավտոմատ սարքաշինությունը, մեքենաշինությունը և էլեկտրատեխնիկական իրերի արտադրությունը։ 1959 թ. շահագործման հանձնվեց ճշգրիտ հաստոցաշինական գործարանը, որն իր արտադրանքով մեծ փառք նվաճեց։ Այդ գործարանի ճշգրիտ հաստոցները 1966 թ. Լայպցիգի և Պլովդիվի միջազգային տոնավաճառներում արժանացան ոսկե մեծ մեդալների։ Մոսկվայի Սոկոլնիկիի միջազգային տոնավաճառում գործարանի արտադրած երեք հաստոցները նույնպես արժանացան ոսկե մեդալների։

Հետագա տարիներին Կիրովականում շահագործման հանձնվեցին «Ավտոմատիկա», «Ավտոգենմաշ», բարձրջերմաստիճանային տաքացուցիչների, քիմիական մանրաթելի խոշոր գործարանները։ Վերջինս 10 տարում Միության մեջ մեծ անուն վաստակեց և արժանացավ «Բարձր արտադրական կուլտուրայի ձեռնարկություն» կոչման։

Եռպատերազմյան տարիներին Կիրովականում շահագործման հանձնվեցին թեթև և սննդի արդյունաբերության երկու տասնյակից ավելի ձեռնարկություններ՝ Կամոյի անվան արհեստաժի ֆաբրիկան, որն իր արտադրանքով լայն ճանաչում է գտել Միության մեջ, ապա մորթու-մուշտակի, մանվածքային, կարի, կոշիկի գործարաններն ու ֆաբրիկաները, մսի կոմբինատը, կենցաղսպասարկման մի շարք ձեռնարկություններ և այլն։ Կիրովականում գործող արդյունաբերական 29 արտադրական ձեռնարկությունները, ուր աշխատում են շուրջ 20 հազար բանվորներ, տարեկան թո-

զարկում են 180 միլիոն ռուբլու համախառն արտադրանք[69]։ Կիրովականյան մակնիշը կրող 33 արտադրատեսակներ (քիմիկատներ, ճշգրիտ հաստոցներ, ավտոմատ սարքեր) արտահանվում են արտասահմանյան 35 երկրներ։

7-րդ հնգամյակի տարիներին Կիրովականում զարգացավ էներգետիկան։ 1946 թ. շահագործման հանձնվեց ջերմաէլեկտրակենտրոնը, որը Հայաստանի հյուսիսային շրջաններին տալիս է էլեկտրաէներգիա։ Քաղաքում տարեցտարի աճում են տրանսպորտի միջոցներն ու կապի ցանցը։ Կիրովականը արդյունաբերական խոշոր կենտրոն լինելուց բացի գիտահետազոտական կարևոր կենտրոն է։ Այնտեղ 1956 թ. հիմնադրվեց «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտը, որը խոշոր դեր է կատարել և շարունակում է կատարել Միության շատ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական պրոցեսների ավտոմատացման ուղղությամբ։ 1959 թ. կազմակերպվեց քիմիայի նախագծային գիտահետազոտական ինստիտուտը, որը 1967 թ. վերանվանվեց տաղանդավոր մասնագետ, քիմիական արդյունաբերության ստեղծման երախտավոր է. Տեր-Ղազարյանի անվան պոլիմերային սոսինձների պետական գիտահետազոտական ինստիտուտ։ Երրորդը «Ավտոմատիկա» ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոն է, որի ստեղծած կատարելագործված ավտոմատ սարքերը չեն զիջում արտասահմանյան երկրների լավագույն արտադրանքին։ Այս 2 գիտահետազոտական հիմնարկներում աշխատում են հազարից ավելի ինժեներատեխնիկական և գիտական աշխատողներ։

Լենինականը և Կիրովականը տնտեսության, կուլտուրայի, առողջապահության և շատ այլ բնագավառներում սպասարկում են հարևան շրջաններին։ Անհրաժեշտ է միջշրջանային սպասարկման կենտրոններ ստեղծել նաև հանրապե-

---

69 Տվյալները վերցված են աշխատավորների դեպուտատների Կիրովականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի վիճակագրական բաժնից։

տության մյուս մասերում՝ Զանգեզուրում, Սևանի բարձրավանդակում և հյուսիս-արևելյան շրջաններում:

Մեծ և խոշոր քաղաքների ընդարձակումը սահմանափակելու համար անհրաժեշտ է առաջին հերթին զարգացնել փոքր ու միջին քաղաքները, այսինքն՝ այդ մեծ քաղաքների շուրջը ստեղծել քաղաք-արբանյակներ, որոնք կլինեն մեծ և խոշոր քաղաքներից 10—50 կիլոմետր հեռավորության վրա:

Գոյություն ունի քաղաք-արբանյակի երկու գլխավոր տեսակ՝ արդյունաբերական և բնակելի: Դրանցից բացի, կան նաև այլ քաղաք-արբանյակներ՝ կուրորտային, լեռնահանքային, տրանսպորտային, ուսումնական և այլն: Այս քաղաք-արբանյակները մեծ քաղաքների բացասական կողմերից զերծ լինելով հանդերձ, սերտ կապեր ունեն նրանց հետ: Նրանց միջև գոյություն ունի աշխատանքի հասարակական բաժանում: Խոշոր քաղաքները պետք է փոքր քաղաքների նկատմամբ ակտիվացնող, նրանց զարգացումը խթանող դեր խաղան, ինտենսիվորեն ձևավորելով արբանյակների սիստեմը, իսկ փոքր քաղաքներն իրենց հերթին պետք է օժանդակեն խոշոր քաղաքների բարդ պրոբլեմների լուծմանը, մասնակցելով խոշոր քաղաքների բնակչության և արտադրության համակենտրոնացման բեռնաթափմանը:

Մեր հանրապետության մայրաքաղաք Երևանի բնակչության և արտադրության համակենտրոնացման բեռնաթափմանն օգնելու նպատակով նրա շուրջը ստեղծվել են քաղաք-արբանյակներ: Քանի որ քաղաքները որպես երկրի «կմախքներ» մեծ դեր են խաղում, ապա ուսումնասիրել և գիտական հիմքերի վրա դնել նրանց զարգացման առանձնահատկությունները, նշանակում է գիտականորեն հիմնավորել նրանց զարգացման ուղղությունները: Վերջին տարիներին անհրաժեշտ է դառնում մեծ քաղաքների հսկայական պոտենցիալը օգտագործել փոքր քաղաքների զարգացման համար, իսկ այդ հնարավոր է միայն մեծ քաղաքների շրջակայքում փոքր և միջին քաղաքների ստեղծումով:

Վերջին երկու տասնամյակում փոքր ու միջին քաղաքների ստեղծումը և նրանց տնտեսության զարգացման կուր-

սը նպաստեցին Հանրապետության արտադրողական ուժերի ավելի ռացիոնալ տեղաբաշխմանը և սոցիալ-տնտեսական այլ հարցերի ճիշտ լուծմանը: Դա արդյունք է այն բանի, որ Հանրապետության խոշոր և մեծ քաղաքներում սահմանափակված են արդյունաբերության հետագա զարգացման հնարավորությունները:

Վերջին տարիներին արմատապես փոխվել է փոքր և միջին քաղաքների տնտեսական—աշխարհագրական դիրքը: Նրանցից շատերը, որոնք մի ժամանակ գտնվում էին «խուլ» տեղում, այժմ հայտնվեցին նոր կառուցված երկաթուղիների (Աբովյան, Ջարենցավան, Հրազդան, Սևան, Իջևան), գազամուղների, էլեկտրական գծերի (Սպիտակ, Արարատ, Հոկտեմբերյան, Դիլիջան, Արտաշատ), օգտակար հանածոների (Ալավերդի, Ղափան, Քաջարան, Արթիկ), բուժիչ հանքային ջրերի (Ջերմուկ) շրջաններում: Բնականաբար բարձրացավ այս քաղաքների ու մի շարք քաղաքատիպ ավանների (Անիպեմզա, Ախթալա, Ագարակ, Դաստակերտ, Բումանյան, Պեմզաշեն, Շամլուղ, Մասիս) տարողունակությունը, նոր արտադրության ստեղծման հիմաստով: Նոր արտադրության ստեղծումն էլ ապահովում է աշխատունակ բնակչության, հատկապես երիտասարդության, լրիվ զբաղվածությունը: Դրա շնորհիվ բարձրանում է քաղաքի աշխատավորության կենսամակարդակը, միաժամանակ նպաստավոր պայմաններ են ստեղծվում շրջակա գյուղերի գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման համար, որով և պայմանավորվում է գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Այսպիսով, Հանրապետության արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման, բանվորական ուժի ռացիոնալ օգտագործման հարցը կարող է լուծել փոքր և միջին քաղաքների զարգացումը, որը առավել կարևորություն ունի հատկապես Սովետական Հայաստանի համար: Փոքր և միջին քաղաքների զարգացման սոցիալ-տնտեսական, աշխարհագրական և պլանավորման գործոններն ընդգրկում են հետևյալ հիմնական տարրերը. 1. գոյություն ունեցող արտադրական բազան, 2. բնակչության և աշխատանքային ռե-

սուրսները, 3. տրանսպորտային պայմանները, 4. տվյալ տնտեսական շրջանի տարածքային կառուցվածքում քաղաքի դիրքը, ինչպես նաև ստեղծված քաղաքային ագլոմերացիան, 5. ջրային պոտենցիալ հնարավորությունները և ջրամատակարարման պայմանները, 6. էներգոմատակարարումը, 7. հումքային բազան, 8. շինարարական բազան, 9. տերիտորիալ պլանավորման պայմանները, 10. տեղանքի բնական և սանիտարահիգիենիկ պայմանները[70]։

* * *

1970 թ. տվյալներով ՀՍՍՀ-ում կային 6 միջին քաղաքներ՝ Ալավերդի, Ղափան, Հոկտեմբերյան, Հրազդան, Աբովյան, Էջմիածին։ Վերջին 4 քաղաքները, որոնք գտնվում են Երևանից 10—40 կիլոմետր հեռավորության վրա, քաղաք-արբանյակներ են։ Այժմ համատոտակի ծանոթանանք հանրապետության միջին քաղաքների արդյունաբերության տեղաբաշխմանը։

Երկրի հետագա ինդուստրացման վերաբերյալ կուսակցության ծրագրում ասված է. «Կոմունիզմի ծավալուն կառուցումը պահանջում է արդյունաբերության ավելի ու ավելի ռացիոնալ տեղաբաշխում, որը կապահովի հանրային աշխատանքի տնտեսումը, շրջանների կոմպլեքսային զարգացումը և նրանց տնտեսությունների մասնագիտացումը, կվերացնի բնակչության չափից դուրս կուտակվածությունը խոշոր քաղաքներում, կնպաստի քաղաքի ու գյուղի էական տարբերությունների հաղթահարմանը, երկրի շրջանների տնտեսական զարգացման մակարդակների հետագա համահարթմանը»[71]։

Կուսակցության ծրագրում նախատեսված այս հարցերի լուծման լավագույն օրինակ կարող է ծառայել Հայկական ՍՍՀ-ն։

---

70 *Б. С. Хорев*, Городские населения СССР (проблемы роста и их изучение), М., 1968, стр. 169.

71 «Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը», Երևան, 1974, էջ 112։

Մինչև 1950-ական թվականները Հանրապետությունում արդյունաբերական կենտրոններ էին Երևանը, Լենինականը, Կիրովականը, Ղափանը, Ալավերդին և Արթիկը։ 1958 թ. Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում էին կենտրոնացված Հանրապետության արդյունաբերության արտադրանքի մոտ 79 տոկոսը, և արդյունաբերական արտադրական անձնակազմի 76 տոկոսը[72]։

Յոթնամյակի տարիներից արդյունաբերությունը դադրեց Երևանի, Լենինականի և Կիրովականի մենաշնորհը լինելուց և մուտք գործեց Հանրապետության միջին և փոքր քաղաքները, շրջանային կենտրոնները, նույնիսկ խոշոր գյուղերը, ուր ստեղծվեցին ոչ միայն թեթև և սննդի, այլև ծանր արդյունաբերության ձեռնարկություններ։ Այսպես, օրինակ, Հանրապետության 37 մեքենաշինական ձեռնարկություններից 31-ը տեղադրվել են Երևանից դուրս՝ Հանրապետության փոքր ու միջին քաղաքներում։ Այս միջոցառման իրագործումը պայմանավորված է տնտեսական և սոցիալական մի շարք հարցերի լուծման՝ աշխատավորների բարեկեցության բարձրացման, բնակչության զբաղվածության ապահովման, աշխատուժի ռացիոնալ օգտագործման և շրջանների զարգացման, ինչպես նաև կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման հարցերի հետ։

Փոքր և միջին քաղաքների զարգացումը Հայաստանում առաջնահերթ նշանակություն է ստանում հետևյալ յուրահատուկ պայմանների շնորհիվ։ Հանրապետության արդյունաբերական զարգացման տեմպերն արդեն երկար տարիներ է, ինչ առաջ են անցնում միութենական միջին ցուցանիշներից։ Այդպիսի արագ աճը արդյունք է Հանրապետության բնական հարստությունների և աշխատանքային ռեսուրսների առատության, էներգետիկ բազայի աճի, մեծաթիվ ինժեներատեխնիկական բարձրորակ կադրերի առկայության և գիտության բուռն զարգացման։ Ձեռնարկությունների մեծ մասը կենտրոնացվում էր Երևանում, ապա Լենի-

72 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1967, № 5, էջ 4։

նականում և կիրովականում, որովհետև այդ տարիներին այդ քաղաքներում կային ինդուստրիայի զարգացման նպաստավոր պայմաններ։ 1969 թ. Երևանում էր ապրում Հանրապետության բնակչության 1/3-ը։ Երևանում էին կենտրոնացված բոլոր ձեռնարկությունների մոտ 40 տոկոսը, որոնք տալիս էին Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի 60 տոկոսը[73]։ Այս հանգամանքը բարդացրել է քաղաքի կյանքը և ստեղծել բազմաթիվ դժվարություններ։ Այն առաջին հերթին մարդկանց ներհոսք է ստեղծել գյուղական վայրերից դեպի քաղաք։ Այս վիճակից դուրս գալու նպատակով, Երևանի շուրջը ստեղծվեցին մի շարք քաղաք-արբանյակներ՝ Աբովյան, Ջարենցավան, Հրազդան, Հոկտեմբերյան, Էջմիածին, Արտաշատ, Աշտարակ, Մասիս և այլն։ Վերջին 10 տարիներին այս քաղաք-արբանյակներում և Երևանին մոտիկ գտնվող քաղաքատիպ ավաններում կառուցվեցին մեքենաշինական, սարքաշինական, հաստոցաշինական մի շարք գործարաններ, արագորեն զարգացան արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր։ Այդ շրջանների բնակչությանը ներգրավելով արդյունաբերության արտադրության ոլորտի մեջ, փոքր ու միջին քաղաք-արբանյակները կրճատում են վերաբնակությունը դեպի Երևան և նպաստում են նախկին գյուղական շրջանների տնտեսական, կուլտուրական և քաղաքական աճին։

Սոցիալիստական շինարարության տարիներին Ալավերդու պղնձաձուլական գործարանը ոչ միայն վերականգնվեց, այլև վերակառուցվեց։ Ալավերդին դարձավ Անդրկովկասի պղնձարդյունաբերության խոշոր կենտրոնը։

Յոթնամյակի և նրան հաջորդող 8-րդ հնգամյակի տարիներին պետությունը շուրջ 30 միլիոն ռուբլի ներդրեց Ալավերդու պղնձաձուլական գործարանի ընդլայնման ու վերակառուցման համար։ Պղնձաձուլական և քիմիական գործարանի բազայի վրա ստեղծվեց պղնձաքիմիական խոշոր կոմբինատը։ Շահագործման հանձնվեցին կոմբինատի անոդա-

73 «Известия», 13 августа, 1969.

յին և կոնվեյերային բաժանմունքները, էլեկտրոլիզի 2-րդ, 3-րդ, 4-րդ և ծծմբաթթվի՝ 1-ին, 2-րդ, 3-րդ հերթերը, եռացող շերտում կոնցենտրատի այրման վառարանները և այլ արտադրամասեր։ Վերակառուցման շնորհիվ կոմբինատի բոլոր արտադրամասերը և բաժանմունքները հագեցվեցին ժամանակակից սարքավորումներով, արմատապես փոխվեց արտադրության տեխնոլոգիան։ Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի արտադրանքը մեծ պահանջարկ ունի ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանյան երկրներում։ Կոմբինատի արտադրած ծծմբական թթուն, պղինձը, պղնձաբջռասպը 1970 թ. արտահանվում էին արտասահմանյան տասից ավելի երկրներ՝ Լեհաստան, Բուլղարիա, Հունգարիա, Իտալիա, Ճապոնիա և այլն։

Ալավերդում, պղնձաքիմիական կոմբինատից բացի, կան արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ հացի և պարկերի գործարաններ, տեքստիլ-տրիկոտաժի ֆաբրիկա, դորգագործական արտել, տպարան, տեղական արդյունաբերության և կենցաղսպասարկման կոմբինատներ։

Լեռնահանքային արդյունաբերության կենտրոններ դարձան Շամլուղ և Ախթալա քաղաքատիպ ավանները։ Վերջինում 1966 թ. շահագործման հանձնվեց տեխնիկայի վերջին խոսքով կառուցված հանքահարստացուցիչ ֆաբրիկան։

Սովետական իշխանության տարիներին Զափրանում, Քաջարանում, Դաստակերտում և Ագարակում զարգացավ լեռնահանքային արդյունաբերությունը։ Ավելի մեծ քանակությամբ պղինձ ստանալու նպատակով 1968 թ. Զափրանում շահագործման հանձնվեց պղնձահանքային կոմբինատի նոր հարստացուցիչ ֆաբրիկայի համալիրը, որը 3 անգամ ավելի հանքաքար է մշակում նախկինի համեմատությամբ։ Պատրաստված է ստորերկրյա տրանսպորտային հանքուղի, շահագործման է հանձնվել բաց հանքը։ Զափրանում պղնձահանքային կոմբինատից բացի, կան արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման Զափրանի մասնաճյուղը, կահույքի ֆաբրիկան, պահածոների ու ավտովերանորոգման գործարանները

և մսի կոմբինատը, որը սպասարկում է Ղափանի, Քաջարանի, Սիսիանի, Գորիսի բնակչությանը։ Ղափանի արդյունաբերական ձեռնարկություններին էլեկտրաէներգիայով ապահովելու համար կառուցվեց Աթաբեկյանի հիդրոէլեկտրակայանից Ղափան ձգվող բարձր լարման էլեկտրագիծը։ Ղափանը 40 կիլոմետր երկարությամբ ավտոխճուղով կապվեց Մինջևանի հետ, իսկ 1931 թ. Ղափան հասավ առաջին գնացքը։ Այժմ Երևան—Ղափան ամենօրյա երկաթուղային և օդային երթևեկություն կա։ Ղափանը ասֆալտապատ ճանապարհով կապված է Քաջարանի, Երևանի և ուրիշ բնակավայրերի հետ։ Այսպիսով, գունավոր մետալուրգիայի գործող, վերակառուցվող և նոր կառուցվող ձեռնարկությունների շուրջն աճեցին ինդուստրիալ նոր քաղաքներ և քաղաքատիպ ավաններ՝ Քաջարանը, Հրազդանը, Զոդը, Ագարակը, Դաստակերտը, Ախթալան, Շամլուղը։

Հանրապետության միջին քաղաքների շարքին է դասվում 1931 թ. Սարդարապատի անապատում հիմնադրված Հոկտեմբերյան քաղաքը։ Տարիներ հետո այստեղ կառուցվեցին արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ և Հոկտեմբերյանը դարձավ հանրապետության արդյունաբերական կարևոր կենտրոններից մեկը։ Վերջին տարիներին այստեղ զարգացան արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են սարքաշինությունը, էներգետիկան, շինարարական ինդուստրիան և հաստոցաշինությունը։

Հոկտեմբերյանի ձեռնարկությունների արտադրած սարքերն ու հաստոցները, կոնյակները, պահածոները, գինիներն ու խորդենու յուղը ուղարկվում են աշխարհի ավելի քան 40 երկրներ՝ Ճապոնիա, Բրազիլիա, Մարոկկո, ԳԴՀ, Հնդկաստան, Իտալիա, Կուբա, Շվեդիա, Անգլիա, Հոլանդիա և այլն։ Հոկտեմբերյանին մոտիկ կառուցվում է ատոմային էլեկտրակայան, որի համար ստեղծվում է էլեկտրիկների քաղաք։

Հրազդանը (Ներքին Ախտա), նախկին հետամնաց այդ փոքրիկ գյուղը սովետական իշխանության տարիներին դարձել է հանրապետության գլխավոր էներգետիկական բազան՝



Ճարտարապետ Ն. Բունիաթյան



շնորհիվ շահագործման հանձնված Ամարբեկյանի ու Գյումուշի հիդրոէլեկտրակայանների և Հրազդանի ջերմաէլեկտրակայանի, որի վերջին աղրեգատը շահագործման հանձնվեց 1970 թ. հունվարին։ Այդ ջերմաէլեկտրակայանը տարեկան տալիս է շուրջ մեկ միլիոն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա։ Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը 1,5 անգամ ավելի էլեկտրաէներգիա է տալիս, քան Սևան—Հրազդան կասկադի կայանները միասին վերցրած։ Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը կառուցվել է ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվներով։ Նրա կառուցմանը մասնակցեցին ոչ միայն Սովետական Միության բազմաթիվ տնտեսական շրջաններ, այլև սոցիալիստական մի շարք երկրների հատկապես հունգարացի մասնագետները։ Վերջիններս տեղում անմիջապես մասնակցեցին սարքավորման տեղադրման աշխատանքներին։

Այսպիսով, Հրազդանը դարձավ խոշոր էներգետիկ բազա՝ Անդրկովկասի մասշտաբով։

1970 թ. շահագործման հանձնվեց Հրազդանի ցեմենտի գործարանի արտադրության առաջին գիծը։ Անդրկովկասի այս խոշորագույն օբյեկտի կարողությունը կհասնի տարեկան 1 միլիոն 200 հազար տոննա ցեմենտի արտադրության։

Աբովյանը (Կոտայք) Երևանի ամենամոտիկ քաղաքաբերանյակներից է։ Այնտեղ մեծ հաջողությամբ զարգանում են ապակու արտադրությունը, քարի և մարմարի մշակումը և արդյունաբերության մի շարք այլ ճյուղեր։ Աբովյանի արդյունաբերական բազամասում կան շուրջ 15 ձեռնարկություններ, որոնց արտադրանքն առաքվում է մեր երկրի բազմաթիվ հասցեներով։ Արտադրանքի մի շարք տեսակներ մեծ պահանջարկ ունեն Իտալիայում, Կուբայում, Վիետնամում և արևմտաեվրոպական այլ երկրներում։

Նպատակաուղղված տարիների ընթացքում սկսեց զարգանալ սննդի, սարքաշինական, քիմիական և տեղական արդյունաբերությունը։ Գործող պահածոների գործարանի

---

74 «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», Երևան, 1967, էջ 440։

կարողությունը հասնելու է շուրջ 70 միլիոն պայմանական տուփ պահածոյի արտադրության։

Էջմիածնի «Պլաստմասսա» գործարանը Հանրապետության միակ մասնագիտացված ձեռնարկությունն է, որը զբաղվում է արդյունաբերության մեջ և կենցաղում օգտագործվող պլաստմասսային շինվածքներ։ Էջմիածնում գործում է նաև կենցաղային մետաղական շինվածքների գործարանը։ Էջմիածնի «Պլաստմասսա» գործարանը արդեն հազարից ավելի տեսակի արտադրանք է տալիս, որն օգտագործվում է Հանրապետության 80 գործարաններում, մասնավորապես Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, ճշգրիտ սարքերի, ժամացույցի, լուսատեխնիկական, սարքաշինական գործարաններում։ Տարեցտարի ընդարձակվում է այդ գործարանը, շարք են մտնում նոր արտադրամասեր։ Էջմիածնում գործում են էլեկտրաճշգրիտ, պլաստմասսայի, գործիքաշինական, մետաղյա իրերի գործարաններ, կարի ֆաբրիկա, շինանյութերի կոմբինատ։ Էջմիածնի արտադրական ձեռնարկությունները տարեկան շուրջ 50 միլիոն ռուբլու համախառն արտադրանք են տալիս[75]։ Բազմաթիվ արտադրատեսակներ արտահանվում են շուրջ 20 արտասահմանյան երկրներ։

* * *

Այժմ համառոտակի ծանոթանանք Հանրապետության փոքր քաղաքներում արդյունաբերության տեղաբաշխմանն ու զարգացմանը 1970 թ. վիճակով։

Սալաքիի սարի ընդերքի կրաքարի անսպառ պաշարներն օգտագործելու նպատակով 1929 թ. Զորագէսի և Կիրովականի քիմիական գործարանի հետ սկսվեց նաև Արարատի (Դավալու) ցեմենտի գործարանի շինարարությունը։ Երկրի ցեմենտի մի շարք գործարանների կոլեկտիվների օգնությամբ 1933թ. նոյեմբերի 29-ին այն շահագործման

75 Տվյալները վերցված են աշխատավորների դեպուտատների էջմիածնի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի վիճակագրական բաժնից։

հանձնվեց: Այժմ այդ գործարանը դարձել է տարբեր շինանյութեր արտադրող խոշոր կոմբինատ: Երևի ցեմենտի գործարանը 1933 թ. արտադրում էր 55 հազար տոննա ցեմենտ, 1940 թ.՝ 200 հազար, ապա 1970 թ.՝ մոտ 680 հազար տոննա[76]:

Արարատի Ս. Տեր-Գաբրիելյանի անվան ցեմենտ-շիֆերի կոմբինատը Անդրկովկասի շինանյութեր արտադրող խոշոր ձեռնարկություններից է, որի արտադրանքի տարբեր տեսակներ առաքվում են Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս և Միջին Ասիա: Կոմբինատը միաժամանակ հումք է մատակարարում հարևան եղբայրական հանրապետությունների շինանյութերի և քիմիական արդյունաբերական ձեռնարկություններին: Արարատի ցեմենտ-շիֆերի կոմբինատում աշխատում են շուրջ երկու հազար բանվոր-ծառայողներ:

Ցեմենտ-շիֆերի կոմբինատից բացի, Արարատում գործում են դինու խոշոր գործարաններ, որոնք տարեկան մշակում են 15 հազար տոննա խաղող:

Հայաստանի շինանյութերի արդյունաբերության կարեվոր կենտրոն է Արթիկը: Քարհատների և որմնադիրների քաղաք Արթիկը իր գոյության 40 տարիներին երկրին տվել է 4,5 միլիոն խորանարդ մետր տուֆաքար[77]: Արթիկում գործում են նաև տուֆաբլոկների և վակուումային էլեկտրավառարանների գործարանները: Վերջինիս արտադրանքը ուղարկվում է մեր երկրից դուրս: Արթիկը ոչ միայն Հայաստանում, այլև Միության մեջ հռչակված է իր վարդագույն տուֆով: Ամեն օր Արթիկ քաղաքից քարով բեռնված 4—5 ծանրաքարշ դնացք է դուրս գալիս: «Արթիկտուֆ»-ը արտադրում է տուֆաքար, պեմզա, բնական և արհեստական տուֆաբլոկներ, շինարարական ավազ և խիճ: «Արթիկտուֆ» ձեռնարկությունը

---

76 Ս. Ա. Մելիումյան, *Հայկական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերության տնտեսագիտությունը և զարգացումը*, Երևան, 1972, էջ 154:

77 Հ. Եկիլիկյան, նշվ. աշխ., էջ 15:

1930 թ. ավել է 60,4 հազար, իսկ 1970 թ.՝ 383,5 հազար խոշոր մեծ տուֆաքար[78]։

Անցյալում Սևանի հարավ-արևմտյան ափին կար մի փոքր գյուղ (Ելենովկան՝ այժմ Սևան) խղճուկ տեսքով, ծուռումուռ փողոցներով, կավածեփ խարխուլ տներով։ Այստեղ առաջինը բնակություն են հաստատել 1847 թ. Տամբովի և Վորոնեժի նահանգներից արտաքսված ռուս աղանդավորները (մոլոկաններ)։

Նախապատերազմյան տարիներին այստեղ ջրազրկում էին երկրագործությամբ և անասնապահությամբ, իսկ հետպատերազմյան տարիներին սկսեց զարգանալ արդյունաբերությունը։

Սևանում 1949 թ. շահագործման հանձնվեց Սևան—Հրազդան կասկադի ցածրագույն աստիճանը՝ Սևանի հիդրոէլեկտրակայանը։ Իր տեսակի մեջ աշխարհում եզակի այդ կառույցը գտնվում է մոտ 100 մետր խորության վրա։ Սևանի առաջնեկի, բազայի վրա քաղաքում ստեղծվեցին արդյունաբերական ձեռնարկություններ՝ ծխախոտի ֆերմենտացիոն ու կաշի վերամշակման գործարանները, ձկան կոմբինատը։ Հիմնականում մշակվում է տեղի գյուղատնտեսական հումքը։ Սևանի տեղաբաշխումբինատ տեխնիկական արտադրամասի բազայի վրա 1959 թ. շահագործման հանձնվեց գործարքի մեխանիզմների գործարանը, որն իր գոյության 12 տարիներին արտադրել է մոտ 100 հազար կառավարող բարդ սարքեր, որոնք մեծ պահանջարկ ունեն մեր երկրում և արտասահմանում։ 1963 թ. Սևանում շահագործման հանձնվեց «Էլեկտրատապակեմեկուսիչ» գործարանը, որը տեղական հումքից՝ բազալտից, մշակում է նուրբ ու ամուր թելեր, մեկուսիչ նյութեր, ապակեպլաստեղային ժապավեն և այլն։ Սևանի շինարարական խոշոր մեխանիզմների նորոգման գործարանը տարեկան կատարում է 3,2 միլիոն ռուբլու կապիտալ նորոգման աշխատանքներ։

78 Ս. Ա. Մելքումյան, նշվ. աշխ., էջ 50։

Առաջիկայում Սևանի արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտադրանքը կկրկնապատկվի՝ 1970 թ. 16 միլիոնից 1980 թ. հասնելով 40 միլիոն ռուբլու[79], որովհետև շահագործման կհանձնվեն ալրաղաց կոմբինատը, թռչնաֆաբրիկան և «Էլեկտրաապակեմեկուսիչ» գործարանի ապակեզնդիկների ու բաղադրիչ արտադրամասերը։ Կվերակառուցվի և նոր տեխնիկայով կհագեցվի ծխախոտի ֆերմենտացիոն գործարանը։ Սևանը երկաթուղային և խճուղային ճանապարհների կարևոր հանգուցակետ է, լճի նավաղնացության կենտրոնը։ Այստեղով է անցնում Երևանը անդրկովկասյան եղբայրական հանրապետությունների քաղաքների հետ կապող հանրապետական խճուղին, միջպետային տուրիստական երթուղին։

Ջարենցավանը (Լուսավան) Երևանի շուրջն ընկած քաղաք-արբանյակներից մեկն է, որը հիմնադրվել է 1947 թ., իբրև Գյումուշի հիդրոէլեկտրակայանի № 7 բանվորական ավան, իսկ 1961 թ. դեկտեմբերի 30-ին դարձավ քաղաք։

1957 թ. Ջարենցավանում սկսվից ներառած հասատոցների գործարանի շինարարությունը։ Այն շահագործման հանձնվեց 1959 թ.։ Գործարանի կոլեկտիվը կարճ ժամկետում յուրացրեց հորիզոնական ներառած հասատոցների արտադրության բարդ տեխնոլոգիան։ Ջարենցավանի ներառած հասատոցները արտահանվում են արտասահմանյան մի քանի երկրներ՝ Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Լհհաստան, Չեխոսլովակիա, Հնդկաստան, Կուբա և այլն։

Հետագա տարիներին այստեղ կառուցվեց հանրապետության ամենախոշոր ձեռնարկություններից մեկը՝ գործիքաշինական գործարանը, որն իր առաջին արտադրանքը տվեց 1965 թ.։ Այդ գործարանը 1970 թ. տվեց շուրջ 10 միլիոն ռուբլու համախառն արտադրանք։ Գործարանի արտադրած սարքերն ու գործիքները առաքվում են երկրի հարյուրավոր գործարաններ։ Գործարանը մասնաճյուղեր է ստեղծել Ստեփանավանի շրջանի Կուրթան և Մարտունու շրջանի Երանոս գյուղերում։

79 «Հայաստանի արդյունարերություն», 1971, № 10, էջ 34։

Հանրապետության հաստոցաշինական և գործիքաշինական ձեռնարկություններին ձուլվածքով բավարարելու նպատակով Չարենցավանի գործիքաշինական ձուլման տեղամասը դարձավ ինքնուրույն ձեռնարկություն: 1963 թ. փետրվարին շահագործման հանձնվեց «Յենարոլիտ» գործարանի կոմպլեքսը: Մինչ այդ ձուլվածքը ստանում էին հեռավոր շրջաններից, իսկ այժմ Չարենցավանը չուգունի ձուլվածքով ապահովում է հանրապետության 30-ից ավելի ձեռնարկությունների, ինչպես նաև Բաքվի, Լիպեցկի և այլ քաղաքների հաստոցաշինական ձեռնարկություններին:

Չարենցավանում գործում են նաև երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանը, Երևանի ավտոպահեստամասերի գործարանի ու ձեռնոցների ֆաբրիկայի մասնաճյուղերը: Այնտեղ կառուցվում է լիզինի՝ անասնապահության համար բանկարժեք միկրոբիոլոգիական նյութի, արտադրության փորձնաարդյունաբերական (երկրում միակ) գործարանը, որը տարեկան կտա 1300 տոննա ապրանքային լիզին: Առաջիկա տարիներին կկառուցվի պլաստմասսաներից լայն սպառման առարկաներ արտադրող գործարան, գործող գործարանները կվերակառուցվեն և կհագեցվեն նոր տեխնիկայով: Մի քանի անգամ կավելանա դրանց կարողությունը:

Քաջարանի հանքերի օգտագործման հարցը նախապատրաստվում էր դեռևս նախապատերազմյան տարիներին, սակայն պատերազմը խանգարեց: 1949 թ. Քաջարանում շահագործման հանձնվեց առաջին փորձնական հարըստացուցիչ ֆաբրիկան, իսկ 1952 թ. կոմբինատը տվեց իր առաջին արտադրանքը: Կարճ ժամանակամիջոցում Քաջարանը դարձավ երկրի լեռնահանքային խոշոր ձեռնարկություններից մեկը: Տարեցտարի ընդարձակվեց կոմբինատը, կատարելագործվեցին նրա տեխնոլոգիական պրոցեսները, բարձրացավ նրա արտադրողականությունը: Այն հանրապետության մեջ առաջին ձեռնարկություններից է, որն իր պլանները բարձր ցուցանիշներով կատարելու համար պարգևատրվեց Լենինի շքանշանով:

Քաջարանի Լենինի շքանշանակիր պղնձամոլիբդենային

կոմբինատի կառուցման շնորհիվ լեռնալանջերին ծնվեց մի քանի հազար բնակչությամբ մի քաղաք, որն ունի դպրոցական, առողջապահական, կուլտուր-կենցաղային օբյեկտներ ու կոմունալ սպասարկման ձեռնարկություններ։

Սպիտակը (նախկին Համամլուն) մի հետամնաց գյուղ էր։ Սովետական իշխանության տարիներին այն վերածվել է արդյունաբերական կարևոր կենտրոնի։ Այնտեղ է գործում հանրապետության մեջ միակ շաքարի գործարանը, որը վերամշակում է Հայաստանի դաշտերի ճակնդեղն ու Կուբայից ստացվող եղեգնաշաքարի հումքը։ Այդ գործարանի կիտրոնաթթվի խոշոր արտադրամասը միակն է Անդրկովկասում և երրորդը՝ Սովետական Միությունում։ Երկրորդ կարևոր գործարանը (հանրապետության մեջ միակը) վերելակների գործարանն է, որը երկրի հարյուրավոր քաղաքների վերելակներ է առաքում։ Գործարանը լրիվ կարողությամբ գործարկվելուց հետո այնտեղ կաշխատեն շուրջ 2 հազար բանվորներ։ Բանվորական ուժի, հատկապես կանանց ուժի, օգտագործման նպատակով, Սպիտակում բացվել է Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայի մասնաճյուղը, ուր աշխատում են շուրջ 500 բանվորուհիներ։

Սպիտակում գործում են նաև պանրի և հացի մեքենայացված գործարանները, թռչնաբուծական ֆաբրիկան և կենցաղսպասարկման մի շարք ձեռնարկություններ, ալրաղաց խոշոր կոմբինատը և ներբաններ արտադրող գործարանը։

Սովետական իշխանության տարիներին Կամոյում (Նոր Բայազետ) ստեղծվել են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ յուղի-պանրի, հանքային ջրերի ու հացի գործարանները, տրիկոտաժի, կահույքի, կոշիկի, գորգագործական ֆաբրիկանները, ավտովերանորոգման արհեստանոցը, նորոգման տեխնիկական կայանը, ինչպես նաև Երևանի կաբելի գործարանի մասնաճյուղը, ուր մեծ մասամբ աշխատում են միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներ։

Դիլիջանը հանրապետության առողջարանային կարևոր

կենտրոն լինելուց բացի, արդյունաբերական քաղաք է։ Այնտեղ են գործում կոշտ, կիսափափուկ և մանկական ձկած ապրանքների ֆաբրիկան, «Դիլիջան» հանքային ջրերի գործարանը, Կիրովականի կարի ֆաբրիկայի մասնաճյուղը, որը զարձել է կանանց աշխատուժի օգտագործման հիմնական բազան։ Յարեցաարի ընդարձակվում է ֆաբրիկան, բարձրանում նրա արտադրողականությունը։

Դիլիջանի հպարտությունն է արտադրական ամենախոշոր ձեռնարկությունը՝ ռադիոտեխնիկական «Իմպուլս» գործարանը, որի արտադրանքը և բանվորների քանակը արագ տեմպերով աճում են։ Դիլիջանում գործում են նաև հացի, կաթի, լիմոնադի գործարանները և կենցաղսպասարկման ձեռնարկություններ[80]։

Սովետական իշխանության տարիներին Գորիսում շահագործման են հանձնվել արդյունաբերական 14 ձեռնարկություններ, որոնք տարեկան մի քանի տասնյակ միլիոն ռուբլու համախառն արտադրանք են տալիս։ Դրանցից առաջինը տրիկոտաժի ֆաբրիկան է, որի արտադրանքը առաքվում է 300 հասցեներով։ Մյուսը Գորիսի փոքր էլեկտրաշարժիչների խոշոր գործարանն է, որը շահագործման հանձնվեց 1960 թ.։ Այն թողարկում է շուրջ 25 արտադրատեսակներ։ Գորիսում գործում է նաև ոսկեհնի մարզական կոշիկների ֆաբրիկան, որը մեծ հաջողությամբ իրացրել է կոշիկների բազմաթիվ տեսակների արտադրությունը։

Գորիսում կան արդյունաբերական այլ ձեռնարկություններ՝ ավտոնորոգման և գարեջրի գործարաններ, «Հայգորգի» Գորիսի մասնաճյուղ, արդյունաբերական և կենցաղային կոմբինատներ, փայտամշակման, հուշանվերների արտադրության ֆաբրիկաներ։ 1965 թ. շահագործման հանձնվեց Գորիսի ծխախոտի ֆերմենտացիոն ֆաբրիկան, որը մշակում է Ջանֆեզուրի ծխախոտի բերքը։

Ստեփանավանում գորգագործական, տրիկոտաժի, կոշի-

---

80 Տվյալները վերցված են աշխատավորների դեպուտատների Դիլիջանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի վիճակագրական բաժնից։

կի, կաթի-պանրի գործարաններից հետո վերջին տարիներին շահագործման հանձնվեցին բարձր հաճախականության էլեկտրաապրանքների և արդյունքի միջոցների արտադրության գործարանները։ Դրանցից առաջինն արտադրում է տարբեր մակնիշի տրանսֆորմատորներ, որոնք մեծ պահանջարկ ունեն ոչ միայն մեր երկրում, այլև Լեհաստանում, Կուբայում, Ֆինլանդիայում, Ռումինիայում, ԳԴՀ-ում, իսկ երկրորդն արտադրում է գունավոր հեռախոսային ապարատներ, որոնք առաքվում են երկրի 500-ից ավելի քաղաքներ։

Այսօր Սևանավանը հայտնի է իր շվեյցարական պանրով, արտադրած գորգերով, գուլպաներով, բարձր հաճախականության սարքերով և հեռախոսային ապարատներով։

Իջևանի առաջին արդյունաբերական ձեռնարկությունը փայտամշակման կոմբինատն է, որն արտադրում է մանրատախտակ (պարկետ), զանազան ֆաներա, փայտաստաշյա սալիկ, իսկ անտառային տնտեսության մեքենաշինական փորձնական գործարանում նորոգվում են հանրապետության հյուսիսային շրջանների անտառատնտեսությունների ողջ տեխնիկան, կատարվում են մանր ձուլումներ՝ հանրապետության մի շարք գործարանների համար։

Իջևանի ամենախոշոր ձեռնարկությունը գորգագործական կոմբինատն է, որը 1970 թ. թողարկել է 600 հազար քառակուսի մետր գորգ։ Կոմբինատի արտադրանքը բարձր գնահատականի է արժանացել միջազգային տոնավաճառներում և ցուցահանդեսներում։

Կառուցվում է Իջևանի «Բենտոնիտ» կոմբինատը, որի վրա մինչև 1970 թ. ծախսվել է շուրջ 30 միլիոն ռուբլի։ Բենտոնիտի փոշին նախատեսվում է ժողովրդական տնտեսության շուրջ 30 ճյուղերի կարիքների համար։ Կառուցվում են ներազուն տեխնիկայով հագեցված ավտովերանորոգման, պահածոների, գինու գործարանները՝ կոնյակի և շամպայնի գինիների արտադրամասերով։ Իջևանում արդյունաբերական օբյեկտների զարգացմանը խթանում է Աղստափա-Իջևան երկաթուղագծի կառուցումը։

Դեռևս 1907 թ. Արտաշատում (Ղամարլու) գործում էր ասիրատի թորիչ վերամշակման արտադրամաս, որի բազայի վրա Վերին Արտաշատում, Այգեշատում, Դալարում, Բուրաստանում ստեղծվեցին գինու մի շարք գործարաններ: Արտաշատը դարձավ հանրապետության գինու արտադրության երկրորդ կենտրոնը: Արտաշատի արդյունաբերական ձեռնարկությունները 1970 թ. երկրին տվին 23 միլիոն ռուբլու համախառն արտադրանք[81]: 1961 թ. Արտաշատում շահագործման հանձնվեց պահածոների նոր գործարանը, որը տարեկան թողարկում է շուրջ 45 միլիոն պայմանական տուփ պահածո: Գործարանի կարողությունը 1970 թ. հասավ 75 միլիոն տուփ պահածոյի:

Արտաշատում 1949 թ. շահագործման հանձնվեց մսախնիկական գործարանը. այն 1965 թ. վերակառուցվեց և դարձավ փորձագործիքաշինական գործարան, որը թողարկում է արդյունաբերության համար կարևոր ունիվերսալ հավաքման հարմարանքներ: Արտաշատում գործում է կերամիկական շինվածքների գործարան, 1970 թ.՝ պարկետի ֆաբրիկա, բամբակազտման գործարանի բազայի վրա 1967 թ. շահագործման հանձնվեց մանածագործական-տրիկոտաժի կոմբինատը, որի արտադրանքն ուղարկվում է Միության շատ քաղաքներ: Արտաշատում կառուցվելու են սիգարետների համար ֆիլտրերի արտադրության, գարեջրի, կահույքի և ակումուլյատորների նոր գործարաններ, ինչպես նաև սկսվելու է կերամիկական շինվածքների նոր գործարանի շինարարությունը:

Աշտարակի նեղ ու անանցանելի ծուռումուռ փողոցները դարձել են լայնահուն, ասֆալտապատ փողոցներ, իսկ հողաշեն ու կավածեփ խրճիթները՝ տուֆակերտ գեղեցիկ առանձնատներ. կառուցվել են բարձրահարկ բնակելի և հասարակական շենքեր: Աշտարակում է գործում «Խերես» գինու խոշոր գործարանը: Նորակառույց Աշտարակին առանձ-

81 «Հայաստանի արդյունաբերություն», 1971, № 1, էջ 47:

նակի հմայք է տալիս Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի շենքերի համալիրներից բաղկացած ավանն իր բոլոր հարմարություններով, գիտական ու կուլտուր-կենցաղային օբյեկտներով: Աշտարակից ոչ շատ հեռու 1946 թ. հիմնադրվեց Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարանը[82] Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ վ. Համբարձումյանի գլխավորությամբ:

Քասախ ձախ ափին կառուցվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենտրոնական ֆիզիկատեխնիկական լաբորատորիայի համալիրը, ուր տեղավորվելու են գիտական մի շարք հիմնարկներ: Սկսվել է նաև նոր կենտրոնի՝ օպտիկայի ինստիտուտի շենքերի համալիրը, որը կզբաղեցնի շուրջ 30 հեկտար տարածություն: Աշտարակը կդառնա Երևանի քաղաք-արբանյակը:

* * *

Սոցիալիստական խաղաղ շինարարության տարիներին հանքային բուժիչ ջրերի շրջակայքում առաջացել ու զարգացել են մի քանի առողջարանային քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ՝ Ջերմուկ, Արզնի, Հանքավան, Սևան, Ծաղկաձոր, Դիլիջան:

Սովետական Հայաստանը հարուստ է ինչպես բնական հարստություններով, այնպես էլ բուժիչ ջրերով: Մեր հանրապետությունը տարբեր ջերմաստիճանների, քիմիական ու գազային բաղադրությամբ հանքային ջրերի յուրօրինակ թանգարան է: Հայաստանի հանքային ջրերը դեռ հին ժամանակներից մեծ ճանաչում են գտել և օգտագործվել են բուժիչ նպատակներով: Սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ հայ ժողովուրդը դարձավ իր երկրի տերը, նրա հարստությունները ի սպաս դրվեցին աշխատավորության բուժման և հանգստի կազմակերպման գործին: Սովետական Հայաստանի կառավարությունը մի շարք միջոցա-

82 «Գիտությունը Հայաստանում 50 տարում», Երևան, 1973, էջ 264:

ռումներ ձեռնարկից առողջարանների և հանգստյան տների ստեղծման համար։

Ջերմուկ քաղաքը գտնվում է Արփա գետի դեղատեսիլ հովտում, ծովի մակերևույթից 2000—2100 մետր բարձրության վրա։ Ջերմուկն իբրև առողջարան, մեծ ճանաչում ունի շնորհիվ իր հանքային բազմաթիվ աղբյուրների, լեռնային առողջարար կլիմայի, աննկարագրելի գեղեցկություն ունեցող տեղանքի[83]։

Ջերմուկի հանքային ջրերի հետազոտման, ինչպես նաև նրանց օգտագործման հարցում մեծ երախտիք ունեն պրոֆեսորներ Լ. Հովհաննիսյանը, Ա. Մելիք-Ադամյանը, Տ. Մնացականյանը, Ա. Հակոբյանը, Գ. Մեղնիկյանը, Ա. Քաֆանյանը, Գ. Աղաջանյանը, Ռ. Զանջուղովան և ուրիշներ։

1936 թ. սկսվեց և 1940 թ. ավարտվեց Ջերմուկում առաջին առողջարանի (1938 թ. լոգանքների շենքերի) շինարարությունը, այնուհետև կառուցվեցին առողջարանային բազմաթիվ շենքեր։

Ջերմուկի հանքային ջրերը իրենց հատկություններով նման են Կարլովի-Վարիի (Չեխոսլովակիա), Արզնունը՝ Կիսլովոդսկի, Հանքավանինը՝ Էսենտուկիի, Դիլիջանինը՝ Տրուսկավեցկի, Աղվերանինը՝ Բորժոմիի ջրերին։

Սևանը հանրապետության խոշոր քնքշանների նկատմամբ ունեցած կենտրոնական դիրքով և դրանց հետ տրանսպորտային հարմար կապերով, իր բուժիչ հանքային ջրերով երաշխիք է տալիս դառնալու ոչ միայն մեր հանրապետության, այլ միութենական և, նույնիսկ, միջազգային նշանակություն ունեցող առողջարանային շրջան[84]։

Դիլիջան, Ստեփանավան, Կիրովական, Կամո քաղաքները արդյունաբերական կենտրոններ լինելուց բացի առողջարանային քաղաքներ են։ Առողջավայրեր են նաև Արզնի, Ծաղկաձոր, Հանքավան քաղաքատիպ ավանները։ Ինչպես

---

83 Ջերմուկի մասին մանրամասնությունները տե՛ս Գ. Աղաջանյան, Ժ. Թոփչյան, Հայաստանի առողջարանները և առողջավայրերը, Երևան, 1968։

84 «Հայաստանի արդյունաբերություն», 1972, № 10, էջ 56։

ռումներ ձեռնարկից առողջարանների և հանգստյան տների ստեղծման համար։

Ջերմուկ քաղաքը գտնվում է Արփա գետի ձեղատախիլ հովտում, ծովի մակերևույթից 2000—2100 մետր բարձրության վրա։ Ջերմուկն իբրև առողջարան, մեծ ճանաչում ունի շնորհիվ իր հանքային բազմաթիվ աղբյուրների, լեռնային առողջարար կլիմայի, աննկարագրելի գեղեցկություն ունեցող տեղանքի[33]։

Ջերմուկի հանքային ջրերի հետազոտման, ինչպես նաև նրանց օգտագործման հարցում մեծ երախտիք ունեն պրոֆեսորներ Լ. Հովհաննիսյանը, Ա. Մելիք-Ադամյանը, Տ. Մնացականյանը, Ա. Հակոբյանը, Գ. Միդնիկյանը, Ա. Քամալյանը, Գ. Աղաջանյանը, Ռ. Ջանջուղովան և ուրիշներ։

1936 թ. սկսվեց և 1940 թ. ավարտվեց Ջերմուկում առաջին առողջարանի (1938 թ. լոգանքների շենքերի) շինարարությունը, այնուհետև կառուցվեցին առողջարանային բազմաթիվ շենքեր։

Ջերմուկի հանքային ջրերը իրենց հատկություններով նման են Կարլովի-Վարիի (Չեխոսլովակիա), Արզնունը՝ Կիսլովոդսկի, Հանքավանինը՝ Էսենտուկիի, Դիլիջանինը՝ Տրուսկավեցկի, Աղվերանինը՝ Բորժոմիի ջրերին։

Սևանը հանրապետության խոշորագույն շրջանների նկատմամբ ունեցած կլիմայական դիրքով և դրանց հետ տրանսպորտային հարմար կապերով, իր բուժիչ հանքային ջրերով երաշխիք է տալիս դառնալու ոչ միայն մեր հանրապետության, այլ միութենական և, նույնիսկ, միջազգային նշանակություն ունեցող առողջարանային շրջան[34]։

Դիլիջան, Ստեփանավան, Կիրովական, Կամո քաղաքները արդյունաբերական կենտրոններ լինելուց բացի առողջարանային քաղաքներ են։ Առողջավայրեր են նաև Արզնին, Ծաղկաձոր, Հանքավան քաղաքատիպ ավանները։ Ինչպես

---

83 Ջերմուկի մասին մանրամասնությունները տե՛ս Գ. Աղաջանյան, Ժ. Թոփչյան, Հայաստանի առողջարանները և առողջավայրերը, Երևան, 1968։

84 «Հայաստանի արդյունաբերություն», 1972, № 10, էջ 56։

Մոտիկ անցյալում մեքենաշինական գործարանները կենտրոնացված էին Երևան, Լենինական, Կիրովական քաղաքներում։ 1960-ական թվականներին վիճակը փոխվեց։ 1970 թ. Հանրապետության 15 քաղաքներում ու 26 շրջաններում գործում էին մեքենաշինական ձեռնարկություններ։ Այդ ձեռնարկությունների ստեղծումը մեծ դեր խաղաց բնակչության կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման, ինչպես նաև աշխատունակ մարդկանց հանրօգուտ աշխատանքի մեջ ընդգրկելու գործում։

Առանց մեծ քաղաքների ածի խիստ սահմանափակման հնարավոր չէ փոքր քաղաքների զարգացումը։ Տեղական կազմակերպությունները անհրաժեշտ տնտեսական միջոցառումներ են մշակել, որոնք կխթանեն փոքր և միջին քաղաքներում արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխմանը։

Փոքր և միջին քաղաքներում արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման ու զարգացման համար անհրաժեշտ են բարենպաստ պայմաններ, այսինքն՝ արտադրական նոր շինություններ, ջրամատակարարում, գազ, էլեկտրականություն, տրանսպորտ և, որ ամենակարևորն է, արդյունաբերական ձեռնարկություններին մոտ կառուցված բնակարաններ։ Առանց այս անհրաժեշտ պայմանների չի կարող գոյություն ունենալ արդյունաբերական արտադրություն։

Հանրապետության փոքր և միջին քաղաքների տնտեսական և կուլտուրական պայմանների հետ մնալու գլխավոր պատճառն այն է, որ կապիտալ ներդրումները երկար տարիներ հատկացվել են մեծ քաղաքներին, հատկապես մայրաքաղաք Երևանին, ապա Լենինականին և Կիրովականին, իսկ մնացած քաղաքներին համեմատաբար քիչ հատկացումներ են արվել։ Մյուս պատճառն էլ այն է, որ փոքր ու միջին որոշ քաղաքներ գտնվում էին գյուղական վայրերում, ճանապարհներից հեռու ընկած, ուր գյուղատնտեսությունը հետ էր մնում, իսկ սա իր հերթին հետ էր պահում տեղական արդյունաբերության զարգացումը։ Ոչ մեծ քաղաքներում դժվար է լուծվում բանվորական ուժի, հատկապես երիտա-

սարդության օգտագործման հարցը։ Փոքր ու միջին քաղաքներում ևս է մնում կուլտուր-կենցաղային բավարար մակարդակը, որի հետևանքով հոսքը դեպի մեծ քաղաքներ մեծանում է։ Բանվոր-ծառայողների միջին աշխատավարձը և կենցաղսպասարկման ծառայությունն այդ քաղաքներում ցածր է մեծ քաղաքների համեմատությամբ։ Ոչ մեծ քաղաքների տնտեսական-կուլտուրական վերելքի շարժիչ ուժը արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխումն է, որն իր հերթին կապված է դժվարությունների հետ։ Այժմ մշակվում են տիպային նախագծեր՝ այդ քաղաքներում փոքր, բայց մեծ արդյունավետություն ունեցող ձեռնարկությունների կառուցման համար։


Պահանջվում է ստեղծել արդյունաբերության ճյուղեր, որոնք կլինեն մեծ քաղաքների արդյունաբերական առաջատար ձեռնարկությունների մասնաճյուղերը փոքր քաղաքներում (առավել նպատակահարմար է քաղաք-արբանյակներում)։ Ինչո՞ւ են մեր հանրապետությունում արդյունաբերական ձեռնարկություններն ու բնակչությունը առավելապես կենտրոնացած և այժմ էլ շարունակում են կենտրոնանալ Երևան, Լենինական, Կիրովական քաղաքներում։ Այդ հանգամանքը բացատրվում է անցյալում արտադրողական ուժերի սխալ տեղաբաշխմամբ։ Նախապատերազմյան տարիներին տեխնիկան գտնվում էր ցածր մակարդակի վրա, սահմանափակ էր էլեկտրաէներգիան մեծ հեռավորությունների վրա հաղորդելու, տրանսպորտի և կապի կառավարման միջոցների հնարավորությունը, պայմաններ չկային մասնագիտացված և կոոպերացված արտադրություններ ստեղծելու համար։ Այդ իմաստով որոշ չափով հիմնավորված էր միակողմանի մոտեցումը տեղաբաշխման խնդրի լուծման նկատմամբ։ Այժմ, երբ տեխնիկական առաջադիմությունը անհրաժեշտ չափով լուծել է բոլոր այդ հարցերը և պայմաններ ստեղծել հանրապետությունում միջին և փոքր քաղաքների զարգացման համար, թերևս դեռ վերացված չէ խոշոր ու մեծ քաղաքների առավել աճի տենդենցը։

Միութենական շատ գերատեսչություններ ձգտում են

գործարաններն ու ֆաբրիկաները տեղաբաշխել խոշոր ու մեծ քաղաքներում, որտեղ կադրերի և բնակարանային շինարարության հարցերը հնարավոր է լուծել: Դրան օրինակ կարող են ծառայել Լենինականն ու Կիրովականը, որոնց երկու անդամ ավելի ներդրումներ են ընկնում արդյունաբերական շինարարության համար, քան մյուս քաղաքներին ու բանվորական ավաններին:

Նախապատերազմյան, հատկապես 6—8-րդ հնգամյակների տարիներին, Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը լայն գործունեություն են ծավալել հատկապես փոքր ու միջին քաղաքների զարգացման համար, որովհետև այդ քաղաքների ստեղծումով ու դրանց հետագա զարգացումով հանրապետության տարբեր մասերում զարգանում են արդյունաբերության տարբեր ճյուղեր, որոնց շնորհիվ ապահովվում է բնակչության զբաղվածությունը, ստեղծվում են որակյալ բանվորական և ինժեներատեխնիկական կադրեր, միաժամանակ կարգավորվում է խոշոր քաղաքների, հատկապես մայրաքաղաքի աճը:

Հեկ Կենտկոմի բյուրոն և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը բազմիցս անդրադառնալով քաղաքաշինության, փոքր ու միջին քաղաքների ինդուստրացման հարցերին, հատուկ հանձնարարություններ են արել մինիստրություններին և այլ գերատեսչությունների՝ փոքր ու միջին քաղաքների կապիտալ ներդրումներն ավելացնելու, բնակելի և հասարակական շենքերի շինարարությունը ծավալելու, շինարարական ինդուստրիա ստեղծելու, արդյունաբերության նոր ճյուղերի զարգացմանը նպաստելու նպատակով: Որո՞նք են այն խոչընդոտները, որոնք արգելակում են փոքր քաղաքների արտադրության զարգացմանը: Այսօր փոքր քաղաքներում քիչ են ինժեներատեխնիկական և որակյալ բանվորական կադրերը, հատկապես մեծ ձեռնարկության համար: Մեծ քաղաքներում կադրերի հարցը լուծվում է մեկ օբյեկտից մյուսը տեղափոխելով: Փոքր քաղաքներում դժվար է նոր ձեռնարկություն կառուցել շինարարական տեխնիկական



Ազատության պողոտան երեկոյան

բազայի կարողության փոքրության պատճառով։ Ցանկալի է, որ փոքր քաղաքում տեղադրվի բարձր մեխանիզացված և մասնագիտացված ձեռնարկություն, այն էլ նպատակաուղղված ձևով։ Երբեմն կառուցվում են այնպիսի ձեռնարկություններ, որոնք միայն պահանջում են տղամարդու աշխատանք, կամ՝ հակառակը, կամ էլ սեզոնային բնույթ են կրում։ Ուրեմն, փոքր քաղաքներում նոր ձեռնարկություններ պետք է տեղադրել հաշվի առնելով տվյալ տնտեսական շրջանի առանձնահատկությունները, տվյալ քաղաքի տնտեսական նախադրյալները։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի քաղաքներում զբաղված բնակչության քանակը ցածր է միութենականի համեմատությամբ։ Դա նշանակում է, որ մեր հանրապետությունում կան աշխատանքային ռեզերվներ, որոնք պետք է ներգրավվեն արտադրության մեջ։

Հանրապետության որոշ փոքր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում գերակշռում է արդյունաբերական արտադրության որևէ մեկ տեսակը՝ մետաղամշակություն կամ տեքստիլ արտադրություն։ Այստեղ ի՛ մեկում և ի՛ մյուսում դժվարություններ են ստեղծվում տղամարդկանց և կանանց աշխատուժի օգտագործման հարցում։ Դրա համար առաջատար մեկ երկու արտադրությունից բացի, պետք է ստեղծել տեղական նշանակություն ունեցող ձեռնարկություններ (գյուղատնտեսական հումքի վերամշակման, զանազան արտադրական կոմբինատներ, հուշանվերների և կենցաղային առարկաների արտադրության օբյեկտներ և այլն)։ Դա նոր քաղաքին կօգնի հաջողությամբ կատարելու քաղաք կազմող գործոնի իր դերը՝ արդյունաբերական-ագրարային ամբողջ կոմպլեքսի մասշտաբով։

Հայաստանի սովխոզներում աշխատում է շուրջ 100 հազար մարդ, որոնք գյուղատնտեսական արտադրության մեջ զբաղված են տարեկան մի քանի ամիս։ Այստեղից էլ բխում է ձգտումը դեպի քաղաք, դեպի արդյունաբերություն։ Սեզոնային ազատ ժամանակը, եթե լրացվի կոլտնտեսային և սովխոզային ագրոարդյունաբերական կոմպլեքս ձեռնար-

կությունններում, ապա աշխատանքային զբաղվածությամբ ոչ միայն կմեծացվեն գյուղի բնակչության եկամուտները, այլև կկրճատվի աշխատունակ բնակչության հոսքը գյուղից քաղաք։

Հանրապետության կուսակցական և սովետական մարմինների աշխատանքներում իրենց արժանի տեղը պետք է գրավեն արտադրողական ուժերի տեղաբաշխման և աշխատանքային ռեսուրսների առավել նպատակահարմար ու արդյունավետ օգտագործման հարցերը։ Այդ կապակցությամբ ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվներում ասված է, որ «Աշխատանքային ռեսուրսների օգտագործումը բարելավելու և արդյունաբերության ավելի համաչափ տեղաբաշխման նպատակով նոր ձեռնարկությունները կառուցել գլխավորապես միջին և փոքր քաղաքներում, հաշվի առնելով տղամարդկանց և կանանց աշխատանքի օգտագործման անհրաժեշտությունը»[85]։

Արդյունաբերական-ագրարային կոմպլեքսն արտադրական-տարածքային այնպիսի ոլորտ է, որտեղ պետք է միմյանց համալրելով հարևանություն անեն և «համագործակցեն» արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Գյուղական ավանում կառուցված ձեռնարկությունը պետք է իր ոլորտի մեջ առնի այնտեղի ավելորդ աշխատող ձեռքերը, գյուղական ընտանիքին օգնի իր եկամուտներն ավելացնելու գործարանային աշխատավարձով, այլ ոչ թե մարդկանց կարի հողից, կոլտնտեսային կամ սովխոզային արտադրությունից[86]։ Սովետական իշխանության գոյության տարիներին վերջին տասնամյակում փոքր և միջին քաղաքները և քաղաքատիպ ավանները շատ արագ աճեցին։ Այսուհետև՝ մինչև 2000 թ. նույն տեմպերով չի ավելանա Հանրապետության քաղաքների թիվը։ Սակայն նոր քաղաքներ կառաջանան օգտակար հանածոների, հանքային ջրերի օգտագործման, նոր առողջարանների և տուր-

85 «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», էջ 420։

86 Օգտագործել ենք «Փոքր քաղաքների ինդուստրիան» վերնագրով հոդվածը, «Известия», 13 августа, 1969.

մային էլեկտրակայանների կառուցման վայրերում ու նոր երկաթուղային հանգույցների շրջակայքում։ Քաղաքներ կամ քաղաքատիպ ավաններ կդառնան նաև բոլոր այն շրջանային կենտրոնները, որոնք այժմ դյուղական բնակավայրեր են համարվում։

Առաջիկա տարիներին Հայկական ՍՍՀ-ում քաղաքաշինությունը կերազանցապես ընթանալու է նոր փոքր ու միջին քաղաքների խոշորացման ու հետագա բարեկարգման ուղիով։

* * *

Հանրապետությունում 23 քաղաքներից բացի, կան 30 քաղաքատիպ ավաններ, որոնք ապագա քաղաքներ են։ Մեծ դյուղերում ևս ստեղծված են արդյունաբերական օջախներ, տեղի բանվորական, հատկապես երիտասարդության աշխատուժն օգտագործելու նպատակով։ Վերջին 10 տարիներին հաջողությամբ է ընթանում ինչպես փոքր քաղաքների, այնպես էլ քաղաքատիպ ավանների ինդուստրացման պրոցեսը։

Հանրապետության «Լույս», «Հայգորգ», «Մասիս», «Արշալույս» և այլ արտադրական միավորումներն իրենց մասնաճյուղերով զգալի դեր են խաղում Հանրապետության դյուղերի, քաղաքատիպ ավանների և նույնիսկ փոքր քաղաքների ինդուստրացման գործում։ Միայն Հանրապետության մեքենաշինական ձեռնարկությունները միջին և փոքր քաղաքներում, շրջանային կենտրոններում և առանձին մեծ դյուղերում ստեղծել են 22 մասնաճյուղեր։

Մարտունի շրջանային կենտրոնում (քաղաքատիպ ավանում) կազմակերպվեց «Հայգորգ» ֆիրմայի մասնաճյուղը՝ շուրջ 500 բանվորներով։ Վերջին տարիներին Մարտունիում եղած բանվորական ուժն օգտագործելու նպատակով այնտեղ կազմակերպվեցին սարքաշինական ձեռնարկությունների մասնաճյուղեր։ Դրանցից մեկը «Հայէլեկտրալույս» միավորման մասնաճյուղն է՝ լյումինեսցենտային լուսատուների համար դետալներ և հանգույցներ արտադրելու համար, իսկ մյուսը՝ ֆերիտ գործարանի մասնաճյուղը,

էլեկտրահաշվիչ մեքենաների համար իմպուլսային տրանսֆորմատորներ թողարկելու համար։ 10-րդ հնգամյակում այստեղ շահագործման կհանձնվի խաղալիքների խոշոր գործարանը։

Շուրջ 12 տարվա պատմություն ունի Արզնիից ոչ հեռու՝ Հրազդանի աջ ափին, սարահարթի վրա գտնվող Նոր Հաճըն քաղաքատիպ ավանը։ Ավանն իր կառույցներով փոքրիկ քաղաքի տպավորություն է թողնում։ Այնտեղ է գտնվում հանրապետության տեխնիկական ճշդրիտ քարերի գործարանը, որը կորունդից պատրաստում է շուրջ 120 տեսակի տարբեր չափերի, բարձր ճշգրտությամբ առանցքակալներ, հենարաններ, ժամացույցի տեխնիկական քարեր, հատոցներ, մամլիչներ և այլն։

Ջրվեժի կապի սարքավորումների գործարանը լայն ճանաչում է գտել մեր երկրում։ Նրա արտադրանքն առաքվում է շուրջ հազար հասցեներով, այդ թվում՝ Ֆրանսիա, Իրան, Իրաք և այլն։

Արզնիի բյուրեղապակու գործարանը տարեկան արտադրելու է մի քանի տասնյակ միլիոն թեյի բաժակ և կոնյակի շիշ։ Կալինինոյում գործում է էմալապատման իրերի գործարանը, իսկ նոր կառուցվող խոշոր պանրագործարանը մշակելու է շրջանի արտադրած կաթը և տալու է պանրի ամենաընտիր տեսակներ։

Բարգուշատի լեռների լանջին ստեղծվեց Դաստակերտ քաղաքատիպ ավանը, ուր կառուցվեց Դաստակերտի պղնձամոլիբդենային կոմբինատը։ Այն դարձավ Սիսիանի արդյունաբերության առաջնեկը, որը և խթանեց շրջկենտրոնի և շրջանի մյուս բնակավայրերի զարգացմանը։ Այժմ Որոտանի կասկադի ստորերկրյա կառույցներում աշխատող բանվորները և ինժեներատեխնիկական աշխատողների մի մասն իր աշխատանքային մկրտությունը ստացել է Դաստակերտում։

Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանը Անդրկովկասի և Միության մի շարք քաղաքների մատակարարում է հրակայուն աղյուս։ Այդ գործարանի կառուցման հետևան-

քով Դեբեդ գետի աջ ափին ստեղծվել է Թումանյան քաղաքատիպ ավանը։

1949 թ. գարնանը Արաքսի ափին կառուցվեցին փայտե առաջին տնակները, ապա նրանց փոխարինեցին քարե շենքերը։ 1963 թ. մայիսին շահագործման հանձվեց Ագարակի հարստացուցիչ ֆաբրիկան, որը պղնձի և մոլիբդենի կոնցենտրատ է տալիս։ Կոմբինատի կոլեկտիվը, յուրացնելով նորագույն տեխնիկան, հասավ աշխատանքի տեխնիկա-տնտեսական բարձր ցուցանիշների և 1964 թ. հասավ կոմբինատի նախագծային կարողությանը։

Ագարակի աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր կոմբինատի հիմնադրումով լեռների լանջին ստեղծվեց Ագարակ քաղաքատիպ ավանը, ուր ապրում են 10-ից ավելի ազգությունների ներկայացուցիչներ՝ հայեր, ռուսներ, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ և այլն։

Վարդենիս (Բասարգեչար) ավանից քիչ հեռու, Թափեր կոչվող բարձունքի սաորոտում, 30 հեկտար տարածության վրա հիմնադրվեց Ջոդի ոսկու հանքերի բանավանը։ Բանավանի կառուցման առաջին քարը դրեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Վ. Հ. Համբարձումյանը։ Այդ կառույցը կլինի Վարդենիս քաղաքի առաջին հերթը, որը կենտրոնական փողոցով միանալու է այժմյան Վարդենիսին։ Այստեղ կառուցվելու է Սևան-Վարդենիս երկաթուղագիծը, որով հիմնովին կփոխվի շրջանի տնտեսական դեմքը։

Շամշադինի շրջանի կենտրոնում՝ Բերդում, կառուցվեց արտադրական կոմբինատ։ Թալինում գործում է Լենինականի գուլպայի «Արշալույս» արտադրական միավորման մասնաճյուղը, Ազիզբեկովում՝ Երևանի էլեկտրատապարատների գործարանի մասնաճյուղը, որի արտադրած ուժեղացուցիչներն ուղարկվում են մեր երկրի տարբեր քաղաքները և երկրից դուրս։ Ապարանում գործում է Երևանի Ջերժինսկու անվան հատոցաշինական գործարանի մասնաճյուղը՝ տեխնիկական իրերի գործարանը, ուր աշխատում է շուրջ 600 մարդ։



Երևանի Վ. Ի. Լենինի անվան հրապարակը

* * *

Հանրապետության մեծ գյուղերում աշխատանքային ռեսուրսներն օգտագործելու նպատակով կազմակերպվել են արտադրական ձեռնարկությունների մասնաճյուղեր կամ արտադրամասեր։

Չարենցավանի գործիքաշինական գործարանը մասնաճյուղեր է ստեղծել Ստեփանավանի շրջանի Կուրթան և Մարտունու շրջանի Երանոս գյուղերում, Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանը ստեղծել է իր մասնաճյուղը Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ գյուղում, իսկ Երևանի դիզարվիատուրային ժամացույցների գործարանը՝ Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղում։

Գինու գործարաններ են ստեղծվել Արտաշատի շրջանի Այղեշատ, Դալար և Բուրաստան գյուղերում, նույն շրջանի Կիրովի անվան սովխոզում։ Անիում կազմակերպված է մագնիսային ուժեղացուցիչների, լուսարձակների, նեոնային լամպերի արտադրություն։ Մասիսի շրջանի Այնթափ գյուղում գործում են շրջանի արտադրական, «Հայբենզին քիմիա» կոմբինատները և բյուրեղապակյա իրերի արտադրամասը։ «Հայէլեկտրակենցաղտարա» միավորումը մասնաճյուղեր ունի Ապարան և Եղվարդ գյուղերում։ Պահածոների գործարան է ստեղծվել Արարատի շրջանի Շիրազլու գյուղում։ Գործարանը տարեկան տալիս է 1 մլիոն պայմանական տուփ պահածո։ Պահածոների գործարաններ կան նաև Էջմիածնի շրջանի Ներքին Խարամբարթ, Թումանյանի Օձուն (Ուղունլար) և հանրապետության այլ մեծ գյուղերում։

Շրջաններում և նրանց մեծ գյուղերում արդյունաբերական օջախների ստեղծումը ունեցավ դրական նշանակություն ոչ միայն բանվորական ուժի օգտագործման համար, այլև շրջանների անտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման, բանվորների և գյուղացիության արտադրատնտեսական կապի ուժեղացման իմաստով։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակների տարիներին արդյունաբերության տեղաբաշխման շնորհիվ հանրապետությունում առաջացան ու

դարգացան շուրջ 50 քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ, 80 բնակավայրերում ստեղծվեցին արդյունաբերական օջախներ։ Դրանց շնորհիվ Հանրապետությունում ստեղծվեցին արդյունաբերական 4 խոշոր շրջաններ, որոնցից յուրաքանչյուրն ունի արդյունաբերական և տրանսպորտային առանձին հանգույցներ ու կենտրոններ։

Առաջին դասակարգի արդյունաբերական շրջանը ստեղծված է Արարատյան դաշտում, Հրազդան գետի երկայնքով։ Այստեղ աչքի են ընկնում բարմաճյուղ մեքենաշինությունը, քիմիական, սննդի ու թեթև արդյունաբերությունը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրությունը։

Երկրորդ արդյունաբերական խոշոր շրջանը Կիրովական-Ալավերդի արդյունաբերական շրջանն է, որը հայտնի է իր գունավոր մետալուրգիայով և քիմիական արդյունաբերությամբ։

Երրորդ արդյունաբերական շրջանը Հանրապետության հարավ-արևելքն է՝ Զանգեզուրը, որը հայտնի է պղնձամոլիբդենային արդյունաբերությամբ։

Չորրորդ արդյունաբերական շրջանն ընկած է Հանրապետության արևմուտքում։ Այն հայտնի է տեքստիլ, սննդի և շինանյութերի, մեքենաշինական-մետաղամշակման արդյունաբերությամբ։

Տեքստիլ արդյունաբերությունը կենտրոնացված է Լենինականում, իսկ շինանյութերի արդյունաբերության հանգույցը՝ Աբովիկում։

Ցուցակ Հայկական ՍՍՀ քաղաքների

Հ/հ	Քաղաքի անունը	Երբ է դարձել քաղաք	Երբ է դարձել հանրապետական ենթակայության քաղաք
1	Երևան[87]	782 թ. մ. թ. ա.	—
2	Լենինական (Ալեքսանդրապոլ)	1840 թ.	—
3	Կիրովական (Մեծ Դարբիխա)	1924 թ. ապրիլի 8-ին	1953 թ. հուլիսի 11-ին
4	Դիլիջան	1924 թ. ապրիլի 8-ին	1958 թ. հուլիսի 5-ին
5	Ալավերդի (Մանես)	1938 թ. հոկտեմբերի 1-ին	1963 թ. հունվարի 12-ին
6	Վաղարշապատ	1938 թ. հոկտեմբերի 1-ին	1963 թ. հունվարի 12-ին
7	Էջմիածին (Վաղարշապատ)	1938 թ. հոկտեմբերի 1-ին	1963 թ. ապրիլի 24-ին
8	Կաժո (Նոր Բայազետ)	1938 թ. հոկտեմբերի 1-ին	1963 թ. հունվարի 12-ին
9	Գորիս	1938 թ. հոկտեմբերի 1-ին	1970 թ. օգոստոսի 18-ին
10	Ստեփանավան (Ջալալօղլի)	1938 թ. հոկտեմբերի 1-ին	1967 թ. դեկտեմբերի 19-ին
11	Արթիկ	1945 թ. դեկտեմբերի 7-ին	1963 թ. հունվարի 12-ին
12	Հոկտեմբերյան	1947 թ. սեպտեմբերի 24-ին	1967 թ. մարտի 24-ին
13	Հրազդան (Ներքին Ախտա)	1947 թ. սեպտեմբերի 24-ին	1967 թ. մարտի 24-ին
14	Սպիտակ (Համամլու)	1960 թ. նոյեմբերի 24-ին	1971 թ. դեկտեմբերի 10-ին
15	Իջևան (Փարվանատրա)	1961 թ. օգոստոսի 21-ին	1970 թ. օգոստոսի 10-ին
16	Ջերմուկ	1961 թ. դեկտեմբերի 30-ին	1967 թ. մարտի 24-ին
17	Արտաշատ (Ղամարլու)	1961 թ. սեպտեմբերի 30-ին	1970 թ. դեկտեմբերի 21-ին
18	Սևան (Ծլնովկա)	1961 թ. հունվարի 7-ին	1967 թ. մարտի 24-ին
19	Արարատ (Վեդի)	1962 թ. ապրիլի 14-ին	1971 թ. դեկտեմբերի 10-ին
20	Աշտարակ	1963 թ. հունվարի 23-ին	1971 թ. դեկտեմբերի 21-ին
21	Արմավիր (Էլար)	1963 թ. հունվարի 12-ին	1970 թ. օգոստոսի 10-ին
22	Վանաձոր	1958 թ. օգոստոսի 21-ին	—
23	Զարենցավան (Լուսավան)	1961 թ. դեկտեմբերի 30-ին	—

87 Երևանն ունի 7 քաղաքային շրջան՝ Լենինյան, Սպանդարյան, Օրջոնիկիձեի, Շահումյանի, Մյասնիկյանի, Սովետականի և 26 կոմիսարների։

Հ/հ	Քաղաքատիպ ավանի անունը, շրջանը	Երբ է դարձել քաղաքատիպ ավան
1	Ապարակ — Մեղրու շրջան	1954 թ. մայիսի 18-ին
2	Ազիզբեկով — Ազիզբեկովի	1956 թ. հոկտեմբերի 12-ին
3	Այրում — Նոյեմբերյանի	1960 թ. հունիսի 18-ին
4	Անի պեմզա — Անիի	1938 թ. հոկտեմբերի 1-ին
5	Արզնի — Ազովյանի	1938 թ. հոկտեմբերի 1-ին
6	Ախթալա — Ալավերդու	1939 թ. մայիսի 4-ին
7	Ապարան — Ապարանի	1963 թ. փետրվարի 12-ին
8	Բնդզ — Ջամշաղինի	1963 թ. հունվարի 23-ին
9	Դադարին — Սևանի	1961 թ. ապրիլի 26-ին
10	Դաստակերտ — Մխիթարի	1951 թ. սեպտեմբերի 15-ին
11	Եղեգնաձոր — Եղեգնաձորի	1960 թ. մարտի 7-ին
12	Թումանյան — Ալավերդու	1951 թ. մայիսի 15-ին
13	Լուսակերտ — Աշտարակի	1953 թ. դեկտեմբերի 23-ին
14	Ծաղկաձոր — Հրազդանի	1958 թ. հունիսի 12-ին
15	Կալինինո — Կալինինոյի	1961 թ. հունվարի 30-ին
16	Մասիս — Մասիսի	1971 թ. մարտի 24-ին
17	Մարալիկ — Ապարանի	1962 թ. օգոստոսի 30-ին
18	Մարտունի — Մարտունու	1963 թ. փետրվարի 2-ին
19	Մեղրի — Մեղրու	1958 թ. օգոստոսի 21-ին
20	Նոր Հաճըն — Ազովյանի	1958 թ. նոյեմբերի 4-ին
21	Նոր-Խարբերդ (Նոր Կյանք) — Մասիսի	1936 թ. հունիսի 22-ին
22	Նոյեմբերյան (Բարանա) — Նոյեմբերյանի	1971 թ. մարտի 24-ին
23	Շամլուղ — Թումանյանի	1938 թ. հոկտեմբերի 1-ին
24	Պեմզաշեն — Արթիկի	1958 թ. օգոստոսի 21-ին
25	Սովետաշեն — Օրջոնիկիձեի	1936 թ. հունիսի 2-ին
26	Սիսիան — Սիսիանի	1958 թ. օգոստոսի 21-ին
27	Վարդենիս — Վարդենիսի	1969 թ. մայիսի 7-ին
28	Վերին Թալին — Թալինի	1964 թ. նոյեմբերի 4-ին
29	Վեդի — Արարատի	1963 թ. մայիսի 31-ին
30	Ջուլափերան — Դուզարքի[88]	1940 թ. հունվարի 25-ին

88 «Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը (առ 1-ը մայիսի 1971 թ.)», Երևան, 1971, էջ 11—12։

Օրերն ու ամիսները վերցված են Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանն սովետների աշխատանքի հարցերի բաժնից։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃՆ ՈՒ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական իշխանության տարիներին ժողովրդական տնտեսության զարգացման շնորհիվ բարելավվեցին Հանրապետության բնակչության նյութական պայմանները, բարձրացավ նրա կուլտուր-կենցաղային մակարդակը։

Տնտեսության սոցիալիստական սիստեմը և բնակչության տեղաբաշխման նոր սկզբունքները մեր Հանրապետությունում մեծապես նպաստեցին բնակչության բարեկեցությանը, ծննդաբերության աճին, իսկ մյուս կողմից՝ կյանքի տևողության երկարացմանը։ Քաղաքային բնակչության ինտենսիվ աճին նպաստեց նաև մեխանիկական աճը։

Հայաստանի բնակչությունը 1913 թ. (այսօրվա տարածքի սահմաններում) կազմում էր մեկ միլիոն մարդ, իսկ 1920 թ.՝ 720 հազար։ Սովետական Հայաստանի բնակչությունը 1926 թ. կազմում էր 881 հազար մարդ, 1939 թ.՝ 1.282, 1959 թ.՝ 1.763 հազար, իսկ 1970 թ.՝ այն հասավ 2.493 հազարի[1]։

Բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 1913 թ. կազմել է 34 մարդ, 1926 թ.՝ 30, 1939 թ.՝ 43, 1959 թ.՝ 59, իսկ 1970 թ.՝ 83,6 մարդ[2] (Միության միջինը 10,8 մարդ է), իսկ 2000 թ. կհասնի 145—150 մարդու։ Հայ-

---

[1] «Итоги Всесоюзной переписи населения 1970 г. по Арм. ССР». Ереван, 1972, стр. 12.

[2] «Большая советская энциклопедия», т. 2, М., 1970, стр. 219.

կական ՍՍՀ բնակչության ավելի քան 45 տոկոսը ապրում է Արարատյան դաշտում, որը կազմում է հանրապետության տարածքի 6,5 տոկոսը[3]։

Սովետական Հայաստանը բնակչության խտությամբ Միության մեջ բռնում է երկրորդ տեղը Մոլդավիայից հետո[4]։

Հայաստանի քաղաքային բնակչությունը 1873 թ. կազմում էր 40,0 հազար կամ ընդհանուր բնակչության 7,6 տոկոսը, 1897 թ.՝ 71,9 հազար կամ 8,6 տոկոսը, իսկ 1914 թ.՝ 99,5 հազար կամ 9,7 տոկոսը։

Հայաստանի քաղաքային բնակչությունը ներքոհիշյալ տարիներին[5]

	1873 թ.	1897 թ.	1911 թ.
Երևանում	11,938	29,006	29,766
Ալեքսանդրապոլում	19,976	30,616	51,316
Նոր Բայազետում	5,363	8,486	12,630
Գյումրում	2,750	3,799	5,739
Ընդամենը՝	40,027 բնակիչ	71,907 բնակիչ	99,451 բնակիչ

Այսպիսով, քաղաքային բնակչությունը 1873—1914 թթ. ընթացքում Հայաստանում աճել է մոտ 2,5 անգամ, կազմելով ընդհանուր բնակչության 9,7 տոկոսը։ Պատմականորեն հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական վիճակն այնպես է զարգացել, որ նրա զգալի մասը ցրվել է Կովկասի տարբեր ծայրամասերում՝ Բաքվում, Թիֆլիսում, Հյուսիսային Կովկասում և այլն։

Նախասովետական տարիներին Հայաստանի բնակչության վերարտադրության բնորոշ գծերն են եղել բարձր ծնե-

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 *А. Бадалян.* Население Армении со времени присоединения к России до наших дней («Известия» АН Арм. ССР. 1953, № 5, стр. 58).

լիությունն ու բարձր մահացությունը, կյանքի կարճ տևողությունը և բնակչության մշտական արտահոսքը։ Հայաստանում 1913 թ. յուրաքանչյուր հազար բնակչի հաշվով ծնվել է 43,6 երեխա, մահացել 24-ը[6]։ Այդ վիճակն ավելի ծանրացավ 1914—1920 թթ.՝ համաշխարհային պատերազմի և դաշնակցականների տիրապետության տարիներին։ Քայքայվեց ժողովրդական տնտեսությունը, երկրում տարածվեցին սովն ու համաճարակը, կրճատվեց ամուսնությունների քանակը, բնակչության զգալի մասը զոհվեց երկրից, մահացածների թիվը գերազանցեց ծնվածներին։ Այդ ծանր տարիներին Հայաստանի ներկա տարածքի վրա սովից ու համաճարակից մահացավ շուրջ 600 հազար մարդ[7]։

Սովետական իշխանության տարիներին ժողովրդական տնտեսության բուռն զարգացման, բնակչության նյութական պայմանների բարելավման, առողջապահության գործի լայն ծավալման, կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման շնորհիվ, մեր երկրում ապահովվեց բնակչության աճի կայուն տեմպ և մահացության մակարդակի աստիճանական նվազում։ 1968 թ. ՍՍՀՄ-ում հազար բնակչի հաշվով բնական աճը կազմել է 9,6, իսկ մեր հանրապետությունում՝ 19,7 մարդ, որը զիջում է միայն միջինասիական հանրապետությունների և Ադրբեջանի ցուցանիշներին։ Հազար բնակչի հաշվով 1970 թ. Հայաստանում ծնվել է 22,1, մահացել է 5,1 մարդ[8]։ Այսպիսով, մեր հանրապետության բնակչության մահացության ընդհանուր գործակիցը աշխարհում ամենանվազագույնն է[9]։ Հատկապես կրճատվել է մանկական մահացությունը։ 1970 թ. մահացության ընդհանուր գործակիցը 1940 թ. համեմատությամբ իջել է 2,7, իսկ մինչև մեկ տարեկան երեխաների հաշվով՝ 4,8 անգամ։

Հայաստանում 1913 թ. եղել է 73, իսկ 1970 թ.՝ 7324

---

6 «Армения в единой семье народов СССР», стр. 21.

7 «Վիճակագրական տեղեկատու», Երևան, 1925, էջ 17։

8 «Армения в единой семье народов СССР», стр. 21.

9 Վ. Ե. Խոջաբեկյան, ՀՍՍՀ բնակչությունը երեկ, այսօր և վաղը, (ՀՍՍՀ ԳՄ «Լրաբեր», 1972, № 12, էջ 51)։

բժիշկ։ Բնակչության ապահովվածությունը բժիշկներով տասը հազար բնակչի հաշվով 1913 թ. եղել է 0,7, իսկ 1970 թ.՝ 28,8 բժիշկ. հիվանդանոցային մահճակալների ապահովվածությունը 1913 թ. եղել է 2,1, իսկ 1970 թ.՝ 85,9 մահճակալ։

Ստեղծված պայմանների շնորհիվ Սովետական Հայաստանում բնակչության արագ աճի գլխավոր նախադրյալը դարձել է բնական վերարտադրությունը։

Ծնունդը, մահացությունը և բնական աճը Սովետական Հայաստանում (1000 բնակչի հաշվով)

Տարի	Ծնված	Մահացած	Բնական աճ
1921—1925	36,9	18,2	18,7
1931—1935	44,6	13,7	30,9[10]
1940	41,2	13,8	27,4
1950	32,1	8,5	23,6
1960	40,1	6,8	33,3
1970	22,2	5,1	17[11]

Աղյուսակից երևում է, որ և՛ ծննդաբերության, և՛ մահացության գործակիցներն ունեցել են նվազման տենդենց, ըստ որում, մահացությունը նվազել է ավելի արագ տեմպերով։

Սովետական իշխանության, հատկապես հետպատերազմյան տարիներին միջոցներ ձեռնարկվեցին բազմազավակությունը խրախուսելու, մայրության ու մանկության պահպանությունը ուժեղացնելու, առողջապահության գործը զարգացնելու ուղղությամբ։ Սոցիալ-տնտեսական նոր պայմաններում բնակչության վերարտադրության հիմնական գծերը դարձան մահացության խիստ նվազումը, կյանքի միջին տեվողության աճը՝ ծննդաբերության համեմատաբար բարձր մակարդակի պայմաններում։

Հանրապետության բնակչության աճի երկրորդ աղբյուրը բնակչության միգրացիան է։ Մեր երկրում բնակչության միգ-

10 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 196.

11 Նույն տեղում, էջ 50, 51։

բացիան ներկայացնում է աշխատուժի վերաբաշխումը երկրի տարածքում: Դա կատարվում է արտադրողական ուժերն ավելի ռացիոնալ տեղաբաշխելու, երկրի նոսր բնակեցված շրջանների բնական հարստություններն օգտագործելու և բնակչության բարեկեցությունը բարձրացնելու նպատակով:

Անցյալում՝ նախասովետական տարիներին, Հայաստանից հազարավոր ազամարդիկ մեկնում էին Անդրկովկասի և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները՝ աշխատանք գտնելու համար: Նրանք մեծ մասամբ հողազուրկ գյուղացիներ էին, որոնք աշխատանք չէին գտնում Հայաստանում: Երևանի նահանգում 1913 թ. արտաքնացների թիվը կազմել է 27 հազար հոգի[12], այսինքն՝ 5 անգամ ավելի, քան նահանգի ունեցած բանվորությունն էր: Արտագնացության աճը, անկասկած, հետևանք էր աշխատավորների աղքատության, որի մասին Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմը և բանվորների իմիգրացիան» հոդվածում գրում է. «Կասկած չկա, որ միայն ծայրահեղ աղքատությունն է հարկադրում մարդկանց թողնել հայրենիքը»[13]:

Սովետական իշխանության տարիներին ստեղծված անտեսական ու քաղաքական նախադրյալների շնորհիվ ոչ միայն դադարեց բնակչության արտահոսքը երկրից, այլև Միության տարբեր հանրապետություններից հայերի մի մասը սկսեց վերադառնալ Հայաստան:

Եթե նախասովետական տարիներին Հայաստանի արտաքին միգրացիայի հաշվեկշիռը բացասական էր, ապա սովետական իշխանության տարիներին այն հիմնովին փոխվեց: Հայաստանում արդյունաբերության խոշոր վերելքի, նոր առաջացած քաղաքների շնորհիվ տարեցտարի ավելացավ Հայաստան եկողների թիվը: Մեր երկրի տարբեր մասերից Հայաստան եկան մասնագետներ, բանվոր-ծառայողներ, ուսանողներ: Դրա շնորհիվ 1959 թ. մարդահամարից

12 Լ. Գավրյան, *Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը*, Երևան, 1965, էջ 71:

13 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 19, էջ 565:



Ճարտարապետ Կ. Հալաբյան



մինչև 1970 թ. մարդահամարը, Հայաստանի բնակչության մեխանիկական աճը կազմել է 147 հազար մարդ։

1960—1968 թթ. Հանրապետության բնակչության մեխանիկական աճի 43,6 տոկոսը կազմել են Ադրբեջանից և Վրաստանից եկածները (հիմնականում հայեր), 11,2 տոկոսը՝ եղբայրական մյուս հանրապետություններից, 37,4 տոկոսը այլ վայրերից եկածներ են, իսկ 7,8 տոկոսը հայրենադարձներ են[14]։

Ի տարբերություն կապիտալիզմի, սոցիալիզմը կարգավորեց բնակչության միգրացիան, ելնելով ժողովրդական տնտեսության զարգացման ու պլանավորման օբյեկտիվ օրենքից։

Հանրապետության բնակչության, հատկապես քաղաքային բնակչության աճի աղբյուրներից մեկն էլ հայրենադարձությունն է։ Աշխարհի տարբեր մասերում գտնվող հայերի մի մասը վերադառնում է հայրենիք՝ Սովետական Հայաստան։

Դեռևս 1923 թ. Ճենովայի միջազգային կոնֆերանսում սովետական կառավարության արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինը հայտարարեց, որ սովետական կառավարությունը պատրաստ է ընդունելու հայ գաղթականությանը։ Այդ հայտարարությունն աշխարհին ցույց տվեց սովետական պետության հոգատար վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ։

Ներգաղթը 1921—1922 թթ. տարերային ձևով սկսվեց, իսկ 1923 թ. ստացավ կազմակերպված բնույթ, վայելելով պետության հովանավորությունը։ Մինչև 1940 թ. արտասահմանյան տարբեր երկրներից Սովետական Հայաստան են եկել շուրջ 80 հազար հայեր։ Այդ տարիներին էր, որ Երևանի շրջակայքում ստեղծվեցին Նոր Արաբկիր, Նոր Սեբաստիա, Նոր Արեշ, Նոր Մարաշ, Նոր Զեյթուն, Նոր Բութանիա, Նոր Մալաթիա, Նոր Կիլիկիա և այլ բնակավայրեր, որոնք հետագա տարիներին ձուլվեցին Երևանի հետ։

14 Խ. Ավետիսյան, Սովետական Հայաստանի բնակչության դինամիկան 50 տարում («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 4, էջ 43)։

Զանգվածային ներգաղթը սկսվեց հետպատերազմյան տարիներին՝ 1946—1958 թթ.։ Աշխարհի 25 երկրներից Սովետական Հայաստան եկան մոտ 100 հազար հայեր[15]։ 1962—1970 թթ. հայրենիք վերադարձավ մոտ 20 հազար հոգի։ Հայրենիք վերադարձած հայերը բնակություն են հաստատել Երևանում, Լենինականում, Կիրովականում, Աբովյանում, Զարենցավանում, Հրազդանում, Հոկտեմբերյանում, Էջմիածնում, Աշտարակում, Արարատում, ինչպես նաև որոշ գյուղական վայրերում։

Այսպիսով, 1920—1970 թթ.՝ 50 տարում, հայրենիք են վերադարձել մոտ 200 հազար հայեր։ Նրանք աշխատում են ժողովրդական անտեսության տարբեր ճյուղերում, մասնակցում են մեր երկրում կատարվող սոցիալիստական շինարարությանը։ Նրանց ապրելու, սովորելու և աշխատելու համար ստեղծված են բոլոր պայմանները։

Ինչպես նկատեցինք, միգրացիան, որպես Սովետական Հայաստանի քաղաքային բնակչության թվի ավելացման գործոն, կատարվում է երեք ուղղություններով. առաջին՝ բնակչության հոսք գյուղից քաղաք, երկրորդ՝ բնակչության միջհանրապետական շարժում և երրորդ՝ արտասահմանում բնակվող աշխատավոր հայության հայրենադարձություն դեպի Սովետական Հայաստան[16]։

Տնտեսագետ Լ. Դավթյանի հաշվումներով Սովետական Հայաստանի բնակչությունը 2000 թ. մոտերքում կհասնի ավելի քան 4,5 միլիոնի, իսկ Երևանը (1926 թ. ուներ 64,6[17], 1970 թ.՝ 766,7 հազար[18] բնակիչ), 1980 թ. կունենա մեկ միլիոն, իսկ 2000 թ. միայն բնական աճով կունենա 1.350 հազար բնակիչ[19]։

Ժամանակակից Երևանը, որպես արդյունաբերական, մշակութային և գիտական խոշոր կենտրոն, ձևավորվեց

---

15 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VIII, Երևան, 1970, էջ 254։

16 Լ. Դավթյան, նշվ. աշխ. էջ 71։

17 «Ереван за 40 лет в цифрах», стр. 10.

18 «Ереван в цифрах» (статистический сборник), Ереван, 1972, стр. 20.

19 «Տարուն», 1969, № 7, էջ 45։

սովետական իշխանության տարիներին։ 1959 թ. այն մտավ երկրի խոշոր քաղաքների շարքը։ Սովետական Միության քաղաքների մեջ իր բնակչության աճի տեմպերով Երևանը բռնում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն Չելյաբինսկին։ Երևանը բնակչության թվով միութենական հանրապետությունների մայրաքաղաքների շարքում գրավում է 8-րդ տեղը[20]։

Երևան տեղափոխված բնակչության այդպիսի մեծ քանակը բացատրվում է հանրապետությունում արտադրամիջոցների ոչ ճիշտ տեղաբաշխմամբ, Երևանում արդյունաբերական շատ ձեռնարկությունների կենտրոնացմամբ՝ անտեսելով մյուս շրջանների բնաառնտեսական պայմանները, նրանց զարգացման հեռանկարները, մասնավորապես կանանց բանուժի անբավարար օգտագործումը[21]։

Հայկական ՍՍՀ քաղաքների բնակչության քանակը մարդահամարների տվյալներով

		Բնակչության թիվը				
		1914 թ.	1926-ին	1939-ին	1959-ին	1970 թ. 15/I տվյալներով
1	2	3	4	5	6	7
1	Երևան	29766	64600	204200	493194	766705
2	Լենինական	51316	42300	67700	108446	164966
3	Կիրովական	—	8600	17600	49423	106604
4	Էջմիածին	—	8400	9800	19700	31819
5	Ղափան	—	2658	8500	19315	29916
6	Հրազդան	—	—	4200	7769	26833
7	Հոկտեմբերյան	—	—	—	14932	25881
8	Ալավերդի	—	4500	10000	16713	21311
9	Դիլիջան	—	6500	14600	11412	15761
10	Կամո	12630	8400	8300	8751	19970
11	Քաջարան	—	—	—	11385	10744
12	Գուրիս	5739	2690	5571	10377	14620
13	Արմավիր	—	—	5800	9071	13323
14	Աբովյան	—	—	—	7272	13924
15	Սպիտակ	—	—	—	9798	13453

[20] Ա. Սիմոնյան, Երևան, էջ 194։

[21] «Լենինյան ուղիով», 1973, № 3, էջ 71։

1	2	3	4	5	6	7
16	Աբովյան	—	—	—	—	18712
17	Սպիտակ	—	—	—	8667	11913
18	Իջևան	—	—	—	7639	13528
19	Սևան	—	—	—	6415	12392
20	Աշտարակ	—	—	—	7563	12137
21	Չարենցավան	—	—	—	2350	16455
22	Արարատ	—	—	—	5412	8524
23	Ջերմուկ	—	—	—	2062	4236[22]

Հանրապետության քաղաքատիպ ավաններում բնակչության քանակը 1939, 1959 և 1970 թթ. մարդահամարների տվյալներով

		1939 թ.	1959 թ.	1970 թ.
1	Անխաձոր	973	1119	720
2	Ապնիկով		1163	2729
3	Ապարան		—	4651
4	Ազարակ		1611	3944
5	Արդվի	220	3195	5643
6	Ախթալա	398	3251	4457
7	Այրում		—	1927
8	Բերդ		—	7044
9	Գագարին		—	604
10	Դաստակերտ		2317	1308
11	Եղեգնաձոր		—	5067
12	Կալինինո		—	7125
13	Քոլագերան		856	528
14	Լուսակերտ		2957	1850
15	Մարտունի		—	7532
16	Մարալիկ		—	3311
17	Մեղրի		3095	4130
18	Նոր-Հաճն		1406	3871
19	Նոր Կյանք (Խարբերդ)		—	—
20	Պեմզաշեն	1757	3599	2612
21	Սիսիան		3838	7426
22	Սովետաշեն		2023	3007
23	Թումանյան		2640	2522
24	Ծաղկաձոր		1020	2051
25	Շամլուղ	1874	2862	2434
26	Վերին Թալին		—	3238
27	Վարդենիս		—	8291
28	Վեդի		—	6165
29	Մասիս		—	
30	Նոյեմբերյան		3098	4314[23]

[22] Итоги всесоюзной переписи населения 1970 г., по Арм. ССР», стр. 14—21.

[23] Նույն տեղում·

Երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, գիտության, արվեստի և գրականության զարգացման, քաղաքների կառուցապատման շնորհիվ Սովետական Հայաստանում բարձր տեմպերով է աճում քաղաքային բնակչությունը։ Հանրապետության ամբողջ արդյունաբերության արտադրանքը 1913 թ. համեմատությամբ 1970 թ. ավելացել է 181 անգամ, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ 5,4 անգամ, այն դեպքում, երբ բնակչությունն ավելացել է 2,5 անգամ[24]։ Բնակչության 59,5 տոկոսը ապրում է քաղաքներում (1913 թ. 10,4 տոկոսի դիմաց)։ Արդյունաբերական աճի տեմպերը միշտ էլ գերազանցել են ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի տեմպերին, իսկ արդյունաբերության մեջ ավելի մեծ չափերով և արագ է զարգացել արտադրության միջոցների արտադրությունը։ «Ա» խմբի տեսակարար կշիռը արդյունաբերության ամբողջ արտադրանքի մեջ 1928 թ. կազմել է ընդամենը 24, 1940 թ.՝ 41, իսկ 1970 թ.՝ 66 տոկոսը[25]։ Դրա հետևանքով ստեղծվել է անհրաժեշտ բազա՝ բնակչության հարաճուն պահանջմունքների բավարարման նպատակով սպառման ապրանքների անընդհատ աճի համար։ Վերջին 15 տարիներին այս երկու խմբերի արտադրության աճի տեմպերը մերձեցան, իսկ 8-րդ հնգամյակում՝ երկրորդ խմբի աճն առաջ անցավ առաջինից։

Սպառման միջոցների արտադրությունը 1928 թ. համեմատությամբ 1970 թ. ավելացավ 67 անգամ, այն դեպքում, երբ բնակչությունը աճել է 2,5 անգամ։ Արդյունաբերության նման արագ զարգացումը, բնականաբար, պետք է նպաստեր քաղաքային բնակչության աճին։ Դրան խթանեցին շինարարության, տրանսպորտի, կապի ցանցի զարգացումը, սպասարկման ոլորտի ընդարձակումը, միջնակարգ և բարձրագույն դպրոցների, գիտահետազոտական հիմնարկների ստեղծումը։

Հանրապետությունում քաղաքային բնակչության աճի

24 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 8։

25 Նույն տեղում, էջ 9։

բարձր տեմպերն արդյունք են նաև նոր քաղաքների ստեղծման, գյուղական որոշ բնակավայրերը քաղաքատիպ ավանների վերածվելու, գյուղական բնակչության մի մասի քաղաք տեղափոխվելու և հայրենադարձության։

1970 թ. տվյալներով Հայկական ՍՍՀ բնակչության 59,5 տոկոսը, այսինքն՝ 1481,5 հազար մարդ, ապրում էին քաղաքներում։ Այսպիսով, Սովետական Հայաստանի բնակչությունը 1920 թ. համեմատությամբ 1970 թ. ավելացավ ավելի քան 3 անգամ, իսկ քաղաքային բնակչությունը՝ 14 անգամ։

1959 թ. մարդահամարից հետո անցած 11 տարում (մինչև 1970 թ. մարդահամարը) Սովետական Հայաստանի բնակչությունն ավելացել է 729 հազարով կամ 41,3 տոկոսով, ընդ որում, բնական աճի հաշվին՝ 583 հազարով, իսկ մեխանիկական աճի հաշվին՝ 146 հազարով[26]։ Այդ նույն ժամանակամիջոցում քաղաքային բնակչությունն ավելացել է 600 հազար մարդով կամ 68 տոկոսով, իսկ գյուղականը՝ 12 հազարով, կամ 15 տոկոսով[27]։

Հայաստանի բնակչության բաշխումն ըստ քաղաքի և գյուղի

Մարդահամարի տարեթվեր	Բնակչության քանակը	Այդ թվում		Տեսակարար կշիռը տոկոսներով	
		քաղաքային	գյուղական	քաղ. բնակչության	գյուղ. բնակչության
1913	1000,1	104	896,1	10	90
1926	881,3	167,1	714,2	19	81
1939	1,282,3	366,4	915,9	29	71
1959	1,763,0	881,8	881,2	50	50[28]
1970	2,491,9	1481,5	1010,3	59,0	41[29]

26 «Итоги всесоюзной переписи населения 1970 г. по Арм. ССР», стр. 4.

27 Նույն տեղում։

28 «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», Ереван, 1968, стр. 20.

29 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 7 (աղյուսակը կազմված է ըստ 1926, 1939, 1959 և 1970 թթ. մարդահամարների տվյալների)։

ղաքականության ամենակարևոր հարցերից մեկն է։ Այդ կապակցությամբ ՍՄԿԿ Ծրագրում ասված է. «Աշխատանքով է ստեղծվում այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդկանց ապրելու և զարգանալու համար։ Ուստի յուրաքանչյուր աշխատունակ մարդ պետք է մասնակցի այն միջոցների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են նրա կյանքի ու գործունեության համար, հասարակության բարօրության համար»[32]։ Ուրեմն, աշխատունակ բնակչության զբաղվածությունը տնտեսական անհրաժեշտություն է։

Կուսակցության դիրեկտիվների կենսագործման շնորհիվ Սովետական Հայաստանում զարգացավ ժողովրդական տնտեսությունը, որը պայմաններ ստեղծեց արագորեն բարձրացնելու բնակչության զբաղվածության մակարդակը։ Ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների թիվը 1922 թ. կազմում էր 30 հազար մարդ, 1940 թ. այն հասավ 156, իսկ 1970 թ.՝ 838 հազարի[33]։ Այդ աճը տեղի ունեցավ հատկապես նոպատերազմյան հնգամյակների տարիներին։ Հանրապետության ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շնորհիվ որոշակի տեղաշարժեր կատարվեցին ժողովրդական տնտեսության ճյուղերում զբաղված բնակչության վերաբաշխման գործում։

Գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը 1958 թ. 48 տոկոսից 1970 թ. իջավ 25 տոկոսի, իսկ ոչ գյուղատնտեսական ճյուղերում զբաղվածներինը բարձրացավ 75 տոկոսի։ Դրան մեծապես նպաստեց գյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումը։

Ետպատերազմյան, հատկապես յոթնամյակի տարիներին, մեծ ուշադրություն դարձվեց հանրապետության միջին և փոքր քաղաքների զարգացման վրա, որպեսզի ռացիոնալ օգտագործվի աշխատուժը և մեղմանա նրա հոսքը դեպի հանրապետության մեծ քաղաքները։

---

32 «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 541։

33 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 195։

ղաքականության ամենակարևոր հարցերից մեկն է։ Այդ կապակցությամբ ՍՄԿԿ Ծրագրում ասված է. «Աշխատանքով է ստեղծվում այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդկանց ապրելու և զարգանալու համար։ Ուստի յուրաքանչյուր աշխատունակ մարդ պետք է մասնակցի այն միջոցների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են նրա կյանքի ու գործունեության համար, հասարակության բարօրության համար»[32]։ Ուրեմն, աշխատունակ բնակչության զբաղվածությունը տնտեսական անհրաժեշտություն է։

Կուսակցության դիրեկտիվների կենսագործման շնորհիվ Սովետական Հայաստանում զարգացավ ժողովրդական տնտեսությունը, որը պայմաններ ստեղծեց արագորեն բարձրացնելու բնակչության զբաղվածության մակարդակը։ Ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների թիվը 1922 թ. կազմում էր 30 հազար մարդ, 1940 թ. այն հասավ 156, իսկ 1970 թ.՝ 838 հազարի[33]։ Այդ աճը տեղի ունեցավ հատկապես հետպատերազմյան հնգամյակների տարիներին։ Հանրապետության ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շնորհիվ որոշակի տեղաշարժեր կատարվեցին ժողովրդական տնտեսության ճյուղերում զբաղված բնակչության վերաբաշխման գործում։

Գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը 1958 թ. 48 տոկոսից 1970 թ. իջավ 25 տոկոսի, իսկ ոչ գյուղատնտեսական ճյուղերում զբաղվածներինը բարձրացավ 75 տոկոսի։ Դրան մեծապես նպաստեց գյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումը։

Ետպատերազմյան, հատկապես յոթնամյակի տարիներին, մեծ ուշադրություն դարձվեց հանրապետության միջին և փոքր քաղաքների զարգացման վրա, որպեսզի ռացիոնալ օգտագործվի աշխատուժը և մեղմանա նրա հոսքը դեպի հանրապետության մեծ քաղաքները։

32 «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 541։

33 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 195։

Սոցիալիստական արտադրաեղանակը հանդիսացավ ժողովրդական տնտեսության անշեղ աճի հիմքը, վերացրեց գործազրկությունը և ռեալ պայմաններ ստեղծեց Հայաստանի բնակչությանը հասարակական հանրօգուտ աշխատանքի մեջ ներգրավելու համար։

Համամիութենական վերջին մարդահամարի տվյալներով 1970 թ. Հանրապետության բնակչության աշխատունակ տարիքի 1.202.300 մարդուց ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածները (սովորողների հետ) կազմել են 1.065.600 մարդ կամ բնակչության 88,6 տոկոսը, 1959 թ. 77,1 տոկոսի դիմաց[34]։

Բնակչության զբաղվածության արդյունավետության բարձրացումը հիմնականում տեղի է ունեցել տնային և անձնական օժանդակ տնտեսության մեջ զբաղված աշխատունակ տարիքի անձանց հանրային արտադրության մեջ ներգրավելու հաշվին։ Այդ անձանց թիվը 1959 թ. 188.300 մարդուց 1970 թ. նվազելով հասել է 108.700 մարդու։

Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ 1970 թ. զբաղված բնակչության 838 հազար մարդուց 37 տոկոսը աշխատել են արդյունաբերության և շինարարության մեջ, 26 տոկոսը՝ գյուղատնտեսության և անտառատնտեսության մեջ, 7 տոկոսը՝ տրանսպորտի և կապի ցանցում, 6 տոկոսը՝ առևտրի, հասարակական սննդի, նյութատեխնիկական մատակարարման, 18 տոկոսը՝ առողջապահության, լուսավորության, դիտության, արվեստի բնագավառներում, 2 տոկոսը՝ պետական օրգաններում, հասարակական և կոոպերատիվ կազմակերպություններում, 4 տոկոսը՝ ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում[35]։

Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ բանվոր-ծառայողների ընդհանուր թվի մեջ կանայք 1928 թ. կազմել են 14, իսկ 1970 թ.՝ 41 տոկոսը[36]։

Հանրապետության ժողովրդական տնտեսության տար-

---

34 «Армения в единой семье народов СССР», стр. 179.

35 Նույն տեղում, էջ 179—180։

36 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 517.

բեր ճյուղերում 1922—1970 թթ. բանվոր-ծառայողների տեղաբաշխումը ցույց տալու նպատակով բերենք ներքոհիշյալ թվերը.

1922 թ. Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ եղել է 30 հազար, 1940 թ.՝ 156, իսկ 1970 թ.՝ 838 հազար բանվոր-ծառայող[37]։

Աշխատանքի բնագավառները

Այդ թվում	1922 թ.	1970 թ.
Արդյունաբերություն և շինարարություն	3,1 հազ.	360 հազ.
Գյուղատնտեսություն	12,3 հազ.	95 հազ.
Տրանսպորտ	3,4 հազ.	56 հազ.
Կապ	0,3 հազ.	11 հազ.
Առևտուր, հասարակական սնունդ և այլն	0,8 հազ.	60 հազ.
Բնակարանային և կոմունալ տնտեսություն	0,3 հազ.	29 հազ.
Առողջապահություն	1 հազ.	40 հազ.
Լուսավորություն	3 հազ.	95 հազ.
Գիտություն	0,4 հազ.	33 հազ.
Վարկային ապահովագրական հիմնարկներ	0,2 հազ.	3 հազ.
Պետական և անտեսական մարմիններ	4,5 հազ.	18 հազ.
Այլ ճյուղեր	0,2 հազ.	32 հազ.[38]

Հայաստանում 1939 թ. բանվորները կազմում էին բնակչության 17,6 տոկոսը (Միության մեջ 32,5 տոկոս), իսկ կոլտնտեսային գյուղացիությունը՝ 64,1 տոկոսը։ 1959 թ. պատկերը բոլորովին փոխվում է։ Հայաստանում բանվոր-ծառայողները կազմում են 62,3 տոկոս, այդ թվում՝ բանվորները 39,9 տոկոս (Միության մեջ 48,2 տոկոս), իսկ կոլտնտեսականները՝ 37,5 տոկոս[39]։ Այս փոփոխությունները արդյունք են հանրապետության արդյունաբերության, քաղաքաշինության ու մշակույթի բուռն զարգացման։

Ետպատերազմյան տարիներին խոշոր փոփոխություններ կատարվեցին բանվոր դասակարգի տարածքային տե-

37 Նույն տեղում, էջ 513, 515։

38 «Армения в единой семье народов СССР», стр. 182—183.

39 «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. по Арм. ССР», М., 1963, стр. 28.

դաբաշխման մեջ: Սովետական Հայաստանի գյուղական շրջաններում հիմնադրվեցին արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց շնորհիվ առաջացան բանվորական նոր կենտրոններ՝ Հրազդանը, Արթիկը, Հոկտեմբերյանը, Արարատը, Աբովյանը, Գորիսը, Չարենցավանը, Կամոն, Իջևանը, Սպիտակը, Սևանը, Դիլիջանը, Ստեփանավանը և այլն: Տարեցտարի հանրապետության բանվոր դասակարգի շարքերը համալրվում են միջնակարգ մասնագիտական, հանրակրթական դպրոցների և պրոֆտեխնիկական ուսումնարանների շրջանավարտներով: 1940—1970 թթ. պրոֆտեխնիկական ուսումնական հաստատությունները պատրաստել ու արտադրության են ուղարկել 114 հազար (միայն յոթնամյակի տարիներին՝ 55 հազար)[40] որակյալ բանվորներ: Բանվորները որակավորման են ենթարկվել նաև արտադրության մեջ: Միայն 1970 թ. շուրջ 85 հազար բանվորներ անցել են որակավորման դասընթացներ կամ ձեռք բերել նոր մասնագիտություններ:

Հանրապետության բանվորների մեջ բարձրագույն, միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողների թիվը 1939 թ. կազմել է 8,2, իսկ 1970 թ.՝ 57 տոկոս:

Քանակական աճի հետ միասին բանվոր դասակարգի կազմում տեղի ունեցան որակական փոփոխություններ: Գիտատեխնիկական առաջադիմությունը վերափոխեց հանրապետության բանվոր դասակարգին և բարձրացրեց նրա կուլտուր-տեխնիկական մակարդակը:

Հայաստանում արդյունաբերության մեջ բանվոր-ծառայողների ընդհանուր քանակը 1913 թ. եղել է 5 հազար, 1960 թ.՝ 142, իսկ 1970 թ.՝ 273 հազար մարդ[41], այսինքն՝ 1913 թ. համեմատությամբ ավելացել է մոտ 55 անգամ:

Հայաստանի բանվոր դասակարգի ստեղծումը հետևանք է ինդուստրական այն վիթխարի տեղաշարժերի, որոնց շնոր-

---

[40] *В. Григорян,* История развития профессионально-технического образования в Советской Армении (1940—1970 гг.), (автореферат канд. дисс.), Ереван, 1971, стр. 18.

[41] «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 159.

հիվ մեր երկրում ստեղծվեց բազմաճյուղ, ժամանակակից տեխնիկայով հագեցված արդյունաբերություն[42]։

Սոցիալիստական շինարարության տարիներին ավելացավ բանվոր-ծառայողների քանակը։ Բանվոր-ծառայողների տարեկան միջին քանակը 1970 թ. հասել էր 838 հազարի։

Հանրապետությունում փոխվել է նյութական արտադրության և ոչ արտադրական ոլորտում աշխատողների հարաբերակցությունը։ 1960—1970 թթ. նյութական արտադրության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը 81,7 տոկոսից իջավ 75 տոկոսի, իսկ ոչ արտադրական ճյուղերում, ընդհակառակը՝ 18,3 տոկոսից բարձրացավ 25 տոկոսի[43]։ Դա հետևանք է գիտության, արվեստի, լուսավորության, առողջապահության և կուլտուրատնտեսական հիմնարկների սպասարկման ոլորտում աշխատող անձնակազմի աճի, որը նպաստում է ոչ արտադրական ճյուղերում զբաղվածների տեսակարար կշռի բարձրացմանը։

Ժողովրդական տնտեսության զարգացման տարիներին ստեղծվեց ու ձևավորվեց սովետահայ մտավորականության մի պատկառելի բանակ։ 1970 թ. ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էր բարձրագույն կրթություն ունեցող 81.538 մասնագետ, որից 21.600 ինժեներ, 32.600 մանկավարժ, 7300 գյուղատնտես և անասնաբույժ, 6700 բժիշկ[44] և այլն։ Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող-

---

42 Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման են արժանացել Սերգեյ Ամիրխանյանը, Սուրեն Պետրոսյանը, Ռոլանդ Մովսիսյանը, Խոսրով Սարգսյանը, Հարություն Սարիբեկյանը, Ծաղկանուշ Գալամտերյանը, Մարգար Սեդրակյանը, Խաչիկ Կոշկակարյանը, Արաքսյա Ալեքսանյանը (Երևան)։

Անդրանիկ Խաչատրյանը, Սերգեյ Միքայելյանը, Աստղիկ Պետրոսյանը, Սարգիս Գևորգյանը (Լենինական), Արշակ Ղազարյանը (Ալավերդի), Աշոտ Մելքոնյանը (Ղափան), Վլադիմիր Ամիրխանյանը (Մեղրի), Արտաշես Պետրոսյանը (Քաջարան), Մինաս Խաչերեսովը (Արարատ), Ֆենյա Բաղդասարյանը (Եղեգնաձոր)։

43 «Народное хозяйство Армянской ССР в 1972 г.», Ереван. 1973, стр 113.

44 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 119.

ների թիվը հասել էր 67.552 մարդու[45]։ Վերոհիշյալ մասնագետների մեջ կանանց տեսակարար կշիռը բարձրագույն կրթություն ունեցողների 42, իսկ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների 54 տոկոսն էր կազմում։ Այսպիսով, սովետական իշխանության տարիներին Հայաստանում կատարվեց կուլտուրական հեղափոխություն, երկիրը դարձավ համատարած գրագիտության երկիր, վերացվեց անգրագիտությունը։ Իրականացավ ութամյա պարտադիր ուսուցումը և ընդհանուր պարտադիր կրթությունը։

Հանրապետությունում ժողովրդական տնտեսության զարգացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շնորհիվ բնակչության սոցիալական կազմը արմատական փոփոխության ենթարկվեց։ Վերացվեցին շահագործող դասակարգերն ու նրանց մնացորդները, վերացվեց դասակարգային հակամարտությունը։ Պետական և կոլտնտեսային սեփականությունը ծառայում է նոր հասարակարգի կառուցման շահերին, աշխատավորության բարեկեցության բարձրացմանը։ «Սոցիալիստական սեփականության երկու ձևերի ընդհանրությունը իրար մոտեցրեց բանվոր դասակարգին ու կոլտնտեսային գյուղացիությանը, ամրացրեց նրանց դաշինքը, անխախտ դարձրեց նրանց բարեկամությունը[46]։

Եթե 1970 թ. մարդահամարի տվյալները համեմատենք 1939 և 1959 թթ. մարդահամարների տվյալների հետ, ապա կտեսնենք, որ խոշոր տեղաշարժեր են կատարվել ժողովրդական տնտեսության ճյուղերում բնակչության բաշխման ասպարեզում։ Մեծ չափով ավելացել է բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների քանակը մետալուրգիայի, քիմիական, մեքենաշինական, մետաղամշակման, էլեկտրաարդյունաբերության մեջ։ Ավելացել է գիտական աշխատողների, բժիշկների, ուսուցիչների, ինժեներների, միջին որակի մասնագետների, բարձրագույն և միջնակարգ

45 Նույն տեղում։

46 «ՍՄԿԿ Ծրագիրը և կանոնադրությունը», էջ 18։

ուսումնական հաստատություններում սովորողների թիվը։ Բարձրացել է բնակչության կրթական մակարդակը։ 1970 թ. Հայաստանում 9—49 տարեկան հասակի տղամարդկանցից գրագետ էր 99,8 տոկոսը, կանանցից՝ 99,5 տոկոսը։ Հայաստանում հաղար աշխատողից բարձրագույն և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն ուներ 697, իսկ Երևանում՝ 812 մարդ։

Զգալի փոփոխություններ են կատարվել նաև Հանրապետության (մասնավորապես քաղաքային) բնակչության սեռային կազմում։

Տարիներ	Բնակչութ. քանակը	Տղամարդիկ		Կ ա ն ա յ ք	
		քանակը	տոկոսը	քանակը	տոկոսը
1926	881,3	449,1	51,0	432,2	49,0
1939	1282,3	648,6	50,6	633,7	49,4
1959	1763,0	842,4	47,8	920,6	52,2
1970	2491,9	1217,2	48,8	1274,7	51,2[47]

Ինչպես տեսնում ենք, 1970 թ. Հանրապետության քաղաքներում տղամարդիկ կազմում էին 48,8, իսկ կանայք՝ 51,2 տոկոս[48]։ Անցյալում տղամարդկանց տեսակարար կշռի նվազումը հետևանք է եղել պատերազմների, ինչպես և տղամարդկանց մահացության բարձր տոկոսի։ Վերջին տարիներին Հանրապետությունում տղամարդկանց և կանանց թվի տարբերությունը աստիճանաբար նվազում է։ Այսպես, եթե 1959 թ. ամբողջ բնակչության մեջ կանայք տղամարդկանցից ավելի էին 78,2 հազարով, ապա 1970 թ.՝ 57,5 հազարով։

1970 թ. ՍՍՀՄ-ում ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների 49, իսկ Հայկական

47 «Армения в единой семье народов СССР», стр. 26.

48 «Итоги Всесоюзной переписи населения 1970 г., по Арм. ССР», стр. 4.

ՍՍՀՄ-ում՝ 41 տոկոսը կանայք են եղել: Համարյա չկար մի բնագավառ, ուր չօգտագործեր կանանց աշխատանքը:

Սովետական Հայաստանում 1970 թ. արդյունաբերության մեջ կանայք կազմել են 44, հասարակական սննդի և առևտրի ցանցում՝ 50, լուսավորության ու կուլտուրայի ասպարեզում 60, առողջապահության բնագավառում՝ 78, գիտական աշխատողների կազմում՝ 41, իսկ պետական ապարատում և տնտեսական հիմնարկներում՝ 43 տոկոս[49]: Մեր հանրապետությունում բարձրագույն կրթություն ունեցողների 41,1 և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների 54,7 տոկոսը կանայք էին: Տարեցտարի մեծանում էր մասնագետ կանանց տեսակարար կշիռը ինժեներատեխնիկական անձնակազմում:

Ազգային կազմի տեսակետից Սովետական Հայաստանի բնակչությունը միութենական հանրապետությունների մեջ ամենամիատարրն է: Հայերը 1959 թ. կազմում էին հանրապետության բնակչության 88 տոկոսը, ադրբեջանցիները՝ 6,1, ռուսները՝ 3,2, քրդերը՝ 1,5 տոկոսը, իսկ մնացած 1,2 տոկոսը կազմել են մյուս ազգերը[50]: 1970 թ. մարդահամարի տվյալներով 2391,8 հազար մարդուց՝

	Քանակը	Տոկոսը
հայեր	2,208 հազ.	88,6
ադրբեջանցիներ	148,189	5,8
ռուսներ	66,108	2,7
քրդեր	37,486	1,5[51]
ուկրաինացիներ	8,390	0,3
հույներ	5,690	0,2[52]
ասորիներ	5,544	0,2
հրեաներ	1,003	0,1
վրացիներ	1,439	0,1
այլ ազգեր	9,697[53]	0,4

49 «Армения в единой семье народов СССР», стр. 184.

50 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр .21.

51 Նույն տեղում:

52 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 15.

53 «Ереван в цифрах» (ститистический сборник), стр. 28.

Այսպիսով, տնտեսության սոցիալիստական սիստեմը, բնակչության տեղաբաշխման նոր սկզբունքները և նյութական պայմանների բարելավումը մեծապես նպաստեցին ծննդաբերության, կյանքի տևողության և քաղաքային բնակչության ինտենսիվ աճին։ Հանրապետությունում ստեղծվեց բնակչության աճման կայուն տեմպ և մահացության մակարդակի աստիճանական նվազում։ Փոխվեց քաղաքային և գյուղական բնակչության հարաբերությունը և սոցիալական կազմը։ Սոցիալիզմի պայմաններում ստեղծվեց արտադրության զարգացման հնարավորություն, պահանջմունքների մեծ աճ և աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածություն։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄՆ ՈՒ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

Սովետական Հայաստանում ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն առաջինը ձեռնարկեց քաղաքների և ավանների հատակագծման աշխատանքները։ Նա նախագծեց Երևանի առաջին գլխավոր հատակագիծը, որը հաստատվեց 1924 թ.։ Այդ հատակագծի բարելավման վրա նա աշխատեց մինչև իր մահը՝ 1936 թ.։

Ա. Թամանյանը[1] *երբ կազմում էր քաղաքի հատակագի-*

[1] *Ալեքսանդր Թամանյանը (1878—1936 թթ.) ծնվել է Կրասնոդարում։ 1897 թ. ավարտելով ռեալական դպրոցը, ընդունվում և 1904 թ. ավարտում է Պետերբուրգի կայսերական Գեղարվեստի ակադեմիան և ստանում ճարտարապետ-գիղագետի կոչում։ Ինքնուրույն սկսում է ստեղծագործական աշխատանքներ Մոսկվայում։ Նախագծում և կառուցում է իշխան Շչերբատովի տունը, որը 1914 թ. Մոսկվայում լավագույն շենքերի համար հայտարարված մրցույթում արժանանում է մրցանակի։ Նույն թվականին ընտրվում է ճարտարապետության ակադեմիկոս։ Մոսկվայում և Պետերբուրգում կառուցում է մի շարք շենքեր և մեծ հռչակի արժանանում։ 1923 թ. տեղափոխվում է Հայաստան և ամբողջովին նվիրվում Երևանի վերակառուցման և կառուցապատման աշխատանքներին։ (Ն՛անրամասնություններր տե՛ս Մ. Մազմանյան, Ալեքսանդր Թամանյանը քաղաքաշինարար, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1958, № 4)։*

ծը, Երևանն ուներ 60 հազար բնակիչ։ Նա բնակչության աճը կանխատեսել էր մինչև 150 հազար մարդ։ Համաձայն սահմանված նորմայի, քաղաքի տները չորս հարկից ավելի չպետք է լիներին։

Ա. Թամանյանը Երևանի հատակագիծը նախագծելիս օգտագործելով նրա բնական դիրքը քաղաքին տվել է ամֆիթատրոնի ձև։ Երևանի միայն մեկ կողմն է ազատ բացվում դեպի Արարատ, իսկ մյուս երեք կողմերը շրջապատված են սարալանջերով։ Ըստ Ա. Թամանյանի կազմած առաջին հատակագծի, Երևանի տարածքն ընդգրկելու էր 1140 հեկտար տարածություն[2]։ Քաղաքին հատկացված այդ տարածությունները երեք կողմից ունեն բնական բարձունքներ, որոնք և հնարավորություններ են ստեղծում քաղաքը դեպի Արագածի, Արարատի, Հրազդանի ձորի և Գետառի ուղղություններով գեղեցկացնելու համար։

Ելնելով քաղաքի տեղանքից, Ա. Թամանյանն իր կազմած հատակագծում ճիշտ է տեղադրել քաղաքի սահմաններում բնակարանային և արդյունաբերական շրջանները, նշել է քաղաքի հետագա զարգացման ուղղությունները. դեպի հյուսիս՝ Քանաքեռի հարթավայրը, բնակարանային շինարարության, իսկ դեպի հարավ՝ Արարատյան դաշտը, արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության համար։ Հատակագծում Ա. Թամանյանը լուծել է նաև կենցաղային օբյեկտների և տրանսպորտի խնդիրները։

Ըստ Ա. Թամանյանի կազմած հատակագծի, քաղաքը բաժանվում էր մի քանի շրջանի։ Քաղաքի կենտրոն—վարչական շրջանը, Վ. Ի. Լենինի հրապարակի շուրջը կառուցված կառավարական տունն ու վարչական շենքերն էին լինելու, իսկ հրապարակի հարավ-արևմտյան կողմում տեղադրվելու էր առևտրական մասը, կենտրոնում ունենալով շուկան։ Հրապարակի հարավ-արևելյան կողմում տեղավորված էր արդյունաբերական շրջանը, քանի որ Երևանում քամիները փչում են հյուսիսից հարավ և հյուսիս-արևելքից։ Քաղաքի

2 «Հոկտեմբեր—նոյեմբեր» տարեգիրք, Երևան, 1932, էջ 385։

հյուսիս-արևելյան մասում տեղադրվելու էր բարձրագույն դպրոցների թաղամասը, ապա գեղարվեստական հիմնարկների թաղամասը՝ կենտրոնում օպերայի և բալետի թատրոնի շենքը։

Ա. Թամանյանն իր կազմած հատակագծում նախատեսել է երկու տիպի փողոցներ. գլխավոր՝ մեծ երթևեկության համար (40 մետր լայնությամբ) և բնակելի շրջանի փողոցներ (17—20 մետր լայնությամբ), փոքր երթևեկության համար, ինչպես նաև մի քանի փողոցներ՝ հետիոտն երթևեկության համար, որոնք պետք է լինեին ծառուղիներ[3]։ Ըստ գլխավոր հատակագծի հյուսիսից, արևմուտքից և արևելքից անտառապատվելու էին քաղաքը շրջապատող բլուրների լանջերը։ Սրանք միանալով քաղաքում ստեղծված հանգստյան ու կուլտուրայի զբոսայգիներին, պուրակներին ու կանաչ տարածություններին, կազմելու էին պարտեզ-քաղաքի սկզբունքով մի ամբողջություն՝ քաղաքին մաքուր ու թարմ օդ տալու համար։

1930-ական թվականներին քաղաքաշինական աշխատանքները հանրապետությունում առավել աշխուժանում են։ Կազմվում են Էջմիածնի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Կամոյի, Հոկտեմբերյանի և Երևանի մերձքաղաքային ավանների՝ Արաբկիրի ու Սովետաշենի հատակագծերը։ Սակայն Երևանի բնակչության աճը և սոցիալիստական շինարարության թափը գերազանցեց Ա. Թամանյանի կազմած գլխավոր հատակագիծը և կարիք զգացվեց կազմելու մայրաքաղաքի նոր գլխավոր հատակագիծ։

Ալ. Թամանյանի մահվանից հետո 1936 թ. Երևանի հատակագծով զբաղվեց քաղաքների հատակագծման Լենինգրադի պետական ինստիտուտը։ Այդ աշխատանքները ղեկավարում էր պրոֆեսոր Ի. Ի. Մալոզեմովը, մասնակցում էին ճարտարապետներ Ն. Զարգարյանը և Ս. Կլեվիցկին[4]։

---

3 Նույն տեղում, էջ 331—335։

4 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարա-

Նրանց մեծ օգնություն էր ցույց տալիս տարբեր մասնագետների մի խումբ, որի մեջ էին մտնում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, պրոֆեսոր Ն. Բունիաթյանը, բժիշկ, պրոֆեսոր Ն. Հակոբյանը, տնտեսագետ Ս. Մանասարյանը, ինժեներ-էլեկտրիկ Լ. Խաչատրյանը, հիգիենիկ բժիշկ Բ. Աստվածատրյանը, հաղորդակցության ճանապարհների ինժեներ Բ. Փիրումովը, ինժեներ-երկրաբան Ա. Դեմյոխինը, պրոֆեսորներ Գ. Օգանեզովը և Լ. Մանուչարյանը[5]։

Հատակագծի հեղինակները ղեկավարվելով ՍՍՀՄ ժողկոմսովետի և Համկ(բ)Կ կենտկոմի 1935 թ. հունիսի 10-ի «Մոսկվայի վերակառուցման գլխավոր հատակագծի մասին» որոշման դրույթներով, կազմեցին Երևանի երկրորդ հատակագիծը՝ 350 հազար բնակչի համար։ Այդ հատակագիծը հաստատվեց Երևանի քաղաքային սովետի 1940 թ. նոյեմբերին կայացած չորրորդ սեսիայում[6]։ Հատակագծի հիմքում ընկած էին Ա. Թամանյանի կազմած հատակագծի հիմնական դրույթները։

Պատերազմը դանդաղեցրեց Երևանի շինարարության տեմպերը, սակայն շարունակվեց ճանապարհաշինությունը և մասամբ բնակարանային շինարարությունը, ավարտվեց «Հաղթանակ» կամրջի կառուցումը։ Արագացվեց միայն արդյունաբերական ձեռնարկությունների, մասնավորապես Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, ավտոդողերի, կոմպրեսորների և այլ գործարանների շինարարությունը։

Քաղաքաշինական աշխատանքներում մեծ նշանակություն ունեցավ 1945 թ. հանրապետությունում ճարտարապետական գործերի վարչության կազմակերպումը։

Ետպատերազմյան տարիներին կատարվող արդյունաբերական և քաղաքաշինական բուռն վերելքը անհրաժեշտություն առաջացրեց կազմելու Երևանի երրորդ գլխավոր

րության պետական կենտրոնական արխիվ, (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ), ֆ. 714, ց. 1, գ. 174, թ. 2—3։

5 Տե՛ս Ա. Սիմոնյան, Երևան, 1920—1970, էջ 221։

6 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 193, ց. 7, գ. 66, թ. 4—74։

հատակագիծը։ ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի բյուրոն 1949 թ. հուլիսի 21-ին քննարկելով «Մերձակա 10 տարիներին Երևան քաղաքի զարգացման գլխավոր հատակագծի հարցը», նշեց քաղաքի կառուցապատման ծավալման հետագա ուղղությունները և նոր խնդիրներ դրեց մասնագետների առաջ՝ ելնելով քաղաքի տեղանքի առանձնահատկություններից։

Ղեկավարվելով վերոհիշյալ ցուցումներով, քաղաքային սովետի գործադիր կոմիտեի ճարտարապետական-նախագծային արվեստանոցը ձեռնամուխ եղավ Երևանի նոր՝ երրորդ, հատակագծի կազմման աշխատանքներին։ Հատակագծի հեղինակն էր ճարտարապետ Ն. Զարգարյանը, Մ. Գրիգորյանի մասնակցությամբ։ Տեխնիկատնտեսական հիմնավորումը կազմել էր տնտեսագետ Ս. Հակոբջանյանը, Գ. Ռապոպորտի, Ս. Գրիգորյանի և Ի. Սարելնիկովի մասնակցությամբ[7]։

Արվեստանոցի կազմած Մեծ Երևանի հատակագիծը Հայաստանի կառավարությունը 1951 թ. հաստատեց իբրև Երևանի վերակառուցման և զարգացման 15 տարվա ծրագիր։ Ըստ կազմված հատակագծի, 15 տարիների ընթացքում Երևանում կառուցվելու էին արդյունաբերական բազմաթիվ խոշոր ձեռնարկություններ, հասարակական և բնակելի շենքեր։ Մայրաքաղաքում ստեղծվելու էին քաղաքի գլխավոր մայրուղիների հիմնական ցանցը կազմող այնպիսի երակներ, ինչպիսիք էին Հոկտեմբերյան և Բարեկամության պողոտաները, Կոմիտասի, Ամիրյանի, Զարենցի, Կիևյանի, Թամանցիների փողոցները, Հրազդանի նոր կամուրջը և այլն[8]։

Քաղաքում ստեղծվելու էին այնպիսի ճարտարապետական անսամբլներ, ինչպիսիք էին Լենինի անվան, երկաթուղային կայարանի և Լենինյան շրջանի Սպանդարյանի անվան հրապարակները։ Այդ հատակագծով մեծ մասշտաբներով զարգանալու էին Երևանի կոմունալ տնտեսությունը, տրանս-

7 Նույն տեղում, ֆ. 714, ց. 1, գ. 174, թ. 2—3։

8 Էդ. Սաոապյան, Մեծ Երևանը («Սովետական արվեստ», 1959, № 7, էջ 14)։

պորտային ցանցը և ինժեներային կոմունիկացիաները։ Վերջապես, խոշոր աշխատանքներ էին կատարվելու քաղաքում զբոսայգիների, կանաչ մեծ զանգվածների և անտառային գոտիների ստեղծման, ինչպես նաև շրջապատի կանաչ գոտու ընդարձակման ուղղությամբ։

Մայրաքաղաքի չորրորդ գլխավոր հատակագիծը կազմեց «Երևաննախագիծ» ինստիտուտը։ Նախագծի հեղինակներն էին Մ. Մազմանյանը, է. Պապյանը, Գ. Մուրզան, Յ. Զախալյանը, ինժեներ-տրանսպորտնիկ Վ. Բարդուկովը և ինժեներ-տնտեսագետ Զ. Կուբլիցկայան։ Ա. Թամանյանի կազմած Երևանի առաջին գլխավոր հատակագիծը հիմք հանդիսացավ ինչպես նախորդ, այնպես էլ 1965—1968 թթ. Երևանի գլխավոր հատակագիծը կազմողների համար։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը 1966 թ. փետրվարի 28-ին քննարկելով Երևանի զարգացման գլխավոր հատակագծի տեխնիկատնտեսական հիմունքները, հաստատեց այն։ Ըստ այդ տեխնիկատնտեսական հիմունքների, տարածքային տեսակետից Երևանը զարգանալու էր արևմտյան, հյուսիս-արևմտյան, հյուսիս-արևելյան և մասամբ հարավ-արևելյան ուղղություններով։ Ըստ որում, քաղաքի բնակեցման տարածությունն ավելանալու էր մոտ 9,0 հազար հեկտարով, իսկ բնակչությունը 1970 թ. հասնելու էր 750 հազարի։

Ըստ կազմված հատակագծի, Երևանի բնակչությունը 1980 թ. հասնելու է 900 հազարի[9], իսկ 2000 թ.՝ մեկ միլիոնից անցնելու է։ Այդ կապակցությամբ բնակելի ֆոնդը ավելանալու է 2,5-ից 3 անգամ, հասնելով մինչև 9 միլիոն քառակուսի մետրի։ Քաղաքի տարածքն ընդարձակվելու է մոտ 1,5 անգամ։ Ըստ նոր հատակագծի, Երևանը բաժանվում է 9 շրջանների, որոնք պսակաձև դասավորված են կենտրոնական շրջանի շուրջը՝ յուրաքանչյուրը 70—150 հազար բնակչով։ Դրանք իրենց հերթին բաժանվում են բնակելի շրջանների և միկրոշրջանների։ Ամեն մի շրջան ու

9 Հ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 48։

միկրոշրջան ներկայացնում է մի ամբողջական օրգանիզմ՝ հագեցված բնակչությանը սպասարկող բոլոր անհրաժեշտ հիմնարկներով։ Քաղաքի սահմանների ընդարձակումը հիմնականում կատարվելու է ազատ հողամասերում, որտեղ բնակլիմայական նպաստավոր պայմաններ կան բնակչության համար։

Արտադրական ձեռնարկությունների հետագա կառուցումները կատարվելու են այն հաշվով, որպեսզի նոր բնակեցված թաղամասերին կից ստեղծվեն արդյունաբերական թաղամասեր։ Արմատապես վերակառուցվելու է արտաքին և ներքին տրանսպորտը, խոշոր աշխատանքներ են կատարվելու մայրուղիների ցանցի և տրանսպորտի ճիշտ տեղաբաշխման համար։ Այդ նպատակով ստեղծվելու են գլխավոր, համաքաղաքային, շրջանային, քաղաքից դուրս տանող, հատուկ նպատակների համար արագընթաց ճանապարհներ, հետիոտն շարժման ծառուղիներ, կամուրջներ ու թունելներ։ Տրանսպորտի հիմնական միջոցները լինելու են տրամվայը, տրոլեյբուսը, ավտոբուսը, որոշ տեղերում ճոպանուղիները և ստորգետնյա արագընթաց տրամվայը, որի ընդհանուր երկարությունը հասնելու է 20 կիլոմետրի։ Վերջինիս առաջին հատվածը Լենինի հրապարակով հասնելու է Աբովյան, Բարեկամության, Կիևյան փողոցները։ Նոր հատակագծով վերացվելու է քաղաքի բնակելի հատվածով անցնող երկաթուղագիծը, փոխարենը կառուցվելու է շրջանցիկ երկաթուղի։ Հատակագծում մեծ տեղ է տրված ստորգետնյա ճանապարհներ և անցումներ ստեղծելուն։

Մայրաքաղաքի նոր հատակագծում բազմաթիվ միջոցառումներ են նախատեսված բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկումը բարելավելու ուղղությամբ։

Նոր հատակագծում մեծ տեղ է հատկացվել հանգստյան գոտու ստեղծման և քաղաքի կանաչապատման հարցերին։

Երևանի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերում 7 հազար հեկտար տարածության վրա փռվելու է նոր կանաչ գոտի։ Ըստ որում, մեկ բնակչին հասնող հասարակական օգտակար կանաչ տարածությունը հասնելու է 20 քառակու-

սի մետրի, դոյութիյուն ունեցող 7—8 քառակուսի մետրի փոխարեն։

Ջրային մակերեսը 200 հեկտարով ընդարձակվելու է։ Կառուցվելու է Երևանյան երկրորդ լիճը՝ կարմիր բլուրի շրջանում։

Ընդարձակվելու են Երևանի ջրատարները, կոյուղին և կապի ցանցը։ Արտաքին կոյուղու մաքրման կառուցվածքների, էլեկտրաէներգիայի ու ջեռուցման, ինչպես նաև քաղաքի լրիվ գազամատակարարման հետ կապված հարցերը ևս հատակագծում պատշաճ տեղ ունեն։

ՍՍՀՄ պետշինին առընթեր քաղաքացիական շինարարության ու ճարտարապետության պետական կոմիտեի և Հայկական ՍՍՀ պետշինի համատեղ նիստը (կայացած 1970 թ. սեպտեմբերի 24-ին՝ Երևանում) քննարկեց Երևանի գլխավոր հատակագծի նախագիծը 1970—2000 թթ. համար, որը հաստատվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կողմից։

* * *

Բուռն թափով և արագ տեմպերով զարգանում են նաև հանրապետության մյուս ինդուստրիալ կենտրոնները՝ Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Դափանը, առողջարանային քաղաքներ Դիլիջանը, Ստեփանավանը, Սևանը, Ջերմուկը, Արզնին, արդյունաբերական նոր քաղաքներ և քաղաքատիպ ավաններ Հոկտեմբերյանը, Ջաբենյավանը, Աբովյանը, Աշտարակը, Հրազդանը, ինչպես նաև Քաջարանը, Արարատը, Թումանյանը, Դաստակերտը, Ախթալան և այլն։ Այդ քաղաքների կառուցապատման ու հետագա զարգացման համար անհրաժեշտ էր ունենալ դրանց հատակագծերը, որին ձեռնամուխ եղան հանրապետության նախագծային ինստիտուտները։

Դեռևս 1925 թ. Ա. Թամանյանը կազմել է Լենինականի գլխավոր հատակագծի պլանը, բայց այն մնացել էր սևագիր վիճակում։ 1926 թ. երկրաշարժը անհրաժեշտ պահանջ առաջադրեց կազմելու քաղաքի վերակառուցման գըլ-



Կարապի լիճը Երևանում

խավոր հատակագիծ, որը կազմեց քաղաքի առաջին գլխավոր ճարտարապետ Դ. Չիսլյանը։

1930 թ. պետական ճարտարապետական № 3 արվեստանոցի (ճարտարապետ Մ. Մազմանյանի ղեկավարությամբ) կազմած հատակագիծը հիմք հանդիսացավ, որպեսզի Լենինականում բացվեն հիմնական մայրուղիները դեպի Մայիսյան ապստամբության անվան հրապարակը, որը կազմում էր քաղաքի ճարտարապետական անսամբլներից մեկը։

Կոմունալ տնտեսության ժողկոմատին կից ճարտարապետական արվեստանոցը 1937—1939 թթ. կազմեց Լենինական քաղաքի նոր գլխավոր հատակագիծը (հեղինակներ՝ ճարտարապետներ Փ. Մանուկյան, Դ. Մուրզա, Հ. Դավթյան, Ս. Կարապետյան), պրոֆեսոր Լ. Իլյինի կոնսուլտացիաներով[10]։

Ըստ Լենինականի 1940 թ. հաստատված գլխավոր հատակագծի[11], քաղաքի բնակարանային շինարարությունը զարգացավ հյուսիսային ուղղությամբ, իսկ գործարան-գյուղ արդյունաբերական շինարարությունը կատարվեց տեքստիլ կոմբինատի և երկաթուղային հանգույցի միջև ընկած ազատ հողամասերի վրա։ Քաղաքի հետագա զարգացման համար նախատեսված էր երկաթուղուց արևելք ընկած տարածությունը։

Լենինականի սեյսմիկ առանձնահատկությունից ելնելով, նախատեսված էր շենքերը կառուցել 3 հարկից ոչ ավելի։

Քաղաքը կառուցվում ու բարեկարգվում է գլխավոր հատակագծի նախատեսումներով։ Վերակառուցվել են նրա գլխավոր մայրուղիները՝ Լենինի և Գորկու փողոցները։ Ստեղծվել են մի շարք պուրակներ։ Բարեկարգվել են կոմունալ սպասարկման ձեռնարկությունները։ Այդ տարիներին ստեղծվեց Լենինի անվան հրապարակի ճարտարապետական անսամբլը։ Լենինի և Մայիսյան ապստամբության

10 Տե՛ս Կ. Կոզմոյան, Լենինական, էջ 168։
11 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿՄ, ֆ. 714, ց. 1, գ. 46, թ. 1—4։

անվան հրապարակներն իրար միացան Կիրովի և Կալինինի փողոցների և միջանկյալ օղակաձև հրապարակի միջոցով։

Ծովպատերազմյան տարիներին Լենինականի վերակառուցման գլխավոր հատակագիծը լրայրին ճարտարապետներ Ռ. Գասպարյանը, Գ. Ավետյանը և Ա. Վարդանյանը[12]։

1950-ական թվականներին ավարտվեց Լենինի անվան հրապարակի անսամբլի կառուցապատումը՝ կուսակցության Լենինականի քաղաքային կոմիտեի, տեքստիլագործների կուլտուրայի տան և հանրախանութի (ճարտարապետներ՝ Զ. Բախշինյան, Ս. Ասոյան, Ռ. Գասպարյան, Տ. Երկանյան) շենքերի կառուցումով։ 1954 թ. հրապարակի կենտրոնում դրվեց Վ. Ի. Լենինի հուշարձանը, որը քանդակել է ՍՍՀՄ ժողովրդական քանդակագործ Ս. Մերկուրովը՝ ծնված Լենինականում քաղաքում։

Լենինականի վերջին գլխավոր հատակագիծը կազմել են ճարտարապետներ Հ. Իսաբեկյանը, Փ. Մանուկյանը և Ս. Կարապետյանը։ Այդ հատակագծով քաղաքի բնակչությանը հասնելու է 185 հազարի։ Հատակագիծը հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կողմից՝ 1961 թ. հունվարի 10-ի որոշմամբ։ 1962 թ. Լենինականում ստեղծվեց «Հայպետնախագիծ» ինստիտուտի № 4 ճարտարապետական արվեստանոցը։ Այս արվեստանոցում կազմվում են քաղաքի բնակելի և հասարակական շենքերի ճանապարհների և ինժեներային կառուցվածքների առանձին թաղամասերի միկրոշրջանների կառուցապատման նախագծերը, ելնելով հաստատված գլխավոր հատակագծից։

1928 թ. հայտարարվեց մրցույթ՝ Մեծ Ղարաքիլիսա (Կիրովական) քաղաքի գլխավոր հատակագծի համար։ Այդ կապակցությամբ կազմվեցին մի շարք նախագծեր, որոնց մեջ համեմատաբար հաջող էր ճարտարապետներ Կ. Հալաբյանի[13] և Գ. Քոչարի 1929—1930 թթ. կազմած գլխավոր

---

12 *В. Арутюнян, К. Оганесян*, Архитектура советской Армении (краткий очерк), Ереван, 1955, стр. 64.

13 Կարո Հալաբյանը (1897—1959 թթ.) ծնվել է Ելիզավետապոլում (Կիրովաբադ)։ 1917 թ. նա փայլուն կերպով ավարտում է Ներսիսյան

հատակագծի նախնական սխեման։ 1934—1936 թթ. Կիրովական քաղաքի գլխավոր հատակագծի նախնական օրինակը կազմել է ճարտարապետ Մ. Մազմանյանը։

1939 թ. հանրապետության նախագծային կազմակերպությունները ձեռնարկեցին Կիրովական քաղաքի գլխավոր հատակագծի վերամշակման աշխատանքները (ճարտարապետներ՝ Ն. Զարգարյան, Ա. Մինասյան)։ Հատակագծի տեխնիկատնտեսական հարցերի հիմնավորումը կատարեցին տնտեսագետ Ս. Հակոբջանյանը և ինժեներ Կ. Յուզբաշյանը։ Հատակագիծը կազմվել էր 15 տարվա (1940—1955 թթ.) համար։ Այդ հատակագիծը հաստատվեց աշխատավորների դեպուտատների Կիրովականի քաղաքային սովետի 1940 թ. ամռանը կայացած սեսիայում։

Հայրենական մեծ պատերազմից հետո, քաղաքում արդյունաբերության արագ զարգացման կապակցությամբ, հանրապետության նախագծային կազմակերպությունները վերանայեցին 1940 թ. հաստատված Կիրովականի գլխավոր

դպրոցը, իսկ 1923 թ. մեկնում է Մոսկվա՝ սովորելու։ 1929 թ. ստանում է ճարտարապետի կոչում, գալիս Երևան և 1929—1931 թթ. բեղմնավոր աշխատանք է կատարում Հայաստանում։ Կ. Հալաբյանը 1931 թ. մեկնում է Մոսկվա, մասնակցում սովետների պալատի մրցանակաբաշխությանը և գրավում շատ պատվավոր տեղ։ Հետագա տարիներին նրա և ուրիշների համատեղ նախագծերով Մոսկվայում կառուցվում են Կարմիր բանակի տունը, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի Հայաստանի տաղավարը, ինչպես նաև Սոչիի ծովային կայարանը, Նյու-Յորքի միջազգային ցուցահանդեսում սովետական տաղավարը և այլ բազմաթիվ բնակելի և հասարակական շենքեր։ Կ. Հալաբյանը հեղինակ է Վոլգոգրադի ընդհանուր-գլխավոր հատակագծի։ Նա մեծ երախտիք ունի ՍՍՀՄ ճարտարապետների միության կազմակերպման գործում և մինչև կյանքի վերջը եղավ այդ միության պատասխանատու քարտուղարը։ Երբ 1939 թ. հիմնադրվեց ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիան, նա ընտրվեց դրա իսկական անդամ և վիցե-պրեզիդենտ։ Նա բազմիցս մասնակցել է ճարտարապետների համաշխարհային կոնգրեսներին։ Կ. Հալաբյանը 1933 թ. սկսած 20 տարի խմբագրել է «Архитектура СССР» ամսագիրը։ Կ. Հալաբյանի մասին մանրամասնությունները տե՛ս Л. Б. Карлик, Каро Алабян, Ереван, 1966.

հատակագիծը։ Ճարտարապետներ Ռ. Գրիգորյանը և Հ. Դավթյանը հատակագծում կատարեցին նոր լրացումներ[14]։

Այդ նոր կազմված, լրացված հատակագիծը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը հաստատեց 1953 թ.։ Այդ տարիներին Կիրովի անվան հրապարակը դարձավ քաղաքի վարչական ու կուլտուրական կենտրոնը[15]։ Հրապարակի շուրջը բարձրացան վարչական ու բնակելի շենքեր։ Նրա հյուսիսային մասում կառուցվեց ու շահագործման հանձնվեց ՀԿԿ Կիրովականի քաղաքային կոմիտեի շենքը (ճարտարապետ՝ Զ. Բախշինյան), ապա վեր խոյացան աշխատավորների դեպուտատների Կիրովականի քաղսովետի գործադիր կոմիտեի, հյուրանոցի շենքերը, ինչպես և հրապարակի մյուս կողմերում երկու բնակելի խոշոր նոր շենքեր (ճարտարապետներ՝ Հ. Մարգարյան և Բ. Արզումանյան)[16]։

Հրապարակի հարավային մասում դրված է Ս. Մ. Կիրովի գրանիտյա հուշարձանը (քանդակագործ՝ ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Ա։ Սարգսյան)։

Հայկական ՍՍՀ պետշինի հանձնարարությամբ Կիրովականի նոր գլխավոր հատակագիծը մինչև 1980-ական թվականների համար կազմել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժինը (ճարտարապետներ՝ Մ. Գնունի, Ռ. Սարուխանյան, Լ. Մխիթարյան և Դ. Մեհրաբյան, արվեստանոցի ղեկավար՝ Փ. Մանուկյան)[17]։

Ըստ այդ նոր հատակագծի, բնակարանային շինարարությունը կատարվելու էր քաղաքի մեջ, վթարային շենքերի քանդման և ազատվող որոշ տարածությունների, ինչպես նաև «Դիմաց» կոչվող թաղամասի շարունակությունը կազմող Խնձորուտի և Մեղրուտի հաշվին։ Արդյունաբերական

---

14 *Ա. Գ. Գրիգորյան*, Градостроительная культура Советской Армении. 1920—1930 гг. («Известия АН Арм. ССР», 1960, № 3, стр. 28—29).

15 *Այս մասին մանրամասնությունները տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 714, ց. 1, գ. 183, թ. 1—77։*

16 *Վ. Арутюнян, К. Оганесян*, նշվ. աշխ., էջ 65։

17 *Տվյալները վերցված են «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժնից։*

նոր ձեռնարկությունները հիմնականում տեղադրվելու են Փամբակ գետի հովտում, գետին զուգահեռ:

Կիրովականը հանրապետության արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը լինելուց բացի, իր մեղմ բնակլիմայական պայմաններով առողջարանային վայր է: Այդ իմաստով գլխավոր հատակագծում ճիշտ են տեղաբաշխված հանգստի վայրերը (Վանաձորի ուղղությամբ, գետի անտառի խորքը): Ճիշտ են դասավորված նաև հասարակական կենտրոնները, կանաչ տարածությունների հետագա զարգացման սահմանները:

Ալավերդի քաղաքի հատակագծման աշխատանքները սկսվել են 1930-ական թվականներին: Այդ գործով առաջինը զբաղվել է «Դիպրոգոր» նախագծային արվեստանոցը ճարտարապետ Մ. Մազմանյանի ղեկավարությամբ: Արվեստանոցը կազմել է գլխավոր հատակագծի նախնական սխեման՝ նոր բաղամասեր ստեղծելու և նոր փողոցներ բացելու կապակցությամբ:

1930-ական թվականներին «Դիպրոգոր»-ի արվեստանոցում ճարտարապետներ Փ. Մանուկյանը և Հ. Դավթյանը կազմեցին Ալավերդի քաղաքի կենտրոնական մասի նախագիծը, նպատակ ունենալով բարեկարգել գոյություն ունեցող կենտրոնական բաղամասը: Հաշվի առնելով քաղաքի արագ զարգացումը և առաջացած նոր պահանջները, վերոհիշյալ հատակագծերը վերանայվեցին և զգալիորեն վերափոխվեցին:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի շինարարության և ճարտարապետության գործերի պետական կոմիտեի ճարտարապետական արվեստանոցը ճարտարապետ Հ. Իսաբեկյանի ղեկավարությամբ կազմեց Ալավերդի քաղաքի նոր գլխավոր հատակագիծը, որը 1946 թ. ամռանը հաստատվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կողմից:

Սանահնի, սարահարթում, կառուցապատման ծանրամասնությունները կազմվել են «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծման արվեստանոցում (հեղինակ՝ ճարտարապետ Լ. Չերքեզյան):

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1959 թ. հուլիսի 16-ի որոշմամբ Ալավերդի քաղաքի կառուցապատման աշխատանքներն ընթանում են Սանահնի սարահարթում[18]։

Ալավերդի քաղաքի գլխավոր նոր հատակագիծը մինչև 1980-ական թվականների համար կազմել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժինը (հեղինակ՝ ճարտարապետ Կ. Ղազարյան)։ Ըստ նոր հատակագծի, քաղաքի բնակչությունը հասնելու է մի քանի տասնյակ հազարի։ Հատակագիծը հաստատված է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1969 թ. հունվարի 20-ի որոշմամբ։

Վափանի առաջին մասնակի գլխավոր հատակագիծը կազմել է Մ. Մազմանյանը, ելնելով բնաաշխարհագրական պայմաններից և տեղանքի բարդ ռելյեֆից։ Նա պատերազմյան տարիներին Վափանում կառուցապատման աշխատանքներ կատարվել են «Հայպետնախագիծ» ինստիտուտում, ճարտարապետ Հ. Խաբեկյանի կազմած հատակագծով։

Հետագա տարիներին Վափանում հանքարդյունաբերության արագ զարգացման, քաղաքում բնակչության ավելացման կապակցությամբ գունավոր մետալուրգիայի նախագծային ինստիտուտը (ճարտարապետներ՝ Հ. Դավթյան և Զ. Ջաքարյան) կազմեց Վափանի նոր գլխավոր հատակագիծը 1965—1980-ական թվականների համար։ Այն հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1963 թ. հոկտեմբերի 30-ի որոշմամբ։ Ըստ այդ հատակագծի, Վափանի բնակչությունը հասնելու է մի քանի տասնյակ հազարի։ Այս հատակագծով քաղաքում կատարվել են շինարարական և բարեկարգման խոշոր աշխատանքներ։

Հանրապետության շինանյութերի արդյունաբերության խոշոր կենտրոն Արթիկի գլխավոր հատակագիծը 1946—1965 թթ. համար կազմել են ճարտարապետներ Ս. Կարապետյանը և Ի. Բուռնազյանը, իսկ վերջին նոր հատակագիծը կազմել է «Հայպետնախագիծ» ինստիտուտը՝ 1965—1985 թթ. համար[19], ճարտարապետ Ա. Միրիջանյանի հեղի-

18 Տե՛ս Կ. Կոզմոյան, Ալավերդի, էջ 166—167։

19 ՀՍՍՀ ՀԱՍՇՊԿԱ, ֆ. 714, ց. 1, գ. 172, թ. 131—127։

նակությամբ։ Այդ հատակագիծը հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1963 թ. մայիսի 25-ի որոշմամբ։ Ըստ այդ հատակագծի, Արթիկի բնակչությունը զգալիորեն կավելանա։

Ջերմուկի առաջին հատակագիծը կազմել է ճարտարապետ Պ. Մարյանը, իսկ երկրորդ գլխավոր հատակագիծը մշակել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժինը. հեղինակն է ճարտարապետ Փ. Մանուկյանը։ Հատակագիծը հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1963 թ. որոշմամբ։ Քաղաքի բնակչությունը 1960—1980 թթ. ավելանալու է մի քանի հազարով։ Ըստ այդ հատակագծի, Ջերմուկ քաղաքը կընդարձակվի Արփա գետի ակունքից մինչև Կեչուտի արհեստական լիճը, որի ափերին կբարձրանան առողջարանային և հանգստյան տների շենքերի նոր համալիրները։ Առողջարանային միկրոշրջանը բնակելի նոր զանգվածի հետ կմիանա Վայոց ձորի վրա կառուցված կամրջով։ Ջերմուկը լրիվ կառուցապատվելուց հետո տարեկան կընդունի 5 հազար բուժվողների և հանգստացողների։ Այժմ արդեն Ջերմուկն իբրև առողջարանային քաղաք միութենական նշանակություն է ստացել։

Ըստ այդ հատակագծի՝ առողջարանների, հանգստյան տների և պանսիոնատների շենքերը դասավորված են քաղաքի կենտրոնական մասում, հանքային ջրերի գլխավոր խմբի շուրջը։ Այդ տեղամասի մյուս կողմում տեղադրված են հանքային ջրի լցման գործարանն ու ավանը, իսկ կլիմայական բուժման առողջարաններն ու պահեստային տնտեսությունը՝ նոր ստեղծված լճափին։

Կամո քաղաքի առաջին գլխավոր հատակագիծը կազմել է Ա. Թամանյանը։ Այդ հատակագծում լավ էին հաշվի առնված քաղաքի տեղանքի առանձնահատկությունները, ճիշտ էր ընտրված քաղաքի գլխավոր հրապարակի տեղը, սակայն այդ նախագիծը հետագայում չմշակվեց։

Նոր հատակագիծը 1940-ական թվականների համար



Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախկին նախագահ Գ. Հանեսօղլյան



ժշակեց «Հայպետնախագիծ» ինստիտուտը (հեղինակներ՝ Ն. Զարգարյան[20] և Ա. Մինասյան)։

Այդ հատակագծերով Կամոյում կառուցվել են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ։ Ծավալվել է բնակարանային շինարարությունը։ Քաղաքի արևմտյան մասում ստեղծվել է 4—5 հարկանի շենքերով մի ամբողջ թաղամաս, կառուցվել են ուսումնական, առողջապահական, կուլտուր-կենցաղային և վարչական շենքեր։ Բարելավվել է քաղաքի բարեկարգումը, ծառատնկվել ու կանաչապատվել են փողոցները։

Ետպատերազմյան տարիներին Կամոյում կառուցապատման աշխատանքներ կատարելու համար «Հայպետնախագիծ» ինստիտուտում ճարտարապետ Ն. Նեմչինովայի հեղինակությամբ կազմվել է քաղաքի նոր գլխավոր հատակագիծը մի քանի տասնյակ հազար բնակչության համար (1960—1980-ական թվականներ)։ Այն հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կողմից։

Սեևանին մոտիկ լինելը և կլիմայական նպաստավոր պայմանները առավել նպատակահարմար են դարձնում Կամոյում հանգստյան տների, առողջարանների, սպորտային և տուրիստական բազաների կառուցումը։

Հոկտեմբերյանի հատակագիծը առաջին անգամ կազմել է Ա. Թամանյանը, որը և հիմք է դարձել հետագա հատակագծերի համար։ Երկրորդ հատակագիծը կազմել է Մ. Մազմանյանը[21]։ Ըստ այդ հատակագծի, քաղաքը ներկայացված էր որպես «քաղաք-այգի»՝ իր արտադրական, բնակեցման, հանգստի գոտիներով, կառուցապատման ճարտարապետական հաջող մտահղացումով։

1940—1950 թթ. համար Հոկտեմբերյանի գլխավոր հատակագիծը կազմել է ճարտարապետ Պ. Խոյեցյանը[22], իսկ 1955—1970 թթ. համար՝ «Հայպետնախագիծ» ինստիտուտը։

---

20 Հատակագծի մասին մանրամասնությունները տե՛ս նույն տեղում, գ. 165, թ. 7—15։

21 Կ. Կոզմոյան, Հոկտեմբերյան, էջ 109—110։

22 Նույն տեղում։

Հատակագծի հեղինակն է ճարտարապետ Ռ. Դրիդոբյանը։ Այդ հատակագիծը հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1957 թ. հունիսի 18-ի նիստում։ Ըստ այդ հատակագծի, քաղաքի բնակչությունը կավելանա մի քանի հազարով[23]։

Բնակարանային շինարարության հարցում Հոկտեմբերյանի առանձնահատկությունն այն է, որ այնտեղ հիմնականում մենատներ են, որոնք կառուցվել են ոչ թե քաղաքի կենտրոնում, այլ նրա շուրջը։ Դրա շնորհիվ այժմ հնարավոր է դարձել բազմահարկ բնակելի և հասարակական շենքերի շինարարությունը կատարել քաղաքի կենտրոնական մասում։

Հոկտեմբերյանը քաղաքաշինարարության համար ունի բարենպաստ պայմաններ, հետագա զարգացման համար՝ ազատ, հարթ տարածություններ։

Հրազդանը դառնալու է հանրապետության ամենախոշոր էներգետիկ բազան։ Կառուցվել է ցեմենտի գործարանը, որը երկրին տալիս է բարձրորակ ցեմենտ։ Այնտեղ կառուցվել է նաև Հրազդանի պետական շրջանային ջերմաէլեկտրակայանը։ Ահա այս խոշոր կառույցները պահանջ առաջացրին կազմելու Հրազդանի գլխավոր հատակագիծը, որի հեղինակներն են ճարտարապետներ Մ. Դրիդոբյանը, Է. Ալթունյանը և Ն. Շաքարյանը։ Հատակագիծը հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1963 թ. մարտի 9-ի որոշմամբ։ Այդ հատակագծով նախատեսված է Հրազդանում ստեղծել բնակելի մի քանի շրջան։ Դրանցից հարավայինն ընդգրկելու է ներկա Հրազդանի տարածքը և Աթարբեկյանգէս նոր բանավանը։ Կենտրոնականը հարավայինից բաժանվում է լճակով և հիմնականում գրավում է կայարանամերձ հրապարակը։ Այս շրջանները իրենց հերթին կբաժանվեն մի քանի հազար բնակչությամբ առանձին միկրոշրջանների։ Հրազդանի բնակչությունը 1980 թ. կհասնի մի քանի տասնյակ հազարի[24]։

---

23 ՀՍՍՀ ՀԱՍՇՊԿԱ, ֆ. 714, ց. 1, գ. 165, թ. 21—24։

24 Նույն տեղում, գ. 172, թ. 118—121։

Ինչպես արդեն ասվեց, արդի քաղաքաշինության առանձնահատուկ պահանջներից մեկն էլ այն է, որ մեծ քաղաքների շուրջը ստեղծվեն քաղաք-արբանյակներ, ինչպես օրինակ՝ Հոկտեմբերյանը, Էջմիածինը, Աշտարակը, Աբովյանը և Հրազդանը, որոնք սերտ կապերի մեջ են գտնվում մայրաքաղաքի հետ, որի շուրջը գտնվում են:

«Հայպետնախագիծ» ինստիտուտի ճարտարապետներ Ս. Խաչիկյանը, Ա. Թարխանյանը, Լ. Չերքեզյանը և Հ. Պողոսյանը կազմեցին Աբովյան քաղաք-արբանյակի հատակագիծը՝ 1960—1980 թթ. համար: Կազմված հատակագիծը Հայաստանի կառավարությունը հաստատել է 1963 թ. մայիսի 27-ին: Ըստ այդ նախագծի ստեղծվելու է 50 հազար բնակչությամբ քաղաք՝ 850 հեկտար տարածության վրա: Այսօր քաղաքն ունի բնակելի թաղամաս, հասարակական կենտրոն և գործարանային թաղամաս: Աբովյանը հիմնականում ունենալու է բիոլոգիական ու թեթև արդյունաբերության ձեռնարկություններ, որոնք շրջապատը չեն կեղտոտելու:

Բնակելի թաղամասը կազմված է մի քանի միկրոշրջաններից, որոնք կիսաշրջանաձև շրջապատում են հասարակական կենտրոնը: Կենտրոնում՝ կորաձև փողոցի վրա, կլինեն կենտրոնական հանրախանութը, կինոթատրոնի շենքը, հյուրանոցը, ծածկած շուկան, պիոներների պալատը, թանգարանի շենքը, 10 հազար տեղանոց մարզադաշտը և այլ շենքեր: Այդ կորաձև փողոցի կենտրոնում կլինի գլխավոր հրապարակը՝ հասարակական և վարչական շենքերով: Կենտրոնում նախատեսվում է զբոսայգի՝ իր ծառուղիներով ու լճով, որը առանձին շուք կտա քաղաքին: Արդեն կառուցված է 12 հազար բնակչի համար մի միկրոշրջան, որի շենքերը 4—5 հարկանի են: Դրանք գեղեցիկ են, ունեն հարմարավետ բնակարաններ և բավարարում են մեր օրերի մարդու կուլտուր-կենցաղային պահանջները:

Էջմիածնի առաջին հատակագիծը կազմել է Ա. Թամանյանը: Երկրորդ գլխավոր հատակագծումը 1938—1950 թթ.

համար կատարել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժինը (հեղինակ՝ ճարտարապետ Ս. Մանուկյան)։ Էջմիածնի երրորդ հատակագիծը ևս 1955—1970 թթ. համար մշակվել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում (հեղինակներ՝ ճարտարապետներ Է. Պապյան և Ն. Շաքարյան)։ Այս հատակագիծը հաստատվել է 1958 թ.։ Հետագա տարիներին այդ հատակագծի հիման վրա կազմվել են կենտրոնական և առանձին թաղամասերի կառուցապատման նախագծերը։

Ժամանակակից Էջմիածինը ոչ միայն պատմական հուշարձան-քաղաք է, այլև շրջանի վարչական և մշակութային կենտրոն՝ զարգացող արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ։

Չարենցավանի (Լուսավան) առաջին հատակագիծը կազմվել է Ս. Յա. Ժուկի անվան Լենինի շքանշանակիր համամիութենական նախագծահետախուզական և գիտահետազոտական ինստիտուտի հայկական բաժանմունքում՝ «Հիդրոնախագիծ»-ում»։ Հատակագծի հեղինակն է ճարտարապետ Տ. Մարությանը։ Չարենցավանի ընդարձակման երկրորդ հատակագիծը կազմել է ճարտարապետ Ռ. Գրիգորյանը։ Երրորդ՝ նոր հատակագիծը կազմվում է «Հայպետնախագիծ» ինստիտուտում՝ 1970—2000 թթ. համար։ Հեղինակն է ճարտարապետ Ա. Միրիջանյանը։

Դիլիջանի առաջին հատակագիծը կազմել է ճարտարապետ Հ. Խաբեկյանը, երկրորդը՝ Ռ. Գրիգորյանը։ Դիլիջանի՝ իբրև խոշոր առողջարանային քաղաքի, զարգացման երրորդ հատակագծի տեխնիկատնտեսական հիմունքները կազմել են Պ. Թումանյանը և Հ. Պետրոսյանը։ Հատակագծի հեղինակներն են ճարտարապետներ Լ. Էյվազովան, Է. Թաշչյանը, Խ. Վարթինյանը և Ս. Ավետիսյանը։

Քաջարանի գլխավոր հատակագիծը մշակվել է Մոսկվայում՝ գունավոր մետալուրգիայի միութենական պետական նախագծային ինստիտուտում, երկրորդ անգամ՝ Երևանում, Հայկական ՍՍՀ գունավոր մետալուրգիայի ձեռնարկություն-

ների պետական նախագծային ինստիտուտում, իսկ երրորդ անգամ՝ «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժնում։ Հեղինակն է ճարտարապետ Ա. Հարությունյանը։

«Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժինը պատրաստում է Ղափան-Քաջարան քաղաքների կոմպլեքս զարգացման նոր գլխավոր հատակագիծը, մինչև 2000 թ. համար։ Հեղինակներն են ճարտարապետներ Պ. Թումանյանը, Լ. Էյվազովան, Է. Թաշչյանը։

1939 թ. նախագծվել է Սևանի հատակագիծը (1940—1955 թթ. համար)։ Սրա առաջին սխեման կազմել են ճարտարապետներ Գ. Մուրզան և Ս. Մանուկյանը։ Հետագա տարիներին Սևանի հատակագիծը կազմել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժինը (հեղինակ՝ ճարտարապետ Սարգիս Կարապետյան)։ Սևանի վերջին գլխավոր հատակագիծը (հեղինակներ՝ ճարտարապետներ Ս. Խաչիկյան, Հ. Պողոսյան, Լ. Չերքեզյան և Ա. Թարխանյան) կազմվել է 1965—1980-ական թվականների համար։ Քաղաքն ունենալու է 55 հազար բնակիչ։ Հատակագիծը հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կողմից։ Այստեղ կարևորություն է տրվում Սևանի կուրորտային շրջանի քաղաքաշինությանը և կառուցապատմանը։ Հանրապետության խոտաբնակ շրջանների նկատմամբ Սևանի գրաված կենտրոնական դիրքը, ինչպես և դրանց հետ ունեցած տրանսպորտային հարմար կապերը, բուժիչ հանքային ջուրը, առողջարար կլիման նախադրյալներ են ստեղծում Սևանա լճի ափերը ոչ միայն հանրապետական, այլև համամիութենական և նույնիսկ միջազգային նշանակության կուրորտային շրջանի վերածելու համար։

Ստեփանավանի գլխավոր հատակագիծը մշակվել է դեռևս նախապատերազմյան տարիներին՝ 15 տարվա համար (հեղինակներ՝ ճարտարապետներ Գ. Մուրզա, Հ. Դավթյան և Ս. Կարապետյան)։ Երկրորդ անգամ քաղաքի հատակագիծը կազմվել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժնում (հեղինակ՝ Ս. Կարապետյան)։ Այն հաստատվել է 1960 թ.։ Այժմ «Հայպետնախագիծ» ինստի-

տուտի հատակագծային բաժնում կազմվում է Ստեփանավանի նոր հատակագիծը 1970—2000 թթ. համար (հեղինակներ՝ ճարտարապետներ Մ. Գնունի Դ. Մեհրաբյան)։

Իջևան, Արտաշատ և Աշտարակ քաղաքների հատակագծերը կազմվել են «Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժնում. հեղինակներն են ճարտարապետներ Փ. Մանուկյանը, Հ. Դավթյանը և Պ. Թումանյանը։ 1965—1990-ական թվականների Իջևանի հատակագիծը կազմել են Պ. Թումանյանը և Լ. Էյվազովան, Արտաշատինը՝ Ա. Քալաշյանը, Գորիսինը՝ Պ. Խոյեցյանը, Աշտարակինը՝ Փ. Մանուկյանը և Լ. Էյվազովան, Արարատինը՝ Է. Պապյանը, իսկ Սպիտակինը՝ սկզբում Ռ. Գրիգորյանը, ապա Ա. Հարությունյանը[25]։

Այդ հատակագծերով վերոհիշյալ քաղաքներում կատարվել են քաղաքաշինական խոշոր աշխատանքներ։

«Հայպետնախագիծ» ինստիտուտի հատակագծային բաժինը միաժամանակ կազմել է հանրապետության քաղաքատիպ ավանների և շրջանային կենտրոնների, նույնիսկ առանձին խոշոր գյուղերի հատակագծերը։ Ազիզբեկովի առաջին գլխավոր հատակագիծը կազմել է Է. Պապյանը, իսկ հետագայում՝ Մ. Սաֆրաստյանը, Ապարանինը՝ Փ. Մանուկյանը, հետագայում՝ Ռ. Սարուխանյանը, Արշնիինը՝ Հ. Իսաբեկյանը, ապա Կ. Ղազարյանը, Այրումինը՝ Ն. Շաքարյանը։

Շրջանային կենտրոններում (Նոյեմբերյան, Կրասնոսելսկ, Ղուկասյան, Ախուրյան, Ամասիա) ևս կառուցապատման աշխատանքները կատարվել են «Հայպետնախագիծ» ինստիտուտում կազմված հատակագծերով։

Հիդրոէլեկտրակայանները ևս անմիջականորեն առընչվում են քաղաքաշինարարությանը, երբեմն հիմք հանդիսանում նոր քաղաքների հիմնադրման կամ գոյություն ունեցողների վերակառուցման ու ընդարձակման համար։ Այս

25 Նույն տեղում, թ. 1—8 և 47—59։

առումով նշելի են Սևան-Հրազդան և Որոտանի էլեկտրակայանների կասկադների կառուցման առնչությամբ առաջացած նոր բնակավայրերը, որոնց մի մասը հետագայում փոխարկվեցին քաղաքների։ Այսպես, Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանի շինարարության և ապա շահագործման անձնակազմի 2—3 հարկանի շենքերով կառուցապատված բանավանները զգալիորեն ընդարձակեցին Սևան քաղաքի սահմանները։ Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի առնչությամբ հիմնադրվեցին Գագարինավանը, Գեղամավանը և Լուսաշենը։ Վերջինս մտավ Հրազդան քաղաքի մեջ, կազմելով նրա լճափնյա բարեկարգ թաղամասը։ Գյումուշի հիդրոէլեկտրակայանի առիթով կառուցվեցին Հրազդանի մի այլ թաղամաս՝ իր թատրոնի շենքով, ապա Լուսակերտը, Քաղսին, ինչպես և Լուսավանը (Ջարենցավանը), որը դարձավ հանրապետության արդյունաբերական զարգացող քաղաքներից մեկը։

Արզնիի հիդրոէլեկտրակայանի ձախափնյա ավանը հետագայում փոխարկվեց առողջարանի, իսկ աջափնյա երկու ավանները փոխարկվեցին Նոր Հաճըն գործարանային բնակավայրի և Նոր Գեղի ավանի։ Քանաքեռգէսի ավանը ձուլվեց Երևանի հյուսիսային թաղամասերին, Երևանի Ազատության պողոտան ձևավորվեց և կառուցապատվեց որպես Երևանի հիդրոէլեկտրակայանի բանավան և այլն։

Այդ նույն ձևով Որոտանի հիդրոէլեկտրակայանների կառուցման առիթով նոր հատակագծի հիման վրա ստեղծվեց Սիսիանի աջափնյակը, կառուցապատված 3—5 հարկանի շենքերով, ապա հիմնադրվեցին քաղաքատիպ Որոտան և Շինուհայր բնակավայրերը, կառուցման ընթացքի մեջ են մի շարք նոր ավաններ։

1928 թ. հիմնադրվեցին Ջորագէսի, իսկ 1930 թ.՝ Քանաքեռգէսի ավանները, ապա Լուսավանը, Լուսակերտը, Լուսաշենը, Քաղսի, Գագարինավան, Գեղամավան, Նոր Հաճըն, Նոր Գեղի, Դավիթ Բեկ, Արզնի, Կեչուտ, Շամբ, Սիսիան, Շինուհայր, Որոտան և այլ ավանները։ Վերոհիշյալ բոլոր ավանների, բացի Ջորագէսից ու Քանաքեռգէսից, հատակա-

գծերը կազմվել են «Հիդրոնախագիծ» ինստիտուտի հայկական բաժանմունքում։ Այդ հատակագծերի հեղինակն է Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ Տիրան Մարությանը։

Հայկական ՍՍՀ գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների պետական նախագծային ինստիտուտը կատարել է Ախթալայի, Քաջարանի, Ագարակի, Դաստակերտի և Զոդի հատակագծերը։

Հանրապետությունում գունավոր մետալուրգիայի զարգացման հետևանքով հանդես են եկան մի շարք բնակավայրեր՝ Դաստակերտ, Ագարակ, Հանքավան, Ախթալա, Շամլուղ։ Այդ բնակավայրերում կառուցապատման աշխատանքներ կատարելու նպատակով «Հայգունարդմետաղ» նախագծային ինստիտուտում կազմվեցին վերոհիշյալ բնակավայրերի զարգացման գլխավոր հատակագծերը։ Ագարակի գլխավոր հատակագիծը առաջին անգամ կազմել է Ռ. Գրիգորյանը, իսկ երկրորդը, որը հաստատվել է 1963 թ., կազմել են Ա. Յարվելյանը և վ. Խաչատրյանը։ Հանքավանի հատակագիծը կազմել են ճարտարապետներ Հ. Դավթյանը և Ա. Հարությունյանը։ Նրանք կազմել են նաև Ախթալա, Դաստակերտ ու Շամլուղ քաղաքատիպ ավանների հատակագծերը։ Այդ նույն նախագծային ինստիտուտում է մշակվել ու կազմվել նաև Անիպեմզա քաղաքատիպ ավանի գլխավոր հատակագիծը 1960—1980-ական թվականների համար, որը հաստատվել է 1963 թ.։

Ժամանակակից քաղաքաշինության բնորոշ գծերն են մեծ և խոշոր քաղաքների զարգացման չափազանց աճի սահմանափակումը, միջին ու մանր բնակավայրերի զարգացումը, քաղաքի հողերի ռացիոնալ օգտագործումը, փողոցների հստակ դասավորումը, տրանսպորտային մայրուղիների անջատումը, փողոցի աղմուկից բնակարանների մեկուսացումը, առավելապես ազատ տարածքներում խոշոր կոմպլեքսով բնակելի շինարարության տեղաբաշխումը, հատակագծման շտամպներից հրաժարվելու և հատակա-

գծման ու կառուցապատման ազատ սիստեմների կիրառումը[26]։

Սովետական քաղաքաշինության հետագա առավել հաջող զարգացման համար անհրաժեշտ է վերացնել քաղաքների և ավանների հատակագծման ու կառուցապատման աշխատանքներում եղած մի շարք լուրջ թերություններ։ Նման թերություններից են օրինակ, հանրապետության քաղաքների զարգացման համար հատկացված գումարների անբավարար կամ էլ ոչ լիարժեք ու արդյունավետ օգտագործումը։

Ինչպես պլանային, այնպես էլ նախագծային կազմակերպություններն անբավարար են հաշվի առնում առանձին քաղաքների զարգացման հեռանկարները։ Երբեմն առանց պատշաճ հիմքի, ձգտում են նոր ձեռնարկություններ կառուցել մայրաքաղաքում, այնինչ, ավելի նպատակահարմար է դրանք տեղաբաշխել հանրապետության առավել փոքր քաղաքներում։ Մի շարք քաղաքներում քաղաքապատկան հողերը ոչ ռացիոնալ են օգտագործվում։

Հանրապետության որոշ քաղաքներում դանդաղ են արմատավորվում քաղաքաշինության արդի առաջադիմական եղանակները։ Ըստ պրակտիկայի, պարտադիր կերպով հանրապետության քաղաքների և քաղաքատիպ ավանների համար կազմված գլխավոր հատակագծերը մինչև կառավարության կողմից հաստատվելը քննարկվում են տեղերում։ Սակայն տեղերում խիստ խախտումներ են կատարվում, որի հետևանքով բարդացվում են հետագա նախագծման ու կառուցապատման աշխատանքները։ Տեղական մարմինները երբեմն խախտում են հատակագծերը (Էջմիածին, Դիլիջան, Արթիկ, Կամո, Սևան, Իջևան և այլն) հատկապես անհատական բնակարանային շինարարության, արդյունաբերական ձեռնարկությունների տեղադրման հարցերում։

Քաղաքի գլխավոր հատակագիծը գիտականորեն հիմնավորված գիտական փաստաթուղթ է, որը որոշում է քաղաքի և մերձքաղաքային տարածքում արտադրական

26 «Հայաստանի արդյունաբերություն», 1972, № 4, էջ 53—56։

դոտիների, բնակելի շրջանի, հասարակական և կուլտուրական, կենցաղսպասարկման հիմնարկների ցանցի, տրանսպորտի, ինժեներային և էներգետիկ սարքավորումների կոմպլեքսային ռացիոնալ կազմակերպումը, ինչպես նաև քաղաքացիների աշխատանքի, կենցաղի ու հանգստի պայմանների առավելագույն ապահովումը[27]։

Ինչպես տեսանք, հանրապետության քաղաքների պլանաչափ կառուցապատման համար «Հայպետշինը» կատարել է որոշակի հատակագծման աշխատանքներ։ Հանրապետության բոլոր քաղաքները, քաղաքատիպ ավանները և շրջանային կենտրոնները ունեն իրենց զարգացման գլխավոր հատակագծերը, որոնք հաստատված են կառավարության կողմից։ Դրանցից շատերի համար կազմվում են նոր հատակագծեր՝ քաղաքների զարգացման և խոշորացման կապակցությամբ։

Քաղաքաշինարար ճարտարապետներ Գ. Մուրզան, Փ. Մանուկյանը, Հ. Իսաբեկյանը, Ռ. Գրիգորյանը, Ս. Մանուկյանը, Ն. Զարգարյանը, Հ. Դավթյանը, Ս. Կարապետյանը, Վ. Բելուբեկյանը, Ա. Մինասյանը, Պ. Խոյեցյանը, Տ. Մարությանը, Պ. Թումանյանը և ուրիշներ շուրջ 3—3,5 տասնամյակ մեծ նվիրումով կատարեցին հանրապետության քաղաքների ու քաղաքատիպ ավանների ու շրջանային կենտրոնների գլխավոր հատակագծերի նախագծումը։ Նրանք իրենց բեղմնավոր աշխատանքով մեծ վաստակ ունեն սովետահայ քաղաքաշինության զարգացման բնագավառում։ Հետագա տարիներին քաղաքները հատակագծողների շարքերը համալրեց երիտասարդ, խոստումնալից ճարտարապետների մի սերունդ, որն իր ուսերի վրա վերցրեց հատակագծման աշխատանքների ծանրությունը։ Այդ սերունդն իր ստեղծագործական աշխատանքներով հարստացնում է սովետահայ քաղաքաշինությունը։

---

27 М. *Посохин*, Градостроительство СССР и его перспективы, М., 1967, стр. 7.

* * *

Սովետական Հայաստանի քաղաքների և շրջանային կենտրոնների հատակագծումներն ու շինարարական աշխատանքները ղեկավարելու համար 1923 թ. Հայկական ՍՍՀ ժողկոմխորհին կից ստեղծվեց բարձրագույն տեխնիկական խորհուրդ, որը գլխավորում էր Ա. Թամանյանը[28]։

Բարձրագույն տեխնիկական խորհուրդը մշակեց մի շարք միջոցառումներ, որոնցով օգնում էր այդ տարիներին պետական և կոոպերատիվ հիմունքներով կատարվող շինարարական աշխատանքներին։ Մինչև նախագծային հիմնարկների ստեղծումը, պետական, կոոպերատիվ և այլ շենքերի նախագծումներն իրենց նախաձեռնությամբ կատարում էին Ա. Թամանյանը, Ն. Բունիաթյանը, Բ. Արազյանը, Ֆ. Աղալյանը, Ա. Տեր-Դանիելյանը և ուրիշները։

1924 թ. Ա. Թամանյանը Երևանում կազմակերպում է նախագծային առաջին արվեստանոցը։ 1927 թ. այն տեղափոխվում է Ժողտանը կից կազմակերպված շինարարական հրապարակի նախագծային արվեստանոցը։ Արվեստանոցում աշխատում էին ճարտարապետներ Ս. Ռաշմաջյանը, Գ. Բագալյանը, Ռ. Սարգսյանը, Հ. Խալփախչյանը, Վ. Աբովյանը, Գ. Մուշեղյանը, Թ. Թումանյանը, նկարիչներ Ա. Սագինյանը, Տարագրոսը և ուրիշներ։

Քաղաքների վերականգնման, շինարարության ծավալման և ճարտարապետության զարգացման համար նախ անհրաժեշտ էր ունենալ բնակավայրերի հատակագծեր։ Ա. Թամանյանը 1924 թ. ապրիլին Հայաստանի Ժողկոմխորհին ներկայացրեց Երևանի գլխավոր հատակագիծը։ Նա կազմեց նաև մի շարք բնակավայրերի հատակագծերը, որոնց մասնակից դարձրեց ավագ սերնդի ճարտարապետներ Ն. Բունիաթյանին, Ն. Մանուչարյանին, Դ. Ջիսլյանին և ուրիշներին։ 1928 թ. նրանց շարքերը համալրեցին համալսարանի տեխնիկական ֆակուլտետի առաջին շրջանավարտներ Հ. Մարգարյանը, Մ. Գրիգորյանը, Ս. Սաֆարյանը, Ռ. Հակոբյանը, Ա. Մելիք-Մարտիրոսյանը և ուրիշներ։ Քիչ ավելի ուշ՝

28 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 130, ց. 1, գ. 26, թ. 77։

1929 թ., ասպարեզ նկան Մոսկվայում բարձրագույն դպրոցներն ավարտած երիտասարդ, խոստումնալից ճարտարապետներ Կ. Հալաբյանը, Մ. Մազմանյանը, Գ. Քոչարը, ապա Տ. Երկանյանը։

Ա. Թամանյանի անգնահատելի ծառայությունը Երևանի առաջին, գլխավոր հատակագծման դործում ոչ միայն նրանում է, որ նա վերակառուցման դժվարին պայմաններում, երբ անհրաժեշտ էր հաշվի նստել քաղաքի հին կառուցապատման հետ, դասավ քաղաքաշինական հետաքրքիր հորինվածքներ, այլև այն բանում, որ իր նախագծած մի շարք շենքերով ստեղծեց սովետահայ ճարտարապետության ուրույն ազգային ժամանակակից ոճ, մայրաքաղաքին տվեց քաղաքաշինական նոր կերպար (Կառավարական տունը, օպերայի և բալետի թատրոնի շենքը, Լենինի ու Շահումյանի անվան հրապարակները, համալսարանական թաղամասի անսամբլը այլն)։ Ճարտարապետության մեծ վարպետ, ակադեմիկոս Ա. Թամանյանը դարձավ Սովետական Հայաստանի քաղաքաշինության հիմնադիրը[29]։ Ա. Թամանյանն է նախագծել նաև հանրային դրադարանի, անատոմաբուժական-անատոմաբանական ինստիտուտի, անատոմիկումի, ֆիզիոթերապևտիկ և գինեկոլոգիայի հիվանդանոցների, մանկական հիվանդանոցի, պոլիտեխնիկական ինստիտուտի, առաջին հիդրոկայանի և Այդր լճի ջրհան կայանի, Երևանի ատոմդիտարանի շենքերը։ Նա միաժամանակ նախագծել է Երևանի, Լենինականի, Էջմիածնի, Կամոյի, Հոկտեմբերյանի, Նուպարաշենի (այժմ Սովետաշեն) և Լուկաշինի անվան կոմունայի հատակագծերը։

Առաջին հնգամյակի տարիներին նախատեսված նորակառույցները նախագծելու նպատակով անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու նախագծային արվեստանոցներ։

---

29 Օգտագործել ենք Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին նվիրված Հայաստանի ճարտարապետների միության վարչության հոբելյանական պլենումում Հայկական ՍՍՀ վաստակավոր շինարար Հր. Խաբեկյանի զեկուցումը «Սովետահայ քաղաքաշինության նվաճումները» վերնագրով։

1924 թ. Երևանի քաղաքային սովետին կից կազմակերպվեց առաջին արվեստանոցը, որը ղեկավարում էր Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Բունիաթյանը: Արվեստանոցը գտնվում էր Շահումյանի անվան հրապարակում, քաղսովետի նախկին շենքում: № 2 նախագծային արվեստանոցը ղեկավարում էր Գ. Քոչարը[30], № 3 արվեստանոցը՝ Մ. Մազմանյանը, իսկ № 4 արվեստանոցը՝ Ա. Թամանյանը:

Ժողովրդական տնտեսության զարգացման և հնգամյակների տարիներին կապիտալ ներդրումների շնորհիվ հիմնադրվեցին արդյունաբերական նոր ձեռնարկություններ: Վերջիններիս շնորհիվ առաջացան նոր քաղաքներ ու քաղաքատիպ նոր ավաններ: Հանրապետության նոր արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների հատակագծման, պետական բնակելի շենքերի նախագծման համար կազմակերպվեցին նախագծային գրասենյակներ, տրեստներ և ար-

---

30 Գևորգ Քոչարը (1902—1973 թթ.) ծնվել է Թրիլիսիում: Ավարտելով Ներսիսյան դպրոցը, 1922 թ. մեկնում է Մոսկվա սովորելու: Ստանալով ճարտարապետի կոչում, 1929 թ. գալիս է Երևան, մասնակցում սովետահայ ճարտարապետության կազմավորման ու զարգացման գործին: Նա նախագծել է հանրապետության մի շարք քաղաքների (Կիրովական, Դիլիջան) հատակագծերը, բնակելի և հասարակական բազմաթիվ շենքեր (Կիրովի անվան կոմբինատի բանավանը, անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի հանրակացարանի համալիրը, կենտրոնական հանրախանութը, «Մոսկվա» կինոթատրոնը, Լենինականի քաղսովետի շենքը և այլն): Գ. Քոչարը բազմանավոր աշխատանք է կատարել, դաստիարակելով երիտասարդ ճարտարապետների մի քանի սերունդներ, ինչպես նաև ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանում ճարտարապետների միության կազմակերպմանը, եղել է նրա անդրանիկ նախագահը: 1938—1960 թթ. նա զգալի ավանդ է ներդրել Նորիլսկ, Մինուսինսկ և Կրասնոյարսկ քաղաքների կառուցապատմանը: Եղել է վերջինիս գլխավոր ճարտարապետը: Գ. Քոչարը 1957 թ. ընտրվել է ՍՍՀՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի թղթակից-անդամ: Վերադառնալով Հայաստան, աշխատել է «Երևաննախագիծ» ինստիտուտում՝ իբրև գլխավոր ճարտարապետ: Նա գործուն մասնակցություն է ունեցել Երևանի կառուցապատմանը: Գ. Քոչարը պարգևատրվել է շքանշաններով, արժանացել արվեստի վաստակավոր գործչի և Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման («Սովետական Հայաստան», 8.II.1972, 20.II.1973):

վեստանոցներ՝ համապատասխան ժողկոմատներին կից։ Նախագծային այդ հաստատություններն առաջին տարիներին ապահովված չէին համապատասխան մասնագիտական կադրերով և շենքերով, չունեին աշխատանքի նորմալ պայմաններ։ Չնայած այդ դժվարին պայմաններին, նրանք պատվով էին կատարում պետական առաջադրանքները։

Առաջին հնգամյակի նորակառույցները նախագծելու նպատակով անհրաժեշտ էր ունենալ նախագծային մի կազմակերպություն։ Այդ նպատակով Հայկական ՍՍՀ ժողկոմխորհի ծանր արդյունաբերության ժողկոմատի նախաձեռնությամբ արդյունաբերական օբյեկտների նախագծման համար 1929 թ. կազմակերպվեց «Հայարդնախագիծ» նախագծային գրասենյակը, որի առաջին դիրեկտորն էր ինժեներ-մեխանիկ Միսակ Պետրոսյանը։ Այնտեղ աշխատում էին ինժեներներ Ի. Մելիք-Հայկազյանը, Ռ. Լևիցկին, Ն. Ջաղինյանը, Լ. Ասլանյանը և ուրիշներ։

1929 թ. «Հայարդնախագիծ» գրասենյակին զուգահեռ կազմակերպվեց պետական նախագծային բյուրո, որը 1932 թ. վերանվանվեց քաղաքների նախագծման պետական ինստիտուտ («Պետքաղնախագիծ»)։ 1929 թ. սկզբից մինչև 1931 թ. փետրվարը այդ նախագծային հիմնարկի աշխատանքները ղեկավարում էր Կ. Հալաբյանը, իսկ նրա Մոսկվա տեղափոխվելուց հետո՝ Գ. Քոչարը։ Այդ արվեստանոցի կոլեկտիվը բաղկացած էր 30—35 հոգուց։ Այնտեղ կատարված մի շարք աշխատանքներ ցուցադրվել են Մոսկվայում և Լենինգրադում՝ միութենական ցուցահանդեսներում։

1930-ական թվականների սկզբներին քաղաքաշինական նոր տեսք են ստանում Երևանն ու Լենինականը, մասամբ Կիրովականը, Ղափանը և Ալավերդին՝ շնորհիվ նոր բացվող լայն փողոցների, հրապարակների, նոր կառուցվող շենքերի, բազմերանգ տուֆերի օգտագործման և կանաչապատման։ Այդ տարիներին քաղաքաշինական աշխատանքները սկսում են առավել զարգանալ։ Առանձին հեղինակների փոխարեն հատակագծման աշխատանքները կատարում են հատուկ նախագծային արվեստանոցները՝ ավելի մասնագիտացված

կազմով, լիարժեք գեոդեզիական հանույթներով։ Նախագծման աշխատանքներին մասնակից են դարձվում տնտեսագետներ ու տարբեր մասնագիտությունների ինժեներներ, և այդ նախագծերը դառնում են ավելի ռեալ։ Այդ տարիներին Հանրապետության քաղաքների ու գյուղերի հատակագծման աշխատանքներին մասնակցում էին հիմնականում պոլիտեխնիկական ինստիտուտի սանները։

1935 թ. ապրիլին «Պետքաղնախագիծ»-ում կազմակերպվում են երկու ճարտարապետական-պլանային արվեստանոցներ, որոնցից մեկը ղեկավարում էր Գ. Քոչարը, իսկ մյուսը՝ Մ. Մազմանյանը։ Վերջինիս ղեկավարած արվեստանոցում են նախագծվել կառուցողների ակումբը (այժմ Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի շենքը), երգեհոնի բանվորների համար Կարմիր բանակի փողոցի վրա կառուցված շախմատաձակատ բնակելի շենքը, Աբովյան փողոցի վրա գտնվող ունիվերսալ խանութը, Լենինականի քաղաքային սովետի շենքը և այլն։

Այդ արվեստանոցում նախագծվեցին նաև Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Հոկտեմբերյանի և այլ քաղաքների ու շրջանային կենտրոնների հատակագծերը։ Մ. Մազմանյանի ղեկավարած արվեստանոցում էին աշխատում Հ. Մարգարյանը, Զ. Բախշինյանը, Գ. Մուրզան, Փ. Մանուկյանը և ուրիշներ։

Ա. Թամանյանի նախագծային ժառանգությունը շարունակելու և ավարտելու գործը (Կառավարական տուն, Օպերայի և բալետի թատրոն, կենտրոնական գրադարան և այլն) հանձնարարվեց արվեստանոցում աշխատող խոստումնալից երիտասարդ ճարտարապետ Գ. Թամանյանին՝ Ա. Թամանյանի որդուն։ Նա պատվով կատարեց այդ դժվարին գործը։

Գ. Քոչարի ղեկավարած արվեստանոցում են նախագծվել Հանրապետության մի շարք քաղաքներում և շրջանային կենտրոններում կառուցված վարչական և հասարակական բնակելի շենքեր, բազմաթիվ խոշոր գյուղերի հատակագծեր։

Ն. Բունիաթյանի ղեկավարությամբ գործող արվեստա-

նոցում նախագծվում էին գերազանցապես Երևանի ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի նախագծերը։ Այդ արվեստանոցում էին աշխատում երիտասարդ խոստումնալից ճարտարապետներ Մ. Դրիգորյանը, Ա. Տեր-Ավետիսյանը, Խ. Ռոստոմբեկյանը, Վ. Բելուբեկյանը, Գ. Աղաբաբյանը, Կ. Հովհաննիսյանը և ուրիշներ։

«Հայարդնախագիծ»-ի կոլեկտիվի շարքերը համալրվում են նոր մասնագետներով (Պ. Սարվազյան, Օ. Դոխիկյան, Վ. Չիլչյան, Ա. Ղուլղազարյան, Ա. Կոնդախչյան, Ա. Վաթինյան և ուրիշներ)։ «Հայարդնախագիծ»-ը հանձնվում է տեղական արդյունաբերության ժողկոմատի տնօրինությանը։ Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի 1938 թ. հունվարի 5-ի որոշմամբ «Հայարդնախագիծ»-ի և երկու ճարտարապետական արվեստանոցների բազայի վրա կազմակերպվում է նախագծային տրեստ՝ «Հայպետնախագիծ», որը հանձնվում է Հայկական ՍՍՀ կոմունալ տնտեսության ժողկոմատի ենթակայությանը։

«Հայպետնախագիծ»-ի ինժեներատեխնիկական կազմը 1940 թ. 81 հոգի էր, որից 56-ը ուներ բարձրագույն, 25-ը՝ միջնակարգ կրթություն, 56 հոգուց 30-ը ճարտարապետներ էին, իսկ 26-ը՝ տարբեր մասնագիտությունների տեր ինժեներներ։

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, ճարտարապետները ևս համալրեցին կարմիր բանակի շարքերը՝ մեր սրբազան հայրենիքը պաշտպանելու համար։ 1941 թ. «Հայպետնախագիծ»-ում մնացին 37 հոգի։

Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհին կից կազմակերպված ճարտարապետական կոմիտեին հանձնվեցին քաղաքների և բնակավայրերի հատակագծման բոլոր աշխատանքները։ Այդ իսկ պատճառով 1945 թ. մայիսից վերացվում է «Հայպետնախագիծ»-ի քաղաքների ու բնակավայրերի հատակագծման սեկտորը։ Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի 1946 թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ «Հայպետնախագիծ»-ը հանձնվում է տեղական արդյունաբերության ժողկոմատի ենթակայությանը։

Եռապատերազմյան տարիներին ազգային հանրապետությունններում ստեղծվել էին մանր նախագծային հիմնարկներ, որոնք իրենց չէին արդարացնում և չէին ապահովում նախագծումների որակը։ Այդ պատճառով էլ ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1951 թ. ապրիլի 6-ին որոշեց կատարել նախագծային հիմնարկների խոշորացում։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1951 թ. հունվարի 10-ի և ապրիլի 30-ի որոշումներով հանրապետությունում գործող նախագծային հիմնարկները միացվեցին և կազմեցին «Հայճարտնախագիծ» ինստիտուտը, որի մեջ մտան «Հայարդնախագիծ»-ը և «Հայպետնախագիծ»-ը, նախագծային գրասենյակները, կոմունալ նախագիծը և ճանապարհակամրջային նախագիծը։ «Հայճարտնախագիծ» ինստիտուտը հանձնվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից ճարտարապետության կոմիտեի ենթակայությանը։ Մինչ այդ խոշորացումը նախագծային հիմնարկներն անվանվում էին գրասենյակներ, տրեստներ, բյուրոներ, իսկ խոշորացումից հետո կոչվեցին ինստիտուտներ։ «Հայճարտնախագիծ» ինստիտուտի դիրեկտոր նշանակվեց Մ. Գրիգորյանը, իսկ գլխավոր ինժեներ՝ Մ. Սահակյանը։ Այդ ինստիտուտն ուներ 6 ճարտարապետական արվեստանոցներ քաղաքացիական կառուցվածքների համար, մեկ արվեստանոց՝ արդյունաբերական կառուցվածքների համար, և երկու ճարտարապետական-հատակագծային արվեստանոցներ՝ իրենց 10 մասնագիտացված բաժիններով։ Արվեստանոցներից մեկը ղեկավարում էր տաղանդավոր ճարտարապետ Ռ. Իսրայելյանը[31]։

31 ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1970 թ. հոկտեմբերի 20-ի հրամանագրով երկրի տասը նշանավոր ճարտարապետների առաջին անգամ շնորհվեց ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետի պատվավոր կոչում։ Այդ թվում «Հայարդնախագիծ» ինստիտուտի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանին։ Ռ. Իսրայելյանը (1908—1973 թթ.) ծնվել է Թբիլիսիում։ Ավարտելով Լենինգրադի Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետական բաժինը, նա 1936 թ. գալիս է Երևան։ Տաղանդավոր ճարտարապետը իր բազմամյա ստեղծագործական պրակտիկայում նախագծել և իրականացրել է համարյա բոլոր ժանրերի բազմաթիվ

1954 թ. ինստիտուտի համար կառուցվեց հատուկ շենք, որը գտնվում է Հոկտեմբերյան պողոտայի վրա։ Դրանով նորմալ պայմաններ ստեղծվեցին աշխատողների համար, որոնց ծանրաբեռնվածությունը տարեցտարի ավելացավ։

Այսպիսով, հանրապետական նախագծային ինստիտուտը, որը գոյություն ունի 1951 թ. ապրիլից, զբաղվում է արդյունաբերական, կոմունալ շինարարության, ճանապարհամրջային և քաղաքային բնակելի շենքերի շինարարության նախագծման հարցերով։

Հանրապետությունում գունավոր մետալուրգիայի արագ տեմպերով զարգանալու հետևանքով 1953 թ. ստեղծվեց Հանրապետության գունավոր մետալուրգիայի օբյեկտների նախագծային ինստիտուտը, որի գլխավոր ինժեներ նշանակվեց Մեկենաս Մանվելյանը։ Նախագծային կազմակերպությունների առավել մասնագիտացման նպատակով 1955 թ. Հանրապետությունում ստեղծվեց քաղաքների ու

գործեր՝ բնակելի, վարչական-հասարակական շենքեր, գործարաններ, առողջարաններ, կուլտուրայի տներ, ինստիտուտներ, թանգարաններ, մոնումենտալ հուշարձաններ, Ճարտարապետական փոքր ձևեր, ինժեներական կառուցվածքներ և կիրառական արվեստի աշխատանքներ։ Ռ. Իսրայելյանի տաղանդի կնիքն են կրում «Հաղթանակի» մոնումենտի պատվանդանը, որի համար նա արժանացավ ՍՍՀՄ պետական մրցանակի, «Արարատ» գինու գործարանի երկրորդ հերթը, ալյումինի գործարանի արտադրական համալիրներն ու բնակելի ավանը, Սևան-Հրազդան կասկադի քաղաքացիական օբյեկտները, ինչպես նաև Կիրովի անվան գործարանի պանսիոնատը Արզականում, լաբորատոր համալիրը և հանգստյան տունը Նոր Ամբերդում, «Արագիլ» ռեստորանը Երևանում, «Մովինար» ռեստորանը Հրազդանում, Երևանի հյուսիսային և արևմտյան դարբասները, Ջարենցի կամարը Գառնիի ճանապարհին, բազմաթիվ հուշարձաններ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին, Սարդարապատի ճակատամարտի 50-ամյակին նվիրված հուշակառույցը և այլն։ Ռ. Իսրայելյանը լինելով ճարտարապետ-նկարիչ, զարդաքանդակի չգերազանցված վարպետ էր։ 1952 թ. նա ստացել է ճարտարապետական գիտության թեկնածուի գիտական աստիճան։ Ռ. Իսրայելյանի բեղմնավոր աշխատանքը գնահատվել է ըստ արժանվույն։ Նա արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի, ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետի, Հայկական ՍՍՀ-արվեստի վաստակավոր գործչի և Հանրապետության վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչումների։


գյուղերի, բնակելի և քաղաքային շինարարության օբյեկտների նախագծային ինստիտուտը, որը տրվեց Հայկական ՍՍՀ քաղաքային և գյուղական շինարարության մինիստրության ենթակայությանը։

* * *

Հայկական ՍՍՀ պետշինի բնակարանային-քաղաքացիական շինարարության պետական գլխադաս ինստիտուտը («Հայպետնախագիծ») կազմակերպվել է 1955 թ.՝ Երևանի քաղաքային սովետի նախագծային և «Հայարդնախագիծ» ինստիտուտների տիպային և քաղաքաշինական բաժինների բազայի վրա։

«Հայպետնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվի խնդիրն է մշակել քաղաքային և գյուղական սերիայի բնակելի ու քաղաքացիական, հասարակական շենքերի տիպային և փորձնական նախագծերը, հանրապետության շրջանային հատակագծումների և քաղաքային ու ավանային գլխավոր հատակագծերը, բնակելի և հասարակական օբյեկտների եզակի նախագծումները, ինչպես և կատարել տիպային նախագծումների համապատասխանեցումը և ինժեներահետախուզական աշխատանքները։ Ինստիտուտի կոլեկտիվը միաժամանակ կատարում է բնակավայրերի կառուցապատման-նախագծման ամբողջ կոմպլեքսի՝ դրանց գլխավոր հատակագծի մշակումից մինչև բնակելի և հասարակական կուլտուր-կենցաղային ու այլ հիմնարկների մասնայական շինարարության տիպային նախագծերի կազմման աշխատանքները։

Ինստիտուտն ունի 6 գոտիների (ղոնալ) ճարտարապետական արվեստանոցներ, որոնք մշակում են կառուցապատման և հանրապետության որոշակի գոտիների համար եզակի շենքերի նախագծեր։ Ինստիտուտում գործում են ճարտարապետական և ինժեներական սարքավորման երկու բաժիններ, որոնք մշակում են բնակելի և հասարակական շենքերի տիպային նախագծերը։ Ինստիտուտն ունի շրջանա-



Լենինականի Ա. Մռավյանի անվան դրամատիկական թատրոնի շենքը

մարավետ տների տիպերի և կենցաղային սպասարկման նոր ձևերի ընտրությամբ։

«Հայպետնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը բաղկացած է 700 հոգուց[34]։ Երկար տարիներ ինստիտուտի դիրեկտորն է Հանրապետության վաստակավոր ճարտարապետ Կորյուն Հակոբյանը։

Երևանի բնակարանային և հասարակական շենքերի շինարարության, ճանապարհների ինժեներական կառուցվածքների (բացի արդյունաբերությունից) նախագծումով զբաղվում է «Երևաննախագիծ» ինստիտուտը, որը ստեղծվել է 1958 թ. սկզբներին։ Ինստիտուտի պատվիրատուն հիմնականում Երևանի քաղաքային սովետն է։

Ինստիտուտը 1970 թ. ուներ ճարտարապետական հատակագծային 5 արվեստանոց՝ ինժեներական կառուցվածքների, հետախուզական, սանիտարական, տեխնիկական, գազիֆիկացման և ստորգետնյա կառուցումների, էլեկտրատեխնիկական, նախահաշվային սեկտորներով։ Բացի այս հիմնական բաժիններից, ինստիտուտն ունի նաև օժանդակ բաժիններ։ 1958 թ. սկսած ինստիտուտի կոլեկտիվը տարեցտարի աճել է։ Այնտեղ ստեղծվել են նոր սեկտորներ և բաժիններ։ Եթե սկզբում ինստիտուտում աշխատում էին 160 հոգի, ապա 1970 թ. աշխատողների թիվը հասավ 750 հոգու, որից մոտ 120-ը ճարտարապետներ են։

Հենվելով գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների վրա, օգտագործելով ժամանակակից ճարտարապետության առաջավոր փորձը, հայրենական քաղաքաշինության լավագույն ավանդույթները, «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետներն ու ինժեներները իրենց ավանդն են ներդնում սովետահայ ճարտարապետության զարգացման գործում։ Ինստիտուտի կոլեկտիվը կատարել է «Անի», «Նաիրի», «Դվին» հյուրանոցների, սրտաբանության և սրտի վիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտի, «Էրեբունի» թանգարանի, ուսանողական հանրակացա-

34 Տվյալները վերցված են նախագծային ինստիտուտների համապատասխան բաժիններից։

բանների համալիրների, հանրապետական հիվանդանոցի, մաքրման կայանի, Երևանի ջրամատակարարման, գաղամատակարարման կառուցվածքների նախագծերը։

«Երևաննախագիծ» ինստիտուտում են կազմվել Երևանի գլխավոր հատակագիծը, ինչպես և քաղաքի կենտրոնի վերակառուցման, Զեյթուն, Աջափնյակ, Արարատյան բնակելի զանգվածների, Երևանի հարավ-արևմուտքի, Քանաքեռի, Ավանի հատակագծման նախագծերը։

Այդ ինստիտուտում են նախագծվել Նալչիկի վ. Խ. Լենինի անվան պողոտայի վերակառուցման, Դոնեցկի մարզի Սնեժնի և Ուզբեկական ՍՍՀ Սամարղանդ քաղաքների թանգարանների նախագծերը։ Ինստիտուտի կոլեկտիվը իր ավանդը դրեց նաև Տաշքենդի վերակառուցման գործում[35]։

Մեր մայրաքաղաքը զարդարող գեղեցիկ կառույցների ու կոթողների հեղինակներից են Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետներ Զ. Թորոսյանը, Գ. Մուշեղյանը, Ֆ. Դարբինյանը, Ս. Կնդեղցյանը, վաստակավոր շինարարներ Բ. Արզումանյանը, Հ. Հակոբյանը, ճարտարապետներ Ա. Զարյանը, Ս. Քյուրքչյանը, Վ. Հյուսյանը, Ա. Նավասարդյանը, Գ. Գրիգորյանը, Հ. Գրիգորյանը, Բ. Սարգսյանը, Լ. Գևորգյանը, Ա. Ալեքսանյանը, Է. Սաֆարյանը և ուրիշներ։

«Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվում վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում ժամանակակից քաղաքաշինական պահանջները բավարարող բազմահարկ տների շինարարության հարցերին։ Ինժեներ-կոնստրուկտորներ Յու. Դալլաքյանի, Գ. Բալյանի, Ա. Առաքելյանի և ճարտարապետներ Բ. Արզումանյանի, Բ. Սարգսյանի, Կ. Մարտիրոսյանի վերջին տարիներին ստեղծած համատեղ նախագծերն աչքի են ընկնում հետաքրքիր կոնստրուկտիվ և հատակագծման ուրույն լուծումներով։ Ինստիտուտի մի քանի արվեստանոցներում Ռ. Բադալյանի շրջանակակարկասային կոնստրուկցիայի հիման վրա մշակվել են հատակագծման ու հարկայնության բնույթով տարբեր բնակելի տների, հանրակացարանների, հյուրանոցների նախագծեր։ Հա-

35 «Երեկոյան Երևան», 2 սեպտեմբերի, 1972։

տուկ հետաքրքրություն է ներկայացնում Ա. Նավասարդյանի 12—14 հարկանի շենքի փորձնական նախագիծը, որը բարձր գնահատականի է արժանացել[36]:

Հայկական ՍՍՀ կոմունալ տնտեսության մինիստրության «Հայկոմունպրոեկտ» պետական նախագծային ինստիտուտը կազմակերպվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1967 թ. հունվարի № 24 որոշմամբ՝ կոմունալ տնտեսության մինիստրության նախագծակոնստրուկտորական բյուրոյի բազայի վրա:

«Հայկոմունպրոեկտ» ինստիտուտը զբաղվում է հանրապետության կոմունալ-կենցաղային ցանցի ընդլայնման, քաղաքների ու բնակավայրերի բարեկարգման ու վերակառուցման նախագծումներով, հանրապետության կոմունալ տնտեսության զարգացման հեռանկարային խնդիրների մշակմամբ: Հանրապետության կոմունալ օբյեկտների նախագծման գործի կենտրոնացումը մեկ նախագծային ինստիտուտում, հնարավորություն ստեղծեց կոմունալ հարցերի լուծման ուղղությամբ մասնագիտացված ու կոորդինացված աշխատանք կատարելու համար:

Ինստիտուտն այժմ ունի 14 արտադրատեխնիկական բաժիններ, այդ թվում երեք լաբորատորիա (ջրերի ու գրունտների բաղադրության վերլուծության համար), մեքենահաշվային կենտրոն և այլն:

Ինստիտուտի առաջատար բաժիններն են ջրամատակարարման ու կոյուղու, ջերմամատակարարման, գազամատակարարման, ճարտարապետական-շինարարական, ճանապարհակամրջային բաժինները որոնք իրենց առջև դրված խնդիրները կատարում են բարեխղճորեն: Ինստիտուտի աշխատանքային կոլեկտիվը բաղկացած է տարբեր մասնագիտություններ ունեցող 700 աշխատողներից: Կոլեկտիվի անդամների մեծ մասը երիտասարդներ են, որոնք արտադրական խնդիրների կատարումը հաջողությամբ զուգակցում են իրենց տեխնիկական և հանրակրթական գիտելիքների անընդհատ բարձրացման հետ: Մոտ 80 երիտա-

36 «Հայաստանի արդյունաբերություն», 1972, № 9, էջ 65:

սարդներ արտադրությունից չկտրված, սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում:

«Հայհիդրոնախագիծ» ինստիտուտը, որ տարբեր անուններով գոյություն ունի դեռևս 20-ական թվականների երկրորդ կեսից, նախագծել է Հանրապետության բոլոր խոշոր հիդրոէլեկտրակայանները, Արփա-Սևան ջրատարը, Երևանյան լիճը և այլ ինժեներական կառույցներ, կապված քաղաքաշինության հետ: «Հայհիդրոնախագծում» են ստեղծվել բազմաթիվ քաղաքատիպ և ավանային բնակավայրերի հատակագծերը և կառուցապատման նախագծերը:

Հանրապետության քաղաքների կառուցապատման խոշոր թափը առաջադրեց խանութներ, ճաշարաններ, առևտրի ու սննդի օբյեկտներ նախագծող կազմակերպության պահանջը: 1951 թ. կազմակերպվեց Վրացական ՍՍՀ «Գիպրոտորգ» նախագծային ինստիտուտի երևանյան մասնաճյուղը, որը ղեկավարում էր ճարտարապետ Ս. Ասոյանը: 1965 թ. կեսերին այն դարձավ Մոսկվայի «Գիպրոտորգի» երևանյան մասնաճյուղը, որի դիրեկտոր նշանակվեց Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ է. Սարապյանը: Վերջինիս ջանքերով կոլեկտիվը համալրվեց երիտասարդ, խոստումնալից մասնագետներով, ստեղծվեցին նոր բաժիններ:

Սովետական իշխանության տարիներին ստեղծված նախագծային ինստիտուտները կարճ ժամանակամիջոցում համալրվեցին որակյալ կադրերով, որոնք լծվեցին քաղաքների, արդյունաբերական ձեռնարկությունների հատակագծման և կառուցապատման աշխատանքներին:

Հանրապետության նախագծային բոլոր ինստիտուտներն ունեն նյութատեխնիկական ամուր բազա, որակյալ կադրեր: Նախագծողների համար ստեղծված են բարենպաստ պայմաններ, լայն հնարավորություններ՝ աշխատանքները հաջող կազմակերպելու և ստեղծագործական նախաձեռնություն ցուցաբերելու համար: Հատկապես ետպատերազմյան տարիներին հանրապետության նախագծային ինստիտուտներն ընդլայնվել են, աճել են մասնագիտական

կադրերը, բարձրացել է նրանց տեխնիկական դրագիտությունը։ Այդ բոլորի շնորհիվ ռեալ հնարավորություններ են ստեղծվել նրանց առջև դրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար։

* * *

Հայ ճարտարապետական արվեստը դարերի պատմություն ունի։ Հայ շինարարը աշխարհի տարբեր վայրերում կառուցել է պալատներ, ամրոցներ, վանքեր, կամուրջներ, դղյակներ և բազմապիսի հուշարձաններ, որոնք մինչև այսօր էլ պահպանել են իրենց ճարտարապետական հմայքը։ Հայ ճարտարապետության լավագույն նմուշներն են Գառնին, Զվարթնոցը, Դվինը, Անին և այլն։ Հայոց լեռնաշխարհը հարուստ է ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններով, որոնք կառուցող շնորհալի վարպետները սերնդեսերունդ հաղորդել են իրենց ունակություններն ու հարուստ փորձը։

Նախասովետական Հայաստանի ճարտարապետների փոքրաթիվ խումբը կրթություն է ստացել Ռուսաստանի կամ արտասահմանյան երկրների տարբեր քաղաքներում։ Հայաստանում ճարտարապետական բարձրագույն դպրոց ունենալու հնարավորությունը ստեղծվեց միայն սովետական իշխանության տարիներին։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Երևանում բացվեց ժողովրդական համալսարան, որն ուներ տեխնիկական ֆակուլտետ՝ ճարտարապետական, շինարարական, հիդրոտեխնիկական և քիմիատեխնոլոգիական բաժիններով։ Հիմնադրման առաջին տարին ֆակուլտետն ուներ 38 ուսանող։ Տեխնիկական ֆակուլտետում դասախոսական աշխատանքի հրավիրվեցին ճարտարապետության ակադեմիկոս Ա. Թամանյանը, պրոֆեսոր Ն. Բունիաթյանը[37], դոցենտ Հ. Զաքյանը (ճարտա-

[37] Նիկողայոս Բունիաթյանը (Բունիաթով) (1884—1943 թթ.) ծնվել է Թբիլիսիում։ Միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվի ռեալական, ուսումնարանում, իսկ նկարչականը՝ Օդեսայում։ 1907 թ. նա ընդունվում է Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայի ճարտարապետական ֆա-

բապետության ամբիոնի առաջին վարիչը), Լ. Մանուչարյանը և ուրիշներ։

1928 թ. համալսարանի տեխնիկական ֆակուլտետը տվեց առաջին շրջանավարտները։ Նրանցից էին Հ. Մարգարյանը (հետագայում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից ճարտարապետության գործերի վարչության պետ, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ, ՍՍՀՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ), Ս. Սաֆարյանը (պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի պրոֆեսոր, ՍՍՀՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի թղթակից-անդամ), Մ. Գրիգորյանը (այժմ «Հայարդնախագիծ» ինստիտուտի ղեկավար, Հայկական ՍՍՀ վաստակավոր

կուլտետը։ 1914 թ. ավարտելով այն, Ն. Բունիաթյանն ստանում է նկարիչ-ճարտարապետի կոչում։

Նրա պրակտիկ ճարտարապետի գործունեությունը սերտորեն կապված է Ա. Թամանյանի հետ։ 1914—1916 թթ. նա մասնակցել է Անիի հնագիտական պեղումներին, խոշոր ներդրում է կատարել հայրենի հուշարձանների ուսումնասիրության բնագավառում։

Մինչև 1924 թ. նա Մոսկվայում կազմակերպված առաջին գյուղատնտեսական ցուցահանդեսի գլխավոր աշխատողն էր և Սովետական Հայաստանի տաղավարի նախագծի հեղինակը։ Այդ նույն տարիներին Մոսկվայում գեղարվեստատեխնիկական ինստիտուտում վարել է պրոֆեսորի պաշտոն։

Սովետական Հայաստանում նա Երևանի գլխավոր ճարտարապետն էր, միաժամանակ ճարտարապետական արվեստանոցի ղեկավար, ուր նա նախագծել է մի քանի տասնյակ բնակելի և հասարակական շենքեր։ Ն. Բունիաթյանը հեղինակ է Երևանի առաջին հյուրանոցի (1926 թ. կառուցված Աբովյան փողոցում), Շահումյանի հրապարակի վրա գյուղբանկի, Սևան հյուրանոցի և այլ բազմաթիվ շենքերի։

Պրակտիկ ու գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց նա երկար տարիներ դասախոսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, զբաղվել շինարար-ճարտարապետական կադրերի պատրաստման գործով։ Այնուհետև նա փոխադրվեց Մոսկվա, ուր մինչև կյանքի վերջն աշխատեց ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայում՝ որպես ասպիրանտուրայի ղեկավար։ Նրա մասին տե՛ս М. И. Илина, Н. Г. Буниатов 1884—1943. М., 1944։

ճարտարապետ, պետական մրցանակի դափնեկիր), Ռ. Հակոբյանը (շինֆակի շինարարական կոնստրուկցիաների ամբիոնի վարիչ), Ա. Մելիք-Մարտիրոսյանը («Հայարդնախագիծ» ինստիտուտի բաժնի վարիչ, Հայկական ՍՍՀ վաստակավոր շինարար), Ա. Ահարոնյանը և Ա. Ավանեսովը։

1930 թ. շինարարական ֆակուլտետը ավարտեցին 32 հոգի։ Նրանց թվում էին ճարտարապետներ Հ. Ղալփախչյանը (այժմ ճարտարապետության դոկտոր), Ա. Տեր-Ավետիքյանը (Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ), Ա. Տեր-Կարապետյանը, Հ. Աբրահամյանը, Ռ. Գրիգորյանը, Ա. Գուլաբյանը (Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ)։ 1930-ական թվականներին հանրապետության ճարտարապետական կադրերի պակասը լրացրին նախագծային հիմնարկների, հատկապես Ա. Թամանյանի արվեստանոցի աշխատողները, որոնք յուրացնելով իրենց ղեկավարի ստեղծագործական մեթոդները, մեծ ավանդ ներդրեցին սովետահայ ճարտարապետության մեջ։

Հայաստանում ճարտարապետական կրթությունը նոր վերելք ապրեց 1940-ական թվականներին։ Դեռևս Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին (1943 թ.) պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետում վերաբացվեց ճարտարապետական բաժինը։ Եթե մինչև 1931 թ. ինստիտուտը տվել է 37 ճարտարապետ, ապա 1961—1971 թթ.՝ 343։ Բոլոր տարիների շրջանավարտները կազմել են 684 հոգի[38]։ Ճարտարապետական կադրերի պատրաստման գործում մեծ երախտիք ունեն Ն. Բունիաթյանը, Հ. Զաքիևը, Մ. Մազմանյանը, Գ. Քոչարը, Տ. Երկանյանը, Ս. Սաֆարյանը, Հ. Մարգարյանը, Մ. Գրիգորյանը, Ա. Ահարոնյանը, ապա Վ. Տեր-Ավագյանը, Զ. Բախշինյանը, Ռ. Սամարցյանը, Կ. Հակոբյանը, Ռ. Իսրայելյանը, Վ. Հարությունյանը, Հ. Իսաբեկյանը, Է. Տիգրանյանը, Ա. Մամիջանյանը, Ա. Կանայանը և ուրիշներ։

Սովետահայ ճարտարապետության զարգացման գոր-

38 Տվյալները վերցված են Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի կադրերի բաժնից։

ծում վճռական դեր խաղաց Հայկական ՍՍՀ ճարտարապետների միության կազմակերպումը, որը միասնական հունի մեջ դրեց ստեղծագործական կարողությունները՝ քաղաքաշինության և ճարտարապետության հարցերը գիտական բարձր մակարդակով լուծելու համար։ Ճարտարապետների միության աշխատանքի տարբեր ձևերը (մրցույթներ, ցուցահանդեսներ, քննարկումներ, շեֆական աշխատանքներ և այլն) նպաստեցին նրա անդամների ստեղծագործական աճին, սովետահայ ճարտարապետության և քաղաքաշինության զարգացմանը։

Հայկական ՍՍՀ ճարտարապետների միության վարչության առաջին նախագահն էր Գ. Քոչարը, միության ակտիվ գործիչներն են եղել Ս. Սաֆարյանը, Ա. Ասատրյանը, Թ. Թումանյանը, Հ. Բաբաջանյանը, Հ. Մարգարյանը, Վ. Հարությունյանը, Վ. Բելուբեկյանը, Հ. Իսաբեկյանը, Ռ. Ալավերդյանը, Ա. Կանայանը և շատ ուրիշներ։ Այժմ մեր հանրապետությունում աշխատում են 500-ից ավելի ճարտարապետներ։ Ճարտարապետական կադրերով ապահովվածության տեսակետից Սովետական Հայաստանը Միության մեջ գրավում է առաջնակարգ տեղերից մեկը։ Եթե երկրում մեկ միլիոն բնակչին ընկնում է 70 ճարտարապետ, ապա մեր հանրապետությունում՝ 200։ 1970 թ. հանրապետությունում աշխատող ավելի քան 500 ճարտարապետներից 4-ը ճարտարապետության դոկտորներ էին, 15-ը՝ գիտության թեկնածուներ։ Սովետահայ ճարտարապետներից երեքը՝ Յու. Թամանյանը, Ռ. Իսրայելյանը և Մ. Գրիգորյանը դարձել են պետական մրցանակի դափնեկիրներ։ Ռաֆայել Իսրայելյանը արժանացել է ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետի կոչման։ Ճարտարապետներից 15 հոգի արժանացել են Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետի, 30-ը՝ վաստակավոր շինարարի և 9-ը՝ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման։

Ինչպես տեսնում ենք, սովետական իշխանության տարիներին հանրապետությունում ստեղծվել է ճարտարապետների պատկառելի մի բոկատ, որը խոշոր ներդրում է կա-

տարել Հանրապետության քաղաքաշինության զարգացման, քաղաքների կառուցապատման աշխատանքներում, ինչպես նաև հայ ժողովրդի հարուստ ճարտարապետական ժառանգության հետազոտման բնագավառում:

2. ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՆ

Մեր երկրում բուռն տեմպերով կատարվող քաղաքաշինությունը և քաղաքների հետագա զարգացումը խթանում են շինանյութերի արդյունաբերության և շինարարական ինդուստրիայի զարգացումը, իսկ վերջինս էլ իր հերթին նպաստում է քաղաքաշինության արագացմանը:

Շինարարությունը մեր երկրում դարձել է արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկը: Տարեցտարի ամրապընդվում է նրա բազան: Բարձրանում է շինարարական օբյեկտների տեխնիկական զինվածությունը: Օգտագործվում են ավելի ու ավելի մեծ քանակությամբ գործարանային կոնստրուկցիաներ ու դետալներ, և շինհրապարակները դառնում են մոնտաժային հրապարակներ: Ստեղծվում են նոր, ավելի խնայողաբեր կոնստրուկցիաներ, կիրառվում են շենքերի կառուցման նորանոր մեթոդներ, աշխատանքի կազմակերպման առավել կատարելագործված ձևեր: Շինարարությունում քարին փոխարինում է հավաքովի և միաձույլ երկաթբետոնը, աստիճանաբար ավելանում է ալյումինի, ապակու, պլաստմասսաների և շինանյութերի այլ՝ նոր տեսակների կիրառումը, հիմնովին փոխվում են շինարարական աշխատանքի ձևերը: Շինարարության ծավալման բուռն աճը, նրա տեխնիկական հագեցվածությունը, արտադրական պրոցեսների ինդուստրացման և ավտոմատացման աճը ստեղծում են հնարավոր բոլոր պայմանները, մեր երկրում կատարվող վիթխարի շինարարական աշխատանքների պլանները ժամկետին և բարձր որակով կատարելու համար:

Մեր երկրում քաղաքների առաջացման գլխավոր նա-

խաղրյալն է հումքի բազաներին մոտ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը, իսկ քաղաքաշինության, քաղաքների կառուցապատման գլխավոր պայմանը՝ շինանյութերի արդյունաբերության և շինարարական ինդուստրիայի զարգացումը։

Նախասովետական Հայաստանում այսօրվա հասկացողությամբ շինանյութերի արդյունաբերություն և շինարարական ինդուստրիա գոյություն չուներին։ Կային կրի, աղյուսի և կղմինդրի մանր, պարզունակ տեխնոլոգիայով գործող բազմաթիվ ձեռնարկություններ։ Չնայած բնական բազմատեսակ շինանյութերի անսպառ պաշարների առկայությանը, քաղաքներում և հատկապես գյուղերում տները հիմնականում կառուցում էին աղյուսից։ Քարը, շաղախը, և մյուս շինանյութերը բարձրացվում էին ձեռքով։ Հողային աշխատանքները նույնպես կատարվում էին ձեռքով։

Հայաստանում շինանյութերի արդյունաբերությունը և շինարարական ինդուստրիան ծնունդ են առել ու զարգացել սովետական իշխանության տարիներին՝ արդյունաբերական, հիդրոտեխնիկական, բնակարանային և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության, նոր քաղաքների ու հների կառուցապատման շնորհիվ։

Սովետական Միության մեջ քարային պաշարներով ամենահարուստը մեր հանրապետությունն է, ուր կան գունավոր տուֆի, բազալտի, հրաբխային շլակի, պեմզայի, մարմարի և այլ արժեքավոր շինանյութերի մեծ պաշարներ։ Երկրի տուֆի պաշարների 90 տոկոսը գտնվում է Հայաստանում։ Ըստ հատկությունների դրանք հինգ տուֆատեսակներ են՝ Արթիկի, Երևանի, Բյուրականի, Անիի և ֆելզիտային տիպի։ Մինչև այժմ հանրապետությունում օգտագործվում է ավելի քան 90 հանք։ Աշտարակի շրջանում կենտրոնացված է տուֆի ընդհանուր պաշարների 40 տոկոսը, Թալինի շրջանում՝ 30 տոկոսը, Երևանի շրջակայքում՝ 25 տոկոսը, իսկ Արթիկի և Ախուրյանի շրջաններում՝ 6 տոկոսը[39]։ Մեծ

39 է. Պավլիդովա, Մ. Տեր-Օհանյան, *Մեր օգտակար հանածոները* («Հայաստանի արդյունաբերություն», 1961, № 1, էջ 48)։

պաշարներ ունեցող շրջաններում տուֆը շատ քիչ է արտադրվում և ընդհակառակը, սահմանափակ պաշարներ ունեցող շրջաններում տուֆի արտադրությունը մեծ չափերի է հասնում: Սա մասամբ բացատրվում է նրանով, որ որոշ հանքեր երկաթգծից հեռու են ընկած:

Հանրապետության տուֆ արդյունահանող խոշորագույն ձեռնարկությունը «Արթիկտուֆն» է, որը շահագործման է հանձնվել 1928 թ.: 1930 թ. Լենինական-Արթիկ երկաթգծի կառուցման և քարհատ մեքենաների կիրառման շնորհիվ «Արթիկտուֆը» դարձավ բնական շինանյութեր արտադրող կարևոր կենտրոն, որին բաժին ընկավ հանրապետությունում արտադրվող տուֆի 30 տոկոսը:

Հանրապետության տուֆ արդյունահանող երկրորդ ձեռնարկությունը Երևանի ոչ հանքային շինանյութերի տրեստն է, որը միավորում է Երևանի շրջակայքում գտնվող մոտ 15 հանքավայրեր: Դրանց արտադրանքը 1970 թ. կազմել է 7,2 միլիոն ռուբլի (այդ նույն ժամանակաշրջանում «Արթիկտուֆի» համախառն արտադրանքը կազմել է 3,4 միլիոն ռուբլի): Այս տրեստը շինաքարերով ապահովում է Երևան, Աբովյան, Էջմիածին, Արտաշատ, Արարատ, Հրազդան, Աշտարակ և այլ քաղաքների շինարարությունը: Հանրապետությունում տուֆի հանքավայրեր կան նաև Լենինական, Կիրովական, Հոկտեմբերյան քաղաքներում, Թալին, Թումանյան[40] քաղաքատիպ ավաններում և այլ վայրերում:

Հայաստանի ընդերքում կա նաև մարմար: Հանրապետությունում մարմարի խոշոր հանքավայրեր կան Իջևանում, Խոր-Վիրապում, Արարատում, Մայմեխում և Աղվերան-Արզաբյանդում: Հայաստանի մարմարները օժտված են հիանալի հատկություններով՝ բազմազան գույներով, բնական նախշերով և դրա համար էլ մեծ ճանաչում են գտել մեր երկրում ու նրա սահմաններից դուրս: Հայաստանի մարմարներով են կառուցված Մոսկվայի, Լենինգրադի և Կիևի մետրոների որոշ կայարաններ: «Հայմարմար» կոմբինատի

40 Ս. Մելքումյան, նշվ. աշխ., էջ 71:



Ճարտարապետ Գ. Քոչար



1970 թ. համախառն արտադրանքը կազմել է շուրջ 1,5 միլիոն ռուբլի, 1965 թ. կես միլիոնի դիմաց։

Հայաստանի ընդերքը հարուստ է նաև բազալտով ու դրանիտով։ Բազալտի ամենախոշոր հանքավայրերը գտնվում են Երևանի մոտ՝ Նորքում և Փարաքարում, Կիրովականի մոտ՝ Խնձորուտում, Կամոյի մոտ՝ Նորադուզում, Գորիսի մոտ և այլն։ Հանրապետությունում 1970 թ. արտադրվել է 883 հազար խորանարդ մետր բազալտ[41]։

Գրանիտը գտնվում է Մեղրու, Նոյեմբերյանի, Սիսիանի, Հրազդանի, Ղափանի, Ապարանի, Թումանյանի և այլ վայրերի հանքավայրերում։ Այն օգտագործվում է մեծ մասամբ Երևանի և հանրապետության մյուս քաղաքների փողոցները սալահատակելու և հուշարձաններ կառուցելու համար։

Սովետական Միության մեջ պեմզայի պաշարների հիմնական մասը գտնվում է Հայաստանում՝ Հրազդանի և Կոտայքի շրջաններում, Անիում և Արթիկում։ Հայաստանում արդյունահանվող պեմզայի 70 տոկոսը տալիս է Անիի հանքավայրը, որի տարեկան արտադրանքը հասնում է մեկ միլիոն խորանարդ մետրի։ Պեմզան օգտագործվում է ցեմենտի, ապակու, քիմիական նյութերի արտադրության մեջ, իսկ շինարարությունում՝ իբրև լցանյութ։

Հայկական ՍՍՀ-ն հարուստ է նաև պեռլիտներով, որոնք լայն ճանաչում են գտել ոչ միայն ՍՍՀՄ-ում, այլև հարմաշխարհային շուկայում։ Դրա համար էլ Արագածի պեռլիտի ձեռնարկությունը ունի զարգացման մեծ հեռանկարներ։

Ինչպես տեսնում ենք, հանրապետությունում մեծ քանակությամբ բանկարժեք շինանյութերի՝ տուֆի, գրանիտի, մարմարի, բազալտի, ցեմենտի, գաջի, պեմզայի և այլ նյութերի առկայությունը, գործարանների ու ֆաբրիկաների և քաղաքների զանգվածային կառուցապատումը, էներգետիկ ու հիդրոտեխնիկական կառույցների շինարարությունը լայն հեռանկարներ են բացում շինանյութերի արդյունաբե-

41 Նույն տեղում, էջ 98։

բության և շինարարական ինդուստրիայի զարգացման համար։

Ժողովրդական տնտեսության և քաղաքաշինության պահանջները բավարարելու նպատակով հանրապետությունում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին շինանյութերի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ։ 1947 թ. կազմակերպվեց Հայկական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերության մինիստրությունը, որից հետո առավել արագ տեմպերով զարգացավ շինարարական արդյունաբերությունը։ Բացվեցին պեմզայի, տուֆի, բազալտի, մարմարի նոր հանքավայրեր, ընդարձակվեցին գործող հանքավայրերի կարողությունները։

Ներկայումս հանրապետության բնական շինանյութեր արտադրող առավել խոշոր ձեռնարկություններն են «Արթիկտուֆը», «Անիպեմզան», Երևանի ոչ հանքային շինանյութերի տրեստը, Լենինականի, Հոկտեմբերյանի և Թալինի քարհանք վարչությունները, Կիրովականի շինանյութերի կոմբինատը, «Անիտուֆը», Պեմզաշենի շինանյութերի կոմբինատը, Ջանգեզուրի քարհանք վարչությունը, «Արագած պեռլիտը», ինչպես նաև Ջաջուռի կրի, Երևանի «Շինանյութ» գործարանները, «Հայմարմար», կերամիկական իրերի, տեղական շինանյութերի կոմբինատները[42] և այլն։ Վերոհիշյալ ձեռնարկությունները շինարարներին տալիս են ցեմենտ, գաջ, որմնաքար, ապրոցեմենտյա ծածկաթերթեր, խողովակներ, տուֆաբլոկներ, երեսպատման սալիկներ, պեռլիտ, մարմարե սալիկներ և այլ շինանյութեր։

Մինչև 1970 թ. Հայկական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերության ամենախոշոր ձեռնարկությունը Արարատի ցեմենտշիֆերի գործարանն էր, որը շահագործման է հանձնվել 1933 թ.։ Գործարանի արտադրամասերը տարեցտարի ընդարձակվել են և դարձել առանձին գործարաններ։ Արարատի ցեմենտշիֆերի կոմբինատը 1970 թ. երկրին տվել է 680 հազար տոննա ցեմենտ, 11 հազար տոննա կիր, 79,8 մի-

42 Նույն տեղում, էջ 21—22։

չիոն ազբեստաշիֆեր, 520 հազար տոննա կրաքար, 712 հազար կիլոմետր երկարությամբ ազբեստախողովակ և այլն[43]։ Կոմբինատի կառուցման և հետագա զարգացման կապակցությամբ Արարատը վեր է ածվել քաղաքատիպ ավանի և ապա՝ քաղաքի, դառնալով Հանրապետության շինանյութերի արդյունաբերության խոշոր կենտրոնը։

Հանրապետության շինանյութերի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավը 1940 թ. եթե ընդունենք հարյուր տոկոս, ապա այն 1950 թ. կազմել է 330, 1960 թ.՝ 1854, իսկ 1970 թ.՝ 5339 տոկոս[44]։ Հանրապետության շինանյութերի արդյունաբերության համախառն արտադրանքը իր ամենօրյա եռ է մնում միայն մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերությունից։

Սովետական Հայաստանը Վրաստանին, Ադրբեջանին և եղբայրական մյուս հանրապետություններին տալիս է հայկական բազմերանգ տուֆեր, մարմար, պեմզա, հրաբխային խարամներ, անտեզիտային ալյուր, պեռլիտ, ազբեստացեմենտի խողովակներ, ազբոշիֆեր, հրակայուն ապրանք և այլ տեսակի շինանյութեր։

Չնայած տոկոս բնական շինանյութերի անսպառ պաշարներին, Սովետական Հայաստանը միաժամանակ ներմուծում էր տարբեր տեսակի շինանյութեր, առաջին հերթին՝ ցեմենտ (մինչև 1970 թ.)։ Ցեմենտն այն շինանյութն է, առանց որի անհնար է ժամանակակից ինդուստրիալ մեթոդներով հզոր շինարարություն ծավալել։ Հրազդանի ցեմենտի գործարանը լրիվ շահագործման հանձնելուց հետո, Հայաստանը ոչ միայն ցեմենտ չի ներմուծում, այլև ցեմենտ է մատակարարում մեր երկրի տնտեսական մյուս շրջաններին։

Սովետական Հայաստանը եղբայրական մյուս հանրապետություններից ստանում է նաև փափուկ ծածկ, գրանիտ,

43 Նույն տեղում, էջ 154։

44 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 56։

և տարբեր նշանակության ապակիներ, ապակե տարաներ, ինչպես նաև հրակայուն աղյուս, մեծ քանակությամբ ոչ հանքային նյութեր, կավիճ, մարմարե ալյուր կամ փոշի, կվարցային ու այլ տեսակների ավազ և այլն։

Սովետական Հայաստանում շինանյութերի արդյունաբերությունը և շինարարական ինդուստրիան հետպատերազմյան տարիներին խոշոր վերելք ապրեցին։ Քաղաքների կառուցապատման պահանջները բավարարելու նպատակով հանրապետությունում կառուցվեցին շինանյութերի արդյունաբերության նոր ձեռնարկություններ, յուրացվեց շինանյութերի արտադրության առաջավոր տեխնոլոգիան։ Շինարարական օբյեկտները հագեցվեցին մեծ քանակությամբ շինարարական մեքենաներով ու մեխանիզմներով։ 1970 թ. հանրապետության շինարարական օբյեկտներն ունեցել են բոլոր տիպի էքսկավատորներ՝ 1198 հատ, սկրեպերներ՝ 122 հատ, բուլդոզերներ՝ 1116 հատ, աշտարակային կռունկներ՝ 758, ավտոմոբիլային կռունկներ՝ 746, ինքնաթափիչներ՝ 106 հատ[45]։ Այս սարքավորումների շնորհիվ մեքենայացված աշխատանքի ծավալը տարեցտարի մեծանում է։ Մեր օրերում շինարարական ինդուստրիայի զարգացման գործում վճռական դեր են խաղում երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաներն ու դետալները, որոնք հնարավորություն են տալիս անհամեմատ կարճ ժամանակի ընթացքում կառուցել բնակելի և հասարակական շենքեր, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկություններ։

1954 թ. օգոստոսի 19-ին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների սովետն ընդունեցին «Շինարարության համար հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների և շինվածքների արտադրության զարգացման մասին» որոշումը։ Այդ որոշման կենսագործման կապակցությամբ Հայաստանում 1955—1956 թթ. սկսվեց հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներ պատրաստող ձեռնարկությունների կառուցումը Երևանում, Լենինականում, Դիլիջանում, Կիրո-

45 «Армения в семье народов СССР», стр. 149.

վաճանում, Հրազդանում, Ջերմուկում, Սևանում, Քաջարանում և Ախթալայում։ Վեցերորդ հնգամյակի տարիներին կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին Երևանի № 1, 2, 3 հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների ու դետալների գործարանները, ատաղձագործական կոմբինատը, № 1, 2, 3, 6, 7 շինարարական տրեստների արտադրական կոմբինատներն ու այլ ձեռնարկություններ, որոնք տարեցտարի ավելացրին իրենց արտադրողականությունը։ Աճել է այդ կոնստրուկցիաների արտադրանքն ու կիրառումը շինարարության մեջ։ Դրա շնորհիվ բարձրացել է շինարարական կազմակերպությունների տեխնիկական բազան։

Սովետական Հայաստանը դարձել է զարգացած շինանյութերի արդյունաբերության և շինարարական ինդուստրիայի հանրապետություն։ Այդ են վկայում մեր հանրապետության բազմաթիվ կառույցները։ Պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների ու կազմակերպությունների կապիտալ ներդրումները 1921—1928 թթ. կազմել են 3 միլիոն ռուբլի, որից 2 միլիոնը հատկացվել է արդյունաբերության մեջ շինմոնտաժային աշխատանքներին։ Առաջին հնգամյակում այդ ներդրումները կազմել են 18 միլիոն ռուբլի, որից շինմոնտաժային աշխատանքների համար հատկացվել է 16 միլիոն ռուբլի, իսկ 8-րդ հնգամյակում՝ 1230 միլիոն ռուբլի, որից 693 միլիոնը՝ շինմոնտաժային աշխատանքների համար[46]։ Կապիտալ ներդրումները բնակչության մեկ շնչի հաշվով 1940 թ. կազմել են 35 ռուբլի, իսկ 1970 թ. հասել են 312 ռուբլու[47]։ Շինարարական աշխատանքների ծավալի մեծացման հետ հանրապետությունում տարեցտարի ավելացել է շինարարական կազմակերպությունների քանակը։ Հայկական ՍՍՀ-ում սկզբնական կապալառու շինարարական և մոնտաժային կազմակերպությունների քանակը 1960 թ. եղել է 82, իսկ 1970 թ.՝ 255[48]։

Հանրապետությունում 1955 թ. արտադրվել են 18,8,

---

46 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 107.

47 Նույն տեղում, էջ 109։

48 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 189։

իսկ 1970 թ.՝ 780,4 հազար խորանարդ մետր երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաներ և իրեր[49]: *Սակայն այդ կարևոր արտադրանքի մակարդակը չի բավարարում հանրապետության քաղաքաշինության օրեցօր աճող պահանջները:*

Շինարարական ինդուստրիայի համար հանրապետության պետական ու կոոպերատիվ կազմակերպությունները 1940 թ. ներդրել էին 0,3 միլիոն ռուբլի, 1950 թ.՝ 1, 1960 թ.՝ 8, իսկ 1970 թ.՝ 36 միլիոն ռուբլի[50], *համադրելի գներով: Այդ գումարների ներդրման շնորհիվ է, որ հանրապետության շինարարական հրապարակները հագեցված են հզոր տեխնիկայով: Շինարարական ձեռնարկություններում տարեցտարի ավելանում է հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների, տուֆի, ցեմենտի, ավազի, պեմզայի և լցանյութերի և այլ նյութերի արտադրությունը: Շինանյութերի արդյունաբերությունը արդեն ի վիճակի է բավարարելու հանրապետության կառույցների պահանջները: Սակայն շինարարների մեղքով դեռևս ձգձգվում է արդյունաբերական շատ ձեռնարկությունների կառուցումը: Դանդաղ են կառուցվում բնակելի տներն ու կուլտուր-կենցաղային օբյեկտները: Խախտվում են շինարարական աշխատանքների նորմաները, շենքերը շահագործման են հանձնվում լուրջ թերություններով:*

ՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1955 թ. օգոստոսին որոշում ընդունեցին «Շինարարության հետագա ինդուստրացման, որակի բարելավման և արժեքի իջեցման միջոցառումների մասին»: ՍՍՀՄ Մինիստրների սովետն ընդունեց մի շարք որոշումներ՝ շինարարական կոնստրուկցիաների, դետալների, շինարարական մշտական կադրերի ստեղծման ու նրանց որակավորման, նախագծային կազմակերպությունների աշխատանքի բարելավման և այլ հարցերի վերաբերյալ:

---

49 *Նույն տեղում, էջ 178:*

50 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 106

Շարունակ ավելանում է շինարարությունում աշխատող բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների թիվը։ Եթե 1960 թ. Հանրապետության շինարարական հրապարակներում աշխատել է 55,9 հազար մարդ, այդ թվում բանվորներ՝ 44,7 հազար, ինժեներատեխնիկական աշխատողներ՝ 3,6 հազար[51], ապա 1970 թ. այդ թիվը հասել է 111,7 հազարի, որից բանվորներ՝ 76,5, իսկ ինժեներատեխնիկական աշխատողներ՝ 9,1 հազար[52]։ Շինարարության ինդուստրացման և մեխանիզացիայի արագ աճն արդյունք է կադրերի տեխնիկական մակարդակի բարձրացման, աշխատանքի կազմակերպման և արտադրողականության բարձրացման։

Հանրապետության տարբեր քաղաքներում երկար տարիներ շինարարական աշխատանքները ղեկավարել և բեղմնավոր աշխատանք են կատարել շինարար-ինժեներներ Մուշեղ Մելիք-Հայկազյանը, Արտաշես Ղուլաբյանը, Գուրգեն Կանեցյանը, Սերգեյ Շահնազարյանը, Նիկիտա Գյանջունցյանը, Գրիշա Մելիքյանը, հին բոլշևիկներ Քրիստափոր Ավետովը, Աշոտ Մելիքջանյանը և ուրիշներ։

Հանրապետության քաղաքաշինության բնագավառում երկարամյա աշխատանք են կատարել նաև Ավետիք Աբովյանը, Հրանտ Շահնազարյանը, Ավետիք Աղեկյանը, Ավետիք Զուրաբյանը, Արտավազդ Ավագյանը, Հայկազ Ղազարյանը, Վասիլ Սևֆիլյանը, Պետրոս Թումանյանը, Մարգար Հարությունյանը և ուրիշները։

Հանրապետությունում կատարված շինարարական աշխատանքները ղեկավարել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից շինարարական տրեստը, որի կառավարիչներն են եղել հին բոլշևիկներ Վաղինակ Այվազյանը, Սերգեյ Մարգարյանը և ապա Լևոն Երզնկյանը։

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության, հատկապես շինանյութերի և շինարարական արդյու-

51 «Труд в Армянской ССР» (стат. сборник), Ереван, 1970, стр. 61.

52 «Народное хозяйство в Армянской ССР в 1970 году», стр. 111.

նաբերության զարգացմանը և հանրապետության քաղաքների կառուցապատմանն օգնելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1960 թ. սեպտեմբերի 29-ի որոշմամբ 1961 թ. Հայաստանում կազմակերպվեց աշխարհում միակ քարի և սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտը[53]: Չնայած իր կարճատև գոյությանը, ինստիտուտը լայն ճանաչում է ձեռք բերել Սովետական Միության մեջ: Այս ինստիտուտը համարվում է քարային շինանյութերի արդյունահանման, մշակման և կիրառման գծով երկրի միակ կենտրոնը: Քարի և սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտը զբաղվում է բնական քարանյութերի և սիլիկատային հումքի հատկությունների ուսումնասիրությամբ, մշակում է նոր նյութերի և շինվածքների պատրաստման արդյունավետ տեխնիկա և տեխնոլոգիա: Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ստեղծվել է քարի զարգացող արդյունաբերություն և ժամանակակից քարհատ մեքենաների արտադրություն: Այդ բնագավառում գիտատեխնիկական միտքը մեր հանրապետությունում խոշոր վերելք է ապրել: Ինստիտուտում լուրջ աշխատանքներ են կատարվել քարի մշակման արդյունավետ եղանակների ուսումնասիրության, մեքենայացման ու ավտոմատացման ուղղությամբ: Ակադեմիկոս Մ. Կասյանի ղեկավարությամբ ստեղծվել են մի շարք քարամշակիչ հաստոցներ, որոնք լայն կիրառություն են գտել արդյունաբերության և շինարարության մեջ: Ժամանակակից տեխնիկան հնարավորություն է տվել նվազեցնելու քարի արդյունահանման վրա կատարվող աշխատանքի արժեքը և այն ավելի մեծ չափերով կիրառելու շինարարության մեջ: Առանձնապես արդյունավետ են քարի հանույթի և մշակման, մնացուկների օգտագործման, երեսպատման նոր նյութերի ստեղծման աշխատանքները: Ինստիտուտի կոլեկտիվին հաջողվել է տեխնոլոգիական շատ պարզ միջոցներով ստանալ գեղազարդ բնական քարի տեսք ունեցող նյութեր, որոնք մի քանի անգամ իջեցնում են երեսպատման արժեքը:

53 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 113, ց. 50, գ. 395, թ. 21—22:

Ինստիտուտի կոլեկտիվը բաղկացած է շուրջ 300 հոգուց, որոնցից երկուսը գիտության դոկտորներ են (Հ. Տեր-Ազարև, Ջ. Հացագործյան), իսկ 30-ը՝ գիտության թեկնածուներ։ Ինստիտուտի կոլեկտիվի ստեղծագործական մեծ ուժերի վկայությունն է ՍՍՀՄ Մինիստրների սովետի գյուտարարների ու հայտնագործությունների պետական կոմիտեի կողմից մի քանի տարվա ընթացքում ստացված մոտ 100 հեղինակային վկայականները։ Կոլեկտիվի արած առաջարկությունների մեծ մասը ներդրվել է արտադրության մեջ։ Դրանով ինստիտուտը օգնել է շինանյութերի արդյունաբերության զարգացմանը, քաղաքաշինությանն ու քաղաքների կառուցապատմանը։ Նկատի ունենալով ինստիտուտի զարգացման հեռանկարները, Երևանում աղահանքի մոտ կառուցվում են նրա արտադրական համալիրը, փորձնական գործարանի, փորձնական արհեստանոցների շենքերը, որի համար հատկացված է երեք միլիոն ռուբլի գումար։

Լեռնային ինժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու Մամիկոն Հովհաննիսյանը լինելով այդ ինստիտուտի կազմակերպիչներից մեկը, մինչև իր մահը գլխավորել է այդ ինստիտուտի աշխատանքները։ Մ. Հովհաննիսյանը մեծ ծառայություն ունի հանրապետության շինանյութերի արդյունաբերության զարգացման բնագավառում։ Նա երկար տարիներ ոչ միայն այդ բնագավառի համարձակ, ձեռներեց ղեկավար աշխատող է եղել, այլև մի շարք գիտական մենագրությունների հեղինակ է։

Այսպիսով, շինանյութերի արդյունաբերությունն ու շինարարական ինդուստրիան հանդիսանալով ժողովրդական տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը և ունենալով որակյալ բանվորական և ինժեներատեխնիկական կադրեր, նյութական ու դրամական խոշոր միջոցներ, հաջողությամբ անհրաժեշտ շինարարական արտադրություն է կազմակերպում՝ բուռն թափով աճող սոցիալիստական քաղաքների կառուցապատումն ապահովելու համար։

3. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄՆ ՈՒ ՋՐԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Կոմունիստական հասարակությունը, վերացնելով ամեն մի շահագործում, վերջ է դնում նաև բնության ու մարդու միջև գոյություն ունեցող հակասություններին: Կոմունիստական հասարակությունը խնամում է բնական ուժերը, պահպանում, հարստացնում է բնությունը և այն դարձնում մարդու բարեկեցության լիառատ շտեմարան, ֆիզիկական ու հոգեկան հանգստի անսպառ աղբյուր: Բնության հրաշալիքներից մեկն է անտառը, որը տնտեսության զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի: Անտառանյութի վերամշակումից ստացվում են տասնյակ հազար տեսակի առարկաներ ու նյութեր, որոնք օգտագործվում են ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում: Չափազանց մեծ է նաև անտառի հողապաշտպան, առողջապահական և գեղագիտական նշանակությունը:

Սովետական Միությունում կենտրոնացված են աշխարհում ամենամեծ անտառային պաշարները: Մեր երկրի անտառային ֆոնդի ընդհանուր տարածությունը կազմում է 1.233.439 հազար հեկտար կամ ընդհանուր հողային տարածության 33,4 տոկոսը[54]: Սովետական Հայաստանը Միության ամենասակավ անտառ ունեցող հանրապետություններից մեկն է: Անտառային ֆոնդի ընդհանուր տարածությունը 1966 թ. հանրապետությունում կազմում էր 411.3 հազար հեկտար[55]: Հանրապետության անտառապատվածությունը կազմում է 9,7 տոկոս, մինչդեռ ՌՍՖՍՀ-ում այն կազմում է 41,4, Վրաստանում՝ 37,3 իսկ Ադրբեջանում՝ 10,8 տոկոս:

Բարենպաստ կլիմայական պայմաններ ունենալու համար յուրաքանչյուր երկրի անտառապատվածությունը ամե-

---

54 Государственный комитет лесного хозяйства Совета Министров СССР. «Лесной фонд СССР», (по учету на 1/I—66 г.), М., 1968, стр. 22.

55 Նույն տեղում:

նանվազագույնը պետք է կազմի 25 տոկոս։ Այսպիսով, մեր հանրապետության պայմաններում անտառների պահպանությունը առանձնահատուկ նշանակություն է ստանում։

Անտառատնկման աշխատանքները հանրապետությունում սկսվել են դեռևս 1927 թ.՝ Կիրովականի և Ստեփանավանի անտառատնտեսություններում։

Անտառատնկման մեծ աշխատանքներ են կատարված Լենինականում և Կիրովականում, Ստեփանավանի, Հրազդանի, Սպիտակի, Շամշադինի շրջաններում, Ջերմուկում, Լուսավանում, Հանքավանում, Արզնի առողջարանի և Ապարանի ջրամբարի շրջակայքում։

Վերջին տասնամյակների ընթացքում հանրապետությունում ստեղծվել են 50 հազար հեկտար արհեստական անտառներ, իսկ Սևանի ջրերից ազատված հողագրունտներում տնկվել են մի քանի հազար հեկտար պաշտպանական տնկուրկներ[56]։

Անտառատնկման խոշոր աշխատանքներ է կատարել Աբովյանի անտառտնտեսության կոլեկտիվը, անտառապատելով Երևանի շրջակայքը։ Ավարտվում են Երևանի փոքր գոտու անտառապատման աշխատանքները։ Այժմ ստեղծվում է մեծ կանաչ գոտին՝ մոտ 6 հազար հեկտար տարածությամբ։

Սովետական իշխանության տարիներին Երևանում, Լենինականում, Կիրովականում, Սևանում ու Գյուլագարակում ստեղծվել են բուսաբանական այգիներ և դենդրոպարկեր, որոնք խոշոր դեր են կատարել Երևանի և Հանրապետության մյուս քաղաքների ու բնակավայրերի ծառատնկման ու կանաչապատման գործում։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բուսաբանական այգին կազմակերպվել է 1935 թ.՝ հարյուր հեկտար տարածության վրա։ Այգու մի կողմում փարթամորեն աճել է անտառապուրակը, որը հիմնականում տեղավորված է 50 մետր բարձրությամբ բլրի վրա և զբաղեցնում է 30

56 «Սովետական Հայաստան», 15 սեպտեմբերի 1970։

հեկտար տարածություն։ Այստեղ աճեցրած ծառերի և թփերի մի շարք տեսակներ Հայաստան են բերվել տարբեր վայրերից։ Առանձնապես արժեքավոր է դենդրոպարկը, որտեղ աճում են հազարից ավելի ծառերի ու թփերի տեսակներ։

Դենդրոպարկը, որը ձևավորված է աշխարհագրական սկզբունքով, ընդգրկում է Կովկասի, Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Հեռավոր Արևելքի ու Չինաստանի բուսականության բաժինները։

Բուսաբանական այգու ջերմոցներում ու ջերմատներում աճեցվում են Աֆրիկայից, Հնդկաստանից, Ավստրալիայից, Նոր Զելանդիայից և Հարավային Ամերիկայից բերված արևադարձային ու մերձարևադարձային բազմատեսակ բույսեր։

Բուսաբանական այգու ծաղկաբուծական բաժնում փորձարկվել են մոտ 4 հազար տեսակի ծաղկային կուլտուրաներ, որոնցից լավագույններն ընտրվում և աճեցվում են հանրապետությունում։

Երևանի բուսաբանական այգու կոլեկտիվը սերտ կապերի մեջ է Սովետական Միության և արտասահմանյան մոտ 50 երկրների 400 բուսաբանական այգիների և այլ հիմնարկների հետ[57]։ Ամեն տարի այդ երկրներն են ուղարկվում և ստացվում 5—6 հազար բուսանմուշներ։ Երևանի բուսաբանական այգին դարձել է միութենական առաջնակարգ այգիներից և հանրապետության լավագույն տեսարժան վայրերից մեկը։

Երևանի բուսաբանական այգու կազմակերպիչն ու հիմնադիրն է այժմ կենսաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ենոք Ղազարյանը։ Այգու հիմնադրման օրերից դենդրոլոգիայի բաժնի վարիչ է աշխատում կենսաբանական գիտությունների թեկնածու Հակոբ Մկրտչյանը, իսկ այգեպործ-գյուղատնտես՝ Յոլակ Դավթյանը։

Բուսաբանական այգու բուսականության բաժինը կազ-

57 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ ԳԱ բուսաբանական այգու համապատասխան բաժնից։

մակերպել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բղխակից-անդամ Հարություն Մաղաքյանը, իսկ այնուհետև այն ձևավորել ու հարստացրել են գիտության թեկնածուներ Աղասի Հախվերդյանը և Նինա Միրզոյանը։ Երկար տարիներ բուսաբանական այգում բեղմնավոր աշխատանք է կատարել ու շարունակում է կատարել կենսաբանական գիտությունների դոկտոր Ջավեն Ասատվածատրյանը, որը ստեղծել է ծաղիկների նոր տեսակներ։ Երևանի բուսաբանական այգու զարգացման գործում իրենց երախտիքն ունեն բազմավաստակ գիտնականներ Արմեն Թախտաջյանը, ակադեմիկոս Վահան Ղազարյանը, պրոֆեսոր Գևորգի Յարոշենկոն, ինչպես նաև Արարատ Սբորշչիկյանը, Արտաշես Խրիմյանը, Լուարսաբ Մախաթաձեն և ուրիշներ։

Կիրովականի դենդրոպարկը հիմնադրվել է 1934 թ., իսկ բուսաբանական այգին՝ 1936 թ., կենսաբանական գիտությունների դոկտորներ Գ. Յարոշենկոյի, Լ. Մախաթաձեի և Պ. Յարոշենկոյի ու այգեգործ Լ. Աբելյանի կողմից[58]։

Դենդրոպարկն ու բուսաբանական այգին գտնվում են Վանաձորի կիրճում, ծովի մակերևույթից 1400 մետր բարձրության վրա։ Պարկում երեք հեկտար տարածության վրա աճեցված են մոտ երկու հարյուր տեսակի ծառեր ու թփեր, որոնց մեծ մասը բերված են այլ երկրներից։ Կիրովականի բուսաբանական այգին ևս բուսականության բազմազանությամբ ու գեղեցկությամբ հանրապետության տեսարժան վայրերից մեկն է։ Այգին առանձնապես հարուստ է գևորգինաների տեսակներով, որոնց մի մասը բերվել է այլ վայրերից, իսկ մի զգալի մասն էլ ստեղծվել է տեղում։ Այստեղ լավ աճում են հիմալայան մայրին, կապտագորշ եղևնին, սիբիրյան և կովկասյան բալասանին, մանջուրական ընկուզենին, միատերև հացենին, կեչին, բարձրլեռնային թխկին, ղրիմյան սոճին, կանադական բունդուկը, արծաթագույն թխկին, ամուրական թավշածառը և շատ ուրիշ ծառատեսակներ[59]։

58 Կ. Կոզմոյան, Կիրովական, էջ 186—187։

59 «Հայաստանի բնություն», 1962, № 1, էջ 17։


Հանրապետության լավագույն պուրակներից է Սևանա-վանի շրջանի Գյուլագարակի դենդրոպարկը, որը կոչվում է «Սոսնյակի»։ Այն հիմնադրվել է դեռևս նախապատերազմյան տարիներին, շնորհալի անտառաբույծ, լեհ ժողովրդի զավակ էդմոնդ Լեոնովիչի կողմից։ Է. Լեոնովիչը մի քանի հեկտար տարածության վրա ստեղծել է արտակարգ գեղեցիկ մի պուրակ։ Գյուլագարակի դենդրոպարկն իր բազմազան բուսականությամբ և ձևավորումով ևս չի մնում Միության նշանավոր դենդրոպարկերից։ Նրա շրջակայքում է գտնվում Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության մանկական առողջարանի շենքերի համալիրը։

Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին է գտնվում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի բուսաբանական այգու բաժանմունքը, որը կազմակերպվել է 1944 թ.։

Սևանի բուսաբանական այգու հիմնական խնդիրն է անտառային դեկորատիվ ծառաթփային տեսակների ընտրությունը։ Ներկայումս նրա ծառերի ու թփերի փորձարկման հողամասում աճում են 450 տեսակի ծառեր ու թփեր։ Այս տեղ ծառերի ու թփերի պիտանիությունը որոշող հիմնական հատկանիշներն են ցրտադիմացկունությունն ու չորադիմացկունությունը[60]։ Սևանի ավազանում անտառային կուլտուրաներ աճեցնելու բնագավառում բեղմնավոր աշխատանք են կատարել կենսաբանական գիտությունների թեկնածուներ Պայքար Խուրշուդյանը, Տիգրան Զուբարյանը և Վազգեն Աղարյանը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի բուսաբանական այգին (Կիրովականի և Սևանի լեռնային բաժանմունքներով) հանրապետության գիտահետազոտական միակ հիմնարկն է, որտեղ լուծվում են գեղազարդային բույսերի ներմուծման և կանաչ շինարարության վերաբերյալ գիտական գործնական բազմապիսի

60 Վ. Ազարյան, *Սևանի ավազանի բնակավայրերի կանաչապատման հարցի շուրջը* («Հայաստանի բնություն», 1966, № 5, էջ 9)։



Եղեռնի զոհերի հուշարձանը Միծեռնակաբերդի լբռսայգում

հարցեր։ Այդ այգիները խոշոր դեր են կատարել ու շարունակում են կատարել Հանրապետության քաղաքների ու բնակավայրերի ծառատնկման և կանաչապատման գործում։

Կանաչը զեղեցկություն ու շուք է տալիս Հանրապետության քաղաքներին, մաքուր է պահում օդը, կտրում է փոշիաբեր քամիների ճանապարհը, մեղմացնում է ամռուկը, իջեցնում չերմաստիճանը։ Ծառերը, կանաչն ու ծաղիկները առաջացնում են ուրախ տրամադրություն։

Ահա թե ինչու, մեր երկրում մեծ ուշադրություն է դարձվում ծառատնկման, ծաղկազարդման և կանաչապատման աշխատանքներին։

Սովետական իշխանության առաջին իսկ տարիներից Հանրապետության քաղաքներում, հատկապես Երևանում, ծառատնկման ու կանաչապատման ուղղությամբ, խոշոր աշխատանքներ կատարվեցին։

Երևանի, Քանաքեռի սարալանջերին, Նորքում և Սարիթաղում ստեղծվեցին անտառային զանգվածներ, հիմք դրվեցին քաղաքի զբոսայգիներին, ստեղծվեցին մանկարանային տնտեսություններ, չերմոցներ ու ծաղկանոցներ։ Այդ նպատակով որոշակի աշխատանքներ կատարվեցին ոռոգման ցանցի ընդլայնման ուղղությամբ։

Երևանի կանաչապատումն ու ծաղկապատումը մեծ վերելք ունեցավ նախապատերազմյան և մասնավորապես հետպատերազմյան տարիներին։ Ստեղծվեցին Երևանի զբոսայգիներն ու պուրակները, Երևանի կանաչ գոտին, Երևանյան լիճը և ջրային այլ մակերեսները։

Ա. Թամանյանի կազմած հատակագծով Երևանում և նրա շրջակայքում կատարվեցին կանաչապատման խոշոր աշխատանքներ՝ Երևանն այգի-քաղաք դարձնելու համար։

Երևանը շրջապատված է մոտ 1500 հեկտար տարածություն ունեցող անտառների ու այգիների կանաչ գոտիով, որոնք տարածված են քաղաքի շրջակայքի թեք սարահարթերին ու գառիթափերին։ Քաղաքի գլխավոր հատակագծով կանաչապատումը կատարվում է երեք հիմնական գոտիներով։

Առաջին կանաչ գոտու մեջ է մտնում զբոսայգու ձևով քաղաքի կենտրոնական մասում՝ Մոսկովյան և Մռավյան փողոցների միջև ընկած կանաչ հատվածը, որն ունենալու է 100—150 մետր լայնություն։ Այս գոտու մեջ մտնում են նաև Պուշկինի անվան, Երկաթգծի, Կիրովի և 26 կոմիսարների անվան զբոսայգիները, ինչպես նաև Հանրապետական մարզադաշտի շուրջն ընկած սպորտայգին։

Երկրորդ կանաչ գոտին սկսվում է քաղաքի հյուսիսային մասից։ Այն «Հաղթանակ» զբոսայգուց անցնում է 26 կոմիսարների անվան շրջանի կենտրոնով մինչև Գետառ, շարունակվում է Նորքի արևելյան լանջերով դեպի Կոմերիտմիության զբոսայգին։ Այնուհետև այդ գոտին լայն շերտով շարունակվելու է Նոր Արեշի գլխավոր փողոցով։ Իր մեջ առնելով քաղաքի արդյունաբերական շրջանի կանաչ տարածությունները, այն մոտենալու է Հրազդան գետին և շարունակվելով նրա աջ ափով՝ ձուլվելու է Դալմայի այգիներին ու Միծհոնակաբերդի բարձունքի կանաչ տարածություններին։

Երրորդ կանաչ գոտին քաղաքը շրջափակում է կանաչ ու լայն մեծ գոտիով, նրա նախագծային սահմանների եզրերից, այսինքն՝ Աբովյանի շրջանի Արզնի գյուղից օղակ կազմելով լայն շերտով ձգվում է մինչև հարավ-արևելքում գտնվող Ողջաբերդ և Գեղադիր գյուղերը։ Բացի այս երեք գոտիներից, քաղաքի տարբեր մասերում ստեղծված են մի շարք զբոսայգիներ, պուրակներ, հանգստի և կուլտուրայի պարկեր, մոտ 550 հեկտար մակերեսով[61]։ Դրանց քանակը և բոնած տարածությունը տարեցտարի ավելանում է։

Մինչև 1940 թ. վերակառուցվեցին 26 կոմիսարների և Կիրովի անվան մանկական այգիները, հարավում՝ արդյունաբերական կենտրոնում, 1937—1939 թթ. ստեղծվեց Կոմիտասի անվան զբոսայգին (ճարտարապետ Ս. Կարապետյան), որը թաղված են հայ մշակույթի ականավոր գործիչ-

61 Երևանի կանաչ գոտիների մասին տվյալները վերցված են աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործկոմի գլխավոր դենդրոլոգից։

ներ Կոմիտասը, Ա. Թամանյանը, Ա. Խահակյանը, Հ. Ներսիսյանը, Մ. Սարյանը և ուրիշներ։ 1934—1935 ԹԹ. ուսանողական բաղամասում ստեղծվեցին Ղ. Ղուկասյանի և ապա Կիրովի անվան մանկական զբոսայգիները[62], որոնք դարձան ուսանողների և մանուկների սիրելի վայրերից մեկը։ Երևանում իրար հետևից ստեղծվեցին բազմաթիվ խոշոր զբոսայգիներ, այդ թվում՝ 16 հեկտար տարածությամբ Կոմերիտմիության անվան զբոսայգին (ճարտարապետներ Ռ. Իսրայելյան, Լ. Բաբայան)։ 950—1952 ԹԹ. Հրազդանի աջ ափին՝ Միծհոնակաբերդում, 132 հեկտար տարածության վրա ստեղծվեց խոշոր պարկ, որի կենտրոնում բարձրացել է 1915 թ. եղեռնի զոհերի հուշարձանը (ճարտարապետներ Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան և քանդակագործ Հ. Խաչատրյան)[63]։

Քանաքեռի սարահարթում 110 հեկտար տարածության վրա ստեղծվեց «Հաղթանակ» զբոսայգին։ Այստեղ 1967 թ. դրվեց «Մայր Հայաստան» մոնումենտը[64] (քանդակագործ Ա. Հարությունյան, պատվանդանի հեղինակ Ռ. Իսրայելյան)։ Այդ զբոսայգում գտնվում է Անհայտ զինվորի գերեզմանը։ Քաղաքի տարբեր մասերում ստեղծված պուրակներում, ինչպես նաև օղակաձև այգու տարբեր մասերում դրված են Խ. Աբովյանի, Ստ. Շահումյանի, Մ. Նալբանդյանի, Ն. Ստեփանյանի, Ա. Խահակյանի, Ղ. Ղուկասյանի արձանները և բազմաթիվ այլ կոթողներ։

Քանաքեռ տանող բարձունքը մինչև 1940-ական թվականները ամայի ու քարքարոտ էր, և հյուսիսային ուժեղ քամիների ժամանակ քաղաքը ծածկվում էր փոշու ամպով։ Այդ բարձունքի և Երևանի շրջակայքի անտառապատման գործում խոշոր աշխատանքներ են կատարել անտառաբույծներ Զ. Հախնազարյանը, Հ. Սմբատյանը, Կ. Պողոսյանը և Ս. Գալեչյանը։

---

62 Այդ երկու զբոսայգիների հատակագիծը կազմել է Ա. Թամանյանը, իսկ ծառատնկմանը՝ Ս. Դեուսաշվիլին։

63 В. Арутюнян, М. Асратян, А. Меликян, նշվ. աշխ., էջ 236։

64 Նույն տեղում։

Երևանի կանաչապատման գործում խոշոր ծառայություն են մատուցել հմուտ անտառաբույծ Բ. Էդիլյանը և դեկորատիվ այգեգործության մասնագետ Հ. Պետրոսյանը։ Նրանց ջանքերով են ստեղծվել Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքի շրջակայքի այգիներն ու պուրակները, օղակաձև այգու մի մասը։

Գյուղատնտես Ե. Հակոբյանի ջանքերով են ստեղծվել ՀԿԿ Կենտկոմի շենքի շրջակայքի այգիները (հատակագծի հեղինակ՝ ճարտարապետ Մ. Գրիգորյան), Բարեկամության փողոցի կանաչապատումը։ Ե. Հակոբյանը, Մ. Մկրտչյանը, Ա. Գրիգորյանը, Խ. Ջուլյանը մեծ երախտիք ունեն Երևանի կանաչապատման գործում[65]։

Հանրապետության քաղաքների, հատկապես Երևանի կանաչապատման գործում մեծ երախտիք ունի Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի նախագահի նախկին տեղակալ, աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախկին նախագահ Լևոն Հովսեփյանը, որը ծառ ու ծաղկի սիրահար էր։ Նա ամեն ջանք գործ էր դնում այդ գործի կազմակերպման համար։

Հանրապետության շատ քաղաքների կանաչապատման և հարյուրավոր հեկտարներով անտառներ, քաղաքներում կանաչապատ գոտիներ ստեղծելու գործում մեծ վաստակ ունի Հայկական ՍՍՀ վաստակավոր անտառաբույծ, ձեռներեց, խոշոր մասնագետ Մարգարիտ Դանիելյանը, ինչպես նաև Հայկական ՍՍՀ անտառային տնտեսության պետական կոմիտեի գլխավոր անտառապետ, Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանակիր Հովսեփ Դանիելյանը։

Վերջին 15 տարիներին Հայկական ՍՍՀ վաստակավոր անտառաբույծ, Երևանի գլխավոր դենդրոլոգ Ա. Սբորշչիկյանի ղեկավարությամբ կատարվել են քաղաքի փողոցների, այգիների կանաչապատումն ու ծառատնկումը, ձևավորումն ու տեսակների ընտրությունը։ Նա է հիմնադրել Լենինյան շրջանում նորապսակների այգին։

65 «Սովետական Հայաստան», 12 նոյեմբերի, 1969։

Այսօրվա Երևանը ՍՍՀՄ-ի լավ կանաչապատված քաղաքներից մեկն է։ Գեղեցիկ, կանաչապատ ձևավորում ունեն Աբովյան, Տերյան, Բարեկամության, Դեմիրճյան, Թումանյան փողոցները, Լենինի, Ազատության, Սայաթ-Նովայի պողոտաները և այլն։ Կանաչապատ են նաև «Հայէներգոնորոգում», Կիրովի անվան կոմբինատի, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական և ավտոդողերի գործարանների, Հողագիտության ու ագրոքիմիայի ինստիտուտի, պետական համալսարանի և այլ օբյեկտների ու բնակելի շենքերի բակերը։ Երևանի կանաչապատման գործում մեծ մասնակցություն են ցուցաբերում նաև բնակիչները։

Սովետական իշխանության տարիներին Լենինականում ստեղծվել է ավելի քան 300 հեկտար կանաչապատ զանգված։ Քաղաքը ծառուղիներով և խճուղիներով միացել է քաղաքամերձ բնակավայրերի հետ։ Ստեղծվել են զովարիկ պուրակներ ու զբոսայգիներ, ծառատնկվել ու կանաչապատվել են քաղաքի փողոցների և հրապարակների եզրաշերտերը։ Հրապարակներում ստեղծվել են ջրային մակերևույթներ և ծաղկանոցներ։ Լենինականում մեծ տարածում են գտել պողպատու և մշտադալար ծառատեսակները։ Քաղաքի, հատկապես բակերի կանաչապատման և հիմնականում պըտղատու տարբեր ծառատեսակների տարածման ուղղությամբ բեղմնավոր աշխատանքներ են կատարել կենսաբանական գիտությունների թեկնածու Ս. Ագուլյանը և գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Պ. Կարանյանը, որոնց շնորհվել է Հայաստանի պետական մրցանակի դափնեկրի կոչում։

Եոպատերազմյան տարիներին Լենինականում ծառատնկվել ու կանաչապատվել են փողոցները, տեքստիլ կոմբինատի շրջակայքը։ 10 հեկտար տարածության վրա հիմնվել է Ախուրյանի պուրակը, կազմակերպվել է Ախուրյանի անտառտնտեսությունը և պատանի բնասերների կայանը։

Հանրապետությունում 1950—1960-ական թվականներին զգալի աշխատանքներ են կատարվել խճուղային ճանապարհների եզրագծերի կանաչապատման ուղղությամբ։ Կա-

նաշապատված ու ծառատնկված են Լենինական—Կապս, Լենինական—Ազատան, Լենինական—Մայիսյան, Ապարան—Քուչակ, Ստեփանավան—Կալինինո, Կիրովական—Համզաչիման և Երևան-Սևան ճանապարհների եզրագծերը[66]։

Կիրովականում ստեղծվել են Կիրովի անվան քաղաքային, Լենինի պողոտայի վերջում՝ քիմիագործների, ապա երկաթուղայինների զբոսայգիները, իսկ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի շրջակայքում՝ նորատունկ զբոսայգին։ Հրազդանում ստեղծված է քաղաքային ու միկրոշրջանի զբոսայգին և մշտադալար ծառերի անտառային պուրակը։

Ետպատերազմյան տարիներին զբոսայգիներ են ստեղծվել Հանրապետության Ալավերդի, Դիլիջան, Դափան, Էջմիածին, Հոկտեմբերյան, Ստեփանավան, Արտաշատ, Աբովյան, Գորիս, Սևան, Սպիտակ, Չարենցավան և այլ քաղաքներում, քաղաքատիպ ավաններում ու շրջանային կենտրոններում։

Կանաչապատման ու ծառատնկման խոշոր աշխատանքներ են կատարվել Հանրապետության քաղաքների և քաղաքատիպ ավանների փողոցներում, պողոտաներում, արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում և բնակելի խոշոր շենքերի բակերում։ Ստեղծվել են կանաչ գոտիներ, փոքրիկ պուրակներ, ծաղկանոցներ։ Այդ գործում եռանդուն աշխատանք են կատարել կոմունալ տնտեսության մինիստրության գլխավոր դենդրոլոգ Ալբերտ Անդրեասյանը, բուսապատման տրեստի գլխավոր ագրոնոմ Հայկ Նալբանդյանը, Դիլիջանի քաղսովետի ծաղկային տնտեսության նախկին վարիչ Գուրգեն Ղազարյանը, Կիրովականի ծաղկաբուծական և կանաչապատման տնտեսության դիրեկտոր Գուրգեն Մելիքսեթյանը և շատ ուրիշներ։

Հանրապետության քաղաքներում կանաչապատման ուղղությամբ խոշոր աշխատանքներ են կատարված, սակայն դրանք դեռևս չեն բավարարում մեր քաղաքաշինության օ-

66 Հանրապետության քաղաքների կանաչապատման մասին տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿՄ, ֆ. 219, ց. 8, գ. 142, թ. 7։

բեցօր աճող պահանջները։ «Երևաննախագիծ» ինստիտուտի հաշվարկներով մինչև 1980 թ. Երևանն ունենալու է 7780 հեկտար կանաչ տնկարկների տարածություն, 1970 թ. ունեցած 2570 հեկտարի դիմաց։ Այսինքն՝ 10 տարում կանաչ տնկարկների քանակը եռապատկվելու է, որի իրականացման համար մեծ ջանքեր են պահանջվելու։ Ուստի, «Երևաննախագիծ» ինստիտուտը ճարտարապետ Արծվին Գրիգորյանի և դենդրոլոգ Սիլվա Աղաբաբյանի միջոցով կազմել է Երևանի կանաչապատման տասնամյա պլան՝ 1971—1980 թթ. համար։ Այդ պլանով խոշոր աշխատանքներ են կատարվելու Երևանի շրջակայքի բլուրներում։

Երևանի մուտքերի՝ Սևանի, Աշտարակի, Արտաշատի և Էջմիածնի խճուղիներում կկատարվեն կանաչապատման ու բարեկարգման աշխատանքներ։ Միաժամանակ, մայրաքաղաքի բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, հիմնարկները, դպրոցները, հիվանդանոցները և բնակկառավարչությունները կընդարձակեն իրենց պատկանող կանաչ տարածությունները։

Բուսաբանական այգու շրջակայքում 50 հեկտար տարածության վրա, Նորքի 1-ին և 3-րդ միկրոշրջանների սահմանում 10 հեկտար տարածության վրա, Աջափնյակի, Հրազդանի ափի լանջերին 60 հեկտար տարածության վրա կստեղծվեն նոր զբոսայգիներ։

Երևանն իր բնական և ռելյեֆային պայմաններով խիստ տարբերվում է երկրի շատ քաղաքներից։ Քաղաքի մեջ գտնվող Հրազդանի դեղատեսիլ կիրճը և Երևանի արհեստական լիճը հարստացնում են քաղաքի լանդշաֆտը։ «Երևաննախագիծ» ինստիտուտում ճարտարապետ Ա. Գրիգորյանը մշակել է Հրազդանի կիրճի վերակառուցման գլխավոր հատակագիծը և Երևանյան լճի ու նրա շրջակայքի լանդշաֆտի տարածական ճարտարապետական լուծումը, որպեսզի այդ վայրերը վերածվեն մասսայական հանգստի գոտիների[67]։

Հանրապետության քաղաքներում հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունների ընդհանուր

67 «Հայաստանի արդյունաբերություն», 1972, № 9, էջ 66։

մակերեսը 1970 թ. կազմում էր ավելի քան 4327 հեկտար, այդ թվում Երևան քաղաքի շրջակայքի կանաչ գոտին՝ 1500 հեկտար, իսկ պրոսպեկտներն ու պուրակները, ծաղկային տարածություններն ու մարգախոտերը՝ 1131 հեկտար[68]։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1967 թ. մարտի 21-ի «Հայկական ՍՍՀ-ում ծաղկաբուծությունը զարգացնելու և բնակչության ծաղիկների վաճառքն ավելացնելու միջոցառումների մասին» որոշումից[69] հետո այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարվել։ Ծաղկաբուծական տնտեսություններ են կազմակերպվել Երևան, Լենինական, Կիրովական, Էջմիածին, Դիլիջան, Հոկտեմբերյան, Իջևան, Արտաշատ, Չարենցավան և այլ քաղաքներում։ Մի շարք քաղաքներում ծաղիկներ աճեցնելու համար ստեղծվել են ջերմոցային տնտեսություններ։

1967 թ. Երևանում կազմակերպվեց «Ֆլորա» ծաղկաբուծական ֆիրման, որն արդեն ունի բազմաթիվ ջերմատներ՝ ամռանը ծաղիկներ աճեցնելու համար։

Հանրապետության քաղաքներում կատարվող կանաչապատման, ծաղկապատման աշխատանքները խթանելու նպատակով հաճախ հայտարարվում են լավագույն կանաչ տարածքների, ծաղկի աճեցման համար մրցանակաբաշխություններ։ Կազմակերպվում են ծաղկի տոներ և ցուցահանդեսներ, որոնց մասնակցում են ինչպես համապատասխան կազմակերպությունները, այնպես էլ առանձին ծաղկաբույծ-սիրողները։

1957 թ. օգոստոսին կիրովականցիներն առաջինը կազմակերպեցին ծաղկի տոն։ Այժմ ծաղկի տոների և ցուցահանդեսների կազմակերպումը ավանդույթ է դարձել մեր հանրապետության քաղաքներում։ 1964 և 1965 թթ. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի «Ծաղկաբուծություն» տաղավարում կազմակերպված հա-

---

68 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի պետական վիճակագրական կենտրոնական վարչության կոմունալ տնտեսության բաժնից։

69 В. Арутюнян, М. Асратян, А. Меликян, նշվ. աշխ., էջ 237։

մամիութենական գարնանային ծաղկի ցուցահանդեսին մասնակցում էին Միության բոլոր հանրապետությունները, խոշոր քաղաքները, այդ թվում՝ Մոսկվան ու Լենինգրադը, ինչպես նաև դեմոկրատական մի շարք երկրներ։ Ցուցահանդեսի այցելուները մեծ բավականությամբ դիտում էին մեխակներից, վարդերից, թրաշուշաններից, հակինթներից, կալլաներից, վարդակակաչներից կազմված փնջերը, որոնք ածեցրել էին երևանցիները։

Օդի խոնավությունը պահպանելու համար հանրապետության քաղաքներում, մասնավորապես Երևանում, ստեղծվել են ջրային մակերեսներ, որոնց քանակը տարեցտարի ավելանում է։ Ինքնատիպ են ու շատ գեղեցիկ Լենինի հրապարակի և նրան մոտիկ 2750 շատրվանները (ճարտարապետ Լ. Սադոյան), «Կարապի լիճը» (ճարտարապետ Գ. Մուշեղյան)[70], «Հաղթանակ» և Կոմերիամիության անվան զբոսայգիների, Հոկտեմբերյան և Ազատության պողոտաների ու Բբիլիսիի խճուղու վրա գտնվող լճերը, Հրազդան գետի ջրային մակերեսները և Երևանյան լիճը։

Ջրային մակերևույթներ են ստեղծվել նաև Լենինական, Կիրովական, Հրազդան, Իջևան, Ստեփանավան, Ջերմուկ, Դափան, Դիլիջան և այլ քաղաքներում, ինչպես նաև հանրապետության արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և բազմաթիվ բնակելի խոշոր շենքերի բակերում։

Մեր օրերում անհնար է պատկերացնել խոշոր քաղաք, առանց դրծարանների, կաթսայատների, ջերմաէլեկտրակայանների ու տասնյակ հազարավոր ավտոմեքենաների։ Սակայն դրանք կեղտոտում են օդը և աղմուկ ստեղծում քաղաքում։ Ուստի, աղմուկի վնասակար ազդեցությունից (գլխացավեր, քնի խանգարում, աշխատունակության իջեցում, լսողության և տեսողության թուլացում) բնակչությանը զերծ պահելու համար, առանձին շերտերով սանիտարապաշտպանական գոտիներ են ստեղծվել։ Բնակելի թաղա-

70 Նույն տեղում։

մասերը բաժանվել են արդյունաբերական շրջաններից, շատ գործարանների տեխնիկան փոխվում է։ Տեղադրվում են թունավոր նյութերի կլանման սարքեր և այլն։ Աղմուկի մակարդակն իջեցնելու նպատակով հանրապետության որոշ քաղաքներում, հատկապես Երևանում, անջատվել են մարդատար և բեռնատար տրանսպորտային հոսքերը։ Սահմանվել է միակողմանի երթևեկություն։ Տարեցտարի ընդլայնվում են տրանսպորտային մայրուղիների և բնակելի կառույցների միջև կատարվող անտառատնկումները։ Մայրաքաղաքի բնակելի թաղամասերի սահմաններից հեռացվել են ավտոպարկերը, ավտոկայանները։ Մի շարք փողոցներից հանվել են տրամվայի գծերը։ Շատ շենքերից հանվել են աղմուկ առաջացնող ինժեներային և սանիտարատեխնիկական սարքավորումները։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը քննարկելով աղմուկի և օդի կեղտոտման հարցերը, մի շարք միջոցառումներ է նշել դրանց վերացման համար[71]։ Այդ նպատակով հատուկ հանձնարարություններ են տրվել աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետներին, առողջապահության, ներքին գործերի և ավտոտրանսպորտային մինիստրություններին, պետշինին, հանրապետական և քաղաքային սանէպիդկայաններին, մամուլի և ռադիոհեռուստատեսության օրգաններին։

Բնության պահպանության հարցը պետական նշանակություն ունեցող խնդիր է դարձել։ Դրա համար էլ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը 1958 թ. մայիսի 14-ին ընդունել է բնության պահպանության վերաբերյալ հատուկ օրենք։ Համաձայն այդ օրենքի, այն ամենը, ինչ վնաս է հասցնում մեր անտառներին, օգտակար վայրի թռչուններին ու կենդանիներին, ձկներին, բնական հուշարձաններին ու կանաչ տնկարկներին կամ քայքայում ու աղիացնում հողերը, ճահճացնում լեռնային արոտները, աղտոտում է ու

71 Տե՛ս «Սովետական Հայաստան», 18 դեկտեմբերի, 1968։

թունավորում օդն ու ջուրը, արգելվում է: Վնասարար անձինք ենթարկվում են քրեական պատասխանատվության: Հայաստանում բնության պահպանության ընկերությունը որոշակի աշխատանքներ է կատարել բուսականության պահպանման ու նրա դերի պրոպագանդման ուղղությամբ: Այդ կազմակերպությունը դարձել է ամենամասսայական կազմակերպություններից մեկը հանրապետությունում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՃԸ

1. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԵԼՔԸ

Հայ ժողովուրդը սովետական իշխանության տարիներին խոշոր հաջողություններ ձեռք բերեց ոչ միայն քաղաքական ու տնտեսական կյանքում, այլև մշակույթի բնագավառում, որի զարգացումը միշտ սերտորեն կապված է եղել քաղաքների զարգացման հետ։

Դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից առաջ Վ. Ի. Լենինը կանխատեսել էր, որ սոցիալիստական հեղափոխությունը ժողովրդական մասսաներին դուրս կբերի ահավոր խավարից և կարթնացնի միլիոնավոր ճնշված մարդկանց բանականությունը։ Վ. Ի. Լենինի այդ կանխատեսումը կենսագործելու նպատակով Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարությունը իրականացրեց մի շարք միջոցառումներ։ Նախ վերացվեց լուսավորության հին սիստեմը, դպրոցն անջատվեց եկեղեցուց, մտցվեց աղջիկների ու տղաների համատեղ ուսուցում, ազգայնացվեցին կուլտուր-լուսավորական հիմնարկները, հայերենն ընդունվեց իբրև պետական լեզու։ Դրվեցին սովետական դպրոցի հիմքերը և ստեղծվեցին առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Դպրոցական

ցանցում ձևոք բերված հաջողությունների հիման վրա դրվեց սկզբում ընդհանուր տարրական, իսկ հետագայում՝ յոթնամյա պարտադիր ուսուցումը կենսագործելու հարցը։ Հանրապետությունում արագ տեմպերով զարգացան գիտությունը, գրականությունն ու արվեստը։

Կուլտուրական շինարարության բնագավառում ձեռք բերված հաջողությունների շնորհիվ հետագա տարիներին հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան ծաղկում ապրեց։

Սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում նոր դեր ու նշանակություն տվեց դպրոցին։ Սովետական դպրոցը վիթխարի գործ կատարեց ժողովրդական լայն զանգվածների հետամնացությունը վերացնելու, բնակչության կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ Սովետական Հայաստանի քաղաքներում այժմ կենսագործվում է միջնակարգ ընդհանուր կրթությունը։ Այդ կապակցությամբ Հանրապետության քաղաքներում կառուցվում են դպրոցական նոր շենքեր։

Երկրի ինդուստրացումը, գյուղի սոցիալիստական վերափոխումը, ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակների տարիներին ձեռք բերված հաջողությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին ժողովրդական կրթության ցանցի ընդլայնման, դպրոցների ուսումնանյութական բազայի բարելավման և ուսուցչական կադրերի աճի համար։

1914/15 ուսումնական տարում Հայաստանի քաղաքներում գործել են 49 դպրոցներ՝ 7668 աշակերտներով և 285 ուսուցիչներով[1], իսկ 1970/71 ուսումնական տարում՝ 433 դպրոցներ, որոնցում սովորել են 334 հազար աշակերտներ, աշխատել են 18738 ուսուցիչներ[2] (միայն Երևանի 212 դպրոցներում սովորել են 167 հազար աշակերտներ)։

---

[1] «Просвещение и культура Армянской ССР» (стат. сборник), Ереван, 1970, стр. 24, 25.

[2] Ա. Զազախեցյան, Հանրակրթական դպրոցը Սովետական Հայաստանում (1941—1970 թթ.), Երևան, 1972, էջ 81։

Այդ նույն ուսումնական տարում Հանրապետության 1511 դպրոցներում սովորել են 653 հազար աշակերտներ, աշխատել են 33116 ուսուցիչներ, որից շուրջ քսան հազարը կամ 60 տոկոսը՝ բարձրագույն կրթությամբ։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միշտ բարձր են գնահատել ուսուցչի աշխատանքը։

Մատաղ սերնդի կրթության և կոմունիստական դաստիարակության բնագավառում կատարած բեղմնավոր աշխատանքի համար Հանրապետության ուսուցիչներից 383 հոգի պարգևատրվել են Լենինի շքանշանով, 6 հոգի՝ Հոկտեմբերյան հեղափոխության, 548 հոգի՝ Աշխատանքային կարմիր դրոշի, 1005 հոգի՝ «Պատվո նշան» շքանշանով[3]։ Համամիութենական ուսուցչական համագումարի նախօրյակին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1968 թ. հուլիսի 1-ի հրամանագրով Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհվեց երկրի 70 ուսուցիչների։ Այդ բարձր կոչմանն արժանացավ նաև Երևանի Մ. Աբեղյանի անվան միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ, Հայրենական մեծ պատերազմի մարտական մասնակից Սամսոն Դաղբաշյանը։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը Հանրապետության 1420 ուսուցիչների շնորհել է Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում[4]։

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության բնագավառում բարձր ցուցանիշների հասած ուսուցիչներին խրախուսելու նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը 1964 թ. փետրվարի 20-ի որոշմամբ սահմանել է Խաչատուր Աբովյանի անվան մեդալ և «Ժողովրդական կրթության գերազանցիկ»-ի կրծքանշան։ Հանրապետությունում Խ. Աբովյանի անվան մեդալներով առաջինը պարգևատրվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի

3 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստերության կադրերի բաժնից։

4 Նույն տեղում։

խակական անդամներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Շահինյանը, Ա. Ղարիբյանը, Գ. Սևակը, ՍՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Սանթրոսյանը, լուսավորության նախկին մինիստր Ա. Եղիազարյանը, լուսավորության բնագավառի հնագույն աշխատողներ Ա. Մովսիսյանը, Ս. Մովսիսյանը, Ա. Ղազախեցյանը, Մ. Շախուլյանը և ուրիշներ։

Մանկավարժության բնագավառում երկարամյա ու անբասիր աշխատանք են կատարել կամ կատարում Լենինի շքանշանակիր վաստակավոր ուսուցիչներ Սիմակ Սահակյանը, Լիդիա Կորշունովան, Արուսյակ Խաչիկյանը, Աննա Կուտոյանցը, Համազասպ Շահինյանը, Սուսաննա Շահվերդովան, Մարիա Հայկազունին, Հրայր Բոյաջյանը, Սիրուշ Մարտիրոսյանը, Ավետիս Ճուղուրյանը և շատ ուրիշներ

Սովետական Հայաստանից Ն. Կ. Կրուպսկայայի անվան մեդալով առաջինը պարգևատրվեցին Երևանի Մ. Գորկու անվան դպրոցի վաստակավոր ուսուցչուհի Վարսիկ Եսայանը և Ն. Կ. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Իրինա Տեր-Ակոպովան։

Կուլտուրական շինարարության մյուս կարևոր հարցը չափահաս բնակչության անգրագիտության վերացումն էր։ Այն իրականացնելու համար 1921 թ. սեպտեմբերի 21-ին Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետն ընդունեց դեկրետ՝ անգրագիտության վերացման մասին[5]։

Հանրապետությունում անգրագիտության վերացման համար խոշոր աշխատանքներ կատարեցին կուսակցական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունները, հատկապես լուսավորության բնագավառի աշխատողները։ Այդ աշխատանքների արդյունքը զոհացուցիչ էր։ Եթե 1897 թ. Հայաստանի 9—49 տարեկան հասակ ունեցող բնակչության 9,2 տոկոսն էր գրագետ, 1926 թ.՝ 38,7 տոկոսը, ապա 1939 թ.՝ 89,9, իսկ 1970 թ.՝ 99,8 տոկոսը[6]։

---

5 «ՀՍՍՀ դեկրետների և որոշումների ժողովածու», պրակ 2, էջ 63—64։

6 «Народное образование, наука и культура в СССР» (стат. сборник), М., 1971, стр. 22.

Կենսագործելով Վ. Ի. Լենինի «անգրագետ երկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի կարելի»[7] դրույթը, հայ ժողովուրդը պատմական կարճ ժամանակամիջոցում իր ուսերից թոթափեց անգրագիտությունը։ Դեռ 1930-ական թվականներին Երևանը, իսկ մինչև Հայրենական մեծ պատերազմը՝ Լենինականն ու Կիրովականը հայտարարվեցին համատարած գրագիտության քաղաքներ։

* * *

Հանրապետության ժողովրդական տնտեսությանը բարձրորակ մասնագետներով ապահովելու նպատակով սովետական իշխանության առաջին իսկ տարիներին Երևանում բացվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ։

1921 թ. սկզբին բացվեց Երևանի պետական համալսարանը, 1928 թ.՝ կոնսերվատորիան, 1928 թ.՝ Անդրկովկասյան անասնաբուժական-անասնաբուծական, 1930-ական թվականներին՝ բժշկական, գյուղատնտեսական, պոլիտեխնիկական ինստիտուտները։ Սոցիալիստական ինդուստրացումը, արդյունաբերության նոր ճյուղերի հաջողությունները, գյուղատնտեսության կոլեկտիվացման սկիզբը և քաղաքներում սկսված կառուցապատման աշխատանքները նոր խնդիրներ դրեցին բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական դպրոցների առջև։

1930 թ. ՍՍՀՄ-ում, ինչպես նաև Անդրկովկասում, իրականացվեց բարձրագույն կրթության վերակառուցումը։ Դրա շնորհիվ Երևանի պետական համալսարանի համապատասխան ֆակուլտետների հիման վրա ստեղծվեց բարձրագույն ուսումնական հաստատությունների ճյուղավորված ցանց, որը դարձավ ժողովրդական տնտեսության համար կադրեր պատրաստող հիմնական օղակը։ Գնալով աճեց բարձրագույն դպրոցներում սովորողների քանակը։ Եթե 1921/22 ուսումնական տարում Հանրապետությունում գործել է միայն համալսարանն իր 490 ուսանողներով, ապա 50 տարի հետո Երևանում, Լենինականում և Կիրովականում

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 362։

գործել են 12 ուսումնական բարձրագույն հաստատություններ՝ 54.413 ուսանողներով։ Այս հաստատությունների գոյությունը հանրապետության միջին քաղաքների կուլտուրական կյանքում շատ կարևոր երևույթ է։

Բարձրագույն ուսումնական հաստատություններից Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղը Դիլիջանում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղը Գորիսում, նպաստում են այդ քաղաքներում մտավորականության աճմանը։


Երևանի պետական համալսարանը դարձավ ժողովրդական տնտեսության համար կադրեր պատրաստող կարևոր օջախ։ Համալսարանը 1924/25 ուսումնական տարում ավել է իր առաջին 58 շրջանավարտները[8]։ Երևանի պետական համալսարանն իր գոյության 50 տարիներին մեր երկրին տվել է մոտ հարյուր տարբեր մասնագիտությամբ 23 հազար շրջանավարտներ[9]։

1970/71 ուսումնական տարում համալսարանում սովորել են 13 հազար ուսանողներ, որոնցից 7 հազարը՝ ցերեկային բաժնում։ Դրանց թվում էին 254 հոգի՝ արտասահմանյան երկրներից (Լիբանանից, Սիրիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլն) եկած։ Դրանցից 151 հոգին հայեր էին, մնացյալը՝ վիետնամցի, գերմանացի, անգլիացի, իրաքցի, չեխ, նորվեգացի, լեհ և այլ ազգի ուսանողներ։ Համալսարանը կապեր է հաստատել մեր երկրի, ինչպես նաև արտասահմանյան 43 համալսարանների ու գիտական այլ հաստատությունների, այդ թվում՝ Լոնդոնի, Բեռլինի, Նյու-Յորքի, Համբուրգի, Կոպենհագենի և այլ քաղաքների համալսարանների հետ։ Իր բեղմնավոր աշխատանքի համար Երևանի պետական համալսարանը 1970 թ. ստացավ Լենինյան հոբելյանական պատվոգիր, իսկ համալսարանի 50-ամ-


---

8 Լ. Պարիրջանյան, Երևանի պետական համալսարանը (1920—1930), Երևան, 1966, էջ 82։

9 Տվյալները վերցված են Երևանի պետական համալսարանի կադրերի բաժնից։



Ճարտարապետ Մ. Մազմանյան



յակի առիթով պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Հայաստանի կառավարության որոշմամբ նախատեսված է Նորքի բարձունքում կառուցել համալսարանական քաղաք, իր բազմաթիվ ուսումնական և բնակելի շենքերի համալիրներով, դիտահետազոտական լաբորատորիաներով, ուսանողական հանրակացարաններով, տպարանով, բուսաբանական այգով և այլն։

* * *

1970 թ. Հանրապետությունում գործել է 59 տեխնիկում և ուսումնարան[10]։ Դրանցում 150 մասնագիտությունների գծով սովորել է 47 հազար[11], այդ թվում ցերեկային բաժիններում՝ 29 հազար մարդ։

Հանրապետության արդյունաբերության և կոլտնտեսային ու սովխոզային արտադրության համար միջին որակի կադրեր պատրաստելու նպատակով գործում են քիմիատեխնոլոգիական, լեռնամետալուրգիական, էլեկտրամեխանիկական, մեքենաշինական, սարքաշինական, շինարարական էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, հաստոցագործիքաշինական, ռադիոտեխնիկական, ռադիոէլեկտրակապի, երկաթուղային տեխնիկումները, ինչպես նաև մանկավարժական, բժշկական, գյուղատնտեսական, գեղարվեստական և այլ ուսումնարաններ։ Երևանից, Լենինականից, Կիրովականից բացի, տեխնիկումներ և ուսումնարաններ են գործում հանրապետության առավել փոքր 21 քաղաքներում և, նույնիսկ, մեծ գյուղերում, ինչպես օրինակ Ստեփանավանում, Կամոյում՝ անասնաբուժական, Գորիսում և Հոկտեմբերյանում՝ գյուղատնտեսական, Ջարենցավանում՝ գործիքաշինական, Ղափանում՝ լեռնամետալուրգիական, Քաջարանում և Կիրովականում՝ շինարարական, Դիլիջանում՝ ռադիոտեխնիկական և բժշկական, Վարդենիսում և Ղափանում՝ բժշկական, Արթիկում, Արարատում, Կամոյում, Սևանում, Հրազդանում

10 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 288—292։

11 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 183.

և Ալավերդում՝ ինդուստրիալ-տեխնոլոգիական, Էջմիածնում՝ ակումբագրադարանային և Օձուն (Ուղունլար) գյուղում՝ պողպատձուլարարածական տեխնիկում և այլն։

ՀՍՍՀ արդյունաբերության մեջ յուրաքանչյուր ինժեներին բնկնում է մեկ տեխնիկ, մինչդեռ արդյունաբերության, շինարարության մեջ և տրանսպորտում բարձրագույն կրթություն ունեցող յուրաքանչյուր մասնագետի դիմաց պետք է լինի միջնակարգ մասնագիտական կրթությամբ 3—4 մասնագետ։ Դրա համար էլ վերջին տարիներին միջնակարգ մասնագիտական ուսումնական նոր հաստատություններ բացվեցին Երևանում, Արթիկում, Հրազդանում, Սևանում, Հոկտեմբերյանում, Ալավերդում, Կամոյում, Դորիսում և Վարդենիսում։ Այսպիսով, հանրապետությունում 10 հազար բնակչի հաշվով բարձրագույն դպրոցին բնկում է 214 սովորող, որը Միության մեջ ամենաբարձր ցուցանիշն է, իսկ միջնակարգ մասնագիտական դպրոցին՝ 185 սովորող[12], որը Միության մեջ դարձյալ բարձր ցուցանիշներից է։ Հանրապետության բարձրագույն դպրոցները 10 հազար բնակչի հաշվով 1970 թվականին ավել են 31 (Միության ամենաբարձր ցուցանիշն է), իսկ միջնակարգ մասնագիտական դպրոցները՝ 38 շրջանավարտ։

* * *

1921 թ. դժվարին ու ծանր օրերին կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի ղեկավարությամբ դրվեց ապագա կոնսերվատորիայի հիմքը՝ կազմակերպվեց երաժշտական ստուդիան։ 1923 թ. այն վերածվեց կոնսերվատորիայի։ Հետագա տարիներին կոնսերվատորիան հարստացավ նոր ամբիոններով։ Կոնսերվատորիա սովորելու եկան ոչ միայն մեր հանրապետությունից, այլև աշխարհի տարբեր երկրների հայկական գաղթօջախներից։ Կոնսերվատորիան այժմ ունի նյութական հարուստ բազա, հարմարավետ շենք, բարձրորակ պրոֆեսորադասախոսական կադրեր։ Դրանց մի մասը որակավորվել են Մոսկվայի ու Լենինգրադի կոնսերվատորիաներում։

[12] «Народное образование, наука и культура в СССР», стр. 167.

Հանրապետության քաղաքներում ստեղծվել է երաժշտական, նկարչական դպրոցների և ուսումնարանների լայն ցանց։ 1970 թ. Հանրապետության քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում գործում էին 55 երաժշտական, 4 նկարչական դպրոցներ, իսկ Երևանում, Լենինականում և Կիրովականում երաժշտական ուսումնարաններ՝ 12 հազար աշակերտներով։

* * *

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ժողովրդական տնտեսության զարգացմանը զուգընթաց հրատապ խնդիր էր դարձել բանվորական կադրերի պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության հարցը, որը բխում էր սոցիալիստական շինարարության և ժողովրդական տնտեսության պահանջներից։

Վ. Ի. Լենինը «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատության մեջ նշում է, որ «առանց գիտության, տեխնիկայի, փորձի զանազան ճյուղերի մասնագետների դեկավարության, անկարելի է սոցիալիզմին անցնել, որովհետև սոցիալիզմը պահանջում է գիտակից և մասսայական առաջընթաց շարժում դեպի աշխատանքի ամենաբարձր արտադրողականություն»[13]։

Երկրի ինդուստրացումը բարձրագույն կրթությամբ մասնագետներից բացի պահանջում էր որակյալ բանվորական կադրերի անընդհատ հոսք դեպի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերը։ Այդ նպատակով 1940 թ. ստեղծվեց աշխատանքային ռեզերվների, իսկ 1958 թ.՝ պրոֆտեխնիկական որակյալ բանվորական կադրերի պատրաստման սիստեմ։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին այդ սիստեմը պատրաստեց 20 հազար որակյալ բանվորներ, որոնք աշխատեցին պաշտպանական նշանակություն ունեցող ձեռնարկություններում։ Մինչև 1970 թ. Հանրապետության պրոֆտեխնիկական ուսումնական հաստատությունները

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 295։

երկրի ժողովրդական տնտեսությանը տվել են 150 մասնագիտությունների գծով 120 հազար որակյալ բանվորներ։ 1970/71 ուսումնական տարում Հանրապետությունում գործում էին պրոֆտեխնիկական և տեխնիկական 51 ուսումնարաններ, որոնցում սովորում էին մոտ 20 հազար պատանիներ ու աղջիկներ[14]։

Հատկապես վերջին տարիներին ուսումնարանները կադրեր են պատրաստում բարդ մասնագիտությունների գծով, ինչպես օրինակ ապարատավարներ, լաբորանտներ, չափիչ-սուղիչ սարքերի էլեկտրափականագործներ, էլեկտրոնային-հաշվիչ մեքենաների մոնտաժողներ, էլեկտրավակուումային և կիսահաղորդչային արտադրության սարքավորումներ կարգավորողներ, կենցաղային սառնարաններ հավաքողներ, ռադիո-հեռուստատեսային ապարատներ մոնտաժողներ և այլն։ Հայաստանի պրոֆտեխնիկական և տեխնիկական ուսումնարաններում աշխատում են շուրջ 1000 դասատուներ ու վարպետներ։ Նրանցից լավագույններին արժանացել են Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցչի և վաստակավոր վարպետի բարձր կոչման։

Սակայն պրոֆտեխնիկական ուսումնարանների այժմյանն ապահովում է Հանրապետության ժողովրդական տնտեսության պահանջի միայն 1/3-ը։ Օրևցօր Հանրապետության ժողովրդական տնտեսությունը որակյալ բանվորական կադրերի ավելի մեծ կարիք է զգում։

Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունները, միջնակարգ մասնագիտական տեխնիկումները, ուսումնարանները, պրոֆտեխնիկական դպրոցները ապահովված են ուսումնաարտադրական, տեխնիկական բազայով և դասախոսական բարձրորակ կադրերով, որոնք բարեխղճորեն կատարում են բարձր և միջին որակի մասնագետներ պատրաստելու գործը։ Հանրապետությունում գործող բոլոր տիպի դպրոցներում սովորելու հա-

---

[14] «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 178.

մար ստեղծված են անհրաժեշտ պայմանները՝ կահավորված հանրակացարանային շենքեր, արհեստանոցներ, ճաշարաններ, մարզասրահներ ու մարզադաշտեր, դահլիճներ, կուլտմասսայական աշխատանքների բազմաթիվ խմբեր և այլն։

Հանրապետության հանրակրթական, պրոֆտեխնիկական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն դպրոցներում սովորողների քանակը 1970 թ. անցնում էր 800 հազարից, այսինքն՝ հանրապետության բնակչության երեքից մեկը սովորող էր։

Ժողովրդական տնտեսության համար մասնագետների պատրաստման մակարդակով (բնակչության 10 հազար շնչին ընկնող ուսանողների ու սովորողների թվով) Սովետական Հայաստանը գրավում է առաջին տեղերից մեկը ՍՍՀՄ-ում և գերազանցում է զարգացած կապիտալիստական շատ երկրների։

* * *

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում դրվեց գիտական հիմնարկների կազմակերպման, գիտական կադրերի աճեցման և գիտության զարգացման սկիզբը։ 1925 թ. կազմակերպվեց Հայկական ՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը, որը մինչև 1930-ական թվականները որոշակի աշխատանքներ կատարեց Հայաստանի հնագույն հուշարձանները և հայ ժողովրդի պատմությունն ու կուլտուրան ուսումնասիրելու ուղղությամբ։

Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հետագա վերելքն ապահովելու նպատակով Հայաստանում կազմակերպվեցին մի շարք գիտահետազոտական հիմնարկներ։ Գիտական հիմնարկների ցանցի զարգացումը և գիտական կադրերի աճը անխուսափելիորեն առաջ քաշեցին մեկ միասնական կենտրոն ստեղծելու հարցը։ Այդպիսին հանդիսացավ 1935 թ. Երևանում կազմակերպված ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մաս-

նաճյուղը[15]: 1941 թ. այդ մասնաճյուղի կազմում կար 11 գիտահետազոտական հիմնարկ[16], որոնցում աշխատում էին 180 գիտական աշխատողներ. նրանցից 16-ը՝ դոկտոր և պրոֆեսոր, իսկ 23-ը՝ գիտության թեկնածուներ էին:

Դեռևս Հայրենական մեծ պատերազմի ծանր ու դժվարին օրերին՝ 1943 թ. նոյեմբերի 29-ին, ՍՍՀՄ կառավարության որոշմամբ կազմակերպվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, որի առաջին կազմում հաստատվեցին 23 ականավոր և ճանաչված գիտնականներ: Նրա առաջին պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

Սովետական իշխանությունը հայ ժողովրդին շատ բարիք է տվել, դրել է ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը, քանորդ դար առաջ ով կարող էր մտածել, որ գիտական խոշոր հաստատություն կհիմնադրվի մի երկրում, որն ավերված էր, ասպատակված, որտեղ գտնվում էր գաղթականների սոված բազմություն: Բայց կենսունակ հայ ժողովուրդը ոչ միայն կարողացավ տանել այդ ձախորդությունները, այլև սովետական իշխանության շնորհիվ ազատվեց բնաջնջումից և բռնեց կուլտուրայի ու էկոնոմիկայի անշեղ զարգացման ուղին[17]:

Իր գոյության տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան դարձավ մեր գիտության ու մշակույթի կենտրոնը: Այն սերտ համագործակցության մեջ մտնելով եղբայրական հանրապետությունների ակադեմիաների հետ, աճեցնելով երիտասարդ նոր կադրեր, մասնակցեց գիտության բազմաթիվ նոր պրոբլեմների մշակմանը: Դրա շնորհիվ ստեղծված է գիտական ամուր բազա՝ ժամանակակից տեխնիկայի հիմքը կազմող այնպիսի բնագավառների, ինչպիսիք են մաթեմատիկան, մեխանիկան, ֆիզիկան, քիմիան,

---

15 *К. Худавердян,* Культурная революция в Советской Армении, Ереван, 1966. стр. 152.

16 «Народное образование, наука и культура в СССР», стр. 244.

17 Ս. Հարությունյան, *Մ. Աբեղյան. կյանքն ու գործը, Երևան, 1970, էջ 134—135:*

աստղաֆիզիկան, ռադիոֆիզիկան, էլեկտրոնիկան, կիբեռնետիկան և այլն:

1950-ական թվականներից մեր երկիրը թևակոխեց գիտատեխնիկական հեղաշրջման նոր ժամանակաշրջան: Այդ բանն իր ազդեցությունն ունեցավ նաև Հայաստանում գիտության զարգացման վրա: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում գիտության տարբեր բնագավառներն ավելի ու ավելի ճյուղավորվեցին: Մաթեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից և մյուս գիտություններից սկսեցին ճյուղազատվել նոր ուղղություններ, որոնք արագորեն ձևավորվում են որպես գիտական ինքնուրույն բնագավառներ: Հանրապետությունում լուրջ տեղաշարժեր կատարվեցին նաև տեխնիկայի բնագավառում, որտեղ սկսեցին առաջատար դեր խաղալ ավտոմատիկան ու կիբեռնետիկան:

Գիտահետազոտական հիմնարկների զարգացումը, գիտական նոր ուղղությունների առաջացումը խթանեցին գիտական կադրերի արագ աճը: Գիտատեխնիկական մտավորականության առաջացումն ու զարգացումը սերտորեն կապված է արդյունաբերության ու քաղաքների զարգացման հետ:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ինստիտուտների ընդհ. մեծամասնությունը գտնվում է մայրաքաղաքում, իսկ որոշ գիտահետազոտական ինստիտուտներ գտնվում են Հանրապետության մյուս քաղաքներում, ինչպես, օրինակ, Լենինականում՝ գեոֆիզիկայի և սեյսմոլոգիայի, Կիրովականում՝ քիմիայի, ՍՍՀՄ գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերության ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտները: Աշտարակի շրջանում են գտնվում ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի ինստիտուտները և Բյուրականի աստղադիտարանը, որը դարձել է համաշխարհային գիտական կենտրոններից մեկը: Այդ կոլեկտիվը ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ հեղինակ է բազմաթիվ հայտնագործությունների՝ աստղերի ու աստղա-

յին համակարգի առաջացման ու զարգացման վերաբերյալ։ Դափանում է գտնվում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կիբեռնետիկայի լաբորատորիան, որը զբաղվում է արտադրության ավտոմատացման հարցերով։ 1970 թ. Հանրապետությունում կային 12.808 գիտական աշխատողներ (1940 թ. հազարի դիմաց), այդ թվում դոկտորի գիտական աստիճան ունեցողներ՝ 482, գիտության թեկնածուի՝ 3346 մարդ։ Գիտական կոչում ունեին՝ ակադեմիկոս և թղթակից-անդամ՝ 74, պրոֆեսոր՝ 226, դոցենտ՝ 1006, ավագ գիտաշխատող՝ 821, կրտսեր գիտաշխատող և ասիստենտ՝ 1176 մարդ[18]։

Ինչպես տեսնում ենք, գիտահետազոտական 100-ից ավելի ինստիտուտների գիտական աշխատողների անձնակազմը, ինչպես նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները ստեղծվել են միայն սովետական իշխանության տարիներին։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, ուր 1970 թ. աշխատում էին 2185 գիտաշխատողներ, որոնցից 125 դոկտորներ և 703 թեկնածուներ[19] էին, դարձել է Հայաստանի գիտական մտքի կենտրոնը և երկրի առաջատար գիտական կենտրոններից մեկը, որի գիտահետազոտական աշխատանքների արդյունքները մեծ նշանակություն են ստացել և լայն ճանաչում գտել մեր երկրի սահմաններից դուրս։

Երևանում տեղավորված են գիտահետազոտական հիմնարկների 85,4 տոկոսը, Կիրովականում՝ 4, Լենինականում՝ 2,7, Բյուրականում՝ 2,7, Նորագյուղում՝ 1,3, Արզնիում՝ 1,3, Աշտարակում՝ 1,3 և Սևանում՝ 1,3 տոկոսը։ Գիտաշխատողների 81,5 տոկոսն աշխատում է Երևանում։ Առավել նպատակահարմար է խոշոր գիտահետազոտական հիմնարկների համապատասխան մասնաճյուղերը և լաբորատորիաները տեղավորել միջին և փոքր քաղաքներում։ Գիտահետազոտական հիմնարկների և նրանց բաժանմունքների ստեղծումը հանրապետության միջին ու փոքր քաղաքներում նույնիսկ

18 «Народное образование, наука и культура в СССР», стр. 251.

19 Նույն տեղում, էջ 245։

առանձին գյուղերում (Լենինական, Կիրովական, Աշտարակ, Բյուրական, Սևան, Ղափան, Հրազդան, Նորագյուղ և այլն), ինչպես նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, պրոֆտեխնիկական դպրոցների, ուսումնարանների բացումը (Լենինական, Կիրովական, Դիլիջան, Ղափան, Քաջարան, Կամո, Արթիկ, Ալավերդի, Հրազդան, Հոկտեմբերյան, Արարատ, Վարդենիս և այլն) կնպաստի, որ հանրապետության միջին և փոքր քաղաքներում նույնպես ստեղծվեն կուլտուրայի նոր օջախներ։ Դրա շնորհիվ հանրապետության միջին և փոքր քաղաքները կհամալրվեն բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն և գիտական կոչում ունեցող մասնագետներով։ Տեղի պատանիներն ու երիտասարդները հնարավորություն կունենան սովորելու տեղերում ստեղծված բարձրագույն և միջնակարգ մասնագիտական դպրոցներում։ Դրանով հանրապետության քաղաքներից սովորելու ու աշխատելու համար մայրաքաղաք եկողների մեծ հոսքը կնվազի։ Միաժամանակ, տեղի աշխատող բնակչության զբաղվածության համար նոր հնարավորություններ կստեղծվեն։

* * *

Սովետական կարգերի հաստատումից հետո անհրաժեշտ եղավ բանվորներից և գյուղացիներից պատրաստել սոցիալիստական հասարակությունը կառուցող գիտակից կադրեր։ «Մենք,— ասում էր Վ. Ի. Լենինը,— ձեռք կբերենք այն ամենը, ինչ որ հարկավոր է, կհաղթահարենք բոլոր արգելքները, որոնք մնացել են մեզ հին հասարակարգից, և, որոնք միանգամից դեն շպրտել անկարելի է, հարկավոր է վերապատրաստել մասսաներին, իսկ նրանց վերապատրաստել կարող է միայն ագիտացիան ու պրոպագանդան, հարկավոր է մասսաներին առաջին հերթին կապել ընդհանուր տնտեսական կյանքի շինարարության հետ»[20]։

Մասսաների վերապատրաստման գործում խոշոր է մամուլի, գրականության, ակումբների, գրադարանների,

20 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 31, էջ 467։

կինոթատրոնների, կուլտուրայի պալատների, ռադիոհաղորդումների և հեռուստատեսության դերը։ Դրանց միջոցով տարվող կուլտուր-լուսավորական և կուլտուր-քաղաքական աշխատանքների նպատակն է աշխատավորներին դարձնել սոցիալիստական շինարարության գիտակից ու ակտիվ մասնակիցներ։ Աշխատավորների լայն զանգվածների գաղափարական և գեղագիտական դաստիարակության համար հանրապետությունում գործում են բազմաթիվ թատրոններ, կինոթատրոններ, Հայֆիլհարմոնիայի երաժշտական և գեղարվեստական ինքնագործ բազմաթիվ խմբեր։

1922 թ. սկզբին պետական թատրոնի (հետագայում Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոն) հիմնադրումով նոր ծաղկում ապրեց սովետահայ թատրոնը։ Տաղանդավոր դերասաններ Հասմիկը, Մ. Մանվելյանը, Ի. Ալիխանյանը, Ա. Ոսկանյանը, Հ. Ներսիսյանը, Վ. Փափազյանը, Հ. Աբելյանը, Հ. Խաչանյանը, Օ. Գուլազյանը, Վ. Վաղարշյանը, Ա. Ավետիսյանը, Մ. Ջանանը և շատ ուրիշներ իրենց ողջ ուժերը նվիրաբերեցին սովետահայ թատրոնի զարգացման ու ծաղկման գործին։

1928 թ. հիմնադրվեց Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական թատրոնը, պետական շրջիկ թատրոնը Ա. Խարազյանի ղեկավարությամբ։ Կիրովականում հիմնադրվեց Հ. Աբելյանի անվան, ապա հիմնադրվեցին Ղափանի, Արտաշատի, Ստեփանավանի և այլ քաղաքների թատրոնները։ Երևանում կազմակերպվեց օպերայի և բալետի պետական թատրոնը, պատանի հանդիսատեսի, ռուսական, ադրբեջանական, երաժշտական կոմեդիայի և տիկնիկային թատրոնները։ Սովետահայ թատրոնը դարձավ սոցիալիստական կուլտուրայի ստեղծման ակտիվ մասնակիցը։

1970 թ. հանրապետության քաղաքներում գործում էին 14 թատրոններ և մեկ կրկես, այդ թվում՝ օպերայի և բալետի՝ 1, դրամատիկական՝ 8, երաժշտական կոմեդիայի՝ 2, ժանկական և պատանի հանդիսատեսի 3 թատրոններ[21]։ Արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում, ուսում-

21 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 307։

նական խոշոր հաստատություններում և շրջաններում գործում են ժողովրդական թատրոններ, որոնք մեծ դեր են կատարում աշխատավորների գաղափարական-գեղարվեստական դաստիարակության գործում:

Սովետական իշխանության գոյության տարիներին հանրապետության քաղաքները պատվել են ակումբներով, կինոթատրոններով, գրադարաններով, կուլտուրայի պալատներով և թանգարաններով լայն ցանցով: Դրանք կուլտուր-լուսավորական, քաղաքական և գեղագիտական խոշոր աշխատանքներ են կատարում աշխատավորության շրջանում: Եթե 1913 թ. Հայաստանում գործել է 13 գրադարան, ապա 1970 թ. հանրապետությունում գործել է 1259 գրադարան (344-ը քաղաքում), մոտ 11 միլիոն գրքային և ամսագրային ֆոնդով (6,5 միլիոնը քաղաքում)[22]: Կինոթատրոնները քաղաքներում 167-ն են, ուր միայն 1970 թ. հաճախել է 20 միլիոն մարդ: Ակումբներն ու կուլտուրայի պալատները հանրապետությունում՝ 1139, իսկ քաղաքներում՝ 209 են: Դրանցում գործում են շուրջ 1000 գեղարվեստական ինքնագործ խմբեր, որոնցում ընդգրկված է մի քանի տասնյակ հազար մարդ: Կուլտուրայի պալատներ ունեն արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները. Երևանում՝ Կիրովի անվան քիմիական կոմբինատը, ալյումինի գործարանը, Լենինականում՝ Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ, Կիրովականում՝ Մյասնիկյանի անվան քիմիական, Ալավերդում՝ պղնձաքիմիական, Քաջարանում՝ պղնձամոլիբդենային կոմբինատները և այլն:

Աշխատավորության գաղափարական-գեղագիտական դաստիարակության գործին են ծառայում բազմաթիվ ստեղծագործական խմբեր՝ Հայֆիլհարմոնիայի գեղարվեստական 13 պրոֆեսիոնալ խմբերը, ինչպես նաև քաղաքներում և շրջանային կենտրոններում գործող 23 ժողովրդական թատրոնները, ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը, ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլը, պետական երգչա-

22 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 189.

խումբը, երգչախմբային ընկերության երգչախումբը, գեղարվեստական ինքնագործ բազմաթիվ խմբեր։

Հայաստանը համարվում է «թանգարան բաց երկնքի տակ», որովհետև ունի հնագույն արժեքավոր հուշարձաններ, ճարտարապետական հրաշալի կոթողներ։ Նախասովետական Հայաստանում ոչ մի թանգարան գոյություն չի ունեցել։ 1921 թ. կազմակերպվել է պետական պատմական թանգարանը, որը 1935 թ. վերակազմավորվել է և առնձվել են գրականության ու արվեստի և երկրաբանության թանգարանները։ 1970 թ. թանգարանների քանակը հասել է 33-ի, որից 3-ը՝ պատմահեղափոխական, 7-ը՝ պատմական, 12-ը՝ հուշային, 7-ը՝ գավառագիտական, 2-ը՝ բնագիտական, 1-ը՝ արվեստագիտական և 1-ը՝ գրականության պատմության թանգարաններ են[23]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակի տոնակատարության օրերին Երևանի «Հաղթանակ» զբոսայգում բացվեց Հայրենական մեծ պատերազմի պատմության թանգարանը։ Թանգարաններ կան նաև Լենինական, Կիրովական, Էջմիածին, Կամո, Գորիս, Դիլիջան և այլ քաղաքներում։ Այդ թանգարանները խոշոր դեր են կատարում աշխատավորությանը հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում։

Կուլտուր-քաղաքական աշխատանքներում կարևոր տեղ է գրավում մամուլը, որը սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում եղել է մասսաների դաստիարակման ու կազմակերպման հզոր գործոն։ Խոսելով մամուլի դերի մասին, Վ. Ի. Լենինը ասել է, որ մամուլը ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ է, կոլեկտիվ ագիտատոր, այլև մասսաների կոլեկտիվ կազմակերպիչ։ Մամուլը խոշոր դեր է կատարում ժողովրդական տնտեսության զարգացման և մասսաների կոմունիստական դաստիարակության գործում։ Դրա համար Հանրապետությունում տարեցտարի ավելանում է թերթերի, ամսագրերի տպաքանակը։ Եթե 1913 թ. լույս է

23 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 207։

տեսել 6 թերթ, 1940 թ.՝ 56, ապա 1970 թ.՝ 81 թերթ (որից 6-ը՝ քաղաքային, իսկ 35-ը՝ ֆաբրիկագործարանային), տարեկան 1.117 հազար տպաքանակով[24]: 1913 թ. լույս է տեսել 2 ամսագիր և պարբերական, 1940 թ.՝ 24, իսկ 1970 թ.՝ 101, տարեկան 12,5 միլիոն տպաքանակով[25]: 1913 թ. լույս է տեսել 55 անուն գիրք, 1940 թ.՝ 699[26], իսկ 1970 թ.՝ 1063 գիրք, 8,5 միլիոն տպաքանակով[27]:

Հեղկոմի 1921 թ. հուլիսի 8-ի դեկրետով ստեղծված պետական հրատարակչությունը խոշոր աշխատանք է կատարել: Ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետ միասին զարգացավ նաև պոլիգրաֆիական արդյունաբերությունը: Միայն «Հայաստան» հրատարակչությունը մինչև 1970 թ. հրատարակել է 3500 անուն քաղաքական, հասարակական գրականություն՝ 21 միլիոն տպաքանակով, գիտատեխնիկական 3 հազար անուն գիրք՝ 16 միլիոն տպաքանակով: Հրատարակվել և վերահրատարակվել են մեր բոլոր դասական գրողների ստեղծագործությունները: Հրատարակչությունը մեծ տեղ է տվել թարգմանական գրականությանը, որը հայ ընթերցողներին հնարավորություն է տալիս ծանոթանալու համաշխարհային գրականության գոհարներին և ռուս դասական գրականությանը: «Հայաստան», «Լույս», «Մուրճ» հրատարակչությունները տարեկան տպագրում են 1200 անուն գիրք՝ մոտ 12 միլիոն տպաքանակով:

1960 թ. Հայաստանում վաճառվել է 3,5, իսկ 1970 թ.՝ 6,5 միլիոն ռուբլու գրականություն:

Սովետական Հայաստանի գոյության հիսուն տարիներին բոլոր հրատարակությունները լույս են ընծայել մոտ 40 հազար անուն գիրք ու գրքույկ, 200 միլիոն ընդհանուր տպաքանակով:

Այժմ հետևում ենք Հանրապետության տպարանները հագեցվելու են հայրենական և արտասահմանյան նորագույն

---

24 «Печать СССР в 1974 г.», М., 1975, стр. 174, 197.

25 «Народное образование, наука и культура в СССР», стр. 370.

26 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 306:

27 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 192.

տարբերումներով, որով ավելի կընդլայնվեն մեր հրատարակչական հնարավորությունները։ Առաջիկա տարիներին կսկսվեն պոլիգրաֆիական միկրոքաղաքի կառուցման աշխատանքները։ Այդ նպատակի համար Երևան—Էջմիածին խճուղու աջ կողմում հատկացվել է 13 հեկտար հողամաս[28]։

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին Հայաստանում իրագործվեց կուլտուրական հեղափոխություն։ Հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրան խոշոր զարգացում ապրեց, նա ստացավ հոգևոր մշակույթի նոր արժեքներ ստեղծելու անսահման հնարավորություններ։ Հայաստանի աշխատավորները հաղորդակից դարձան մարդկության կուլտուրայի գանձերին։ Այժմ կուլտուրայի բոլոր հարստությունները, գիտության նվաճումները, տեխնիկայի հրաշալիքները դարձել են նյութական ու հոգևոր արժեքների իսկական ստեղծողի՝ ժողովրդի սեփականությունը։

2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդ սովետական պետությունը մարդկության պատմության մեջ առաջին անգամ ստանձնեց վերին աստիճանի մարդասիրական մի խնդիր՝ ապահովել յուրաքանչյուր քաղաքացու ձրի ու որակյալ բժշկական օգնությունը։ Պետության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պատմական շատ կարճ ժամանակամիջոցում մեր երկրում ստեղծվեց առողջապահության նյութատեխնիկական ամուր բազա, հաջողությամբ լուծվեց բժշկական կադրերի պատրաստման գործը։

Ինչպես արդեն ասել ենք, առաջին համաշխարհային պատերազմի, թուրքական զավթիչների արշավանքների, ինչպես նաև քաղաքացիական կռիվների հետևանքով հանրապետության ժողովրդական տնտեսությունը քայքայվել էր։ Պատերազմները երկիրը լցրել էին հաշմանդամներով,

---

28 «Դրքնի աշխարհ», 15 նոյեմբերի, 1968։

որբերով, հիվանդներով, գաղթականներով։ Երկրում տարածված էին ծաղիկը, խոլերան, տիֆը և մալարիան, որոնք տասնյակ հազար կյանքեր էին խլում։ Ծայրահեղ աղքատության պայմաններում սովետական նորաստեղծ կառավարությունը դիմում էր հնարավոր ամեն մի միջոցի՝ աշխատավորությանը քաղցի ու սովի ճիրաններից, համաճարակ հիվանդություններից փրկելու համար։ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո նորաստեղծ կառավարությունը անմիջապես ձեռնամուխ եղավ բժշկասանիտարական հիմնարկներ ստեղծելու և ժողովրդական առողջապահության հարցը կազմակերպելու անհետաձգելի գործին։ Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ պատմական ամենակարճ ժամանակամիջոցում ոչ միայն վերականգնվեց հանրապետության քայքայված տնտեսությունը, այլև վերացան սովն ու համաճարակային հիվանդությունները։ Հանրապետության քաղաքներում, հատկապես Երևանում ու շրջանային կենտրոններում, կառուցվեցին բազմապրոֆիլ հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, ծննդատներ, սանիտարէպիդեմիոլոգիական կայաններ և բժշկական այլ հիմնարկներ։ Երևանում բացված բժշկական ինստիտուտի և հանրապետության մի շարք քաղաքներում կազմակերպված բժշկական տեխնիկումների, ուսումնարանների շնորհիվ հանրապետության բոլոր բուժհիմնարկներն ապահովվեցին բարձրորակ և միջին որակի բուժաշխատողներով։ Տարեցտարի ավելացավ բուժհիմնարկների տեխնիկական բազան։ Հիվանդանոցներն ու պոլիկլինիկաները հագեցվեցին բժշկական սարքավորումներով։

Երևանի նորաստեղծ պետական համալսարանում բացվեց բժշկական ֆակուլտետ, որը 1927 թ. ավեց իր առաջին 32 շրջանավարտները։ Նրանցից շատերը դարձել են ականավոր մասնագետներ։ 1930 թ. բժշկական ֆակուլտետն առանձնացավ պետական համալսարանից և ստեղծվեց Երևանի բժշկական ինստիտուտը։ Սկսվեց բժշկական կրթության աննախընթաց զարգացման մի նոր ժամանակաշըր-

ջան: Այդ տարիներին ինստիտուտում կազմակերպվեցին բժշկագիտության համարյա բոլոր մասնաճյուղերի գծով առանձին ամբիոններ, ուր աճում ու գիտական մկրտություն են ստանում հիանալի կադրեր: Ինստիտուտն իր գոյության տարիներից մինչև 1971 թ. ավել է շուրջ 8 հազար բժիշկներ, որոնք հաջողությամբ աշխատում են Հայաստանում և եղբայրական հանրապետություններում:

Երևանի բժշկական ինստիտուտը մեծ վերելք ապրեց հատկապես նապատերազմյան տարիներին: Նախկինում գործող բուժական և սանիտարական ֆակուլտետների կողքին ստեղծվեցին մանկաբուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներ: Ամբիոնների թիվը 60-ից անցավ, իսկ պրոֆեսորադասախոսական կազմը հասավ 350-ի: Նրանց թվում կան ՍՍՀՄ բժշկական գիտությունների և Հայաստանի գիտությունների ակադեմիաների 6 անդամներ և թղթակից-անդամներ, 70-ից ավելի դոկտոր-պրոֆեսորներ, ավելի քան 250 գիտության թեկնածուներ ու դոցենտներ, որոնց զգալի մասը ինստիտուտի նախկին սաներն են:

Սովետական իշխանության տարիներին առողջապահական ցանցի աճման հետ հանրապետությունում, մասնավորապես քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, աճել է հիվանդանոցների, մահճակալների և բժիշկների ու միջին օրակի բուժաշխատողների քանակը: Այդ ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Այսպիսով, բնակչության ապահովվածությունը բժիշկներով հետևյալն է՝ 10 հազար մարդու հաշվով 29 բժիշկ: Միջին բժշկական անձնակազմը 1913 թ. 153 հոգուց 1940 թ. հասել էր 2327, իսկ 1970 թ.՝ 17867 մարդու[29], կամ 10 հազար մարդու հաշվով 70 հոգի: Սովետական Հայաստանի ժողովրդական առողջապահության բյուջեն 1925—26 տնտեսական տարում եղել է 0,5, 1927—28 տնտեսական տա-

---

29 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 196.

րում 2,5, 1940 թ.՝ 7, 1960 թ.՝ 35,7, 1965 թ.՝ 56[30], իսկ 1970 թ.՝ 81,6 միլիոն ռուբլի[31]։

Տարիներ	1913	1940	1950	1960	1970
Հիվանդանոցների քանակը	6	96	158	269	261
Մահճակալների քանակը[32]	212	4092 3278	6467 4551	13170 10310	21875 18635
Բժիշկների քանակը	73	1020 813	2575 2068	4571 4070	7324 6898
Միջին օրակի բուժ. աշխատողների քանակը	153	2327 1865	4486 2966	11335 8131	17867[33] 14390

Պետական բյուջեով հատկացված գումարների շնորհիվ հանրապետության քաղաքներում, քաղաքատիպ ավաններում ու շրջանային կենտրոններում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին հիվանդանոցների, պոլիկլինիկաների, դիսպանսերային հիմնարկների, ծննդատների և բժշկական այլ հիմնարկների բազմաթիվ շենքեր։ Միայն վերջին տարիներին Երևանում շահագործման հանձնվեցին Վ. Ի. Լենինի անվան հանրապետական հիվանդանոցի, կարդիոլոգիայի և սրտի վիրաբուժության, կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի, նուրբ օրգանական քիմիայի և այլ ինստիտուտների շենքերի համալիրները։ Հանրապետության աշխատավորության առողջապահության հարցերով են զբաղվում բժշկագիտական բազմաթիվ ինստիտուտներ՝ Երևանի բժշկական, բժիշկների կատարելագործման, էպիդեմիոլոգիայի և հիգիենայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի,

30 Ի. Փարսադանյան, Հայաստանի առողջապահության պատմություն (1828—1965 թթ.), Երևան, 1973, էջ 281, 302, 429։

31 Տվյալները վերցված են ՀՍՍՀ առողջապահության մինիստրության պլանֆինբաժնից։

32 Համարիչը ցույց է տալիս հանրապետության, իսկ հայտարարը՝ քաղաքային ցանցը։

33 Տվյալները վերցված են ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության կուլտուր-առողջապահական բաժնից։

կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի, հեմատոլոգիայի և արյան փոխներարկման, տրավմատոլոգիայի, օրթոպեդիայի, աշխատանքի հիգիենայի և պրոֆհիվանդությունների, կարդիոլոգիայի և սրտային վիրաբուժության, ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի, ֆիզիոլոգիայի, բիոքիմիայի և նաև օրգանական քիմիայի ինստիտուտները[34]: Այդ ինստիտուտների կոլեկտիվները բեղմնավոր աշխատանք են կատարում գիտական պրոբլեմների մշակման ուղղությամբ, որոնք կապված են բազմաթիվ հիվանդությունների կանխման, բուժման, ինչպես նաև մարդու երկարակեցության հարցերի հետ: Մեր հանրապետությունում կառավարության ձեռնարկած միջոցառումների, բժշկական աշխատողների անձնվեր աշխատանքի շնորհիվ անցյալի գիրկն են անցել խոլերան, ժանտախտը, բնական ծաղիկը, մալարիան, բծավոր տիֆը, տրախոման, բորը և այլ հիվանդություններ: Իրական նախադրյալներ են ստեղծված հիվանդությունների այլ խմբերի նվազեցման և հսպառ վերացման համար:

Երեխաների նկատմամբ պետության հոգատարության շնորհիվ հանրապետության քաղաքներում ստեղծվել է մսուրների, մանկապարտեզների, մանկական հիվանդանոցների, մանկական և կանանց կոնսուլտացիաների և կաթնախոհանոցների լայն ցանց, որը նպաստում է մանկական հիվանդությունների և մահացության կրճատմանը: Շարունակ ավելանում է մսուրների և մանկապարտեզների քանակը: Եթե հանրապետության քաղաքներում և քաղաքատիպ ավաններում 1940 թ. մսուրներում և մանկապարտեզներում ընդգրկված է եղել 25 հազար երեխա[35], ապա 1970 թ.՝ 140 հազար[36]:

Մինչ Հայրենական մեծ պատերազմը կենսաթոշակառուների և նպաստ ստացողների քանակը 12 հազար էր: 1943 թ. այն հասավ 126 հազարի, որից 103 հազարը զինծառայողների ընտանիքներն էին, իսկ 10 հազա-

34 Ռ. Փարսադանյան, նշվ. աշխ., էջ 470:

35 Սովետական Հայաստանը 50 տարում, էջ 318:

36 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 570.

րը՝ Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները։ Կենսաթոշակների մասին կառավարության 1956 թ. հուլիսի 14-ի օրենքով բարձրացվեցին կենսաթոշակները և վերացվեցին եղած սահմանափակումները։

1971 թ. սկզբին Հանրապետությունում թոշակառուների քանակը 305 հազար էր[37]։

Կլիմայական չափազանց բարենպաստ պայմանները, ինչպես և հանքային բուժիչ ջրերը հնարավորություն են ստեղծել Հանրապետությունում ունենալու բազմաթիվ առողջարաններ՝ Ջերմուկ, Արզնի, Դիլիջան, Հանքավան, Կիրովական, Արարատ, Սևան, Ստեփանավան։ Մանկական սանատորիաներ կան Աղավնաձորում Արզնիում, Գյուլագարակում, Ջերմուկում, Դիլիջանում, Լևոնիականում, Նորքում, Ծաղկաձորում Արարատում։ Հանգստյան տներից են «Կարմրաքարը», «Լոռին», «Սևանը», ինչպես նաև բազմաթիվ պանսիոնատներ։ Ինչպես տեսնում ենք, սովետական իշխանության տարիներին ստեղծվել է առողջարանների և հանգստյան տների լայն ցանց։ 1970 թ. Հանրապետությունում գործել է 27 առողջարան՝ 5516 տեղով և 10 հանգստյան տուն՝ 1540 տեղով[38]։ Դրանցում 1970 թ. բուժվել ու հանգստացել է 70 հազար մարդ։ Հանրապետությունում միջոցառումներ են ձեռնարկված առողջարանային բուժումը բարելավելու, առողջարանների ու հանգստյան տների ցանցն ընդարձակելու ուղղությամբ։

Հանրապետության արդյունաբերական բազմաթիվ խոշոր ձեռնարկություններ ունեն իրենց առողջարանները, հանգստյան տները, պանսիոնատներն ու պիոներական ճամբարները։

Բնակչության առողջության պահպանման տեսակետից խոշոր նշանակություն ունեն ֆիզկուլտուրան և սպորտը, որոնք հանրապետության քաղաքներում խոշոր վերելք ապրեցին հատկապես նախապատերազմյան տարիներին։ Այդ նպատակի համար պետությունն ամեն տարի խոշոր հատ-

37 Նույն տեղում։

38 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 199.

կացումներ է կատարում։ 1970 թ. Հանրապետությունում գործում էին 2763 ֆիզկուլտուրային խմբեր, որոնցում ընդգրկված էին 265 հազար պատանիներ ու երիտասարդներ։ Հատկապես վերջին տարիներին արտադրական ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում լայն կիրառություն է գտել արտադրական մարմնամարզությունը։ Հանրապետության քաղաքներում 1970 թ. գործում էին 16 մարզադաշտեր 292 ֆուտբոլային դաշտեր, 141 վոլեյբոլի, բասկետբոլի և թենիսի հրապարակներ[39]։

Ներքին հիվանդությունների գծով բժշկագիտության բնագավառում բեղմնավոր աշխատանք են կատարել վաստակաշատ և ականավոր մասնագետներ, պրոֆեսորներ Լ. Հովհաննիսյանը, Ա. Մելիք-Ադամյանը, Ռ. Գյանջունցյանը։ Մեծ աշխատանք են կատարում բժիշկ բներապևտներ Ա. Սիմոնյանը, Ա. Քաթանյանը, վ. Ավագյանը, շնորհալի մասնագետներ Ռ. Ստամբոլցյանը, Զ. Դոլաբջյանը, Ա. Միքայելյանը, Գ. Բագալյանը և շատ ուրիշներ։ Հանրապետությունում վիրաբուժության հիմնադիր, պրոֆեսոր Հ. Քեչիկի գործը շարունակեց գիտության վաստակավոր գործիչ Ս. Շարիմանյանը՝ ՀՍՍՀ-ի առաջնակարգ վիրաբույժներից մեկը։

Մեր հանրապետության ավագագույն և ականավոր վիրաբույժներից են եղել պրոֆեսորներ Հ. Միրզա-Ավագյանը, Ռ. Յոլյանը, Ք. Պետրոսյանը, իսկ այժմ հայտնի են Ռ. Պապոնյանը, Հ. Գևորգյանը, Ս. Գալստյանը և ուրիշներ։ Հայաստանում առողջապահության գործի, բժշկագիտության զարգացման մեջ մեծ վաստակ ունեն ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Ալեքսանյանը և Հայաստանում ռենտգենոլոգիայի հիմնադիր, ՍՍՀՄ բժշկական գիտությունների թղթակից-անդամ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Բ. Ֆանարջյանը, որը շուրջ 100 գիտական աշխատությունների հեղինակ է։

---

39 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի պլանբաժնից։

Հայաստանում դեղորայքային պատրաստուկների սինթեզման բնագավառում խոշոր ծառայություն է մատուցել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Մնջոյանը, որն արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Բիոքիմիայի զարգացման բնագավառում խոշոր ծառայություն ունի ակադեմիկոս Հ. Բունիաթյանը, որի գիտական ուսումնասիրությունները քաջ հայտնի են միջազգային բժշկագիտական շրջաններում: Բժշկագիտության արժեքավոր աշխատությունների հեղինակներ են Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, ֆարմակոլոգ Ս. Միրզոյանը, ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Հարությունյանը, պրոֆեսոր Ա. Մեհրաբյանը և ուրիշներ: Մանկաբարձության և գինեկոլոգիայի բնագավառում բեղմնավոր աշխատանք են կատարել պրոֆեսոր Գ. Արեշյանը, Ա. Ահարոնովը, իսկ այժմ շարունակում են կատարել պրոֆեսորներ Պ. Մարգարյանը, Բ. Սայադյանը, Վ. Խաչատրյանը և ուրիշներ: Հայաստանում բուռն զարգացում ապրեց սրտային վիրաբուժությունը, որի բնագավառում բեղմնավոր աշխատանք կատարեց դոկտոր-պրոֆեսոր Ա. Միքայելյանը, իսկ ներվային վիրաբուժության ուղղությամբ՝ պրոֆեսորներ Ս. Զոհրաբյանը, ապա Ս. Հովհաննիսյանը, ուրոլոգիայի վիրաբուժության ուղղությամբ՝ Ա. Միդոյանը և ուրիշներ: Երևանի բժշկական և բժիշկների կատարելագործման ինստիտուտներում ստեղծվել են վիրաբուժական ամբիոններ, որոնք ղեկավարում են գիտակ և հմուտ վիրաբույժներ, պրոֆեսորներ Ս. Գալստյանը, Վ. Սարուխանյանը, Վ. Մալխասյանը, Ս. Ավդալբեկյանը, Ս. Հովհաննիսյանը[40] և ուրիշներ:

Հանրապետության ժողովրդական առողջապահության ցանցում են աշխատում ավելի քան 100 գիտության դոկտորներ և շուրջ 500 գիտության թեկնածուներ[41]:

---

40 Մանրամասնությունները տե՛ս Ռ. Փաոսադանյան, նշվ. աշխ., էջ 439—441, 469—479:

41 Տվյալները տե՛ս Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության կադրերի բաժնում:

Աշխատավորության առողջությունը պահպանելու բնագավառում բեղմնավոր աշխատանք կատարելու համար Լենինի շքանշանով պարգևատրվել են Լենինականի առաջին հիվանդանոցի բժշկուհի Ա. Հարությունյանը, Երևանի հակատուբերկուլյոզային դիսպանսերի բաժանմունքի վարիչ Վ. Զախկալյանը, Երևանի էպիդեմիոլոգիայի և հիգիենայի ինստիտուտի դիրեկտոր Գ. Պապովյանը, Ալավերդու շրջանի նախկին գլխավոր բժիշկ Ա. Պիվազյանը[42]:

Բժշկության բնագավառում մատուցած մեծ ծառայության համար Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման է արժանացել Վ. Ի. Լենինի անվան հանրապետական հիվանդանոցի թերապևտիկ բաժնի վարիչ, վաստակաշատ բժշկուհի Հռիփսիկ Սինանյանը:

Այսպիսով, սովետական առողջապահության հաջողությունները սերտորեն կապված են մեր երկրի ժողովրդական տնտեսության անշեղ զարգացման, սովետական մարդկանց կյանքի նյութական պայմանների բարելավման ու կուլտուրական մակարդակի աճի, բարձրորակ բժշկական կադրերի պատրաստման, առողջապահական հիմնարկների ցանցի ընդարձակման, բժշկական գիտության և բժշկական արդյունաբերության զարգացման հետ:

3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ մեր երկրում ընդմիշտ վերացավ մարդու շահագործումը մարդու կողմից, իրականացավ աշխատանքի համընդհանրությունը, հասարակության բոլոր աշխատունակ անդամների համար ստեղծվեցին աշխատելու բոլոր հնարավորությունները:

Վ. Ի. Լենինը ժողովրդական տնտեսության խորհուրդների I համագումարում արտասանած իր ճառում ասել է. «Միայն սոցիալիզմը հնարավորություն կտա պրոդուկտների հասարակական արտադրությունն ու բաշխումը լայնորեն տարածել և գիտական նկատառումներով իսկապես ենթար-

42 Ռ. Փարսադանյան, նշվ. աշխ., էջ 420:

կել այն նպատակին, որ ինչպես բոլոր աշխատավորների կյանքը դարձնել առավել հեշտ, և այնպես, որ նա բարեկեցության հնարավորություն ընձեռի աշխատավորներին։ Միայն սոցիալիզմը կարող է իրականացնել այս։ Եվ մենք գիտենք, որ նա պիտի իրականացնի այս, և այսպիսի ճշմարտության ըմբռնումը կազմում է մարքսիզմի ամբողջ դժվարությունը և նրա ամբողջ ուժը»[43]։

ՍՄԿԿ Ծրագրում նշված է, որ սոցիալիզմի նպատակը ժողովրդի հարաճուն պահանջմունքների ավելի լրիվ ապահովումն է, հասարակական արտադրության անընդհատ զարգացման և կատարելագործման ճանապարհով։

Սովետական Հայաստանի բնակչության կենսամակարդակի բարձրացման բազան ժողովրդական տնտեսության արագ զարգացումն ու նրա կառուցվածքի բարելավումն է։ Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնումը և դրանով պայմանավորված գործազրկության վերացումը դուզակցվեցին աշխատունակ բնակչության զբաղվածության արագ աճի, աշխատավորների ռեալ եկամուտների և կենսամակարդակի բարձրացման հետ։

Սովետական Հայաստանում ժողովրդական տնտեսության արագ զարգացման շնորհիվ տեղի է ունեցել բանվոր-ծառայողների աշխատավարձի անշեղ աճ, որով բարձրացել է բնակչության կենսամակարդակը։ Սակայն բանվոր-ծառայողների կենսամակարդակի աճը չի սահմանափակվել միայն աշխատավարձի աճով։ Բնակչության կենսամակարդակի բարձրացման համար լրացուցիչ աղբյուրներ են ծառայել հասարակական սպառման ֆոնդերը, որոնք դրսևորվելով պետական բյուջեից հատկացվող սոցիալ-կուլտուրական միջոցառումների ձևով, անընդհատ աճել են։

Մեր երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմքը ՍՍՀՄ ազգային եկամտի սիստեմատիկ աճն է, որի 3/4-ը հատկացվում է անձնական սպառմանը։ ՍՍՀՄ ազգային եկամուտը 1969 թ. կազմել է 1913 թ. մակարդակի

43 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 511։

4632, 1940 թ. մակարդակի՝ 866, իսկ 1960 թ. մակարդակի՝ 199 տոկոսը[44]։

Ազգային եկամտի արագ աճը պայմաններ ստեղծեց ապահովելու ՍՍՀՄ բնակչության բարեկեցության սիստեմատիկ բարձրացումը։

Ազգային եկամտի աճման տեմպերը ՍՍՀՄ-ում և Հայկական ՍՍՀ-ում

Ընդամենը ազգային եկամուտ տոկոսներով 1960 թ. նկատմամբ համադրելի գներով	
ՍՍՀՄ 1960 թ. 100	1970 թ. 199,0
ՀՍՍՀ 1960 թ. 190	1970 թ. 235,0
Ազգային եկամուտը բնակչության մեկ շնչի հաշվով ռուբլիներով	
ՍՍՀՄ 1960 թ. 677	1970 թ. 1089
ՀՍՍՀ 1960 թ. 577	1970 թ. 815
Նույնը տոկոսներով՝ 1960 թ. նկատմամբ	
ՍՍՀՄ 100	1970 թ. 161,0[45]
ՀՍՍՀ 100	1970 թ. 141,0

Ինչպես տեսնում ենք, մեր Հանրապետությունում ազգային եկամուտը աճում է ավելի բարձր տեմպերով, քան միջին միութենականը։ 1970 թ. ազգային եկամուտը ՍՍՀՄ-ում կազմել է 199, իսկ Հայկական ՍՍՀ-ում՝ 235 տոկոս։ Բայց բնակչության մեկ շնչին ընկնող ազգային եկամտի աճով մեր Հանրապետությունը ետ է մնում միջին միութենական մակարդակից։ Դրա հիմնական պատճառը Հանրապետության բնակչության արագ աճն է։

Բնակչության դրամական եկամուտներից հիմնականը աշխատավարձն է, որը 1970 թ. կազմում էր ընդհանուրի 75 տոկոսը։ Մինչև 1954 թ. բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձի բարձրացման գլխավոր ուղին հանդիսանում էր ժողովրդական սպառման առարկաների գների մասսայական և սիստեմատիկ իջեցումը, իսկ հետագայում՝ աշխատավարձի բարձրացումը, որը ոչ միայն այժմ, այլև առաջիկա-

---

44 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 533—534.

45 Գ. Վարիքյան, Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1972, էջ 65։

յում մնալու է սովետական ժողովրդի կենսամակարդակի բարձրացման գլխավոր միջոցը։

Բանվոր-ծառայողների միջին ամսական աշխատավարձը 1970 թ. Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ հասել է 123 ռուբլու։ Այդ թվում արդյունաբերության մեջ՝ 122, շինարարության մեջ՝ 173, իսկ տրանսպորտում՝ 135 ռուբլու[46]։ Մեր հասարակարգում բնակչության եկամուտները չեն սահմանափակվում միայն աշխատավարձով։ Դրանք զգալի չափով լրացվում են սպառման հասարակական ֆոնդերից ստացվող եկամուտներով։

Հանրապետությունում տարեցտարի աճում են սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար կատարվող հատկացումները։ Այդ են ապացուցում ներքոհիշյալ թվերը։

1923—24 տնտեսական տարվանից մինչև 1939 թ. հանրապետության պետական բյուջեից սոցիալ-կուլտուրական միջոցառումների վրա ծախսվել է 124,5 միլիոն ռուբլի, որից լուսավորության վրա՝ 93,1, իսկ առողջապահության վրա՝ 25,8 միլիոն ռուբլի։

	(միլիոն ռուբլիներով)			
	1940 թ.	1950 թ.	1960 թ.	1970 թ.
Ընդամենը սոց. կուլտ. միջոցառումներ	31,8	70,8	164,7	435,8
Այդ թվում՝				
Լուսավորության	23,8	49,7	92,2	262,0
Առողջապահության	6,3	15,1	31,8	87,7
Սոցիալական ապահովագրության	1,65	5,1	32,1	79,2[47]

1970 թ. հասարակական սպառման ֆոնդերը կազմել են 582,3 միլիոն ռուբլի, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 231,3 ռուբլի (անվճար ծառայություններ՝ դրամական 128,3 ռուբլի, վճարումներ՝ 103,0 ռուբլի)։

46 Նույն տեղում, էջ 93։

47 Նույն տեղում, էջ 95։

Ինչպես տեսնում ենք, 1970 թ. պետական բյուջեից սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար կատարվող հատկացումները կազմում էին 435,8 միլիոն ռուբլի, իսկ հասարակական սպառման ֆոնդերից բնակչության ստացած վճարումներն ու արտոնությունները՝ 582,3 միլիոն ռուբլի։ Դա նշանակում է, որ մեր հանրապետությունում 1970 թ. հասարակական սպառման ֆոնդերն ավելի քան 34 տոկոսով[48] գերազանցել են պետական բյուջեից սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար կատարվող ծախսերը։ Մեր հանրապետության յուրաքանչյուր ընտանիք 1970 թ. միջին հաշվով հասարակական սպառման ֆոնդերից[49] ստացել է տարեկան ավելի քան հազար ռուբլի, որը ընտանիքի բյուջեի համար շոշափելի գումար է։

Հայկական ՍՍՀ-ում հասարակական սպառման ֆոնդերից կուլտուր-լուսավորական հիմնարկների պահպանության համար 1960 թ. հատկացվել է 4,5, իսկ 1970 թ.՝ 10 միլիոն ռուբլի։ Դրա շնորհիվ հանրապետությունում ստեղծվել է թատրոնների, ակումբների, կինոթատրոնների և թանգարանների լայն ցանց։

Թրամային վճարումներից իրենց տնտեսական կշռով և նշանակությամբ առաջին տեղը բռնում են կենսաթոշակները և նպաստները։ 1970 թ. հասարակական սպառման ֆոնդերի կազմում ծերացած և անաշխատունակ մարդկանց կյանքի պահպանման ծախսերը կազմում են շուրջ 22 տոկոս։ Այդ նպատակով կատարված հատկացումները 1960 թ. կազմել են շուրջ 59 միլիոն ռուբլի (բնակչության մեկ շնչի հաշվով 31,5 ռուբլի), իսկ 1970 թ.՝ շուրջ 129,5 միլիոն ռուբլի[50] (բնակչության մեկ շնչի հաշվով 51,4 ռուբլի)։ Ինչպես տեսնում ենք, 1960 թ. համեմատությամբ 1970 թ. հատ-

48 Նույն տեղում, էջ 94։

49 Հասարակական սպառման ֆոնդերը կազմում են աճող սերնդի պահպանման ու դաստիարակման, կադրերի պատրաստման, բնակչության առողջության պահպանման, հանգստի կազմակերպման, ծերացած և անաշխատունակ անձանց կյանքի պահպանման համար կատարված ծախսումները։

50 Գ. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 118։

կացվող գումարները կրկնապատկվել են։ 1971 թ. հունվարին Հայկական ՍՍՀ-ում ընդհակ է ստացել 305 հազար մարդ, որից 271 հազարը՝ ծերության, հաշմանդամության և երկարատև ծառայության համար։

Սովետական իշխանության տարիներին մեծ չափերով բարձրացել են Հայաստանի աշխատավորների կենսամակարդակը, նրանց ռեալ եկամուտները, ապրանքաշրջանառության ծավալը։ Եթե 1940 թ. հանրապետության 264 գրամարկղներում ավանդային հաշիվների քանակը եղել է 80 հազար, ապա 1970 թ.՝ 602 խնայդրամարկղներում այն հասել է 641 հազարի[51]։ Միաժամանակ, ավանդների մնացորդը 1940 թ. կազմել է 3,1 միլիոն ռուբլի (որից 2,3 միլիոն ռուբլին քաղաքներում), իսկ 1970 թ.՝ 628 միլիոն ռուբլի, որից 519,5 միլիոն ռուբլին քաղաքներում։ 1970 թ. Երևանի 72 խնայդրամարկղներն ունեցել են 282 հազար ավանդատուներ, որոնց ավանդների գումարը հասնում է 286 միլիոն ռուբլու (բնակչության մեկ շնչի հաշվով միջին ավանդը կազմել է 352 ռուբլի)[52]։

Աշխատավորության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն ցուցանիշներից մեկը ապրանքաշրջանառության ծավալի մեծացումն է։ Ապրանքաշրջանառության հիմնական մասն իրագործվում է պետական առևտրի միջոցով (75 տոկոսը)[53], ապա կոոպերատիվ և կոլտնտեսային առևտրի միջոցով։

Սովետական իշխանության տարիներին հանրապետությունում մեծ չափով աճել է պետական և կոոպերատիվ առևտրական ձեռնարկությունների թիվը և դրանցում կատարվող ապրանքաշրջանառությունը։ Եթե 1928 թ. հանրապետությունում գործել է 661 առևտրական ձեռնարկություն (341-ը քաղաքներում և քաղաքատիպ ավաններում), 1940 թ.՝ 2710 (1072-ը քաղաքներում), 1950 թ.՝ 3329 (1875-ը քա-

---

51 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 563, 564.

52 «Ереван в цифрах» (статистический сборник), стр. 144.

53 Ս. Ջուրաբյան, *Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը 50 տարում*, Երևան, 1971, էջ 310։

քաղաքներում), 1960 թ.՝ 4786 (3071-ը քաղաքներում), ապա 1970 թ.՝ 6733, որից 4873-ը քաղաքներում։

Հասարակական սննդի ձեռնարկությունների քանակը 1928 թ. եղել է 65, որից 58-ը քաղաքներում, 1940 թ.՝ 562, որից 436-ը քաղաքներում, 1970 թ. այն հասել էր 2890-ի, որից 1989-ը քաղաքներում։ Վերոհիշյալ պետական և կոոպերատիվ առևտրական, հասարակական սննդի ձեռնարկություններում 1928 թ. կատարվել է 3,9 միլիոն ռուբլու ապրանքաշրջանառություն, որից 2,7 միլիոնը քաղաքներում, իսկ 1940 թ.՝ 109 միլիոն, որից 72 միլիոնը քաղաքներում, 1950 թ.՝ 237 միլիոն, որից 185 միլիոնը քաղաքներում, 1960 թ.՝ 520 միլիոն, որից 417 միլիոնը քաղաքներում, 1970 թ.՝ 1.276 միլիոն որից 1.049 միլիոնը քաղաքներում[54]։

1970 թ. միայն Երևանում վաճառվել է 600 ավտոմեքենա, 11.500 հեռուստացույց, 8 հազար ռադիոընդունիչ, 8 հազար փոշեծծիչ, 17 հազար սառնարան և կենցաղում օգտագործվող այլ սարքավորումներ։

Ապրանքաշրջանառությունը 1940 թ. համեմատությամբ 1970 թ. աճել է 904 տոկոսով (մեկ շնչի հաշվով այն ավելացել է ավելի քան 6 անգամ[55]*)։ Ապրանքաշրջանառությունը բնակչության մեկ շնչի հաշվով 1928 թ. կազմել է 4 ռուբլի, 1940 թ.՝ 82 ռուբլի, 1950 թ.՝ 175 ռուբլի, 1960 թ.՝ 280 ռուբլի, իսկ 1970 թ.՝ 501 ռուբլի*[56]։


Բնակչության կենսամակարդակի բարձրացման միջոցներից են նաև կենսաթոշակները, բազմազավակ և միայնակ մայրերին տրվող նպաստներ։ Բնակարանային շինարարությունը և կոմունալ-կենցաղային սպասարկումը բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում կարևորագույն նշանակություն ունեցող հարցեր են։ 1970 թ. հանրապետության քաղաքներում բնակչության մեկ շնչին ընկնող բնակելի տարածությունը հասավ 7 քառակուսի մետրի։

---

54 Թվերը տե՛ս «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 229—231։

55 Նույն տեղում, էջ 230։

56 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 137—138.



Դափանի համալսարանական քաղաքը

Հանրապետության քաղաքներում կառուցվել են նոր, ժամանակակից պահանջներին համապատասխան բնակարաններ, իրենց կոմունալ բոլոր հարմարություններով:

Հայկական ՍՍՀ-ում տարեցտարի աճել է բնակելի ֆոնդը: Հանրապետության քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում 1960 թ. եղել է 7762 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, որից 4315 հազար քառակուսի մետրը՝ Երևանում[57], իսկ 1970 թ.՝ 14.150 հազար քառակուսի մետր, որից 7340 հազար քառակուսի մետրը Երևանում[58]: Քաղաքներում անձնական սեփականություն կազմող բնակելի ֆոնդը 1960 թ. կազմել է 4,6, իսկ 1970 թ.՝ 5,4 միլիոն քառակուսի մետր: Այդ տարիներին ամբողջ հանրայնացված բնակարանային ֆոնդի կազմում բարեկարգված բնակելի տարածության տեսակարար կշիռը 1970 թ. հատավ ջրմուղով՝ 85, կոյուղով՝ 84, կենտրոնացված ջեռուցմամբ՝ 83, գազով՝ 82 տոկոսի[59]: Ժողովրդի նյութական բարեկեցության մակարդակի բարձրացման կարևոր պայմաններից մեկն էլ կենցաղի բոլոր պրոցեսների և բնակարանային-կոմունալ տնտեսության լայն էլեկտրիֆիկացումն է: Այդ ուղղությամբ Հանրապետությունում ձեռք են բերվել որոշակի հաջողություններ հատկապես 1960-ական թվականներին:

Կոմունալ կենցաղային կարիքների համար էլեկտրաէներգիայի սպառումը 1960—1970 թթ. աճել է մոտ 2 անգամ: Բնակարանային կոմունալ-տնտեսության տեսակարար կշիռը էլեկտրաէներգիայի սպառման մեջ 1970 թ. ՍՍՀՄ-ում կազմել է 16, իսկ մեր Հանրապետությունում՝ 7,3 տոկոս, մինչդեռ 1964 թ. Անգլիայում այն կազմել է 52, ԱՄՆ-ում և Շվեյցարիայում՝ 49, Նորվեգիայում՝ 36, Ֆրանսիայում՝ 27 տոկոս[60]: Վերոհիշյալ թվերը ցույց են տալիս, որ մեր երկրում, հատկապես մեր Հանրապետությունում, կոմունալ-

---

57 Սովետական Հայաստանը 50 տարում, էջ 255:

58 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 161.

59 Նույն տեղում:

60 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1971, № 9, էջ 64:

կենցաղային կարիքների համար էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը դեռևս ցածր է։

Կենցաղային էլեկտրասարքերով բնակչության ապահովվածության աճը (100 ընտանիքի հաշվով). Տառերով[61]

Կենցաղային էլեկտրասարքերի տեսակները	1960 թ.	1970 թ.	Տոկոսներով աճը 1960 թ. համեմատությամբ
Ռադիոընդունիչներ և ռադիոլսաններ	31	67	216
Հեռուստացույցներ	35	70	200
Սառնարաններ	23	45	202
Լվացքի մեքենաներ	29	61	210
Էլեկտրական սրգուկներ	50	80	160
Փոշեծծիչներ	16	25	155
Հատակմաքրիչներ	6	10	167

Ինչպես տեսնում ենք, կենցաղային էլեկտրասարքերով բնակչության ապահովվածությունն անբավարար է։ Անհրաժեշտ է առաջիկա տարիներին ավելացնել էլեկտրական սարքերի թողարկումը, ընդլայնել դրանց տեսականին և կատարելագործել, ինչպես նաև ընդլայնել դրանց վարձակալման սիստեմը։

Հասարակական արտադրության զարգացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, հանրային հարստության ավելացման շնորհիվ 1920—1970 թթ. աճել են հանրապետության բանվոր-ծառայողների ռեալ եկամուտները, մեծացել են սպառման հանրային ֆոնդերը, զարգացել են ժողովրդական կրթությունը, գիտությունը, արվեստն ու գրականությունը, բարելավվել է ժողովրդական առողջապահության գործը, ընդլայնվել է առևտրի ու բնակչության կենցաղային սպասարկումը։

Այսպիսով, կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գլխավոր նպատակը աշխատավորության կենսական շահերին ծառայելն է, նրանց նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման նկատմամբ անդուլ հոգատարությունը։

61 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԱՃԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ

Երկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և արդյունաբերական նոր օջախների ստեղծումը խթանեցին քաղաքային բնակչության, հատկապես բանվոր դասակարգի աճը, ինչպես նաև նոր քաղաքների առաջացումը։ Արդյունաբերության տեղաբաշխման շնորհիվ, ինչպես ասվեց, երկրի շատ քաղաքատիպ ավաններ, շրջանային կենտրոններ վերածվեցին սոցիալիստական նոր քաղաքների։

Սոցիալիստական շինարարության տարիներին ձեռք բերված հաջողությունների, աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների բարելավման պայմաններում մեծ ուշադրություն է դարձվում քաղաքային տնտեսության հարցերին։ Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեի 1931 թ. հունիսի 15-ին կայացած պլենումը քննարկելով «Մոսկվայի քաղաքային տնտեսության մասին և ՍՍՀՄ քաղաքային տնտեսության զարգացման մասին» հարցերը, կուսակցական, արհմիութենական և տնտեսական մարմիններին հանձնարարեց շուտափույթ կերպով վերացնել քաղաքային տնտեսության հետ մնալը և վճռական շրջադարձ կատարել քաղաքային



Ճարտարապետ Հ. Մարգարյան



տնտեսության ընդարձակման ու նրա հետագա զարգացման համար[1]։

Ժողովրդական տնտեսության զարգացման տարիներին ձեռք բերված հաջողությունները ստեղծեցին բոլոր անհրաժեշտ պայմանները՝ բարելավելու քաղաքային տնտեսությունը՝ աշխատավորների միլիոնավոր մասսաների կենցաղը նոր՝ սոցիալիստական, հիմունքներով վերակառուցելու բազան։

Քաղաքային տնտեսության աճը պահանջում է ամրապնդել քաղաքային սովետները, որոնք հանդիսանում են քաղաքային տնտեսության տերը և պատասխանատու են նրա բոլոր ճյուղերի համար[2]։

Սովետական Հայաստանում արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի բուռն զարգացումը և աշխատավորության կյանքի պայմանների բարելավումն առաջ բերեցին քաղաքային տնտեսությանը ներկայացվող պահանջների աննախընթաց աճ, որի համար էլ Հայաստանի կառավարությունը հնգամյակների տարիներին խոշոր հատկացումներ կատարեց հանրապետությունում քաղաքային տնտեսության զարգացման համար։

Սովետական իշխանության գոյության 50 տարիներին բնակարանային-կոմունալ տնտեսության և բնակչության կենցաղային սպասարկման ասպարեզում խոշոր հաջողությունների հասավ նաև Սովետական Հայաստանը[3]։ Ինչպես նշվեց, մեր հանրապետության քաղաքներում և քաղաքատիպ ավաններում բնակելի ֆոնդը 1970 թ. հասավ 14.150 հազար

---

1 «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում», մաս III, Երևան, 1955, էջ 142։

2 Նույն տեղում։

3 Այս գլխում օգտագործել ենք Հայկական ՍՍՀ կոմունալ տնտեսության մինիստր Նունիկ Թումիկյանի զեկուցումը «Բնակչության կոմունալ սպասարկումը Հայկական սովետական սոցիալիստական հանրապետությունում», արտասանած Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի 1972 թ. հունիսի 15-ին կայացած 8-րդ գումարման 3-րդ սեսիայում։ Տե՛ս Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության սովետների բաժնի ընթացիկ արխիվում։

քառակուսի մետրի, որից 7.340 հազար քառակուսի մետրը Երևանինն է։ Հանրայնացված բնակելի տարածության 85 տոկոսը ապահովված է ջրմուղով, 84 տոկոսը՝ կոյուղով, 83 տոկոսը՝ ջեռուցմամբ, իսկ 82 տոկոսը գազով[4]։ Ստեղծվել է ավտոտրանսպորտային հրթիռկություն, իսկ մայրաքաղաքում՝ քաղաքային էլեկտրական տրանսպորտ։ Հանրապետության քաղաքներում ստեղծվել է գազի, ջրմուղու, կոյուղու, հյուրանոցների կոմունալ և կենցաղսպասարկման ձեռնարկությունների լայն ցանց։

Մարդու ֆիզիկական ու հոգևոր ընդունակությունների զարգացումը, աշխատանքի արտադրողականության և ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացումը մեծ չափով պայմանավորված է բարեկարգ բնակարանների առկայությամբ։

Բնակարանային պայմանների բարելավման կարևորության վերաբերյալ 1919 թ. կուսակցության VIII համագումարի կողմից հաստատված Ծրագրում ասված է. «...Բոլոր ուժերով ձգտել աշխատավոր մասսաների բնակարանային պայմանների լավացմանը, հին թաղամասերի կիտվածության և հակասանիտարական վիճակի վերացմանը, անպետք բնակարանների ոչնչացմանը, հների վերակառուցմանը, բանվորական մասսաների պայմանների համապատասխան կառուցել նոր շենքեր և ռացիոնալ կերպով տեղավորել աշխատավորներին»[5]։

Քսանական թվականների կեսերից Երևանում, Լենինականում (հատկապես 1926 թ. երկրաշարժից հետո), իսկ հետագայում նաև Ալավերդում և Ղափանում կառուցվեցին առաջին կապիտալ շենքերը։ Այդ շենքերի կառուցման ժամանակ դեռևս չկային սենյակների քանակը, բնակելի մակերեսը, հարկի բարձրությունը, սանիտարական պահանջները կարգավորող միասնական պետական նորմաներ։ Կատար-

---

4 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 161.

5 «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում», մաս I, Երևան, 1954, էջ 541.

վող շինարարության ծավալը փոքր էր, իսկ տեմպերը՝ ցածր, բայց յուրաքանչյուր կառույց իրադարձություն էր։ Այդ տարիներին կառուցվում էին գերազանցապես 2—3 հարկանի ոչ մեծ բնակելի շենքեր։ Այդ շրջանի կառույցներից են Երևանում՝ ճարտարապետ Ն. Բունիաթյանի, իսկ Լենինականում՝ Դ. Ջիվլյանի նախագծով կառուցված կիսաբաց աստիճաններով շենքերը։

1924 թ. Նալբանդյան փողոցի վրա սկսվեց Երևանի բնակարանային շինարարության առաջնեկի՝ վեց բնակարանանոց միհարկանի բնակելի տան շինարարությունը։ Հաջորդ տարին Նալբանդյան և Թումանյան փողոցների անկյունում կառուցվեց նահարկ մի բնակելի տուն, որի առաջին բնակիչները եղան Ալ. Սպենդիարյանը, Ե. Չարենցը և Հովհ. Աբելյանը։ 1926 թ. Նալբանդյան, Գնունի և Թումանյան փողոցների վրա կառուցվեցին մի շարք բնակելի տներ։

Այնուհետև շահագործման հանձնվեցին համեմատաբար ավելի խոշոր կառույցների համալիրներ։ Դրանցից են Կիրովի անվան գործարանի բնակելի թաղամասը (ճարտարապետներ Մ. Մազմանյան, Գ. Քոչար, Հ. Մարգարյան, Ս. Սաֆարյան), «Արարատ» տրեստի բանվորների բնակելի տները (ճարտարապետ Բ. Արազյան)[6]։ Ինչպես Ա. Թամանյանի, այնպես և մյուս ճարտարապետների նախագծերում իրականացվում էր քաղաքների բնակելի, արտադրական, հանգստի, սպորտի, ուսումնական և այլ մասերի գոտիավորումը, իր փոխադարձ հարմար կապերով ու դասավորությամբ։ Հաշվի էին առնվում բնակլիմայական պայմանները, բնակելի ու հասարակական նոր շենքերի հարմարավետության նոր ձևերը։

Հանրապետությունում 1921—1941 ԹԹ. շահագործման է հանձնվել 1.117 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն[7]։ Դա զգալի չափով բարելավեց բնակարանային տնտեսության վիճակը, փոխեց հանրապետության քաղաքների արտաքին տեսքը։ Բացվեցին նոր փողոցներ ու պողո-

6 В. Арутюнян, М. Асатрян, А. Меликян, նշվ. աշխ., էջ 136։

7 ՀՍՍՀ ՀԱՄՇՊԿՄ, ֆ. 219, ց. 4, գ. 142, թ. 1։

տաներ, ստեղծվեցին բնակելի զանգվածներ և կոմունալ տնտեսության ձեռնարկություններ ցանց։ Հայրենական մեծ պատերազմի ծանր ու դժվարին տարիներին անգամ շինարարությունը կանգ չառավ։ Հանրապետությունում շահագործման հանձնվեց 73 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն[8]։ Կառուցվեցին պաշտպանական նշանակություն ունեցող ձեռնարկություններ, ինչպես նաև ճանապարհներ, կամուրջներ, օդանավակայաններ և այլն։

Հանրապետության քաղաքների ու քաղաքատիպ ավանների բնակչության նյութական պայմանների լավացման հետ եռապատերազմյան տարիներին արագ կերպով զարգացավ պետական վարկի օգնությամբ և բնակչության խնայած միջոցների հաշվին կատարվող անհատական բնակարանային շինարարությունը, իսկ հայրենադարձների մի մասը բնակարաններ կառուցեց պետությունից արտոնյալ պայմաններով ստացվող վարկի օգնությամբ։

1954 թ. Մոսկվայում կայացած քաղաքաշինարարների համամիութենական խորհրդակցությունը շրջադարձային նշանակություն ունեցավ մեր երկրում և մասնավորապես Հայաստանում կատարվող քաղաքաշինության գործում։ Այդ խորհրդակցությունը միջոցառումներ մշակեց քաղաքաշինության հետագա զարգացման համար։ Ելնելով այդ միջոցառումներից, որոշվեց բնակարանային շինարարությունը կատարել ազատ հողամասերում և կենտրոնացված զանգվածներում՝ կոմպլեքսային կառուցապատման միկրոշրջանների ձևով։ Միության քաղաքաշինարարների համամիութենական խորհրդակցության մշակած միջոցառումներին նախորդեց կուսակցության ու կառավարության որոշումը՝ երկրում բնակարանային շինարարություն ծավալելու մասին։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1957 թ. հուլիսի 31-ին որոշում ընդունեցին երկրում բնակարանային շինարարության զարգացման մասին։ Այդ որոշման մեջ ասված է, որ մեր երկրում ստեղծված են բո-

8 «Армения в единой семье народов СССР», стр. 198.

լոր անհրաժեշտ պայմանները, բավարարելու ժողովրդի բնակարանային պահանջները։ Այս որոշման կենսագործման նպատակով ՀԿԿ Կենտրոնական կոմիտեն և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը 1957 թ. հոկտեմբերի 17-ին որոշում ընդունեցին Հայկական ՍՍՀ-ում բնակարանային շինարարության զարգացման մասին։ Այդ որոշման համաձայն համապատասխան գերատեսչությունները սկսեցին բնակարանային ծավալուն շինարարություն։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի այդ պատմական որոշումից հետո բնակարանային շինարարությունը երկրում արագ թափ ստացավ։ Հանրապետությունում 1958 թ. շահագործման հանձնվեց մոտ 0,5 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն, իսկ երկու տարի հետո կառուցվեց այնքան բնակելի տարածություն, որքան կառուցվել էր 1921—1941 թթ.։

1958—1960 թթ. սկսած հանրապետության քաղաքաշինության բնագավառում առանձին փոքր թաղամասերի շինարարությունից անցում կատարվեց միկրոշրջանների սկզբունքով մի խումբ կամ խոշոր թաղամասերի ու զանգվածների կառուցապատմանը։

Ազատ տարածքում բնակարանային կառուցումներ կատարելը հնարավորություն տվեց շինարարությունը դնել ինդուստրիալ հիմքերի վրա, միաժամանակ մեղմացրեց քաղաքների բնակչության բնակարանային սուր պահանջները։ Բնակարանային շինարարությունը ազատ հողամասերի վրա կենտրոնացված զանգվածներում կատարելու (տիպային նախագծերի մասսայական կիրառմամբ) ուղղությամբ Երևանում առաջին խոշոր փորձը հանդիսացավ Աջափնյակը։ Այնտեղ 450 հեկտար ազատ տարածության վրա 80 հազար բնակչի համար[9] («Հայպետնախագծում» մշակված բնակելի և հասարակական շենքերի տիպային նախագծերի օգտագործումով) կառուցվեց 4 թաղամաս և շահագործման հանձնվեց 734 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Յուրաքանչյուր թաղամասը 12 հեկտար տարածությամբ, նա-

9 В. Арутюнян, М. Асратян, А. Меликян, նշվ. աշխ., էջ 69։

խատևված էր հինգ հազար բնակչի համար[10] (այնտեղ տեղավորելով դպրոց և կուլտուր-կենցաղային հիմնարկներ)։ Աջափնյակի նախագիծը մշակվել է «Երևաննախագիծ» ինստիտուտում, ճարտարապետ Մ. Մազմանյանի ղեկավարությամբ։

Այս սկզբունքով կառուցապատում կատարվեց նաև Երևանի Զեյթուն, Արարատյան զանգված, Ջարբախ, Շենգավիթ և հատկապես Նորքի զանգվածներում։

1960—1965 թթ. վերին Զեյթունում շահագործման հանձնվեց մայրաքաղաքի 2-րդ բնակելի զանգվածը (ճարտարապետներ՝ Ս. Բադալյան, Հ. Բաբաջանյան, Գ. Գրիգորյան), ապա շուրջ 30 հազար բնակչի համար՝ Արարատյան զանգվածը (ճարտարապետներ՝ Մ. Մազմանյան[11], Յ. Ջախայլյան, Գ. Ավագյան) երկու միկրոշրջանով, 5—9 հարկանի շենքերով։

Նորքի առաջին միկրոշրջանը զբաղեցնում է 55 հեկտար

---

10 Նույն տեղում։

11 Միքայել Մազմանյանը (1899—1971 թթ.) ծնվել է Թրիլիսիում։ Միջնակարգ կրթություն ստացել է Ներսիսյան դպրոցում։ 1929 թ. ավարտելով Մոսկվայի բարձրագույն գեղարվեստատեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը, գալիս է Երևան և նվիրվում սովետահայ քաղաքաշինության ու ճարտարապետության զարգացման պատասխանատու գործին։ Նա կատարել է Երևանի, Լենինականի, Դափանի, Հոկտեմբերյանի և այլ քաղաքների հատակագծումները և հեղինակ է հանրապետության տարբեր քաղաքներում կառուցված բազմաթիվ բնակելի և հասարակական շենքերի։ Մ. Մազմանյանը մեծ ավանդ ունի Հայաստանի տեխնիկական կադրերի պատրաստման գործում։ Նա եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի անդրանիկ դիրեկտորը (1930—1935 թթ.)։ Հանրապետության ճարտարապետների մեծ մասը եղել են նրա կամ նրա աշակերտների աշակերտները։ Մ. Մազմանյանը 16 տարի դեկավարելով Նորիլսկ քաղաքում, կազմեց նրա գլխավոր հատակագիծը, որի համաձայն կառուցվեց յուրահատուկ այդ քաղաքը՝ ստեղծելով բնության դաժան պայմաններում մարդկանց ապրելու և աշխատելու հարմարավետ պայմաններ։ Կյանքի վերջին 15 տարիներին ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ և վաստակավոր ճարտարապետ Մ. Մազմանյանը դեկավարել է «Երևաննախագիծ» ինստիտուտի հատակագծային արվեստանոցը, որտեղ մշակվել է մայրաքաղաքի գլխավոր հատակագիծը, որը հանդիսացավ նրա գործունեության պսակը («Սովետական Հայաստան», 21 հոկտեմբերի, 1971)։

տարածություն։ Այնտեղ կառուցվել է 90 բնակելի շենք՝ 172 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ։ Միկրոշրջանի կառուցմանը հատկացվել է 25 միլիոն ռուբլի դրամ։ Նորքի 1—4-րդ բնակելի թաղամասերը բռնում են 237 հեկտար տարածություն և ունեն 63 հազար բնակիչ։

Ըստ Երևանի նոր հատակագծի, Սարիթաղը կդառնա բնակելի նոր շրջան՝ 178 հեկտար տարածությամբ, 550 հազար քառակուսի մետր բնակելի մակերեսով և կունենա 46 հազար բնակիչ։ Այս միկրոշրջանում կկառուցվեն 4—5 հարկանի շենքեր։

Լենինականում կառուցվեցին «Անտառային», «Մարալիկ» թաղամասերը, Կիրովականում «Դիմաց» և Երևանյան խճուղու ու Փամբակ գետի ձախափնյա թաղամասերը, իսկ Ալավերդում՝ Ջրավազանի և Սանահնի սարահարթի թաղամասերը։ Միկրոշրջանների սկզբունքով բնակելի զանգվածների նոր թաղամասեր կառուցվեցին նաև Հրազդան, Ջրբեռնյավան, Աբովյան, Գափան և մի քանի այլ քաղաքներում։

Քաղաքաշինության ժամանակակից պահանջներին համապատասխան հետզհետե անհրաժեշտ է դառնում բազմահարկ շենքերի կառուցումը, որն ունի խոշոր առավելություններ։ Այն նախ էժանացնում է շինարարությունը, կրճատում է կառուցման ժամկետը և տնտեսում է մեծ քանակությամբ շինանյութ և հողային տարածություն։

Երևանի բարձրահարկ շենքերի առաջնեկը Ազատության պողոտայի վրա կառուցված 12 հարկանի 66 բնակարանանոց շենքն է։ Նախագծի հեղինակն է ճարտարապետ Տ. Մարությանը։ Այդ շենքի համաձույլ երկաթբետոնն միացյալ կմախքը երեսապատված է Արթիկի և Անիի տուֆով։ Շենքն ունի երկու մարդատար վերելակ, աղբատար խողովակներ և այլ հարմարություններ։ Բարձրահարկ շենքեր են կառուցված Թամանյան, Սայաթ-Նովայի, 26 կոմիսարների, Կոմիտասի պողոցների վրա։ Կոմիտասի պողոցի վրա վեր խոյացած 9 հարկանի 3 շենքերն էլ կառուցվել են հարկերի բարձրացման մեթոդով, որի հեղինակներն են ինժեներներ Ս.


Շահնազարյանը, Ռ. և Ա. Սահակյանները: Նորքի զանգվածում կառուցվում են 9 և 11 հարկանի շենքեր: Նույնատիպ շենքեր են կառուցվում նաև Տերյան փողոցի վրա, Լենինյան շրջանում՝ Թամանյինների և Օրջոնիկիձեի փողոցներով կազմված եռանկյունի տարածքում:

Երևանի գլխավոր հատակագծի տեխնիկատնտեսական հիմունքներով քաղաքի բնակարանային ֆոնդի մոտ 40 տոկոսը կազմելու են բազմահարկ բնակելի շենքերը:

Բազմահարկ բնակելի շենքեր են կառուցված նաև Լենինական և Կիրովական քաղաքներում: 14—18 հարկանի շենքերով պետք է կառուցապատվի Աբովյան քաղաքը: Ջնայած բնակարանային շինարարության արագ տեմպերին, հանրապետությունում հաճախ բնակելի շենքերը շահագործման են հանձնվում լուրջ թերություններով: Այդ ապացուցելու համար բերենք Երևանի օրինակը: 1960—1970 թթ. Երևանում կառուցվել է 1374 բնակելի շենք՝ 1.812 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ, որը կազմել է ընդհանուր շինարարության 63 տոկոսը: Սակայն կառուցված բնակելի տների ճնշող մեծամասնության, այսինքն՝ 64,9 տոկոսի որակը գնահատվել է միջակ, 31,1 տոկոսինը՝ լավ և միայն 4 տոկոսինը՝ գերազանց[12]: Մինչդեռ, երբ նախապատերազմյան տարիներին կառուցողական հնարավորությունները քիչ էին, իսկ շինարարական տեխնիկան շատ պարզունակ, շինարարական աշխատանքների որակը բարձր մակարդակի վրա էր:

Կոոպերատիվ հիմունքներով բնակարանային շինարարություն կատարելու նպատակով 1962—1963 թթ. Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում սկսվեց բնակշինկոոպների կազմակերպումը (մինչև 1930-ական թվականներն էլ կային բնակշինկոոպներ): 1970 թ. Հանրապետության այդ երեք քաղաքներում կազմակերպված էր 234 բնակշինկոոպ, ուր ընդգրկված էին 12 հազար բանվոր-ծառայողների ընտանիքներ: Մինչև 1970 թ. առաջին կիսամյակը շա-

12 Ա. Ղազարյան, Շինարարության որակը Երևանում («Գրական թերթ», 17 հուլիսի, 1970):



Ճարտարապետ Մ. Գրիգորյան



հագործման է հանձնվել 130 կոոպերատիվ շենք՝ 237 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ։ Այդ շենքերում բնակարաններ են ստացել 6538 ընտանիքներ[13]։

Երևանում նման շենքերից թաղամասեր են ստեղծվել Աբամ Խաչատրյանի անվան փողոցի երկայնքով, Արաբկիրում, Նորքի զանգվածներում, Պռոշյան և Ալավերդյան փողոցների վրա և քաղաքի այլ մասերում։ Այդ հիմունքներով բնակելի տներ են կառուցել Վ. Ի. Լենինի անվան էլեկտրատեխնիկական գործարանի, Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատի, ալյումինի, հաստոցաշինական, լուսատեխնիկական և այլ գործարանների, նկարիչների, դիտական աշխատողների կոլեկտիվները։ Կոոպերատիվ շինարարությունը ծավալելու նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը Դիլիջանի, Էջմիածնի, Ղափանի, Ալավերդու, Սևանի, Հոկտեմբերյանի, Հրազդանի և Աբովյանի քաղսովետների գործադիր կոմիտեներին հանձնարարել է իրենց բնակավայրերում ևս կազմակերպել բնակշինկոոպներ։

Հանրապետությունում տարեցտարի ավելացել են բնակարանային շինարարության համար կատարված հատկացումները։

Պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների և կազմակերպությունների կապիտալ ներդրումները Հանրապետության բնակարանային շինարարության մեջ (բյուջետային դներով 1/I—1969 թ.).

1921—1928 թթ.	կազմել են	2 միլիոն ռուբլի
1929—1932 թթ.	»	6 » »
1933—1937 թթ.	»	25 » »
1938—1941 թթ.	առաջին հնգամյակում՝	17 միլիոն ռուբլի
1941 թ. կեսից 1945 թ. դեկտեմբերին՝		5 » »
1946—1950 թթ.	կազմել են	49 միլիոն ռուբլի
1951—1955 թթ.	»	74 » »
1956—1960 թթ.	»	184 » »
1961—1965 թթ.	»	368 » »
1966—1970 թթ.	»	542 » »
1921—1970 թթ.	ընդամենը կազմել է	1271 միլիոն ռուբլի[14]։

[13] «Սովետական Հայաստան», 27 օգոստոսի, 1970։

[14] «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 109.

Բնակարանային շինարարության համար հատկացված այդ գումարների շնորհիվ հանրապետության քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում աճեց բնակելի ֆոնդը.

1921 թ.՝	1,0 միլիոն,	այդ թվում	երևանում՝	0,4 միլիոն	քառ. մետր
1940 թ.՝	2,1 միլիոն	քառ. մետր	երևանում՝	1,4 միլիոն	
1950 թ.՝	3,5	»	երևանում՝	2,0	»
1960 թ.՝	7,8	»	երևանում՝	4,3	»
1970 թ.՝	14,7	»	երևանում՝	7,4	» քառ. մետր

1971 թ. պետական բնակելի ֆոնդը հասել է 15.726, իսկ անհատականը՝ 5.634 հազար քառակուսի մետրի[15]։

Երևանի բնակելի ֆոնդը կազմում է հանրապետության բնակելի ֆոնդի մոտ կեսը, բայց նրա շենքերի թվում ղզաչի տեղ են բռնում 1—2 հարկանի տները։ Նախապատերազմյան տարիներին կառուցված տների 40 տոկոսը ցածրահարկ է, իսկ վերջին տարիներին կատարված բնակարանային շինարարության մեջ գերիշխողը 4—5 հարկանի շենքերն են։

8-րդ հնգամյակում Երևանում կառուցված շենքերի մեջ մոտ 20 տոկոսը կազմում են 9 և ավելի հարկանի շենքերը։ Այդ հնգամյակում բնակարանային շինարարության միայն 36 տոկոսն է կատարվել Երևանի կենտրոնական մասերում, այն էլ բարձրահարկ։ Շենքերի 64 տոկոսը կառուցվել է ազատ տարածություններում, ընդարձակելով քաղաքի տարածքը[16]։

1920-ական թվականների վերջերին և 1930-ական թվականների սկզբներին բնակարանային շինարարությանը զուգընթաց Սովետական Հայաստանում մեծ թափով սկսվեց հասարակական շենքերի շինարարությունը։ Կառուցվեցին օպերայի և բալետի, պետական թատրոնի, կառավարական

15 «Армения в единой семье народов СССР», стр. 201.

16 Աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի պլանբաժին։

տան և անատոմիկումի շենքերը (Ա. Թամանյան), «Երևան» հյուրանոցը (Ն. Բունիաթյան), Կառուցողների ակումբը, սուրբ Հռիփսիմյանց վանքը (Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Գ. Քոչար), պոլիտեխնիկական և անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտների շենքերը (Ա. Թամանյան), Լենինականի քաղաքային սովետի շենքը (Գ. Քոչար)[17], Երևանի ունիվերսալ խանութը (Ա. Ահարոնյան, Մ. Մազմանյան, Գ. Քոչար և Հ. Մարգարյան) «Մոսկվա» կինոթատրոնի (Տ. Երկանյան, Գ. Քոչար), գյուղատնտեսական և բժշկական ինստիտուտների շենքերը (Ս. Սաֆարյան), գրքերի պալատը (Մ. Մազմանյան, Հ. Մարգարյան), ինչպես նաև վարչական, դպրոցական շենքեր և հիվանդանոցներ Երևանում, Լենինականում, Կիրովականում և այլ բնակավայրերում:

Նորաստեղծ սովետահայ ճարտարապետության կազմավորման գործում փայլուն տեղ են գրավում ակադեմիկոս Ալ. Թամանյանի ստեղծագործությունները: Մեծ ճարտարապետը խորապես ըմբռնել նոր ժամանակի շունչն ու ոգին, կառավարական տան կոմպլեքսի և օպերայի ու բալետի թատրոնի շենքերի ճարտարապետության մեջ մտցրեց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական արվեստի նոր լուծումներ, որոնք իրենց կատարելության շնորհիվ մտան սովետահայ ճարտարապետության ոսկե ֆոնդը: Ալ. Թամանյանի գործունեությունը խոր հետք թողեց Հայաստանի ճարտարապետության և քաղաքաշինության վրա և մեծ նշանակություն ունեցավ նրա հետագա բախտի համար:

Հասարակական շենքերի կառուցման գործում իրենց նշանակալի դերն ունեցան 1930-ական թվականների վերջերին աստղաբեղ մտած մասնագիտական խոր գիտելիքների տեր ճարտարապետներ Ս. Սաֆարյանը, Ա. Ահարոնյանը, Զ. Բախշինյանը, Մ. Գրիգորյանը, Գ. Թամանյանը, Ռ. Իս-

---

17. Աշխատության այս մասում օգտագործել ենք Հայաստանի ճարտարապետների միության վարչության 1967 թ. նոյեմբերին կայացած հոբելյանական պլենումում Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ Գ. Քոչարի «Հասարակական շենքերի ճարտարապետությունը» զեկուցումը:

բայելյանը, Կ. Հակոբյանը, Հ. Մարգարյանը[18], Ա. Տեր-Ավետիքյանը և ուրիշներ։

Նախապատերազմյան տարիներին նրանց կազմած նախագծով կառուցվեցին ֆիզիոթերապևտիկ ինստիտուտի (Ալ. Թամանյան), սուր վարակիչ հիվանդանոցի (Ն. Բունիաթյան, Մ. Գրիգորյան), հոգեբուժական հիվանդանոցի (Ս. Սաֆարյան) շենքերը, Լենինականում՝ միասնական դիսպանսերի (Ս. Սաֆարյան), Ալավերդում՝ հիվանդանոցի (Տ. Երկանյան), Արթիկում՝ հիվանդանոցի (Հ. Մարգարյան), ինչպես նաև Գյուլագարակի պիոներական սանատորիայի (Ս. Սաֆարյան), Դիլիջանի սանատորիայի[19] (Գ. Քոչար, Ս. Սաֆարյան) շենքերը։

---

18 Հովհաննես Մարգարյանը (1901—1963 թթ.) ծնվել է Նախիջևանի գավառի Քաղաբիկ գյուղում, դերձակի ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում։ 1910 թ. ընդունվել է Երևանի գիմնազիան, որն ավարտել է 1920 թ.։ Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետի հարտարապետական-շինարարական բաժնում։ 1928 թ. նա սատացել է ինժեներ-հարտարապետի կոչում և այդ ժամանակից մինչև կյանքի վերջը աշխատել է մայրաքաղաքի նախագծային կազմակերպություններում, զբաղեցնելով նախագծող-հարտարապետի պաշտոնից մինչև ինստիտուտի գլխավոր հարտարապետի պաշտոնները։ Այդ տարիների ընթացքում նա նախագծել է 70-ից ավելի բնակելի, հասարակական և արդյունաբերական կառույցներ։ Նախագծային աշխատանքին զուգահեռ 1930—1939 թթ. դասախոսել է Երևանի շինարարական ինստիտուտում։ 1941—1943 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին։

1944 թ. նշանակվել է ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հարտարապետության գործերի վարչության պետ, ուր աշխատել է մինչև 1950 թ.։ Նա 1950 թ. ընտրվել է ՍՍՀՄ հարտարապետության ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1956 թ. եղել է ՍՍՀՄ շինարարության և հարտարապետության ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմի մեջ։

Հ. Մարգարյանը Հայաստանի պրոլետար հարտարապետների ընկերության, ապա և Հայաստանի հարտարապետների միության հիմնադիրներից մեկն է, որի նախագահն է եղել 1955—1963 թթ.։

Սովետահայ հարտարապետությանը մատուցած ծառայությունների համար նրան շնորհվել է ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

19 Մանրամասնությունները տե՛ս В. Арутюян, К. Оганесян «Архитектура Советской Армении», Ереван, 1955.

Ճարտարապետ Հ. Մարգարյանի կազմած նախագծով սկսվեց «Դինամո» հանրապետական ստադիոնի շինարարությունը։ Այն հետագայում շարունակվեց ճարտարապետ Կ. Հակոբյանի նախագծով։

Մի քանի տարում կառուցվեցին բանվորական նոր ակումբներ. Երևանում՝ կառուցողների (Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Գ. Քոչար), Լենինականում՝ երկաթուղայինների (Գ. Զիսլյան), տեքստիլ կոմբինատի (Զ. Բաշխինյան), Ղափանում՝ մետալուրգների (Մ. Մազմանյան), Կիրովականում և Դիլիջանում՝ կինոթատրոնների շենքերը[20] (Գր. Քոչար) և այլևայլ շատ շենքեր։

1940-ական թվականներից սկսվեց, իսկ 1950-ական թվականներին ավարտվեց Երևանի, Լենինականի և Կիրովականի կենտրոնական հրապարակների ճարտարապետական ձևավորումը։

Մայրաքաղաքի վարչական կենտրոնը՝ Լենինի անվան հրապարակը, որը կառուցապատվել է Ալ. Թամանյանի մտահղացումով, իր ճարտարապետական ձևավորումով իրավամբ համարվում է սովետահայ քաղաքաշինության գարդը։

Երևանի Վ. Ի. Լենինի անվան հրապարակի վրայի կառավարական տունը (հեղինակ ակադեմիկոս Ա. Թամանյան) արժանացել է պետական մրցանակի[21]։ Պետական մրցանակի է արժանացել նաև Մ. Գրիգորյանի[22] նախագծով կառուցված ՀԿԿ կենտկոմի շենքը։

---

20 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 532։

21 Հրապարակի և նրա շուրջը կառուցված շենքերի մասին տե՛ս M. Григорян, Площадь Ленина в Ереване, Ереван, 1969.

22 Մարկ Գրիգորյանը ծնվել է 1900 թ. Նոր Նախիջևանում։ 1924 թ. Երևանի Համալսարանի ուսանող Մ. Գրիգորյանը աշխատանքի է անցնում քաղաքային սովետի տեխնիկական բաժնում, որը ղեկավարում էր քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Բունիաթյանը։ Որոշ ժամանակ անց նա տեղափոխվում է Ա. Թամանյանի արվեստանոցը։ Ա. Թամանյանի հետ նա նախագծում է աշխատանքային պալատի, մանկական հիվանդանոցի շենքերը։ Այս արվեստանոցը բախտորոշ նշանակություն է ունենում երիտասարդ ճարտարապետի ստեղծագործական ունակությունները զարգացնելու գործում։ 1937 թ. նա դառնում է քա-

Լենինականում Մայիսյան ապստամբության, ինչպես նաև Վ. Ի. Լենինի անվան Ատոմի և երկաթուղային կայարանի հրապարակների շուրջը բարձրացել են բազմաթիվ բազմահարկ հասարակական և բնակելի շենքեր, որոնք զարդարում են հանրապետության արդյունաբերական երկրորդ խոշոր կենտրոնը։

ՍՍՀՄ շինարարության և ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ Հ. Մարզարյանի նախագծով Կիրովականում Ս. Մ. Կիրովի անվան հրապարակի վրա բարձրացել են Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի բնակելի երկու շենքերը, ապա աշխատավորների դեպուտատների Կիրովականի քաղաքային սովետի գործկոմի, հյուրանոցի (Հ. Մարզարյան, Բ. Արզումանյան) և ՀԿԿ Կիրովականի քաղաքային կոմիտեի (Զ. Բախշինյան) շենքերը[23]։

Կիրովականի Շահումյանի անվան հրապարակի վրա ևս կառուցվել են մի քանի բազմահարկ շենքեր։

ղարի գլխավոր ճարտարապետի տեղակալը, իսկ 1938 թ.՝ գլխավոր ճարտարապետը։ Մինչև 1940 թ. նրա նախագծով կառուցվել են մասնագետների, դերատանների բնակելի շենքերը և սուր վարակիչ հիվանդանոցը։ Նրա նախագծած շենքերից հատկապես ուշագրավ է ՀԿԿ կենտկոմի շենքը, որը 1951 թ. արժանացավ պետական մրցանակի։ Մատենադարանի, Գեղագույն սովետի շենքերը, Լենինի հրապարակի շենքերը՝ կապի տուն, Համթ-ի շենքը, «Արմենիա» հյուրանոցը և պատմության թանգարանի գլխավոր ճակատը ևս նախագծել է Մ. Գրիգորյանը, ճարտարապետ Էդ. Սարգսյանի համագործակցությամբ։

Նա 1951 թ. գլխավորում է «Հայճարտնախագիծ», այժմ «Հայարդնախագիծ» նախագծային ինստիտուտը։ Մ. Գրիգորյանը երկար տարիներ դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժնում։ Անվանի մասնագետը մշաժամանակ հասարակական ակտիվ աշխատող է։ Նա բազմիցս ընտրվել է ՍՍՀՄ, ՀՍՍՀ գերագույն սովետների և Երևանի քաղաքային սովետի դեպուտատ, արժանացել է Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի և վաստակավոր ճարտարապետի կոչման, պարգևատրվել Լենինի և մի շարք այլ շքանշաններով ու մեդալներով։ Գրել է բազմաթիվ հոդվածներ ճարտարապետական զանազան հարցերի շուրջ։

23 Կ. Կոզմոյան, Կիրովական, էջ 268։

Ալավերդու նախկին կայարանի տեղում բացված հրապարակի շուրջը բարձրացել են Հր. Իսաբեկյանի նախագծած հյուրանոցի, հանրախանութի և կապի բաժանմունքի շենքերը։ Այդ տարիներին կառուցվեցին նաև Մատենադարանի (Մ. Գրիգորյան), Երևանի երկաթուղային կայարանի շենքերը (Է. Տիգրանյան), կենտրոնական ծածկած շուկան (Գ. Ազաբաբյան, Հ. Առաքելյան), դիտումբյունների ակադեմիայի համալիրը (Ս. Սաֆարյան)[24], առողջարանների համալիրները (Հ. Մարգարյան), ինչպես նաև մի շարք վարչա-

---

24 Սամվել Սաֆարյանը (1902—1962 թթ.) ծնվել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում։ Միջնադարյան կրթություն ստացել է Բաքվում։

1928 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետը, ստացել է ճարտարապետի կոչում և աշխատանքի անցել Ա. Թամանյանի արվեստանոցում։

1930 թ. Ս. Սաֆարյանը աշխատանքի է անցնում «Դիպրոգոր»-ում, որը գլխավորում էր Կ. Հալաբյանը։ Ս. Սաֆարյանը նախագծել է Լենինականի դիսպանսերի, գյուղատնտեսական ինստիտուտի, Արզնիի բուժարանի շենքերը։ Դրանց հաջորդեցին տեխնիկումների, հիվանդանոցների, պոլիկլինիկաների և բնակելի բազմաբիվ շենքերի նախագծումները։

1931 թ. նա պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնում անցավ դասախոսական աշխատանքի։ 1938 թ. նա նշանակվում է Երևանի քաղաքային սովետի գործկոմի ճարտարապետական արվեստանոցի գլխավոր։ 1940 թ. Ս. Սաֆարյանին շնորհվում է արվեստի վաստակավոր գործչի, ապա պրոֆեսորի, իսկ 1968 թ.՝ վաստակավոր ճարտարապետի կոչում։ Նա 1941 թ. ընտրվում է ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի թղթակից-անդամ։ 1937 թ. նա ընտրվել է Հայաստանի ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար, իսկ 1941 թ.՝ նախագահ։

Ս. Սաֆարյանը հեղինակ է այնպիսի խոշոր կառույցների, ինչպիսիք են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանը, Լենինականի դրամատիկական թատրոնի շենքը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբռլականի մասնաճյուղի շենքը և ժողտնտխորհի շենքը։ Վերջինիս համար Ս. Սաֆարյանը նոմանոու արժանացավ Հայկական ՍՍՀ պետական մրցանակի։ 1957 թ. մինչև կյանքի վերջը Ս. Սաֆարյանը գլխավորում էր «Հայպետնախագիծ» ինստիտուտի տիպարային նախագծման արվեստանոցը։ Ս. Սաֆարյանն իր բեղմնավոր աշխատանքի համար պարգևատրվել է շքանշաններով, ընտրվել է ՀՍՍՀ Գերագույն և Երևանի քաղաքային սովետների դեպուտատ։

կան շենքեր հանրապետության տարբեր քաղաքներում և շրջանային կենտրոններում:

1950-ական թվականների կեսերից հանրապետության քաղաքների կառուցապատման պատմության մեջ սկսվում է նոր շրջան: Այդ տարիներին մեկը մյուսի հետևից բարձրանում են ճարտարապետական հարուստ բովանդակությամբ հասարակական խոշոր շենքեր: Ավարտվում են պետական համալսարանի, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի (է. Տիգրանյան), պոլիտեխնիկական ինստիտուտի (Ա. Մամիջանյան) շենքերի համալիրները:

Ճարտարապետներ Զ. Թորոսյանի, Լ. Գևորգյանի և Ֆ. Դարբինյանի նախագծերով կառուցվում են ժողովրդական տնտեսության ցուցահանդեսի շենքերը, ճարտարապետ Մ. Մինքայելյանի նախագծով՝ կառուցվածքների և շինանյութերի ինստիտուտի համալիրը, ճարտարապետներ Ս. Գուրզադյանի և Մ. Մանվելյանի նախագծերով՝ Աշտարակում ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի համալիրը, Ս. Գուրզադյանի նախագծով՝ Բյուրականի աստղադիտարանի շենքը, ճարտարապետ է. Ալիմնյանի նախագծով՝ կոմպոզիտորների ստեղծագործական տան շենքերը Դիլիջանում: Այդ տարիների լավագույն ստեղծագործություններից մեկն է ճարտարապետներ Ռ. Ալավերդյանի և Ռ. Բագալյանի նախագծով կառուցված Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի շենքը, ինչպես նաև Հ. Մարգարյանի և Բ. Արզումանյանի նախագծած Երևանի ճոպանուղու կայանի շենքը:

Ուշադրության արժանի են ճարտարապետներ Շ. Ազատյանի և Բ. Արզումանյանի նախագծած մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի, ինչպես նաև ճարտարապետ Ս. Քուրքչյանի նախագծած Կոմիտասի անվան երաժշտական տան և պիոներ-պալատի շենքերը: Ճարտարապետական հոյակապ կոթողներ են պանսիոնատի շենքը Սևանում (Մ. Գրիգորյան), Եղեռնի զոհերի հուշարձանը Ծիծեռնակաբերդում (ճարտարապետներ Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան և Հ. Խաչատրյան), Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակին

նվիրված հուշարձանը Հոկտեմբերյանում[25]: Հուշարձանի հեղինակներն են ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռ. Իսրայելյանը, քանդակագործներ Ա. Հարությունյանը, Ս. Մանասյանը և Ա. Շահինյանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Երևանում Հրազդան գետի վրա կառուցվեց երկաթբետոնե նոր կամուրջ (պրոֆ. Ս. Հովնանյան), որի բացումը կատարվեց 1945 թ. նոյեմբերի 24-ին: Ի պատիվ պատերազմի հաղթական ավարտի, այն անվանվեց «Հաղթանակի» կամուրջ:

Հետագա տարիներին Հրազդան գետի վրա կառուցվեց երկրորդ խոշոր կամուրջը (պրոֆ. վ. Փինաջյան, Ն. Սլովինսկի), որի երկարությունը 350 մետր է, բարձրությունը՝ 60 մետր: Կամրջի շինարարությունը տևեց 5 տարի: 1956 թ. մայիսին բացված այս կամուրջը կոչվեց «Հրազդան»: Այն Ս. Շահումյանի անվան շրջանը կապում է քաղաքի մյուս շրջանների հետ:

1960—1970 թթ. քաղաքաշինության նվաճումներից պիտի համարել Երևանի Սպանդարյանի անվան հրապարակը, Կիևյան և Կոմիտասի փողոցները, Սայաթ-Նովայի և Ազատության պողոտաները, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի, Լենինականի Աստղի, Կիրովականի Ստ. Շահումյանի անվան հրապարակները, Հոկտեմբերյան, Ղափան, Արտաշատ, Սևան, Աբովյան, Քաջարան, Ալավերդի, Հրազդան և այլ քաղաքներում կառուցված բազմաթիվ բնակելի և հասարակական շենքերը, որոնք զեղեցկացնում ու բարեկարգ են դարձնում նորաստեղծ քաղաքները: Երևանում, նախկին № 1 շուկայի տեղում, ավարտվել է «Ռոսիա» կինոթատրոնի հսկա շենքի կառուցումը, շուտով կավարտվի երիտասարդական պալատի կառուցումը: Նոր բնակեցված թաղամասերում կկառուցվեն 4 թատրոններ: Հրազդանի ձորում ավարտվեց 70 հազար

25 Այս կառույցների մասին մանրամասնությունները տե՛ս В. М. Арутюнян, М. М. Асратян, А. А. Меликян, Архитектура Советской Армении աշխատության մեջ:

նստատեղով մարզադաշտի և հրապարակների ու խաղադաշտերի կառուցումը։

Հանրապետության քաղաքների կառուցապատման աշխատանքներում երկարամյա ու անբաժան ներդրում են կատարել քարտաշ-որմնադիր վարպետները։ Լենինականում՝ վարպետներ Մ. Լուսինյանը, Ս. Մալխասյանը, Բ. Հեքիմյանը, Կ. Թամրազյանը, Կիրովականում՝ Գ. և Մ. Դանիելյան, Մ. և Ա. Փահլևանյան եղբայրները, Մ. Ասլանյանը, Մ. Պողոսյանը, Ալավերդում՝ Սարգիս, Գրիգոր և Ջանիբեկ Աբգարյանները, Աղաբեկ և Եղիշե Անանյանները, Սիմոն և Գեղամ Ալավերդյանները և այլն։

2. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական կարգերի հաստատումից հետո մեր երկրում ինչպես բնական հարստությունները, այնպես էլ ջուրը դարձան համաժողովրդական սեփականություն։ Ստեղծվեցին նպաստավոր պայմաններ ջուրը ժողովրդական տնտեսության մեջ առավել մեծ արդյունավետությամբ, պլանային ու կոմպլեքսային ձևով օգտագործելու համար։ Ժողովրդական տնտեսության և բնակչության կարիքների համար նկատի ունենալով ջրի կարևորությունը, ջրմուղի ցանցը պետականացվեց։ «Երևանի ջրմուղի պետականացման մասին» Հայկական ՍՍՀ ԺողկոմխորհԻ 1921 թ. հունիսի 8-ի դեկրետում ասված է. «Երևան քաղաքի ջրմուղը, որը պատկանում է «Երևանի ջրմուղի ընկերությանը», բոլոր իր շինություններով, շարժական և անշարժ կայքով, արհեստանոցներով, պահեստներով, կանխիկ դրամով և փաստաթղթերով, հայտարարվում է ազգայնացրած»[26]։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի երկրաբանական վարչության արշավախմբերի՝ հանրապետության տարբեր

---

26 «Հայկական ՍՍՀ օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՀ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու» 1920—1938 թթ., Երևան, 1963, էջ 56։

վայրերում կատարած ուսումնասիրությունները պարզել են, որ Հայաստանը հարուստ է քաղցրահամ և սառնորակ ջրերով: Սակայն այդ ջրերն անհավասարաչափ են բաշխված հանրապետության տարածքում: Կան քաղաքներ, որոնք ապահովված են խմելու ջրով, իսկ Ղափանի, Սևանի, Իջևանի, Շամշադինի, Կրասնոսելսկի, Նոյեմբերյանի շրջանները սակավաջուր են, և այնտեղ խմելու ջրի պահանջը նոր դժվարություններ է հարուցում: Երկրաբանների ուսումնասիրությունները միաժամանակ պարզել են, որ ստորերկրյա արտեզյան ջրերի մեծ պաշարներ կան Արարատյան դաշտում:

Երևանի ջուրն իր բարձր որակով աչքառնում մեծ ճանաչում է ստացել: Նրա մեջ քիչ են կալցիումի և մագնեզիումի աղերը: Երևանի ջուրը հարուստ է գազերով, պարունակում է թթվածին և ածխաթթու գազ, որով և բացատրվում է նրա դուրեկան համը[27]: Երևանի ջրի բացասական կողմն այն է, որ աղայնությունը շատ թույլ է և քիչ է պարունակում օրգանիզմի համար այնպիսի կարևոր տարր, ինչպիսին յոդն է:

Մեր երկրում ժողովրդական անտեսության և քաղաքաշինության աճը, աշխատավորության նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացումը անհրաժեշտաբար ավելացնում են ջրի պահանջարկը: Բնակչության և արդյունաբերության ջրի պահանջները բավարարելու նպատակով 1932 թ. Երևանում շահագործման հանձնվեց Երևանի ջրմուղի 2-րդ ջրատարը (առաջինը շահագործման էր հանձնվել դեռևս 1912 թ. հունվարին)[28]: 2-րդ ջրատարը առաջինին զուգահեռ 16 անգամ: 1935—1940 թթ. շահագործման հանձնվեցին Արթիկի, Էջմիածնի, Կիրովականի, Ղափանի, Մահիլանավանի, Արտաշատի և այլ քաղաքների ջրմուղները: Եռապատերազմյան տարիներին նոր ջրմուղներ կառուցվեցին Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ղափանում, Հոկտեմբերյանում, Մահիլանավա-

27 «Առողջապահություն» հանդեսի հավելված, 1969, № 6, էջ 7—8:

28 Թ. Ն. Հակոբյան, Երևանի պատմությունը (1872—1917 թթ.), էջ 352:

նում, Արթիկում, Իջևանում, Աբովյանում, Էջմիածնում, Գյումրիում, Հրազդանում և մի շարք այլ քաղաքներում ու շրջկենտրոններում[29]։

Սովետական իշխանության տարիներին Երևանում շահագործման են հանձնվել բազմաթիվ ջրատարներ, այդ թվում Կաթնաղբյուրի ջրմուղը՝ վայրկյանում 2250 լիտր ջուր կարողությամբ, Արզնիի ջրատարների խումբը՝ 2113, Զորաղբյուրինը՝ 125, Ծարավաղբյուրինը՝ 143, Երգեսի աղբյուրներինը՝ 330, Շոր-Շորը՝ 450, Գառնիինը՝ 896 և արդյունաբերության համար Կապույտ լճից եկող ջրատարը՝ վայրկյանքում 2300 լիտր կարողությամբ[30]։

Երևանը 1970 թ. ստանում էր վայրկյանում 8623 լիտր ջուր, որից 6323 լիտրը խմելու էր[31]։

Երևանի համար կառուցվել է Ապարան-Երևան նոր ջրատարը՝ վայրկյանում 1200 և Արարատյան դաշտի խաթունարխի մոտ ստորերկրյա ջրերի ջրմուղը՝ վայրկյանում 3 հազար լիտր ջուր թողունակությամբ։

Երևանն ունի հզոր ջրմուղային տնտեսություն։ Երևանի ջրմուղի քաղաքային ցանցի երկարությունը հասել է մոտ հազար կիլոմետրի։

Երևանում բնակչության մեկ շնչին ընկնող ջրի քանակը 1970 թ. կազմել է օրական 220 լիտր, որը դեռևս բավարար չէ։ Երևանի ջրամատակարարման գլխավոր սխեմայի համաձայն բնակչության մեկ շնչին ընկնող ջրի ծախսը 1970 թ. պետք է լիներ 400 լիտր, 1975 թ.՝ 500, իսկ 1980 թ.՝ 600 լիտր[32]։

Լենինականի բնակչությանը խմելու ջուր տալու համար կառուցվել է Ղազանչի-Լենինական երկու ջրատար՝ վայրկյանում 950 լիտր թողունակությամբ։ Լենինականում այժմ

29 ՀՍՍՀ ՀՀՍՇԿՊԱ, ֆ. 219, ց. 4, գ. 37, թ. 7։

30 Տվյալները վերցված են աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի ջրմուղ-կոյուղու գլխավոր վարչության տեխնիկական բաժնից։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

կառուցվում է մի նոր ջրատար՝ արդյունաբերական ձեռնարկություններին տեխնիկական նպատակներով ջուր մատակարարելու համար, վայրկյանում 500 լիտր կարողությամբ։

Կիրովականում կառուցվել է 54 կիլոմետր երկարությամբ Նովոսելցովոյի աղբյուրներից եկող ջրատարը՝ վայրկյանում 400 լիտր, էջմիածնում Նազրվանի աղբյուրներից եկող ջրատարը՝ վայրկյանում 400 և Կամո—Սևան ջրատարը՝ վայրկյանում 215 լիտր կարողությամբ։

Հանրապետության բոլոր քաղաքները, քաղաքատիպ ավաններն և շրջանային կենտրոններն ունեն առանորակ աղբյուրներից բերված խմելու ջուր[33]։

1970 թ. հանրապետությունում բոլոր կոմունալ ջրմուղների գլխավոր ջրատարների երկարությունը կազմում էր 2039 կիլոմետր, իսկ ներքին փողոցային ցանցինը՝ 2289 կիլոմետր։

Հանրապետության քաղաքներում բնակչության մեկ շնչին ընկնող ջրի քանակն ավելի շատ կլիներ, եթե խմելու ջուրը չօգտագործվեր արդյունաբերական նպատակների համար։ Երևանում խմելու ջրի 35, Լենինականում՝ 30, Հրազդանում՝ 53 տոկոսն օգտագործվում է արդյունաբերական նպատակների համար։

Ահա թե ինչու հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների ջրամատակարարումը (տեխնիկական նպատակների համար) գետերի, ստորերկրյա ու Արարատյան դաշտավայրի արտեզյան ջրերի հաշվին, հանդիսանում է ժամանակակից կարևորագույն հարցերից մեկը։

Հանրապետության ստորերկրյա և վերերկրյա ջրերը օգտագործելու նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը 1965 թ. սեպտեմբերից ստեղծեց ստորերկրյա և վերերկրյա ջրերի օգտագործման և պահպանության պետական կոմիտե։ Այդ կոմիտեն զգալի աշխատանք կատարեց գործող ջրհորների շահագործման, նոր ջրհորներ փորելու և դրանց համար տեխնիկական բազա ստեղծելու ուղղու-

33 Ջրմուղի մասին տվյալները տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍՇՊԿԱ, ֆ. 219, ց. 4, գ. 142, թ. 5։

թյամբ։ Վերջին տարիներին կոմիտեն կատարել մի շարք ձեռնարկումներ՝ ստորերկրյա ջրերը տեխնիկական նպատակներով օգտագործելու ուղղությամբ։ 1970 թ. մեկ վայրկյանում Հանրապետությունում ստացվում էր 500 լիտր ստորերկրյա ջուր, որն օգտագործվում էր տեխնիկական նպատակների համար։

Հանրապետության քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում որոշակի աշխատանքներ են կատարված կոյուղիների կառուցման, շահագործման և ընդլայնման ուղղությամբ։ 1937 թ. Հանրապետությունում կոյուղի ունեցել է միայն Երևանը՝ 1,6 կիլոմետր կոլեկտորի և 21,8 կիլոմետր փողոցային ցանցի միապիծ երկարությամբ։ 1955 թ.՝ 5 քաղաք՝ 18,9 կմ կոլեկտորի և 86 կիլոմետր փողոցային ցանցի երկարությամբ[34]։ Հանրապետությունում 1970 թ. կոյուղի ունեին 23 քաղաք և 10 քաղաքատիպ ավան։ Դրանց փողոցային ցանցի երկարությունը հասնում էր 991 կիլոմետրի[35], որից Երևանինը՝ 608 կիլոմետրի։

Հանրապետության բոլոր քաղաքներում և քաղաքատիպ ավանների մի մասում կան կոյուղու կոլեկտորներ[36] և տարեցտարի ընդարձակվում է փողոցային ցանցը։ Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայաններ կան Էջմիածնում, Կիրովականում և Ծաղկաձորում։ Լենինականի, Կամոյի, Արարատի, Ստեփանավանի, Դորիսի, Հրազդանի, Սևանի, Ալավերդու, Դափանի, Ջերմուկի և այլ քաղաքների կեղտաջրերի մաքրման կայանների շինարարական աշխատանքներում նորմալ ընթացք չկա, որ հույս լինի, թե առաջիկա տարիներին դրանք շահագործման կհանձնվեն։

Միայն Երևան քաղաքում 1966—1970 թթ. մաքրման կայանի կառուցման համար հատկացված կապիտալ ներ-

---

34 «Жилищно-коммунальное хозяйство Арм. ССР» (стат. сборник), стр. 118.

35 *Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կոմունալ տնտեսության մինիստրության պլանֆին վարչությունից։*

36 *Կոյուղու կոլեկտորի մասին մանրամասնությունները տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 219, ց. 4, գ. 37, թ. 8։*

դրումներից 7 միլիոն ռուբլի[37] դումար չի իրացվել։ Այդ պատճառով էլ ձգձգվում է Երևանի մաքրման կայանի շահագործման հանձնելու ժամկետը։ Նրա առաջին հերթը պետք է շահագործման հանձնվեր 1967 թ.[38]։

Գետափ գյուղի մոտերքում կառուցվող մայրաքաղաքի աերացիայի (կեղտամաքրման) կայանի կառուցման նպատակն է մաքրել Հրազդան գետը լցվող բոլոր ջրերը։ Դա առաջին հերթին վերաբերում է քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններին, որոնք իրենց կեղտաջրերով ու թափոններով կեղտոտում են Հրազդանը։ Կայանը 24 ժամվա ընթացքում մաքրելու է մինչև 300 հազար խորանարդ մետր կեղտաջրեր։ Մաքրման կայանի վրա ծախսվելու է մոտ 10 միլիոն ռուբլի։ Այն կլինի Հանրապետության խոշոր կառույցներից մեկը։

1969 թ. սկսված են Զարենցավան—Աբովյան—Երևան գլխավոր կոլեկտորների կառուցման աշխատանքները, նպատակ ունենալով տվյալ տարածքում գտնվող բնակավայրերի կոյուղիների կեղտաջրերի հավաքումն ու վնասազերծումը Երևանի կայանի միջոցով[39]։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 1969 թ. մայիսի 28-ին ընդունած որոշման մեջ նշված է. «Հանրապետության ջրամբարներն առանձնապես խիստ աղտոտվում են քիմիական արդյունաբերության, դունավոր մետալուրգիայի վարչությունների, մսեղենի ու կաթնեղենի, սննդի արդյունաբերության մինիստրությունների ձեռնարկությունների, ինչպես նաև քաղաքների ու ավանների կեղտաջրերով։ Օդը կեղտոտվում է Երևանի և Կիրովականի քիմիական, Ալավերդու պղնձաքիմիական, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատների, Քանաքեռի ալյումինի գործարանի և Արարատի

---

37 «Գարուն», 1969, № 3, էջ 59։

38 Նույն տեղում։

39 Ջրմուղ-կոյուղու և մաքրման կայանների կառուցման ընթացքի մասին տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 113, ց. 50, գ. 460, թ. 3—11։

ցամաքա-շիֆերի կոմբինատի վնասակար արտանետումներով»[40]։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի «Բնության պահպանությունն ուժեղացնելու և բնական ռեսուրսների օգտագործումը բարելավելու» մասին որոշման մեջ նըշված է, որ շատ մինիստրություններ, գերատեսչություններ, ձեռնարկություններ և դիտահետազոտական կազմակերպություններ դեռևս քիչ են զբաղվում շրջակա բնական միջավայրը աղտոտումից պահպանելու և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ապահովելու հարցերով։ Նրանք բավարար ուշադրություն չեն նվիրում այն տեխնոլոգիական պրոցեսների մշակմանը, որոնք բացառում են հողի, մթնոլորտի և հոսող ջրերի աղտոտումը կամ էապես նվազեցնում են դրա աստիճանը, անհրաժեշտ հետազոտություններ չեն կատարում կեղտաջրերի մաքրման, գազամաքրման մեթոդների ու տեխնոլոգիայի կատարելագործման և բնության պահպանության ու բնական հարստությունների վերարտադրության մյուս հրատապ պրոբլեմների մշակման ուղղությամբ[41]։

Մեզ շրջապատող մթնոլորտը, ջուրը և հողն աղտոտվում են արդյունաբերական, տրանսպորտի, քաղաքային տնտեսության թափոններով ու դաշտային արտանետումներով, որոնք վնասում են մարդկանց առողջությունը, գյուղատնտեսական կուլտուրաներին, անտառներին, օգտակար վայրի կենդանիներին ու միջատներին։ Այժմ շարունակվում են Երևանի, Լենինականի, Սևանի, Հրազդանի, Աբովյանի, Ջարենցավանի, Սպիտակի, Իջևանի, Ղափանի, Ալավերդու, Ջերմուկի և այլ քաղաքների ու բնակավայրերի կոյուղիների և մաքրման կայանների շինարարական աշխատանքները։


Հաճախ շատ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման ժամանակ կեղտաջրերի պայմանական մաքրման կայանների և գործարանների շինարարությունը զուգահեռ չի

40 «Սովետական Հայաստան», 4 հունիսի, 1969։

41 Նույն տեղում, 10 հունվարի, 1973։



Ճարտարապետ Ս. Սաֆարյան



ընթանում։ Գործարանը շահագործման է հանձնվում, իսկ մաքրման կայանը՝ ոչ։ Չնայած կառավարությունը հատուկ որոշում է ընդունել արդյունաբերական ոչ մի օբյեկտ շահագործման չհանձնել առանց մաքրման կայանի, սակայն մաքրման կայանների կառուցումը տասնյակ տարիներ է տևում և այն էլ գլուխ չի գալիս։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման գործում խոշոր դեր է կատարում գազի արդյունաբերությունը։ Վառելիքաէներգետիկ ճյուղի զարգացման կապակցությամբ ՍՄԿԿ Ծրագրում ասված է, որ ժամանակակից արդյունաբերության հիմքը կազմող մետաղի և վառելիքի արտադրության հետագա արագ ավելացումն առաջվա պես կմնա որպես ժողովրդատնտեսական ամենակարևոր խնդիրներից մեկը։ Հետևողականորեն կկենսագործվի նավթի և գազի հանույթի առավել զարգացման գիծ, ընդսմին կաճի նրա՝ որպես քիմիական արտադրության հումքի օգտագործումը։ Մեր երկրի վառելիքի հաշվեկշռում գնալով մեծանում է գազի տեսակարար կշիռը։ Այսպես, օրինակ, եթե 1940 թ. ընդհանուր վառելիքի հաշվեկշռում գազի բաժինը կազմում էր 1,9 տոկոս, ապա 1970 թ. այն հասավ 25 տոկոսի[42]։ Սա խոշոր թռիչք է գազի արտադրության տեսակետից։ Գազի հետախուզված պաշարներով Սովետական Միությունն անցել է ԱՄՆ-ից և այժմ առաջին տեղն է գրավում աշխարհում։

ՍՍՀՄ եվրոպական մասի գազատրանսպորտային ցանցի օղակներից մեկը Օրջոնիկիձե—Բթիլիսի գազամուղն է, որը միանում է Ղարադաղ—Ազստաֆա—Երևան—Բթիլիսի գծին։ Այդ գիծը միավորում է ոչ միայն Անդրկովկասի երեք հանրապետությունները, այլև Հյուսիսային Կովկասի սիստեմը։ Անդրկովկասյան հանրապետությունների համար ստեղծվել է գազի մատակարարման յուրատեսակ մի ցանց։ Մինչև 1960 թ. սկիզբը, այսինքն՝ մինչև բնական գազ ստանալը, Հայաստանը հեղուկ գազ ստանում էր Բաքվից։ Մինչև գազալցման կայանի շահագործման հանձնվելը գազ ստաց-

42 Նույն տեղում, 7 մարտի, 1973։

վում էր Բաշկիրիայից՝ գազոդիստերների միջոցով։ Սովետական Հայաստանը բնական գազով ապահովելու համար կառուցվեց ու շահագործման հանձնվեց Ղարադաղ—Ղազախ—Երևան մագիստրալ գազամուղը։ Գազաշինարարները մեծ դժվարություններ կրելով և հաղթահարելով բնական-աշխարհագրական արգելքները, Ադրբեջանի գազը հասցրին Հայաստան և Վրաստան։ 1960 թ. փետրվարի 12-ին գազի առաջին կրակը վառվեց Երևանում, Լենինի անվան հրապարակում։ Նույն թվականի մարտի 8-ին առաջինը գազ ստացավ Կիրովի անվան քիմիական կոմբինատը։ Հանրապետության բնակչությանը, արդյունաբերական ձեռնարկություններին և կոմունալ օբյեկտներին գազ տալու նպատակով գազաշինարարները 10 տարվա ընթացքում ստեղծեցին բարձր, միջին և ցածր ճնշման գազամուղների լայն ցանց, որը հնարավորություն տվեց բնական գազով ապահովելու Հանրապետության բոլոր բնակավայրերը, բացի Զանգեզուրից։ 1970 թ. քաղաքների ու քաղաքատիպ ավանների գազային ցանցի երկարությունը հասավ 975 կիլոմետրի[43], իսկ մագիստրալ գազամուղներինը՝ շուրջ 1000 կիլոմետրի։

1970 թ. Հանրապետության 23 քաղաքներ, 28 քաղաքատիպ ավաններ և 739 գյուղական բնակավայրեր օգտվում էին բնական և հեղուկ գազից[44]։ Տարբեր տարիների գազային վառելիքի փոխադրվեցին արդյունաբերական 180 ձեռնարկություններ, այդ թվում՝ էներգետիկ այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք են պոլիվինիլացետատ, ալյումինի, Վ. Ի. Լենինի անվան հայէլեկտրամեքենաշինական գործարանները, Կիրովականի Մյասնիկյանի անվան քիմիական, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ, Արարատի ցեմենտ-շիֆերի կոմբինատները և այլն։ Զգալի քանակությամբ բնական գազ օգտագործվում է քիմիական արդյունաբերության մեջ՝ իբրև հումք։ Բնական գազի բազայի վրա կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Երևանի,

43 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 164.

44 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր գազի գլխավոր վարչության արտադրական բաժնից։

Կիրովականի և Հրազդանի ջերմաէլեկտրակայանները։ Դրանցից յուրաքանչյուրն այնքան էլեկտրաէներգիա է տալիս, որքան Սևան—Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանները միասին վերցրած։ Բացի արդյունաբերական ձեռնարկություններից, գազով սկսեցին աշխատել նաև 975 կաթսայատներ։

1970 թ. գազիֆիկացված բնակարանների քանակը Հանրապետությունում հասավ 319,1 հազարի[45]։ Դրանցից բնական գազով ապահովվեցին 123,3 հազար, իսկ հեղուկ գազով՝ 195,8 հազար բնակարաններ։ Հանրապետության բնակարանների կեսից ավելին գազիֆիկացված է։ Գյուղական բնակչությանը հեղուկ գազով ապահովելու տեսակետից մեր Հանրապետությունը Միության մեջ գրավում է առաջատար տեղերից մեկը։ Միայն 1970 թ. բոլոր սպառողներին բաց է թողնվել 22.800 տոննա հեղուկ գազ։ Գազիֆիկացումից հետո Հայաստանում ծախսվել է 9 միլիարդ խորանարդ մետր բնական և 137 հազար տոննա հեղուկ գազ[46]։ Եթե Միության վառելիքային հաշվեկշռի մեջ գազը կազմում է 25 տոկոս, ապա Հայաստանում այն հասնում է ավելի քան 54 տոկոսի, չհաշված ջերմաէլեկտրակայանները։ Միայն 1970 թ. բոլոր սպառողներին բաց է թողնվել 1,5 միլիարդ խորանարդ մետր բնական գազ, որից բնակչությանը՝ 93,6 միլիոն խորանարդ մետր, իսկ հիմնարկ-ձեռնարկություններին կոմունալ—կենցաղային կարիքների համար՝ 241,5 միլիոն խորանարդ մետր գազ[47]։

Ինչպես տեսնում ենք, գազը կարճ ժամանակամիջոցում մուտք է գործել Հանրապետության արդյունաբերություն, կոմունալ ցանց և կենցաղ, դարձել է վառելանյութի հիմնական տեսակը, որովհետև բնական գազը հեշտ փոխադրվող է, մաքուր և էժան. այն բարձրացնում է արտադրության կուլտուրան, բարելավում բնակչության կենցաղային

45 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 550.

46 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր գազի գլխավոր վարչության արտադրական բաժնից։

47 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 164.

պայմանները։ Ջմեռվա համար գազի պաշարներ կուտակելու, ինչպես նաև գազի մատակարարումը կարգավորելու նպատակով Երևանի շրջակայքում ստեղծվել են գազապահեստներ։

Սևանի ավազանի բնակավայրերին, արդյունաբերական ձեռնարկություններին և առողջարաններին գազ տալու նպատակով ձեռնարկվեցին Սևանի երկու կողմերով գազամուղների կառուցման աշխատանքները։ Դրանցից մեկը Սևան—Կամո—Մարտունի—Վարդենիս գազամուղն է, որը հետագայում շարունակվելու է Ջերմուկ—Եղեգնաձոր—Ազիզբեկով ուղղություններով, իսկ մյուսը՝ Ծովագյուղ—Շորժա—Կրասնոսելսկ գազամուղն է, որ շահագործման հանձնվեց 1969 թ.։

1970 թ. Անդրկովկասյան հանրապետությունների գազամատակարարման ամենահզոր աղբյուրներից մեկը դարձավ Իրանը։ 1970 թ. վերջերին շահագործման հանձնվեց Տրանսիրանական գազամուղը, որի շնորհիվ Ադրբեջանով մագիստրալային գազամուղով Իրանից գազ ստացավ նաև Սովետական Հայաստանը։ Անցած տարիների համեմատությամբ Հայաստանում գազի սպառումը մեծ չափերով ավելացավ։ Ըստ նախնական պլանի, Հայաստանն Իրանից կընստանա տարեկան 4 միլիարդ խորանարդ մետր գազ։

ՍՍՀՄ գազի արդյունաբերության մինիստրության նախագծային ինստիտուտը որոշակի աշխատանքներ է կատարում Եվլախ—Ստեփանակերտ—Նախիջևան և Գորիս—Ղափան—Քաջարան մագիստրալ գազամուղի կառուցման ուղղությամբ։ Այդ գազամուղը, որը գազով կապահովի Ղափանի և Քաջարանի մեծ թափով զարգացող արդյունաբերական ձեռնարկություններին, շահագործման կհանձնվի 10-րդ հնգամյակի կեսերին։

Հանրապետության գազային տնտեսության շահագործումը կատարում են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր գազիֆիկացիայի գլխավոր վարչության կազմակերպությունները։ Հայաստանի գազաշինարարների կոլեկտիվները 1970 թ. բաղկացած էին շուրջ 4 հազար մարդուց, որոնցից 415 հոգին ինժեներատեխնիկական աշխատողներ

էին: Հանրապետության գազաշինարարների կոլեկտիվի շարքերը մասնագետներով համալրելու նպատակով Երևանի Ա. Թամանյանի անվան շինարարական տեխնիկումում 1964 թ. բացվեց քաղաքային գազային տնտեսության բաժին, որը 1969 թ. տվեց իր առաջին 60 շրջանավարտները: Բարձրորակ մասնագետներ է պատրաստում Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, որտեղ վերջին տարիներին բացվել է ջերմագազամատակարարման բաժին: Մինչև այդ մեր Հանրապետությանը օգնում էին Բաքվից հրավիրված մասնագետները:

Հանրապետությունում բուռն կերպով է աճում բնակարանային շինարարությունը: Տարեցտարի առաջանում են բնակելի նոր զանգվածներ և թաղամասեր, ուր նախատեսվում է կենտրոնական կաթսայատների շինարարություն, սակայն բնակարանային շինարարության տեմպերը շատ ավելի առաջ են անցնում ջերմամատակարարող օբյեկտների կառուցման տեմպերից: Այդ է պատճառը, որ Հանրապետության առանձին քաղաքներում, հատկապես Երևանում, ջերմամատակարարումը կատարվում է մանր՝ տեղական նշանակություն ունեցող կաթսայատներով:

Երևանում ջեռուցման կաթսայատների քանակը 1970 թ. հասել էր 685-ի, որից 180-ը գտնվում էին բնակելի շենքերի նկուղային հարկերում: 1970 թ. Լենինականում գործում էին 33 կաթսայատուն, Կիրովականում՝ 27, Դիլիջանում՝ 3 և այլն: Երևանի համեմատությամբ Հանրապետության մյուս քաղաքներում կաթսայատներն ավելի խոշոր են, իսկ բազմաթիվ կաթսայատներ սկսել են իբրև վառելանյութ օգտագործել գազը:

Մայրաքաղաքի ջերմամատակարարման գործը արմատապես բարելավելու նպատակով քաղաքային սովետի գործկոմը հաստատել է քաղաքի ջերմամատակարարման գլխավոր սխեման: Ըստ այդ սխեմայի վերանում են գոյություն ունեցող բոլոր կաթսայատները, և նրանց փոխարեն քաղաքը պետք է ջերմամատակարարվի 12 շրջանային խոշոր կաթսայատներից: Դրանով կխնայվի հսկայական քանակու-

բյամբ ջուր, գազ և էլեկտրաէներգիա։ Միայն Զարենցի փողոցի վրա շրջանային կաթսայատան շահագործման հանձնումով կվերանան քաղաքի կենտրոնական մասում գործող շուրջ 180 կաթսայատներ։

Ջերմաֆիկացիայի հետագա զարգացումը հանրապետության ժողովրդական տնտեսության համար խոշոր նշանակություն ունի։ Այն հնարավորություն է տալիս ավելի լավ կազմակերպել ջեռուցման, օդափոխության և կենցաղային նպատակների համար ջերմության մատակարարումը, բարելավել քաղաքների օդային ավազանների մաքրությունը։

Անցյալում Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ և Գորիս քաղաքներում կային կարավանատներ, որոնք իրենց ուղղակի հարմարություններով ծառայում էին իբրև «հյուրանոցներ», առևտրի կետեր և պահեստներ։ XIX դ. վերջերին Երևանում կային 21 կարավանատներ[43], որոնցից ամենահռչակավորն ու հայտնին «Գյուրջի քարվանսարան» էր, որն իրենից ներկայացնում էր գարշահոտության ու վարակի բույն։

XX դ. սկզբներին Երևանում կային 11 մասնավոր հյուրանոցներ[49]։

Սովետական իշխանության տարիներին հանրապետության գրեթե բոլոր քաղաքներում, շրջանային կենտրոններում և որոշ քաղաքատիպ ավաններում կառուցվեցին ժամանակակից պահանջներին համապատասխանող բարձրարվեստ, տուֆակերտ հյուրանոցային շենքեր։

Հյուրանոցային տնտեսությունը մեծ չափերով զարգացավ հատկապես Երևանում։ Մայրաքաղաքի առաջին հյուրանոցը «Երևանն» է, որը շահագործման է հանձնվել 1932 թ., ապա կառուցվել են «Սևան», «Մասիս», «Արաքսիր», «Սեբաստիա» հյուրանոցները։ Երևանում հյուրանոցներ ունեն նաև առանձին գերատեսչություններ և կազմակերպություն-

43 Թ. Խ. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1879—1917 թթ.)*, էջ 358։

49 Նույն տեղում։

ներ[50]։ Այդ հյուրանոցների սենյակները մեծ մասամբ 3—4 տեղանոց են, բայց ունեն նաև ընդհանուր համարներ։ Երևանի «Արմենիա» հյուրանոցը շահագործման է հանձնվել 1958 թ.՝ 410 տեղով։ «Արմենիա» հյուրանոցը իր լավ աշխատանքի համար տարիներ շարունակ համամիութենական մրցանակ է շահել։ 1971 թ. սկզբներին շահագործման հանձնվեց 500 տեղանոց «Անի» հյուրանոցը, որը ենթակա է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արտաստահմանյան տուրիզմի վարչությանը։

Այսպիսով, 1971 թ. սկզբին Երևանն ուներ 14 հյուրանոց՝ 3290 տեղով։ Գոյություն ունեցող նորմաներով Երևանի հյուրանոցային ֆոնդը պետք է կազմի 7750 տեղ։ 10-րդ հնգամյակում շահագործման կհանձնվեն 1300 տեղանոց հյուրանոցային շենքեր՝ «Դվին» հյուրանոցը 500 տեղով, կվերակառուցվեն և կընդարձակվեն «Արմենիա» և «Սևան» հյուրանոցները՝ շուրջ 800 տեղով։

Կոմունալ տնտեսության մինիստրությունը հանրապետության 21 քաղաքներում[51] և 14 քաղաքատիպ ավաններում ունի 35 հյուրանոց՝ 2784 տեղով։ Հյուրանոցներն ապահովված են նոր գույքով, անկողնային պարագաներով, ունեն ջրմուղ-կոյուղի, կենտրոնական ջեռուցում, հեռախոս, ռեստորան, վարսավիրանոց և այլն։ Սենյակներն ու նախասրահները կահավորված են ընտիր կահույքով։ Հյուրանոցային շենքեր են կառուցվում Լենինականում, Էջմիածնում, Կամոյում, Սևանում, Թալինում և Ապարանում։ Կվերակառուցվեն ու կընդարձակվեն Կալինինոյի և Ազիզբեկովի հյուրանոցային շենքերը, ուր կստեղծվեն կոմունալ նոր հարմարություններ։

1971 թ. սկզբին հանրապետության քաղաքներում գոր-

---

50 Երևանում հյուրանոցային տնտեսության զարգացման մասին տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍՇՊԿԱ, ֆ. 113, ց. 50, գ. 270, թ. 1—13։

51 Հյուրանոցներ չունեն Աբովյան և Զարենցավան քաղաքները։

ծում էին տարբեր գերատեսչություններին պատկանող 49 հյուրանոց 6074 տեղով, որի կեսից ավելին՝ Երևանում[52]։

Աշխարհի տարբեր երկրներից և մեր Միության տարբեր հանրապետություններից բազմաթիվ զբոսաշրջիկներ են գալիս Սովետական Հայաստան։ Դրանց սպասարկելու նպատակով հանրապետությունում գործում են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արտասահմանյան տուրիզմի վարչությունը և ՀԱՄԽ-ի տուրիզմի և էքսկուրսիաների խորհուրդը։ Առաջինն սպասարկում է արտասահմանյան հյուրերին, իսկ երկրորդը՝ եղբայրական հանրապետություններից ևկած զբոսաշրջիկներին։ «Ինտուրիստ» համամիութենական ընկերության հայկական բաժանմունքը մին 1956 թ. սպասարկել է արտասահմանյան երկրներից ժամանած 80 զբոսաշրջիկների, ապա 1970 թ.՝ 30 հազարի։ Այդ նպատակով հանրապետությունում տարեցտարի ընդարձակվում է արտասահմանյան տուրիզմի կազմակերպության նյութատեխնիկական բազան։ 1968 թ. ապրիլին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը որոշում ընդունեց խոշոր կապիտալ ներդրումներ կատարել Հայաստանում տուրիստական հիմնարկների համալիր ստեղծելու համար։

Սոցիալիստական քաղաքների կառուցապատման կարևորագույն պահանջներից մեկն էլ հրապարակների, պողոտաների, փողոցների ստեղծումն է, նրանց բարեկարգումը, ասֆալտապատումը, լուսավորումը, կանաչապատումը և ջրային մակերեսների ստեղծումը։

Նախասովետական տարիների քաղաքների նեղլիկ, ծուռումուռ, առանց որևէ ծածկույթի փողոցների փոխարեն մեր հանրապետության քաղաքներում ստեղծվել են ճարտարապետական գեղեցիկ ոճով կառուցված հրապարակներ, պողոտաներ, փողոցներ։ Վերջիններիս միագիծ երկարությունը հանրապետությունում հասնում է 1989 կիլոմետ-

---

52 Հյուրանոցային տնտեսության մասին տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍՀՊԿԱ, ֆ. 219, ց. 4, գ. 142, թ. 3։



ՍՍՀՄ ժողովրդական հարատարակիչ Ա. Խաչատրյան



րի, որից[53] 1200 կիլոմետրը ունի կատարելագործված ծածկույթ։ Տարեցտարի ավելանում են բարեկարգման համար նախատեսված գումարները։ 1970 թ. այդ նպատակի համար ծախսված գումարները հասան մոտ 40 միլիոն ռուբլու[54]։

Հանրապետության երեք քաղաքներում (Երևան, Լենինական և Կիրովական) 1932 թ. փողոցների միագիծ երկարությունը կազմում էր 157 կիլոմետր։ 1940 թ. Հանրապետության քաղաքների փողոցների միագիծ երկարությունը կազմում էր 291 կիլոմետր[55]։ Ետպատերազմյան տարիներին արդյունաբերության տեղաբաշխման ու զարգացման շնորհիվ Հանրապետությունում առաջ եկան նոր քաղաքներ։ Այդ քաղաքներում կատարվող բնակարանային բուռն շինարարության շնորհիվ առաջ եկան նոր թաղամասեր և նոր փողոցներ, որոնց կառուցապատման ու բարեկարգման աշխատանքները քաղաքային սովետների ուշադրության կենտրոնում էին։

Երևանում տարեցտարի ընդլայնվում է էլեկտրական լուսավորության ցանցը։ Արտաքին լուսավորության փողոցային ցանցը, որի երկարությունը հասնում է 1700 կիլոմետրի, հիմնականում մոնտաժված է մետաղյա հենասյուների վրա։ Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել ծայրամասային թաղամասերին ու քաղաքամերձ ավաններին, որոնց փողոցներում ու հասարակական վայրերում չկային էլեկտրական ուժեղ լամպեր։ Քաղաքի ամենագեղեցիկ մայրուղին Լենինի պողոտան է, որը լուսավորված է սնդիկային հզոր էլեկտրալամպերով և դեղարվեստորեն ձևավորված մետաղյա սյուների վրա տեղավորված կաթնապակե խոշոր լուսամփոփներով։ Լենինի, Օրջոնիկիձեի, Սայաթ-Նովայի և Ազատության պողոտաներում, Բարեկամության, Կիևյան

---

53 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կոմունալ տնտեսության մինիստրության պլանֆին բաժնից։

54 Նույն տեղում։

55 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կենտ. վիճ. վարչության կոմունալ տնտեսության բաժնից։

Թումանյան, Ամիրյան և այլ փողոցներում տեղադրված են գազալուսատու, սնդիկային հզոր լամպեր, իսկ Թումանյան, Ամիրյան փողոցների միջտեղում ձգված են գունավոր ժապավենաձև լույսեր։ Լենինի, Սպանդարյանի և կայարանամերձ հրապարակներում դրված են Երևանի էլեկտրալամպերի գործարանի արտադրած «Արևիկ» պիտակի գորշ լուսարձակներ։

Հանրապետության կոմունալ-բնակարանային անտեսության ձեռնարկություններում և կազմակերպություններում 1971 թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատել է մոտ 29 հազար մարդ։ Դրանցից երկու հազարն ունեն բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն։ Երկարամյա և անբասիր աշխատանքի համար Հանրապետության կոմունալ տնտեսության 7 աշխատողներ պարգևատրվել են Լենինի շքանշանով, այդ թվում՝ բանվորներ Գեղամ Աբովյանը, Ներսես Վարդանյանը, Գուրգեն Ղարիբյանը, Արմենակ Սուքիասյանը, Արամ Բադասյանը, Վարուժան Զաքարյանը և ՀՍՍՀ կոմունալ տնտեսության մինիստր Նունիկ Թուխիկյանը, իսկ Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրվել է տրոլեյբուսի վարորդ Ռուբեն Սարգսյանը։

Հանրապետության ջրմուղ-կոյուղու ցանցում բեղմնավոր աշխատանք են կատարել Երևանի ջրմուղ-կոյուղու հիմնադիր, հուսաստանից եկած անվանի ինժեներ-հիդրոտեխնիկ Ն. Կոժևնիկովը, ջրմուղի գլխավոր ինժեներ Լ. Հովհաննիսյանը, ջրմուղի նախկին պետեր Գ. Պասոյանը, Հ. Բաղրամյանը, Ա. Մարգարովը, Ս. Հակոբյանը և կոմունալ տնտեսության մինիստրի նախկին տեղակալ Դ. Զիֆլիկյանը, որը երկար տարիներ զբաղվել է Հանրապետության ջրմուղ-կոյուղու շահագործման հարցերով։ Հանրապետության ջրամատակարարման խոշոր կառույցվածքների նախագծումը կատարել են վաստակաշատ ինժեներ Միհրան Մոկացյանը և ուրիշներ։

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին ստեղծվեց կոմունալ տնտեսության լայն ցանց՝ բնակչության կենցաղը վերափոխելու այդ կարևոր բազան։ Տարեցտարի ա-

վելացան այդ նպատակին հատկացնող միջոցները, ստեղծվեց բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների մի պատկառելի բանակ և Հանրապետության բնակչության կոմունալ սպասարկումը կազմակերպելու նյութատեխնիկական ամուր բազա։

3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում չեն եղել կենցաղային իրերի կազմակերպված արտադրություն և կենցաղսպասարկման ծառայություններ։ Գոյություն ունեցող արհեստները զարգանում էին մասնավոր նախաձեռնությամբ։

Արհեստագործական արտադրությունն ուներ տնայնագործական բնույթ, իսկ առանձին արհեստավորներ իրենց գոյությունն էին քարշ տալիս՝ ոչ մի օգնություն չստանալով պետությունից։

Սովետական կարգերի հաստատումից մի քանի տարի հետո՝ 1925 թ., Հայաստանում ստեղծվեց տնայնագործական կոոպերացիա՝ «Հայտնարկոոպը», որը պետությունից օգնություն ստանալով՝ արտելներում միավորեց կարի, կոշիկի և այլ կենցաղային արտադրության մասնավոր արհեստավորներին։ Այդ արտելները դարձան բնակչության կենցաղսպասարկման ձեռնարկությունների առաջին բջիջները։ Հանրապետության քաղաքներում տարեցտարի աճեցին այդ արտելները և դրանց մեջ ընդգրկված արհեստավորների քանակը։ «Հայտնարկոոպի», «Հայկոոպի» և տեղական արդյունաբերության ցանցում ստեղծված արդյունաբերական ձեռնարկությունների բազայի վրա 1960 թ. վերջերին ստեղծվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր տեղական արդյունաբերության բնակչության կենցաղային սպասարկման վարչություն։ Երկրի ինդուստրացումը և արդյունաբերության հետագա զարգացումը պայմաններ ստեղծեցին բնակչության կենցաղային սպասարկման հետագա բարելավման համար։

ՍՄԿԿ կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1962 թ. օգոստոսի 10-ի և ՀԿԿ կենտկոմի ու Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նույն տարվա հոկտեմբերի 23-ի որոշումները շրջադարձային ուղենիշ հանդիսացան հանրապետության բնակչության կենցաղսպասարկման աշխատանքներում: 1966 թ. օգոստոսին կազմակերպվեց Հայկական ՍՍՀ բնակչության կենցաղային սպասարկման մինիստրություն, որը սկսեց միավորել, խոշորացնել և մասնագիտացնել բնակչության կենցաղսպասարկման ձեռնարկությունները, կազմակերպել նոր ձեռնարկություններ: Նախկին գործող բազմաթիվ մանր արհեստանոցների, կետերի փոխարեն հանրապետության քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում ստեղծվեցին կենցաղային սպասարկման խոշոր մասնագիտացված տաղավարներ, որոնք հագեցված են ժամանակակից սարքավորումներով[56]:

Հանրապետությունում ստեղծվել է բնակչության կենցաղային սպասարկման լայն ցանց. այդ թվում՝ ռադիոհեռուստացույցների (տեխնիկական բարդ սարքավորումների), կարի, կոշկի, սրիկոտաժեղենի, կահույքի անհատական պատվերների և վերանորոգման, հագուստների քիմիական մաքրման ու լվացքի մեքենայացված ֆաբրիկաներ, ժամացույցների, մետաղյա իրերի, ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման օբյեկտներ: 1970 թ. Հանրապետության քաղաքներում գործել են 2345 կենցաղսպասարկման օբյեկտներ, որոնք բնակչությանը մատուցել են շուրջ 400 տեսակի ծառայություն:

Կենցաղսպասարկման ծառայությունների ծավալը Հանրապետությունում գումարային արտահայտությամբ 1960 թ. եղել է 6,5 միլիոն[57], 1965 թ.՝ 14 միլիոն, իսկ 1970 թ.՝ 27 միլիոն[58] ռուբլի:

---

56 Տվյալները վերցված են «Развитие бытового обслуживания населения Армянской ССР за 50 л.» դեկուցագրից, որը պահվում է կենցաղային սպասարկման մինիստրության ընթացիկ արխիվում:

57 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 265:

58 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 169—170.

Կենցաղսպասարկման ամի բնորոշ ցուցանիշն է մեկ շընչին ընկնող ծառայությունը, արտահայտված դրամով, որը 1965 թ. եղել է 7 ռուբլի, 1970 թ.՝ 17 ռուբլի։

Բնակչության կենցաղսպասարկման գործում զգալի բեկում մտցրեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1967 թ. օգոստոսի 26-ի «Կենցաղային սպասարկման հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշումը։

Բնակչության կենցաղսպասարկման ոլորտն այսօր դարձել է ժողովրդական տնտեսության բարդ ու զարգացած ճյուղերից մեկը։ Օրավուր ընդլայնվում ու բազմաբնույթ է դառնում բնակչության կենցաղսպասարկման գործը։ Այժմ կենցաղսպասարկման ձեռնարկությունները վեր են ածվել խոշոր արտադրական ձեռնարկությունների՝ իրենց անհրաժեշտ տեխնիկական բազայով։

Հանրապետության քաղաքներում 1970 թ. բնակչության կենցաղսպասարկմամբ զբաղված էին 2345 արտադրամասեր, որոնցում աշխատում էր մոտ 16 հազար մարդ։

Մարդու կենցաղում կարևոր տեղ ունեն նաև վարսավիրանոցները, բաղնիքներն ու լվացքատները, որոնք գտնվում են Հանրապետության բնակչության կենցաղսպասարկման մինիստրության ցանցում։ Կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման գերատեսչությունները 1945 թ. Հանրապետության 5 քաղաքներում ունեցել են 23 վարսավիրանոց՝ 145 տեղով և տարեկան սպասարկել են 1 միլիոն մարդու[59], իսկ 1970 թ.՝ 23 քաղաքներում ունեցել են 356 վարսավիրանոց՝ 1050 տեղով և տարեկան սպասարկել են 9 միլիոն մարդու[60]։ Վարսավիրանոցների մեծ մասը հարմարավետ սալոններ են։ 1967 թ. Երևանում բացվեց «Ջերմուկ» գեղեցկության տունը։

Հանրապետության քաղաքներում ու շրջանային կենտրոններում կառուցվել և շահագործման են հանձնվել բազմաթիվ բաղնիքներ։ Եթե 1940 թ. Հանրապետության 9 քա-

---

59 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 268։

60 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 172.

քաղաքներում եղել է 12 բաղնիք, հազար հանման տեղ միաժամանակյա տարողությամբ, ապա 1970 թ. 23 քաղաքներում եղել է 58 բաղնիք՝ 4 հազար հանման տեղ[61] միաժամանակյա տարողությամբ: Դրանցից 1940 թ. օգտվել են երկու միլիոն, իսկ 1970 թ.՝ 5 միլիոն մարդ[62]:

Հանրապետությունում ծավալված բնակարանային շինարարության շնորհիվ ժամանակակից շենքերում բնակվող յուրաքանչյուր ընտանիք ունի իր առանձին լողարանը: Հանրապետության քաղաքներում 1970 թ. գործել են 31 լվացքատներ, որոնցից 14-ը՝ Երևանում, 3-ը՝ Լենինականում, 2-ը՝ Ալավերդում և 12-ը՝ հանրապետության այլ քաղաքներում[63]:

Հագուստեղենի մաքրման համար ժամանակակից սարքավորումներով հագեցված ֆաբրիկաներ են կառուցվել Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ղափանում, Մարտունիում: Դրանցից ամենախոշորը Երևանի հագուստի մաքրման «Արաբկիր» ֆաբրիկան է, որը կատարում է հանրապետության հագուստների մաքրման աշխատանքի ընդհանուր ծավալի մոտ 70 տոկոսը:

Ինչպես տեսնում ենք, հանրապետությունում ստեղծվել են բնակչության կենցաղսպասարկման շատ օբյեկտներ, սակայն այն հետու է այսօրվա պահանջները բավարարելուց, նամանավանդ, գործող օբյեկտներում գոյություն ունեն լուրջ պակասություններ: Հանրապետությունում շատ քիչ է կոմունալ լվացքատների, բաղնիքների, վարսավիրանոցների, տեխնիկական բարդ սարքավորումների, ռադիոհեռուստացույցների վերանորոգման արհեստանոցների քանակը: Միաժամանակ, գործող կենցաղային սպասարկման օբյեկտները հավասարապես չեն բաշխված քաղաքների թաղամասերում:

ՍՍՀՄ Մինիստրների սովետն իր ընդունած որոշումների մեջ նշում է, որ կենցաղային սպասարկման զարգացման

61 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 270:

62 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 174.

63 Նույն տեղում, էջ 173:

արդի մակարդակը չի բավարարում սովետական մարդու հարաճուն պահանջները, իսկ ՀԿԿ XXIV համագումարը նշեց, որ «ցածր է բնակչության սպասարկման կուլտուրան, անհրաժեշտ է վճռականորեն բարելավել կենցաղսպասարկման օբյեկտների աշխատանքը»[64]։ Այսինքն խնդիր է դրվել խոշորացնել ու մասնագիտացնել կենցաղային սպասարկման օբյեկտները, ամրապնդել դրանց տեխնիկական բազան, պատրաստել ու վերապատրաստել կադրերը, բարձրացնել սպասարկման կուլտուրան։

4. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Դեռևս 1917 թ. Վ. Ի. Լենինը պահանջում էր մշակել արտակարգ միջոցներ՝ տրանսպորտի զարգացումը ճիշտ հիմքերի վրա դնելու համար։ «Տրանսպորտը պետության ջիղն է, անտեսության սիրտը»[65], այսպես է բնորոշել Վ. Ի. Լենինը տրանսպորտի նշանակությունը ժողովրդական տնտեսության, սոցիալիստական պետության տնտեսական կյանքի զարգացման բոլոր բնագավառների համար։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում բացառիկ ուշադրություն են դարձրել երկաթուղային, օդային, ծովային, գետային, ավտոմոբիլային, խողովակաշար և քաղաքային տրանսպորտի բոլոր տեսակների զարգացման վրա։

1970 թ. ՍՍՀՄ 110 քաղաքներում գործում էր տրամվայ, 111 քաղաքներում՝ տրոլեյբուս, իսկ 3 քաղաքներում՝ մետրոպոլիտեն։

Մինչև մասսայական քաղաքային տրանսպորտի (տրամվայի, ավտոբուսի, տրոլեյբուսի) ստեղծումը, Երևանում,

---

64 «ՀԿԿ XXIV համագումարի բանաձևերը», Երևան, 1966, էջ 17։

65 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 32, էջ 356։

Ալեքսանդրապոլում և Նոր Բայազետում իբրև փոխադրական միջոց ծառայում էին կառքերը, որոնց քանակը հասնում էր մի քանի հարյուրի: Երևանում փոխադրական միջոցները հիմնականում հավաքվում էին շուկայի շրջակայքում և երեւևույթ առանց որոշակի չվացուցակի: Ձմռան ամիսներին կառքերին փոխարինում էին սահնակները: 1906 թ. Երևանում շահագործման հանձնվեց ձիաքարշը՝ 4 վերստ երկարությամբ[66]:

1930-ական թվականներին Երևանում կառուցվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ: Այդ կապակցությամբ ընդարձակվեց քաղաքի տերիտորիան, աճեց բնակչությունը, պահանջ առաջացավ ունենալու էլեկտրաքարշ-տրամվայ: Հայաստանում սովետական կարգերի հաստատման տասնամյակի կապակցությամբ ՍՍՀՄ ժողկոմխորհը 2.700 հազար ռուբլի հատկացրեց Հայաստանի կառավարությանը՝ Երևանում տրամվայի կառուցման համար[67]: Տրամվայի կառուցման համար ոչ փորձ ունեինք և ոչ էլ մասնագետներ: Մեզ օգնության հասան եղբայրական հանրապետությունները, հատկապես Վրաստանն ու Ադրբեջանը: Թբիլիսիից հրավիրված մասնագետներից Ն. Յուզբաշյանը գլխավորեց տրամվայի կառուցման աշխատանքները[68], Տ. Ծովյանովը՝ էլեկտրական մասի աշխատանքները, իսկ շինարարական մասի աշխատանքները ղեկավարում էր ճարտարապետ Հ. Եղյանը:

Երկու տարվա համառ ու հետևողական աշխատանքից հետո պատրաստվեց Երևանի տրամվայի դիծը՝ 15 կիլոմետր երկարությամբ: 1933 թ. հունվարի 12-ին կայացավ թուղթի մխիթնգ՝ Երևանում տրամվայի շահագործման հանձնելու առթիվ: Միտինգում ճառով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, միաժամանակ աշխա-

66 Թ. Խ. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1879—1917 թթ.)*, էջ 345:

67 Ա. Բաղդյան, *Հայաստանի քաղաքային տրանսպորտի պատմությունից*, Երևան, 1968, էջ 80—81:

68 *Մանրամասնությունները տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 1931 ց. 7, 1—3:*

տավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ Արամայիս Երզնկյանը[69]։ Միտինգում ընթերցվեցին Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի և Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի ողջույնի հեռագրերը։ Միտինգից հետո տրամվայի վագոնները Աբովյանի անվան պուրակից շարժվեցին 2 երթուղով։ Մեկը Աբովյան փողոցով դեպի Օրջոնիկիձեի պողոտա, իսկ մյուսը՝ Աբովյան—Հոկտեմբերյան պողոտայով դեպի երկաթուղային կայարան։

Մայրաքաղաքի բուռն կառուցապատման, արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկությունների տեղադրման, նոր թաղամասերի ու փողոցների ստեղծման կապակցությամբ տարեցտարի երկարեց տրամվայի գիծը, ավելացավ վագոնների և ուղևորների քանակը։ Մինչև 1970 թ. վերջը Երևանում կառուցվել ու շահագործման է հանձնվել 99 կիլոմետր երկարությամբ տրամվայի գիծ։ Դրա 12 երթուղիներում

---

69 Արամայիս Երզնկյանը (1879—1937 թթ.) ծնվել է Ալավերդու շրջանի Հաղպատ գյուղում։ 1898 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա սովորել է Ժնևի համալսարանի իրավագիտական ֆակուլտետում։

Ա. Երզնկյանը 1898 թ. մտել է ՌՍԴԲԿ շարքերը, իսկ 1907 թ. մասնակցել կուսակցության VI համագումարին։

1902—1916 թթ. Ս. Շահումյանի, Ա. Ջուրաբյանի, Ս. Կասյանի, Ս. Խանոյանի, Հ. Ագաթյանի, Ա. Մռավյանի և ուրիշների հետ նա խմբագրել է բազմաթիվ թերթեր։ Նա բազմիցս ձերբակալվել է։

Ա. Երզնկյանը 1921 թ. մայիսին Ալ. Մյասնիկյանի գլխավորած ժողկոմխորհի կազմում նշանակվում է հողագործության ժողովրդական կոմիսար, իսկ 1930—1931 թթ.՝ անդրկովկասյան հողագործության ժողովրդական կոմիսար։ Ապա նա աշխատում է որպես Հայկական ՍՍՀ ժողկոմխորհի նախագահի առաջին տեղակալ, համատեղության կարգով աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ։ Ա. Երզնկյանը բազմիցս ընտրվել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Անդրերկրկոմի, ինչպես նաև Անդրկովկասի և Հայաստանի Կենտգործկոմի անդամ։

1970 թ. աշխատում էին 236 մարդատար վագոններ, որոնք այդ տարի փոխադրեցին 53 միլիոն ուղևոր[70]։

Էլեկտրատրանսպորտի անխափան աշխատանքներն ապահովելու համար քաղաքի տարբեր մասերում ստեղծված են արտադրական և տեխնիկական բաղաններ՝ պարկեր, ստուգման դեպոներ, վագոնավերանորոգման արհեստանոցներ, կոնտակտային ցանց և այլն։

Երևանում ներքաղաքային երթևեկությունը կարգավորելու նպատակով 1949 թ. օգոստոսի 19-ին շահագործման հանձնվեց մայրաքաղաքի տրոլեյբուսի առաջին հերթը[71], երեք երթուղով, 23 կիլոմետր երկարությամբ։ Առաջին երթուղին սկսվում էր Աբովյանի անվան պուրակից, Լենինի պողոտայով մինչև Օրջոնիկիձեի պողոտայի վերջը, երկրորդ երթուղին՝ Աբովյանի անվան պուրակից՝ Հոկտեմբերյան պողոտայով մինչև երկաթուղային կայարան, երրորդ երթուղին՝ Օրջոնիկիձեի պողոտայից՝ Նալբանդյան փողոցով Մոսկովյան փողոց և կրկին Օրջոնիկիձեի պողոտա։ Հետագա տարիներին քաղաքի ծայրամասերը կենտրոնի հետ միացնելու նպատակով ընդարձակվեց տրոլեյբուսի երթևեկության ցանցը։ Մինչև 1970 թ. Երևանում կառուցվել ու շահագործման է հանձնվել 95 կիլոմետր երկարությամբ տրոլեյբուսի գիծ։ 13 երթուղիներով 1970 թ. ընթանում էին 219 տրոլեյբուս-մեքենաներ, որոնք այդ տարի փոխադրեցին 62 միլիոն ուղևոր[72]։

Տրոլեյբուսների պահպանման, նրանց տեխնիկական վերանորոգման համար Երևանում շահագործման հանձնվեցին երկու պարկեր և ապա՝ վերանորոգման արհեստանոցը։

Ինչպես տրամվայի, այնպես էլ տրոլեյբուսների վերանորոգման արհեստանոցները համալրվել են նոր դաղգահներով ու սարքերով։ Արհեստանոցների աշխատողները յուրաց-

---

70. Տվյալները վերցված են Երևանի տրամվայ-տրոլեյբուսի վարչության պլանֆինբաժնից։

71 Ա. Բաղդյան, նշվ. աշխ., էջ 167։

72 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 163.

րել են շարժական կազմի մի շարք պահեստամասերի ու սարքավորումների պատրաստումը տեղում։

Երևանից բացի, 1962 թ. նոյեմբերին տրոլեյբուսի գիծ անցկացվեց նաև Լենինականում։ Տարեցտարի ընդարձակվեց քաղաքի տրոլեյբուսի գիծը, ավելացավ տրոլեյբուսներիր, բնականաբար նաև փոխադրվող ուղևորների քանակը։

Տրոլեյբուսի գծերի միագիծ երկարությունը Լենինականում 1962 թ. եղել է 13,5 կիլոմետր, եղել է ընդամենը 3 տրոլեյբուս, փոխադրվել է 37 հազար մարդ։ Իսկ 1970 թ. գծի երկարությունը հասել է 34,2 կիլոմետրի, եղած 38 տրոլեյբուսներով փոխադրվել է 7.600 հազար ուղևոր[73]։

Երևանի քաղաքային տրանսպորտի մյուս տեսակը «Նորք» ճոպանուղին է, որը շահագործման է հանձնվել 1967 թ. նոյեմբերի 5-ին։ Ճոպանուղին տարեկան փոխադրում է 200 հազար մարդ։ Այժմ կառուցման պրոցեսում է գտնվում երկրորդ ճոպանուղին, որը Պարոնյան փողոցից Հրազդանի կիրճի վրայով ուղևորներին կհասցնի Միծեռնակաբերդի բարձունքը։

Ընդհանուր քաղաքային մասսայական տրանսպորտի ստեղծման ու հետագա զարգացման գործում ունեցած հաջողություններին, տրանսպորտի աշխատանքներում դեռևս դոյություն ունեն լուրջ թերություններ։ Դրա համար էլ քաղաքային տրանսպորտի հարցը բազմիցս քննարկման է ենթարկվել ՀԿԿ Կենտկոմում, ՀՍՍՀ Մինիստրների սովետում, ՀԿԿ քաղաքային և շրջանային կոմիտեների բյուրոներիր նիստերում։ Ձեռնարկվել են միջոցառումներ՝ տրանսպորտի միավորների քանակն ավելացնելու, անհրաժեշտ նյութատեխնիկական բազա ստեղծելու, կադրերի հոսունությունը կանխելու, քաղաքային տրանսպորտի նորմալ գործունեության համար պայմաններ ստեղծելու ուղղությամբ։

* * *

Նախասովետական տարիներին և նույնիսկ սովետական կարգերի հաստատումից հետո՝ մինչև 1930-ական թվական-

73 Հայկական ՍՍՀ կոմունալ տնտեսության մինիստրության պլան-ֆինբաժնի ընթացիկ արխիվ։

Նները, մեր հանրապետությունում փոխադրումների հիմնական միջոցները նահապետական սայլն ու ձիասայլն էին, որոնք զբաղվում էին ներքաղաքային և միջքաղաքային ուղևորների և բեռների փոխադրումներով։ Ավտոմեքենան առաջին անգամ Երևան մուտք գործեց 1913 թ.[74]։

1921—1922 թթ. Հայաստանում կային դինվորական ավտովաշտերից մնացած 150 տարբեր մակնիշի ավտոմեքենաներ։

1924 թ. նոյեմբերից Հայաստանում կազմակերպվեց անդրկովկասյան ավտոտրանսպորտի բաժանմունքը, որը ղեկավարում էր բնակչության երթևեկությունը Երևան—Դիլիջան, Երևան—Ղամարլու, Երևան—Դարաչիչակ և Դիլիջան—Ղարաքիլիսա երթուղիներով։ 1926 թ. Հայաստանում կար ընդամենը 185 ավտոմեքենա, որից 141-ը պետական էր, իսկ 44-ը՝ մասնավոր[75]։

1923 թ. ներքաղաքային ավտոբուսային երթևեկություն սկսվեց Երևանում և Լենինականում։ Երևանում աշխատում էր 4 ավտոբուս՝ երկու երթուղով։

Հայտնի է, որ բնակչության, ինչպես և քաղաքների նորմալ կյանքն ու հիմնարկ-ձեռնարկությունների անխափան աշխատանքն ապահովելու գործում մեծ է մարդատար տրանսպորտի դերը։ Հանրապետությունում արդյունաբերության բուռն զարգացումը, հին ու նոր քաղաքների կառուցապատումը պահանջում էին տրանսպորտի, մասնավորապես ավտոմոբիլային տրանսպորտի լայն զարգացում։ Առաջին հնգամյակի վերջին տարում, այսինքն՝ 1932 թ. Հայաստանի ավտոպարկերն արդեն ունեին 787 ավտոմեքենա, այդ թվում բեռնատար՝ 446, մարդատար՝ 135, իսկ ավտոբուսներ և հատուկ մեքենաներ՝ 206 հատ[76]։

Մինչև 1940 թ. Երևանում մասսայական տրանսպորտի

---

74 Թ. Ս. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1879—1917 թթ.)*, էջ 311։

75 «Խորհրդային Հայաստան», հինգ տարի 1920—1925 թթ., էջ 384։

76 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», 1920—1960 թթ., էջ 224։

Հիմնական միջոցը հանդիսացել է էլեկտրաքարշը, իսկ ավտոբուսային տրանսպորտը կատարել է միայն օժանդակ դեր։ Ավտոբուսային մարդատար տրանսպորտը և Սևանի նավագնացությունը կենտրոնացված էին «Հայտրանսի» սիստեմում։ Ներքաղաքային և միջքաղաքային երթևեկությունը մինչև 1929 թ. կազմակերպել են «Հայտրանսը» և «Երքաղավտոտրանսը»։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1939 թ. մայիսի 29-ի հրամանագրով «Հայտրանսի» և «Երքաղավտոտրանսի» բազայի վրա կազմակերպվեց Հայաստանի ավտոմոբիլային տրանսպորտի ժողովրդական կոմիսարիատը։ Դա վճռական նշանակություն ունեցավ հանրապետությունում բեռնատար և մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման համար։ Կոմիսարիատին հանձնվեցին ընդհանուր օգտագործման բոլոր ավտոտրանսպորտային ձեռնարկությունները։

1933—1940 թթ. հայրենական ավտոմոբիլային արդյունաբերության զարգացման շնորհիվ ավտոմոբիլային տրանսպորտը հանրապետությունում դարձավ երթևեկության գլխավոր միջոցներից մեկը։

Հայրենական մեծ պատերազմի առաջին տարիներին ներքաղաքային ավտոբուսային երթևեկությունը դադարեց։ Այն վերսկսվեց 1943 թ. Երևանում, իսկ 1946 թ. Լենինականում և Կիրովականում։

Երևանի № 1 ավտոբուսային պարկը սպասարկում էր Երևանին և կատարում էր ներքաղաքային փոխադրումներ։ № 2 պարկը կատարում էր միջքաղաքային, իսկ № 3 պարկը՝ մերձքաղաքային փոխադրումներ։ Մինչև 1960 թ. Երևան, Լենինական, Կիրովական, Դիլիջան, Ղափան, Գորիս, Ստեփանավան, Ալավերդի, Սևան, Հոկտեմբերյան և Արտաշատ քաղաքներում ստեղծված էին ավտոտրանսպորտային ձեռնարկություններ, որոնք կազմակերպում էին երթևեկությունը, մի քանի հարյուր կիլոմետր երկարության հասնող 58 երթուղիներով։

Եռապատերազմյան տարիներին ավտոմոբիլային տրանս-

պորտը, ինչպես ողջ երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում խոշոր վերելք ապրեց։ Արագ տեմպերով աճեց ինչպես մարդատար, այնպես էլ բեռնատար և այլ տիպի ավտոմեքենաների քանակը։ Ստեղծվեցին տեխնիկական բազաներ, շահագործման հանձնվեցին բազմաթիվ պարկեր ու արհեստանոցներ։ Աճեցին ինժեներատեխնիկական որակյալ կադրեր, խոշորացավ ավտոտրանսպորտային տնտեսությունը, նշանակալի կերպով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, բարելավվեց ավտոմեքենաների օգտագործման գործակիցը։ Ավտոտրանսպորտի տարբեր մակնիշի ավտոմեքենաների վերանորոգման համար Երևանում, Լենինականում, Կիրովականում, Կամոյում, Իջևանում, Գորիսում ստեղծվեցին ավտովերանորոգման գործարաններ, որոնք 1970 թ. ունեին մոտ հազար բանվոր և ինժեներատեխնիկական աշխատող։

1970 թ. Հանրապետության բոլոր բնակավայրերը ավտոբուսային երթևեկությամբ կապվեցին քաղաքների ու շրջանային կենտրոնների, իսկ վերջիններս էլ՝ Երևանի հետ։

Հանրապետությունում կազմակերպված 605 ներքաղաքային, միջքաղաքային և մերձքաղաքային երթուղիների երկարությունը 1970 թ. հասավ ավելի քան 20 հազար կիլոմետրի։ Միայն Երևան քաղաքում 1970 թ. գործել է 53 երթուղի՝ 450 կիլոմետր երկարությամբ[77]։

Հանրապետությունը ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով սերտ կապեր ունի անդրկովկասյան հանրապետությունների խոշոր կենտրոնների, Հյուսիսային Կովկասի և առողջարանային քաղաքների, ինչպես նաև Սոչիի, Ախալքալաքի, Ստեփանակերտի, Շամխորի և այլ բազմաթիվ քաղաքների հետ։

Եթե 1950 թ. փոխադրումները հանրապետությունում ընդունենք 100 տոկոս, ապա ներքաղաքային փոխադրումը կազմում էր 88 տոկոս, իսկ միջքաղաքայինը՝ 12 տոկոս։

77 Տե՛ս Հայկական ՍՍՀ ավտոտրանսպորտի մինիստրության պլանտնտեսագիտական բաժնի ընթացիկ արխիվ։

1960 թ. այդ թվերը համապատասխանաբար կազմում էին 81,4 և 18,6, իսկ 1970 թ.՝ 71 և 29 տոկոս: Հանրապետությունում արդյունաբերության, սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման, նոր ստեղծված քաղաքների կառուցապատման շնորհիվ տարեցտարի աճում է միջքաղաքային փոխադրումների քանակը: 1940 թ. 0,3 միլիոնի փոխարեն 1970 թ. այն հասել է 67 միլիոնի, աճելով 223 անգամ:

Հայկական ՍՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի մինիստերության ընդհանուր օգտագործման ավտոբուսները 1970 թ. կատարել են ներքաղաքային՝ 164, մերձքաղաքային՝ 49 և միջքաղաքային՝ 6 միլիոն ուղևորի փոխադրում[78]:

1970 թ. Հանրապետությունում եղել է 1920 ավտոբուս, որոնք փոխադրել են 218,5 միլիոն ուղևոր (1940 թ. 0,6 միլիոնի դիմաց):

Ուղևորների ներքաղաքային փոխադրման տեսակարար կշիռը տրանսպորտի առանձին տեսակներով
(համարիչը միլիոն ուղևորներով, իսկ հայտարարը՝ տոկոսներով)

Տարին	Տրանսպորտի բոլոր տեսակներով	Ավտոբուսով	Տրամվայով	Տրոլեյբուսով
1950	52,2 / 100	8,8 / 16,9	35,3 / 67,6	8,1 / 15,5
1955	102,5 / 100	35,6 / 34,7	45,8 / 44,7	21,1 / 20,6
1960	176,5 / 100	74,6 / 42,3	63,8 / 36,1	38,1 / 21,6
1965	229,9 / 100	128,2 / 55,8	56,9 / 24,7	44,8[79] / 19,5[80]
1970	348,0 / 100	205,7 / 59,1	61,6 / 17,7	80,7 / 23,2

Քաղաքային մարդատար տրանսպորտի միջոցների թվին

78 «Транспорт и связь СССР», стр. 243—244.
79 «Транспорт и связь Армянской ССР за ряд лет», стр. 109, 110.
80 «Транспорт и связь СССР», стр. 261.

են պատկանում նաև մարդատար տաքսամոտորային մեքենաները։

Մինչև 1940 թ. Երևանում գործում էին մի քանի մարդատար տաքսամոտորային մեքենաներ, որոնք պատերազմի տարիներին վերացան։

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից հետո 1946 թ. վերսկսվեց մարդատար տաքսամոտորային մեքենաների երթևեկությունը։ Այդ մեքենաների քանակը 1950 թ. Հանրապետությունում հասավ 44-ի, 1960 թ.՝ 700-ի, իսկ 1970 թ.՝ 2060-ի։ Երևանում 1970 թ. մեքենաների թիվը հասավ 1256-ի, Լենինականում՝ 228-ի, Կիրովականում՝ 159-ի, Ղափանում՝ 26-ի, Դիլիջանում՝ 22-ի, Էջմիածնում՝ 20-ի[81] և այլն։

1970 թ. Հանրապետության 38 քաղաքներում ու շրջանային կենտրոններում աշխատած 2060 մարդատար տաքսի մեքենաները կատարել են 125 միլիոն կիլոմետր վճարովի վազք[82]։ Դրանից 1256 մեքենա Երևանում կատարել է 81 միլիոն կիլոմետր վճարովի վազք։

Ավտոմոբիլային տրանսպորտը խոշոր դեր է կատարում Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ։ 1940 թ. ավտոտրանսպորտը փոխադրել է 4,1, 1950՝ թ. 12,5, 1960 թ.՝ 69,4, իսկ 1970 թ.՝ 171,1 միլիոն տոննա բեռ[83]։ Եթե 1970 թ. Սովետական Միության ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը կազմել է երկրի ընդհանուր բեռնաշրջանառության 6 տոկոսը, ապա Հայկական ՍՍՀ-ում՝ մոտ 40 տոկոսը։ Ինչպես տեսնում ենք, Սովետական Հայաստանում ավտոմոբիլային տրանսպորտը բեռների ու ուղևորների փոխադրման մեջ որոշիչ դեր է կատարում, որովհետև Հանրապետությունում երկաթուղային տրանսպորտի ցանցը սահմանափակ է, իսկ ջրային տրանսպորտ գոյություն չունի։

Չնայած անցած 50 տարիներին, Հանրապետությունում

---

81 Տվյալները տե՛ս Հայկական ՍՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի մինիստրության պլան-տնտեսագիտական բաժնի ընթացիկ արխիվում։

82 «Транспорт и связь СССР», стр. 247.

83 Նույն տեղում, էջ 218—219։

ստեղծվել է ավտոմոբիլային տրանսպորտ, բարձրացել է նրա տեխնիկական զինվածությունը, մեծացել է ինժեներա-տեխնիկական կադրերի և վարորդների քանակը, սակայն այն դեռևս չի բավարարում օրեցօր աճող պահանջները։

Հանրապետության ավտոտրանսպորտի մինիստրության ցանցում 1970 թ. աշխատել են 17800 մարդ, որոնց մեծ մասը վարորդներ են, իսկ 2380-ը ինժեներատեխնիկական աշխատողներ[84]։

* * *

Ճանապարհաշինությունը ժողովրդական տնտեսության կարևոր նշանակություն ունեցող բնագավառներից է։ Բարեկարգ ճանապարհները նպաստում են անվտանգ երթևեկությանը, քիչ ծախսերով ժողովրդատնտեսական բեռների արագ փոխադրումներին և այլն։

Նախասովետական տարիներին Հայաստանն ուներ ընդամենը 1767 կիլոմետր երկարություն ունեցող ճանապարհներ, այդ թվում կոշտ ծածկույթով պետական՝ 625 կիլոմետր, իսկ մնացած 1142 կիլոմետրը տեղական նշանակություն ունեցող հողային ճանապարհներ էին, որոնցով երթևեկել հնարավոր էր միայն լծկան տրանսպորտով, այն էլ տարվա ոչ բոլոր եղանակներին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից կառավարությունը մեծ ուշադրություն դարձրեց ճանապարհների վերանորոգման հարցին։ Սկզբում նյութական միջոցների սղության պատճառով կատարվեցին միայն ճանապարհների վերանորոգման աշխատանքներ։ ՍՍՀՄ կառավարությունը Հայաստանի տարածքում գտնվող համամիութենական նշանակություն ունեցող ճանապարհների բարեկարգման համար որոշակի գումարներ հատկացրեց։ 1925 թ. Հայաստանի բոլոր ճանապարհների ընդհանուր երկարությունը հասնում էր շուրջ 2 հազար կիլոմետրի, որի մի

---

84 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ ավտոտրանսպորտի մինիստրության կադրերի բաժնից։

մասը պահպանվում էր համամիութենական, մյուս մասը՝ տեղական միջոցներով։

1930-ական թվականներին ճանապարհաշինարարները ծանր ու դժվարին պայմաններում էին աշխատում։ Գնիշխողը ձեռքի աշխատանքն էր, սակավ էին ճանապարհաշինական մեքենաներն ու սարքերը, հայտնի բավարար քանակությամբ փոխադրական միջոցներ և շինանյութեր (ցեմենտ, սալաքար, խճաքար և այլն)։ Բայց Հայաստանի ճանապարհաշինարարներն իրենց հերոսական աշխատանքով հաղթահարեցին այդ բոլոր դժվարությունները և ոչ միայն վերականգնեցին ու վերակառուցեցին հին ճանապարհները, այլև կառուցեցին նոր խճուղիներ, նոր կամուրջներ, որոնք խթանեցին հանրապետության արդյունաբերության, տրանսպորտի, կապի միջոցների, գյուղատնտեսության, քաղաքաշինության զարգացմանը։

Նախապատերազմյան տարիներին ճանապարհաշինարարները կառուցեցին և շահագործման հանձնեցին հանրապետության տնտեսության և զարգացող քաղաքների համար խոշոր նշանակություն ունեցող Երևան—Աշտարակ—Լենինական—Ղուկասյան ճանապարհը։ Այդ ճանապարհը հանրապետության հյուսիս-արևմուտքից կտր բացեց դեպի եղբայրական Վրաստան։

Երևան—Արտաշատ—Արազդայան (Նախիջևանի ԱՍՍՀ սահմանը) ճանապարհը կապ է ապահովում հանրապետության լեռնահանքային արդյունաբերության հետ և հանրապետության հարավային մասից կտր է բացում դեպի Ադրբեջանական ՍՍՀ-ի Նախիջևանի ինքնավար հանրապետություն։

Կիրովական—Շահալի—Այրում—Համբարձում ճանապարհը կապ է ապահովում պղնձահանքային արդյունաբերության հետ՝ Ալավերդու շրջանում և միաժամանակ հանրապետության հյուսիսային շրջանից կտր է բացում դեպի Հարևան Վրաստան։

Հանրապետության ճանապարհաշինությունը մեծ տեմպերով զարգացնելու համար միութենական նշանակություն

ունեցող ավտոճանապարհների սպասարկումը հանձնարարվեց Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրության խճուղային ճանապարհների վարչությանը: Հանրապետական և տեղական նշանակություն ունեցող ճանապարհների սպասարկման համար 1939 թ. Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից կազմակերպվեց ճանապարհային գլխավոր վարչություն: Այդ ցանցում երկար տարիներ անբասիր աշխատանք են կատարել ինժեներ-ճանապարհաշինարարներ Ս. Արարատյանը, Ս. Սողոմոնյանը, Ս. Կանայանը, Է. Զաքարյանը, Բ. Խաչատրյանը: Վերջինս երկար տարիներ աշխատել է որպես խճուղային ճանապարհների շինարարության պետ: Ճանապարհաշինարարների կոլեկտիվում մեծ վաստակ ունի նաև Ս. Հովհաննիսյանը: Նա հեղինակ է «Հաղթանակ» և այլ բազմաթիվ կամուրջների: Ս. Հովհաննիսյանը Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի վաստակաշատ պրոֆեսորներից էր:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո մադիստրալային ավտոճանապարհների շինարարությունը ծավալվեց մեծ թափով:

Ավտոճանապարհների շինարարության, վերակառուցման և կապիտալ վերանորոգման կոմպլեքսային աշխատանքների շնորհիվ հանրապետության ճանապարհային ցանցը բարելավվեց և ընդարձակվեց: Այդ տարիներին կառուցվեցին և վերակառուցվեցին Սևան—Կամո, Հրազդան—Ծաղկաձոր, Ջայլենդ—Ջերմուկ, Երևան—Գառնի—Գեղարդ և այլ ճանապարհներ:

1956 թ. Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից կազմակերպվեց խճուղային ճանապարհների գլխավոր վարչություն, որի վրա դրվեց միութենական և հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների սպասարկման գործը: Այդ նոր վարչության կազմակերպումով հնարավորություններ առեղծվեցին ճանապարհային տնտեսության դեկավարումը և տեխնիկական միջոցները բարելավելու համար: Միաժամանակ, հնարավոր դարձավ միավորել ու զարգացնել հանրապետության ճանապարհային ամբողջ ցանցը:

ժողովրդական տնտեսության, քաղաքաշինության և բնակչության արմատական շահերը պահանջում են ճանապարհաշինարարության տեմպերի նման արագացում։

1959—1965 թթ.՝ յոթնամյակի տարիներին, Հանրապետությունում կառուցվեց ու վերակառուցվեց 264 կիլոմետր երկարությամբ ավտոճանապարհ, որի վրա ծախսվեց շուրջ 35 միլիոն ռուբլի։ Այդ գումարը 3 անգամ ավելի էր 7-րդ հնգամյակում այդ նպատակի համար հատկացված գումարից։

Կառուցված և վերակառուցված ճանապարհներից են Կիրովական—Շահալի—Այրում, Ջուլաշեն—Արենի—Եղեգնաձոր—Անգեղակոթ—Գորիս, Նոյեմբերյան—Այրում, Սևան—Մարտունի —Վարդենիս, Աշտարակ— Ապարան—Սպիտակ, Լենինական—Ղուկասյան և այլ ճանապարհներ։ Այդ տարիներին հանրապետությունում կառուցվել ու շահագործման են հանձնվել շրջանցող ճանապարհներ, որոնք հնարավորություն տվեցին Սևանի, Դիլիջանի, Արտաշատի կենտրոնական փողոցները ազատել տարանցիկ տրանսպորտից, ապահովելով ավտոմոբիլային երթևեկության անվտանգությունը։

Հանրապետության ավտոճանապարհներում մեծ թափ է ստացել կամուրջների և մյուս արհեստական կառույցների շինարարությունը։ Հանրապետությունում ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեն «Հաղթանակ» և «Հրազդան», ինչպես և Աշտարակի շրջկենտրոնում Քասախ ու Ալավերդում Դեբետ գետերի վրա կառուցված կամուրջները։

Այսպիսով, գլխավոր ավտոուղիները, որոնք կապում են հանրապետության քաղաքները միմյանց և մայրաքաղաքը հարևան հանրապետությունների հետ, բարեկարգ են և ապահովում են տրանսպորտի երթևեկությունը։

8-րդ հնգամյակում հանրապետության ճանապարհաշինարարները կապիտալ շինարարության միջոցներից ծախսելով 55 միլիոն ռուբլի, կառուցեցին ու վերակառուցեցին 413 կիլոմետր ավտոճանապարհ. այդ թվում՝ Երևան—Սևան,

Սևան—Կամո, Երևան—Էջմիածին—Հոկտեմբերյան, Երևան—Աշտարակ, պետխճուղի—Լալի գյուղ—Պառավաքար, Կողբի լեռնանցք, Հաղարծին և Պարզ լիճ ճանապարհները։ Այդ տարիներին ճանապարհաշինարարները Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ղափանում, Հրազդանում, Սևանում և հանրապետության այլ քաղաքներում շահագործման հանձնեցին 22 գործարան՝ տարեկան 400 հազար տոննա ասֆալտբետոնի կարողությամբ և ցեմենտբետոնի երկու գործարան (Լենինականում, Սևանում), տարեկան 60 հազար տոննա կարողությամբ։ Ճանապարհաշինարարների կողմից կառուցվել են 85 ավտոպավիլիոններ, հանգստի հրապարակներ, աղբյուրներ, ավտոկայաններ և այլն։ Նշանակալից աշխատանք է կատարված ճանապարհների կանաչապատման ուղղությամբ։ Հանրապետության խճուղային ճանապարհներին ստեղծված է 732 կիլոմետր կանաչ տարածություն, ձյունապաշտպան տնկիներ՝ մոտ 30 կիլոմետր երկարությամբ։

1970 թ. օգոստոսին կազմակերպվեց Հայկական ՍՍՀ ավտոմոբիլային ճանապարհների շինարարության և շահագործման մինիստերությունը, որի առաջին մինիստր նշանակվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանակիր, ինժեներ-ճանապարհաշինարար Հրանտ Հայրապետյանը։

Հայկական ՍՍՀ-ում ավտոմոբիլային ճանապարհները 1940 թ. ունեցել են 7,2, 1950 թ.՝ 7,8, 1960 թ.՝ 6,2, իսկ 1970 թ.՝ 8,3 հազար կիլոմետր երկարություն[85]։

Հանրապետության ճանապարհաշինարարության բնագավառում երկարամյա և անբասիր աշխատանք են կատարել Հայրենական մեծ պատերազմի մարտական մասնակից, Սովետական Միության հերոս Ռ. Հակոբյանը, վաստակավոր ինժեներ-ճանապարհաշինարար Գ. Հովհաննիսյանը։ Վերջինս պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Ճանապարհաշինության վետերաններ են Ա. Հարությանը, Վ. Պապիկյանը, Ս. Անդրեասյանը, Ն. Համազասպյանը, Վ. Վիրաբյանը, Ա. Խոտիկյանը, Ռ. Վիրաբյանը և ուրիշներ։

58 «Народное хозяйство СССР в 1970 г.», стр. 452, 453.

1970 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակի օրը, շահագործման հանձնվեց Պուշկինյան լեռնանցքի թունելը, որով Կիրովական-Ստեփանավան ճանապարհը կրճատվեց 12 կիլոմետրով։ Հանրապետության ճանապարհաշինարարների բազմաթիվ կոլեկտիվներ ծավալուն աշխատանքներ են կատարում Գորիս—Ղափան, Սևան—Կամո, Երևան—Արտաշատ, Հրազդան—Հանքավան, Երևան—Լենինական և այլ ճանապարհներ վերակառուցելու ու բարեկարգելու ուղղությամբ։

Այսպիսով, սովետական իշխանության 50 տարիներին վերակառուցվել (ուղղվել լայնացվել և երեսպատվել) են անցյալից ժառանգություն ստացած քայքայված խճուղիները, կառուցվել են շուրջ 5 հազար կիլոմետր ավտոմոբիլային նոր ճանապարհներ, որոնց մեծ մասը՝ պինդ ծածկույթով։ Այդ տարիներին հանրապետության տարբեր գոտիներում ստեղծվել է ճանապարհաշինության նյութատեխնիկական բազա, աճել է ճանապարհաշինարար ինժեներատեխնիկական աշխատողների մի մեծ կոլեկտիվ, որը պատվով է կատարում իր վրա դրված խնդիրները։

* * *

Ցարական Ռուսաստանը 1865—1912 թթ. Անդրկովկասում կառուցեց 1830 կիլոմետր երկարությամբ երկաթուղագիծ, որից 362 կիլոմետրը[86] ներկայիս Սովետական Հայաստանի տարածքում։ Այդ երկաթուղիները 1900 թ. միացվեցին համառուսաստանյան երկաթուղային ցանցին։ Երկաթուղու կառուցումը նպաստեց Անդրկովկասից պղինձ, նավթ, մարգանեց և գյուղատնտեսական մթերքներ արտահանելու գործին։

Հայաստանի երկաթուղին կազմում է անդրկովկասյան երկաթուղու հարավային գծի մի մասը և անցնում է երկու խոշոր քաղաքներով՝ Լենինականով և Երևանով։ Գծի երկարությունը 362 կիլոմետր է։ Չնայած տարածության փոքրու-

86 «Խորհրդային Հայաստան» հինգ տարի 1920—1925, էջ 372։

բյանը, Հայաստանի երկաթուղին անցնում է լեռներով, կիրճերով և հարթավայրերով։

1918—1920 թթ. Հայաստանի երկաթուղային տնտեսությունը համարյա կազմալուծվեց։ Ավարի ու ավերածության ենթարկվեցին երկաթուղու ունեցվածքը, կայարանները, արհեստանոցներն ու շենքերը։ Հայաստանի երկաթուղին կտրվեց անդրկովկասյան երկաթուղու ցանցից։

Երկաթուղային տնտեսության վերականգնման աշխատանքները հիմնականում սկսվեցին 1923 թ., երբ արդեն կազմակերպվել էր Անդրկովկասյան Ֆեդերացիան և ապա Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։ Նախ Հայաստանի երկաթուղային ցանցը միավորվեց անդրկովկասյան և ապա՝ ՍՍՀՄ-ի երկաթուղային ցանցի մեջ։

Տարեցտարի շարք մտան ավերված երկաթուղիները, դեպոներն ու կայարանները։ Վերականգնվեց շարժական կազմը, բարձրացվեց շոգեքարշերի հզորությունը, զգալի չափերով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, իջավ փոխադրումների ինքնարժեքը[87]։ Դրա շնորհիվ 1940 թ. հարավային ուղում բեռների առաքումը գերազանցեց 1913 թ. մակարդակը մոտ 7 անգամ, իսկ գնացքների ժամանումը՝ 8 անգամ[88]։

Մինչև 1940-ական թվականները Հայկական ՍՍՀ-ում կառուցվեցին երկաթուղային մի շարք ճյուղավորումներ, որոնք խոշոր դեր խաղացին Հանրապետության ժողովրդական տնտեսության և քաղաքների զարգացման գործում։ 1929 թ. նոյեմբերի 29-ին շահագործման հանձնվեց Լենինական—Արթիկ—Պեմզաշեն—Անիպեմզա երկաթուղագիծը՝ 32 կիլոմետր երկարությամբ։ Դրա շնորհիվ նորաստեղծ Արթիկ քաղաքը և Պեմզաշեն քաղաքատիպ ավանը դարձան Հանրապետության շինանյութերի արդյունահանման կենտրոններ։

---

87 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960» և «Հոկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը» աշխատություններում տե՛ս «Տրանսպորտը» բաժինները։

88 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960», էջ 215։

1932 թ. նոյեմբերի 7-ին շահագործման հանձնվեց 39 կիլոմետր երկարությամբ Ղափան—Մինջևան երկաթուղագիծը։ Այս գծի կառուցումը մեծապես նպաստեց Ջանգեզուրի լեռնարդյունաբերության և հանրապետության հարավային շրջանների տնտեսության զարգացմանը։ Ղափանը, իսկ հետագայում նորաստեղծ Քաջարան քաղաքը, դարձան հանրապետության արդյունաբերական շատ կարևոր կենտրոններ։

1942 թ. օգոստոսի 13-ին ավարտվեց 125 կիլոմետր երկարությամբ Մինջևան—Ջուլֆա երկաթուղագիծը, որը Երևանը կարճ ճանապարհով անմիջապես կապեց Բաքվի հետ։ Այդ երկաթուղագիծը խոշոր դեր կատարեց երկու եղբայրական հանրապետությունների տնտեսական կյանքում։

1962 թ. շահագործման հանձնվեց Երևան—Հրազդան—Սևան երկաթուղագիծը՝ 90 կիլոմետր երկարությամբ[89]։ Այդ նոր գիծը խոշոր դեր կատարեց Սևանի ավազանում առաջացած նոր քաղաքների՝ Հրազդանի, Սևանի, Ջարենցավանի, ինչպես նաև Աբովյանի արդյունաբերական օջախների զարգացման, հիդրոէլեկտրակայանների և լեռնամետալուրգիական կոմբինատի կառուցման և նրանց հետագա զարգացման գործում։ Տարեցտարի հանրապետությունում ավելանում է երկաթուղագծի երկարությունը։ Եթե 1920 թ. Հայաստանում եղել է 362 կիլոմետր երկարությամբ երկաթուղագիծ, ապա 1940 թ.՝ 398, 1950 թ.՝ 460, 1960 թ.՝ 520, իսկ 1970 թ.՝ 560 կիլոմետր, որից 453 կիլոմետր երկաթուղագիծը էլեկտրիֆիկացված է և աշխատում են էլեկտրաքարշեր, ծանր ջերմաքարշեր[90]։

1962—1968 թթ. ավարտվեց Երևան—Հրազդան—Սևան երկաթուղագծի էլեկտրիֆիկացման աշխատանքը, որը հնարավորություն տվեց ավելի արագացնելու լոկոմոտիվների շրջապտույտը, գերակատարելու քարշային նորմաները։

Սովետական իշխանության տարիներին հանրապետության երկաթուղային տրանսպորտի տնտեսությունը հարբս-

89 *А. Г. Сагрдян*, История железных дорог Закавказья, Ереван, 1970, стр. 234.

90 «Транспорт и связь СССР», стр. 89, 90.

տացավ մի շարք նոր գծերով, դեպոներով, արհեստանոցներով, կայարաններով, հայկական ճարտարապետության ոճով կառուցված կայարանային շենքերով։ Արմատական փոփոխություններ տեղի ունեցան գծային տնտեսությունում։ Էլեկտրիֆիկացվեցին ու ռադիոֆիկացվեցին բոլոր կայարանները։ Նրանցում ստեղծվեցին կուլտուրական սպասարկման պայմաններ։ Մեքենայացվեցին վագոնների բարձման ու բեռնաթափման, շարժական մասի ու նորոգման բաժանմունքների աշխատանքները։ Ստեղծվեց երկաթուղային բանվորների ու ինժեներատեխնիկական աշխատողների մի պատկառելի բանակ։

Այս բոլորը որոշակի նշանակություն ունեցավ ուղևորների փոխադրման և բեռնաշրջանառության համար։ Այդ ցույց տալու համար բերենք մի քանի թվեր։

Հայկական ՍՍՀ երկաթուղային տրանսպորտով երթևեկած ուղևորների քանակը

1940 թ. երթևեկել է 2,3 միլիոն մարդ. այդ թվում՝ մերձքաղաքային
1950 թ. երթևեկել է 1,4 միլիոն մարդ. այդ թվում՝ —0,45 միլ.
1960 թ. երթևեկել է 1,6 միլիոն մարդ. այդ թվում՝ —0,7 միլ.
1970 թ. երթևեկել է 3,2 միլիոն մարդ. այդ թվում՝ —2,3 միլ.[91]։

Ստորև բերվող աղյուսակը ցույց է տալիս 1913 թ. և 1940—1970 թթ. երկաթուղով առաքվող և ստացվող բեռների աճը միլիոն տոննաներով.

1913 թ.	ուղարկվել է	0,2	ստացվել է	0,3
1940 թ.	»	1,4	»	2,3
1950 թ.	»	2,3	»	3,2
1960 թ.	»	6,4	»	7,6
1970 թ.	»	10,6	»	14,6[92]

Այսպիսով, երկաթուղով փոխադրված բեռների քանակը 1940 թ. համեմատությամբ 1970 թ. աճել է 7,5 անգամ, իսկ 1913 թ. համեմատությամբ՝ 50 անգամ։ Ստացված բեռների քանակը նույն ժամանակամիջոցում ավելացել է համապատասխանաբար 6,5 և 48 անգամ։

91 Նույն տեղում, էջ 102։
92 Նույն տեղում, էջ 112։

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններին և կազմակերպություններին առավել նպատակահարմար ձևով սպասարկելու նպատակով երկաթուղում կառուցվեցին միջգործարանային գծամասեր, որոնցով 1940 թ. փոխադրվել է 1,0 միլիոն, իսկ 1970 թ.՝ 23,3 միլիոն տոննա բեռ։

Երկաթուղային ցանցի ընդարձակումը ոչ միայն օգնում է Հանրապետության արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխմանը, այլև նոր քաղաքների՝ Կիրովականի, Վանաձորի, Արարատի, Արթիկի, Հրազդանի, Սևանի, Ջերմուկի, Ջարենցավանի, Հոկտեմբերյանի, Աբովյանի, Արտաշատի, Սպիտակի, ինչպես նաև քաղաքատիպ ավանների՝ Անիպեմզայի, Արզնու, Ախթալայի, Այրումի, Գագարինի, Թումանյանի, Լուսակերտի և այլ ավանների զարգացմանն ու կառուցապատմանը։

Երկաթուղու նոր գծերի կառուցման շնորհիվ Հանրապետությունում առաջացել են ոչ միայն նոր քաղաքներ, այլև բազմաթիվ խոշոր գյուղեր դարձել են քաղաքատիպ ավաններ (Մեղրի, Նոր-Հաճըն, Գեմրաշեն, Քուլափերան և այլն)։

Հանրապետության երկաթուղային ցանցում 1970 թ. աշխատել է 8400 մարդ, որոնցից 82-ը ինժեներատեխնիկական աշխատողներ են[93]։

* * *

ՍՍՀՄ-ում քաղաքացիական ավիացիան ստեղծվեց սովետական իշխանության օրոք, հատկապես ինդուստրացման տարիներին։ Լինելով տրանսպորտի ամենաերիտասարդ տեսակը, ավիացիան կարճ ժամանակաշրջանում մուտք գործեց աշխատավորության կենցաղը և հասավ մեծ զարգացման։ Մեր երկրում տարեցտարի ավելացավ տրանսպորտային ինքնաթիռների ուղևորաշրջանառությունը՝ ինչպես գործող, այնպես էլ նոր բացվող երթուղիների հաշվին։

93 Տվյալները վերցված են անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի կադրերի բաժնից։

Սովետական պետությունը 1923 թ. հիմնեց իր քաղաքացիական օդային նավատորմը։

1924 թ. մայիսին Երևանում ինժեներ Ռ. Բաբայանի ղեկավարությամբ կազմակերպվեց ավիամոդելիստների առաջին խմբակը, իսկ 1933 թ. ապրիլին Երևանում բացվեց ավիաակումբ[94], որը որոշակի դեր կատարեց երիտասարդ ավիամոդելիստների և օդաչուների պատրաստման գործում։

Քաղաքացիական ավիացիան Սովետական Հայաստանում ծնունդ առավ 1933 թ.։ Այդ թվականին էլ կազմակերպվեց ավիաջոկատը։ Հանրապետությունում ժողովրդական տնտեսության և մշակույթի առաջընթացը, քաղաքների տնտեսական բուռն վերելքը և բնակչության աճը իրենց հերթին մեծապես նպաստեցին քաղաքացիական ավիացիայի զարգացմանը։ Օդային տրանսպորտը կարճ ժամանակամիջոցում դարձավ տրանսպորտի կարևորագույն ճյուղերից մեկը։

1934 թ. շահագործման հանձնվեցին Երևանի հարավային, իսկ հետագայում՝ Լենինականի, Ստեփանավանի, Ղափանի, Բասարդեչարի (Վարդենիս) և Սիսիանի օդանավակայանները։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին իրենց անունները փառքով պսակեցին Երևանի ավիաակումբի սաներ, Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը, Սովետական Միության հերոս Սերգեյ Բուռնազյանը, խիզախ օդաչուներ Արտուշ Օհանջանյանը, Գուրգեն Բաղդասարովը, Էմիլ Դիլանյանը, Կոնստանդին Մալխասյանը, Հարություն Պարոնյանը, Մամիկոն Խանզրադյանը և շատ ուրիշներ։

Քաղաքացիական ավիացիան ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում, խոշոր վերելք ապրեց հատկապես ետպատերազմյան տարիներին։ Այդ տարիների ընթացքում ոչ միայն բարեկարգվեցին հին օդանավակայանները, այլև կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին Երևանի արևմտյան (Փարաքարի),

94 «Ավանգարդ», 21 սեպտեմբերի, 1971։

Կամոյի, Գորիսի, Ջերմուկի, Եղեգնաձորի, Մարտունու օդանավակայանները։ Հանրապետությունում գործող 14 օդանավակայանների հետ օդային երթևեկություն սահմանվեց օրական 3—5 երթ[95]։ Այդ օդանավակայաններից փոխադրում են կատարում «Ил-14», «АН-2», «ЯК-40» տիպի օդանավերը։

Մինչև 1960-ական թվականները Հայկական ՍՍՀ-ում գործում էին տեղական նշանակություն ունեցող ավիաուղիներ, իսկ Կովկասի սահմաններում՝ Երևան—Թբիլիսի և Երևան—Նախիջևան ավիաուղիները։

ՍՍՀՄ մյուս խոշոր կենտրոնների հետ կապ էր պահպանվում Երևան—Մոսկվա, Ռոստով, Խարկով, Վորոնեժ մշտական գործող ավիաուղիներով։ 1961 թ., երբ շահագործման հանձնվեց Երևանի արևմտյան օդանավակայանը, այնտեղից թռիչքներ սկսեցին կատարվել միայն միութենական և արտասահմանյան գծերով, իսկ հարավային օդանավակայանից թռիչքներ են կատարվում բացառապես հանրապետության օդային գծերում։ Հին օդանավերի փոխարեն հեռավոր ուղևորության համար սկսեցին օգտագործել «ИЛ-18» տիպի օդանավերը։

Այժմ Սովետական Հայաստանը Միության 34 արդյունաբերական ու մշակութային խոշոր կենտրոնների՝ Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Թբիլիսիի, Կիևի, Սոչիի, Միներալնիե Վոդիի, Սիմֆերոպոլի, Օդեսայի, Ռոստովի, Տաշքենդի, Վոլգոգրադի, Ալմա-Աթայի, Կրասնոդարի, Ռիգայի, Խարկովի և այլ քաղաքների հետ օդային հաղորդակցություն ունի[96]։


1969 թ. մայիսի 15-ից Երևանի արևմտյան օդանավակայանը դարձավ միջազգային։ Այդ օրը Մոսկվա—Երևան—Բեյրութ—Ամման ուղղծով առաջին թռիչքը կատարվեց։

Օդանավով ուղևորվելը մտել է մարդկանց կենցաղի մեջ։ Քաղաքացիական ավիացիան, եթե 1936 թ. փոխադրել

---

95 «Транспорт и связь СССР», стр. 207—208.

96 Ս. Ջուրաբյան, նշվ. աշխ., էջ 299։



Մի տեսարան Դիլիջան քաղաքից

է մոտ 2 հազար, 1950 թ.՝ 10 հազար[97], 1960 թ.՝ 147 հազար, ապա 1970 թ.՝ 677 հազար ուղևոր[98]։ Ավիացիան միաժամանակ տեղափոխում է փոստային ծանրոցներ, նամակներ, թերթեր, արդյունաբերական և պարենային ապրանքներ։ 1950 թ. փոխադրվել է հազար տոննա, 1960 թ.՝ 3,2, իսկ 1970 թ.՝ 11,8 հազար տոննա բեռ[99]։

Հանրապետության օդային տրանսպորտը 1933 թ. դեկավարում էր Հատուկ ավիացիոն ջոկատը։ Միայն 1966 թ. կազմակերպվեց օդային փոխադրումների քաղաքացիական ավիացիայի հայկական վարչությունը։

Եթե 1955 թ. օդային տրանսպորտի օգուտները կազմել են 1.182 հազար ռուբլի, ապա 1970 թ.՝ 22 միլիոն ռուբլի[100]։

Այսպիսով, սովետական իշխանության 50 տարիներին Հանրապետությունում ոչ միայն զարգացան տրանսպորտի միջոցները, այլև ստեղծվեցին տրանսպորտի նոր տեսակներ՝ օդային, ավտոմոբիլային, քաղաքային (տրամվայ, տրոլեյբուս) և այլն։ Արդյունաբերության արագ տեմպով զարգանալու շնորհիվ այդ տարիներին տեխնիկապես վերազինվեցին Հանրապետության տրանսպորտի բոլոր տեսակները։ Ձեռքին բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների որակյալ կադրեր, որոնք ընդունակ պահվեցին լուծելու տեխնիկատնտեսական բազմապիսի բարդ խնդիրներ։

Հայկական ՍՍՀ-ում գործող տրանսպորտի բոլոր տեսակները խոշոր դեր կատարեցին Հանրապետության արտադրողական ուժերի տեղաբաշխման, նոր քաղաքների առաջացման ու զարգացման, արդյունաբերական նոր օջախների ստեղծման, ինչպես նաև աշխատավորության երթևեկության կուլտուրական սպասարկման գործում։

97 «Транспорт и связь Армянской ССР за ряд лет», Ереван, 1967, стр. 100.

98 Նույն տեղում, էջ 101։

99 «Транспорт и связь СССР», стр. 209.

100 Տվյալները վերցված են քաղաքացիական ավիացիայի հայկական վարչության պլանֆինոտժից։

5. ԿԱՊԻ ԵՎ ՌԱԴԻՈ-ՀԵՌՈՒԻՏԱՏԵՍԱՅԻՆ ՅԱՆՑԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Սովետական իշխանության տարիներին արագ կերպով զարգացան նաև կապի միջոցները, որոնք մեծ դեր կատարեցին մեր երկրում ծավալված սոցիալիստական շինարարության գործում։ Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով կապի դերը ասել է. «Սոցիալիզմն առանց փոստի, հեռագրի, մեքենաների՝ ամենադատարկ ֆրազ է»[101]։

Սովետական Հայաստանն անցյալից ժառանգեց երկու տասնյակից ավելի փոստ-հեռագրային հիմնարկներ, մի քանի հարյուր կիլոմետր երկարությամբ հեռագրային կապի գիծ և անգործության մատնված կապի ցանց։

Հայաստանի փոստ-հեռագրային վարչությունը, որը կազմակերպվել է 1918 թ. մայիսին, չունենալով գործունեության լայն ասպարեզ, Երևանից տեղափոխվել էր Ալեքսանդրապոլ։ Կապի բոլոր ստորաբաժանումներն ու նյութերը, որոնք Ալեքսանդրապոլ էին տարվել, 1920 թ. աշնան քաղաքը գրաված թուրքական զավթիչների ձեռքը։

Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերին Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով ռադիոկայանը և կապի ողջ ցանցը սեփականացվեց[102]։

1921 թ. մայիսին կազմակերպված փոստ-հեռագրական կոմբինատը, չնայած դրամական միջոցների սղությանն ու հեռագրային գծերի խանգարվածությանը, արդյունավետ գործ կատարեց հատկապես այն տարիներին, երբ Հանրապետության կապի ցանցը միացվեց համամիութենական կապի ցանցի հետ։

Ժողովրդական տնտեսության զարգացման հետ միասին, հատկապես հետպատերազմյան տարիներին մեր երկրում արագ կերպով զարգացավ նաև կապի ցանցը։ Կապը հնարավորության ստեղծեց ապահովելու քաղաքների և գյուղերի, ֆաբրիկաների ու գործարանների, կոլտնտեսությունների, սովխոզների և տրանսպորտի համագործակցված աշխատանքը։

---

101 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 27, էջ 377։

102 «Ժամանակագրական ժողովածու», 1920—1938 թթ., էջ 19։

Հանրապետության ժողովրդական տնտեսության և քաղաքների զարգացման, բնակչության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման շնորհիվ տարեցտարի ավելանում էր փոստային առաքումների քանակը։ Այսպես, նամակների ուղարկումը Հանրապետությունում 1913 թ. կազմել է 4 միլիոն, իսկ 1970 թ. այն հասել էր 64 միլիոնի[103]։ Տանրոցների ուղարկումը 1913 թ. կազմել է 0,1 միլիոն, իսկ 1970 թ. հասել էր 0,7 միլիոն հատի։ Դրամական փոխադրումների և կենսաթոշակների վճարումը 1940 թ. կազմել է 0,3 միլիոն, իսկ 1970 թ. հասել էր 4,8 միլիոն ռուբլու[104]։ Պարբերական հրատարակությունների (թերթերի, ամսագրերի) առաքումների քանակը 1913 թ. կազմել է 2,7 միլիոն օրինակ, իսկ 1970 թ. արդեն հասել էր 224 միլիոն օրինակի[105]։

Այսպիսով, 1913 թ. համեմատությամբ 1970 թ. նամակների առաքումը աճել է 16 անգամ (Միության մեջ 8,2 անգամ), ծանրոցներինը՝ 17 անգամ (Միության մեջ 8,8 անգամ), պարբերական հրատարակություններինը՝ 75 անգամ (Միության մեջ 75 անգամ), իսկ դրամական փոխադրումները՝ 1940 թ. համեմատությամբ 17 անգամ[106]։

Հանրապետության քաղաքներում և բանավաններում կառուցվել են և կառուցվում են ժամանակակից տեխնիկայի պահանջներին համապատասխան կապի նոր հանգույցներ։ Գյուղական վայրերում ևս արագ տեմպերով ընթանում են կապի հանգույցների կառուցման աշխատանքները։

Երևանի և Թիֆլիսի միջև հեռագրական կապ ստեղծվել է 1864 թ.։ Այդ նույն տարում հեռագրական կապ ստեղծվեց Դիլիջանի և Ալեքսանդրապոլի միջև։ 1921 թ. մայիսից սկսեց աշխատել Երևանի հեռագրատունը, որը Հանրապետության 19 բնակավայրերի հետ հեռագրային կապ հաստատեց։ Նորաստեղծ կառավարության ձեռնարկած միջոցա-

103 «Транспорт и связь СССР». стр. 274.

104 Նույն տեղում, էջ 275։

105 Նույն տեղում, էջ 12—13։

106 Նույն տեղում, էջ 276։



Աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախկին նախագահ Ե. Վարդանյան



ռումների շնորհիվ երկրի տարբեր քաղաքներից ստացվեցին գործիքներ, սարքեր և զանազան նյութեր։ Սկսվեցին հեռագրային նոր գծերի անցկացման աշխատանքները։

Տարեցտարի ավելացավ ուղարկվող և ստացվող հեռագրերի քանակը։ Անհրաժեշտություն առաջացավ տեղադրելու ավելի արագ աշխատող ապարատներ։ Մոսկվայի հետ ուղիղ կապ ապահովելու համար դրվեց հատուկ հեռագրական ապարատ։ Մինչ այդ Մոսկվայի հետ կապը պահպանվում էր Թբիլիսիի միջոցով։ Երևան—Թբիլիսի գլխավոր գծով առավել արագ աշխատելու (շատ հեռագրեր ընդունելու և հաղորդելու) նպատակով հեռագրատներում դրվեցին տարբեր տիպի ապարատներ։

Նախապատերազմյան տարիներին Հանրապետությունում հեռագրային կապն անցավ առավել կատարելագործված կիսաավտոմատ սիստեմի։

1970 թ. Երևանի հեռագրատունը ուղիղ հեռագրային կապ ուներ Միության մի շարք խոշոր քաղաքների՝ Մոսկվայի, Կիևի, Թբիլիսիի, Բաքվի, Ռոստովի, Կրասնոդարի, Մինսկի և այլ քաղաքների, ինչպես նաև Հանրապետության բոլոր քաղաքների ու շրջանային կենտրոնների հետ։

Հանրապետության երեք քաղաքների՝ Երևանի, Լենինականի և Կիրովականի հեռագրատներում տեղադրված են այնպիսի սարքավորումներ, որոնք կարող են Միության բազմաթիվ քաղաքներից ընդունել և հաղորդել ֆոտոնկարչական հեռագրեր։ Հեռագրական սարքավորումներ ունեն նաև Հանրապետության մի շարք քաղաքների փոստային բաժանմունքները։

Հանրապետության քաղաքներում և արդյունաբերական մի շարք խոշոր ձեռնարկություններում տեղադրված են հատուկ սարքավորումներ, որոնք Երևանի միջոցով անմիջական հեռագրական կապ են ստեղծում Միության մի շարք քաղաքների բաժանորդային ցանցի հետ։

Միայն Երևանի կենտրոնական հեռագրատունը 1970 թ. օրական ընդունել և հաղորդել է 25 հազար հեռագիր։ Հան-

բապետության հեռագրատները 1940 թ. հաղորդել են 1,0 միլիոն, իսկ 1970 թ.՝ ավելի քան 2,6 միլիոն հեռագիր[107]։

Կապի կարևոր ճյուղերից է հեռախոսային ցանցը։ Երևանում առաջին հեռախոսային կայանը շահագործման է հանձնվել 1913 թ. մայիսին՝ 80 համար հեռախոսների կարողությամբ[108]։

Սովետական կարգեր հաստատվելուց հետո, 1923 թ. Երևանի հեռախոսային ցանցն ընդարձակվեց երկու հատ հարյուր համարանոց փոխարկիչներով (կոմուտատորներով)։ Կուսակցական և կառավարական ղեկավար մարմիններին սպասարկելու նպատակով Երևանում 1924 թ. մայիսին շահագործման հանձնվեց ավտոմատ հեռախոսային կայանը, սկզբում 50, իսկ հետագայում՝ 200 համարի կարողությամբ։

Հետագայում Երևանում շահագործման հանձնվեց ձեռքով աշխատող հեռախոսային կայանը, որն սկզբում ուներ 500, ապա՝ 1000, իսկ հետագայում՝ 5 հազար համար։ Այս կայանը գործեց մինչև 1948 թ.։ Երևանում 1949 թ. շահագործման հանձնվեց հիմնարկ-ձեռնարկություններին և բնակչությանը սպասարկող առաջին ավտոմատ հեռախոսային կայանը։ Հատկապես հետպատերազմյան տարիներին հանրապետությունում կատարվեց հեռախոսային ցանցի լայն շինարարություն։ Դրա շնորհիվ, եթե 1940 թ. հանրապետության քաղաքներում գործում էին հեռախոսային 44 կայաններ՝ 12 հազար համարի ընդհանուր կարողությամբ, ապա 1970 թ.՝ կայանների քանակը հասավ 62-ի, 149 հազար համարի ընդհանուր կարողությամբ։

Հեռախոսային ցանցի ավտոմատացման ուղղությամբ խոշոր աշխատանքներ են կատարվել հանրապետության քաղաքներում։

Քաղաքային հեռախոսային ցանցի ավտոմատացումը

---

107 «Транспорт и связь СССР», стр. 276.

108 Մանրամասնությունները տե՛ս Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), էջ 355—356։

1940 թ. կազմել է ընդհանուրի 4,5 տոկոսը, իսկ 1970 թ.՝ 99,7 տոկոսը[109]։

Քաղաքներում ավտոմատ հեռախոսային նոր կայաններ կառուցելուն, դրանց կարողությունն ավելացնելուն զուգընթաց, Հանրապետությունում մեծ ծավալ ստացավ խոշոր հիմնարկությունների և արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների ներքին հեռախոսային ավտոմատ կայանների կառուցումը։ Գերատեսչական այդ կայանները չեն մտնում կապի քաղաքային հեռախոսային ցանցի կարողության մեջ։ Դրանց քանակը 1940 թ. եղել է 32 կայան՝ 1890 համարով, իսկ 1970 թ.՝ 199 կայան՝ 21.300 համարով[110]։

Դեռ 1960 թ. Հայաստանի համարյա բոլոր գյուղական սովետները, կոլտնտեսություններն ու սովխոզներն ապահովված էին հեռախոսներով։

Սովետական իշխանության տարիներին Հանրապետությունում արագ կերպով զարգացավ նաև միջքաղաքային հեռախոսային ցանցը։

1921 թ. միջքաղաքային հեռախոսային կապ ստեղծվեց Երևանի, Էջմիածնի, Արտաշատի, Հրազդանի, Հոկտեմբերյանի և Աշտարակի միջև։

1924 թ. փետրվարին Ադստաֆայի հեռագծի միջոցով հեռախոսային կապ ստեղծվեց Թբիլիսիի և Բաքվի հետ։ 1927 թ. կառուցվեց Երևան—Թբիլիսի հեռախոսային գիծը, որը Երևանին հնարավորություն տվեց միանալու երկրի միջքաղաքային ցանցին և կապ ունենալու Միության խոշոր քաղաքների հետ։

Հեռախոսային նոր կայանների շինարարությանը, նախկին կայանների կարողությունների ավելացմանը և սարքավորումների կատարելագործմանը զուգընթաց, Հանրապետությունում խոշոր աշխատանքներ ծավալվեցին կաբելային նոր գծեր անցկացնելու ուղղությամբ։ Կաբելային նոր գիծ անցկացվեց Երևանից Ղափան, որի մեջ ընդգրկվեցին Եղեգ-

109 1970 թ. տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կապի մինիստրության պլանֆինբաժնից։

110 Նույն տեղում։

նաձոր, Ազիզբեկով, Սիսիան, Գորիս քաղաքներն ու շրջանային կենտրոնները[111]։ Այս կաբելային գիծը շարունակվելու է մինչև Մեղրի։

Երևան—Կիրովական— Դիլիջան—Ստեփանավան— Կամո—Սևան—Հրազդան—Արտաշատ և այլ ուղղություններով գործող կաբելային գծերը միջքաղաքային հեռախոսային մշտական կապ են ստեղծել Երևանի, Թբիլիսիի, Բաքվի և Միության բազմաթիվ այլ քաղաքների միջև։

Զգալիորեն ավելացել է Երևանի կապը Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի, Լենինգրադի, Կիևի, Ռոստովի, Կրասնոդարի և Ղրիմի ու Հյուսիսային Կովկասի քաղաքների հետ։

Միջքաղաքային հեռախոսային ցանցի ընդլայնման կապակցությամբ 1968 թ. շահագործման հանձնվեց Երևանի միջքաղաքային հեռախոսային նոր կայանը, որի կանալների քանակը հազարից անցնում է։

Երևանում տեղադրված են միջքաղաքային 36 հեռախոս-ավտոմատներ, որոնք հեռախոսային կապ են ապահովում Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի, Ռոստովի և հանրապետության բոլոր քաղաքների ու շրջկենտրոնների հետ։ Նույնանման հեռախոսներ են դրված նաև հանրապետության մի շարք քաղաքներում ու շրջկենտրոններում՝ Երևանի հետ անմիջապես կապվելու համար։

1969 թ. նոր դրված սարքավորումների շնորհիվ Երևանն առանց միջքաղաքային կայանի միջամտության հեռախոսային կապ ունի Լենինականի, Կիրովականի, Դիլիջանի, Գորիսի, Սիսիանի և Արտաշատի հետ։ Այդ նոր սարքերը կատարում են խոսակցության հաշվառումը, գրանցում են բաժանորդի հեռախոսի համարը, ժամանակն ու տևողությունը։

* * *

Ռադիոն հանդիսանում է կապի ամենակարևոր միջոցներից մեկը։ Ռադիոյի գործի կազմակերպմանը բացառիկ կարևորություն է տվել Վ. Ի. Լենինը, դեռևս Հոկտեմբեր-

111 Մանրամասնությունները տե՛ս ՀՍՍՀ ՀԱԾԿՊԱ, ֆ. 113, ց. 51, գ. 402։

յան սոցիալիստական մեծ հեղափոխության օրերին: Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ ժողովրդական տնտեսության զարգացմանը զուգընթաց խոշոր տեմպերով զարգացավ նաև ռադիոկապը:

Մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, գոյություն ունեցող ռադիոկայանները կենտրոնացված էին ռինվորական մասերի ձեռքում: Միջոցների և համապատասխան հսկողության բացակայության պատճառով դրանք տեխնիկապես վատթար վիճակում էին: Միակ ժառանգությունը, որ մնաց անցյալից, դա Երևանի երկաթուղային կայարանի մոտ գտնվող ռադիոկայանն էր:

Հայաստանում ռադիոկապի և ռադիոհաղորդման սկիզբը դրվեց 1926 թ., երբ Երևանում շահագործման հանձնվեց լայնահաղորդ ռադիոկայանը, ուր տեղադրվեց Նիժնի-Նովգորոդի (Գորկի) Վ. Ի. Լենինի անվան ռադիոլաբորատորիայում պատրաստված «Մալիկոմինտերն» լայնահաղորդ ռադիոհաղորդիչը:

1928 թ. հանրապետությունում շարք մտավ նոր հաղորդիչ՝ ավելի մեծ հզորությամբ: 1932 թ. այդ հաղորդիչը վերակառուցման ենթարկվեց բարձր հզորությամբ, իսկ 1947 թ. այդ հաղորդչի կարողությունը կրկնապատկվեց: Հանրապետության հաղորդիչ կայանների հզորությունը 1926 թ. համեմատությամբ ավելացավ մի քանի հարյուր անգամ: 1959 թ. շահագործման հանձնվեցին ուլտրակարճ ալիքներով հաղորդումներ տվող երկու հաղորդիչներ: Հանրապետությունում շահագործման հանձնվեցին ժամանակակից առաջավոր տեխնիկայով ռինված հզոր ռադիոկայաններ:

Բոլոր ռադիոհանգույցներում տեղադրված են մեծ կարողության ուժեղացուցիչ հարմարանքներ, իսկ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Հոկտեմբերյանում, Էջմիածնում, Զափանում, Դիլիջանում, Աբովյանում, Հրազդանում և մի շարք այլ քաղաքներում գործում է բազմածրագիր ռադիոհաղորդումների լարային ցանց՝ երեք ծրագրով ռադիոհաղորդումներ ընդունելու համար:

Վերջին տարիներին Արտաշատում, Աշտարակում, Նո-

ջեմբերյանում, Կալինինոյում, Ալավերդում, Ազիզբեկովում, Դափանում և Վարդենիսում կառուցվեցին մագիստրալային ռադիոգծեր և բաշխիչ ցանց, որոնց շնորհիվ հանրապետությունը լրիվ ռադիոֆիկացվեց:

Հանրապետության մայրաքաղաք Երևանը ռադիոֆիկացման տեսակետից Միության մեջ գտնվում է առաջավորների շարքում: 1970 թ. Երևանում գործում էին 95 հազար ռադիոկետեր:

Հանրապետությունում 1940 թ. գործել է 38 հազար, 1950 թ.՝ 66 հազար, 1960 թ.՝ 381 հազար, 1970 թ.՝ 866 հազար ռադիոընդունիչ կետ, որից 610 հազարը՝ քաղաքներում[112]:

Հանրապետությունում լայն ծավալ է ընդունել ռադիոընդունիչների օգտագործումը: 1940 թ. Հանրապետությունում եղել է 5 հազար, 1950 թ.՝ 14 հազար, 1960 թ.՝ 204 հազար, 1965 թ.՝ 306 հազար[113], իսկ 1970 թ.՝ 374 հազար ռադիոընդունիչ[114], որից 234 հազարը[115] քաղաքներում:

Այսպիսով, ռադիոկապը Հանրապետությունում զարգացել է որպես միջքաղաքային էլեկտրակապի անխզելի մասը: Կոմբինացված կերպով օգտագործվում են լարային, կաբելային և ռադիոկապի միջոցները: Այժմ Հանրապետությունում երկար, միջին և կարճ ալիքներով գործում են ժամանակակից հզոր ռադիոհաղորդիչներ, որոնք Հանրապետության բնակիչներին հնարավորություն են տալիս լսելու միութենական հաղորդումները:

Հանրապետությունում լայն ծավալ են ստացել մի քանի ծրագրերով տրվող ռադիոհաղորդումները: Հանրապետության ռադիոկայանները միասին վերցրած օրական աշխատում են մոտ 200 ժամ և հաղորդումները վարում են հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, ադրբեջաներեն, արաբերեն, քրդերեն լեզուներով: Առանձին հաղորդումներ

112 «Транспорт и связь СССР», стр. 294—295.

113 «Связь СССР за 50 лет», стр. 105, 106.

114 «Народное хозяйство Армянской ССР в 1970 году», стр. 100.

115 «Транспорт и связь СССР», стр. 296.

են տրվում սփյուռքահայերի համար, նրանց ծանոթացնելով Սովետական Հայաստանի նվաճումներին, մեր աշխատանքային առօրյային և զարգացման հեռանկարներին։

1957 թ. նոյեմբերին Երևանում շահագործման հանձնվեց հեռուստակենտրոնը, որի հաղորդումները տարածվում էին 60 կիլոմետր շառավղով։

1965 թ. շահագործման հանձնվեց Ռուսթավի—Երևան ռադիոռելեային գիծը, որը կազմում է Մոսկվա—Սոչի—Թբիլիսի ռադիոռելեային գծի շարունակությունը։ Այդ նոր գիծը Երևանի ու Արարատյան դաշտի բնակչությանը հնարավորություն տվեց դիտելու նաև կենտրոնական հեռուստատեսության հաղորդումները։

Հանրապետությունում հեռուստատեսային հաղորդումների շառավիղն ընդարձակելու նպատակով 1965 թ. Պուշկինյան և Սևանի լեռնանցքներում, ինչպես նաև Երևանում տեղադրվեցին երկու հզոր վերահաղորդիչներ, մեկը կենտրոնական հեռուստատեսության ծրագիրն 8-րդ ալիքով ընդունելու, իսկ մյուսը՝ առաջին ալիքով տեղական հեռուստատեսային հաղորդումների համար։

1970 թ. շահագործման հանձնվեցին Երևան—Եղեգնաձոր և Ջանգեզուրի ռադիոռելեային գծերը, իսկ Լենինականում տեղադրվեց հեռուստատեսային հզոր վերահաղորդիչ։

Ռելյեֆային կտրտվածության պայմաններում հեռուստատեսային հաղորդումների պահանջարկը բավարարելու նպատակով հանրապետության տարբեր վայրերում դրվեցին մի քանի տասնյակ մեծ, միջին և փոքր վերահաղորդիչներ։

Հեռուստատեսային բարձրորակ հաղորդումներ տալու նպատակով Նորքի բարձունքում կառուցվեց և շահագործման հանձնվեց Երևանի հեռուստատեսային ստուդիայի շենքերի համալիրը։

Սկսեց կառուցվել Երևանի հեռուստատեսային աշտարակը (309 մետր բարձրությամբ), որի շահագործումից հետո հանրապետության բնակչության շուրջ 97 տոկոսը հնարավորություն կունենա դիտելու հանրապետական, իսկ

75 տոկոսը՝ նաև կենտրոնական հեռուստատեսային ծրագիրը։

Հեռուստատեսությունը դարձել է անհրաժեշտություն և հաստատապես մտել մարդկանց կենցաղը։ Այդ են ապացուցում ստորև բերվող թվերը։

1960 թ. Հանրապետությունում եղել է 38 հազար հեռուստացույց, որից 35 հազարը՝ քաղաքներում։ 1970 թ. հեռուստացույցների քանակը հասավ 264 հազարի, որից 195 հազարը՝ քաղաքներում[116]։

Սովետական Հայաստանում ռադիո և հեռուստատեսային հաղորդումների քանակի, ընդգրկման շրջանակների մեծացման հետ միասին, մեծ աշխատանքներ են տարվում նաև հաղորդումների որակը և դաստիարակչական-դիզարվեստական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։

* * *

Կապի ցանցի ընդարձակման հետ հանրապետությունում աճել է կապի ձեռնարկությունների քանակը։ 1913 թ. կապի ձեռնարկությունների քանակը եղել է 28, 1940 թ.՝ 242 (որից 46-ը քաղաքներում), իսկ 1970 թ.՝ 621 (210-ը քաղաքներում)[117]։

Հանրապետության կապի ցանցի ընդարձակման, տեխնիկական զինվածության հետ միասին տարեցտարի ավելացել է այնտեղ աշխատող կադրերի քանակը, բարձրացել են նրանց կրթական մակարդակն ու տեխնիկական գիտելիքները։ Բերենք մի քանի թվեր։ Հայկական ՍՍՀ կապի մինիստրության ցանցում, եթե 1940 թ. աշխատել է 1315 հոգի, որից բարձրագույն կրթությամբ՝ 33, իսկ միջնակարգ մասնագիտական կրթությամբ՝ 45 հոգի, ապա 1970 թ. աշխատել է 11650 մարդ, որից կանայք՝ 4650 հոգի, բարձրագույն կրթությամբ՝ 297 մարդ, միջնակարգ կրթությամբ՝ 735 մարդ[118]։

116 Նույն տեղում, էջ 297։

117 Նույն տեղում, էջ 271։

118 1970 թ. տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կապի մինիստրության կադրերի բաժնից։

Ինչպես տեսնում ենք, կադրերը ոչ միայն քանակապես են աճել, այլև որակապես փոխվել են։ Կապի ցանցում աշխատող բարձրագույն կրթություն ունեցողների քանակը 30 տարիների ընթացքում աճել է 9, իսկ միջնակարգ կրթություն ունեցողներինը՝ 16 անգամ։

1960 թ. Երևանում բացվեց կապի տեխնիկումը, ուր սովորում է հազար հոգի։ Տեխնիկումը տարեկան տալիս է շուրջ 100 շրջանավարտ։

Պետությունը տարեցտարի ավելացրել է հանրապետության կապի տնտեսությանը հատկացվող կապիտալ ներդրումները։ 5-րդ հնգամյակում դրանք կազմել են 5 միլիոն, իսկ 8-րդ հնգամյակում հասել են 54 միլիոն ռուբլու[119]։ Մեծ չափերով աճել են նաև կապի ֆինանսական միջոցները։

Հանրապետության կապի տնտեսության հիմնական գործունեության տարիֆային եկամուտները 1950 թ. եղել են 4 միլիոն ռուբլի, իսկ 1970 թ.՝ հասել են 28 միլիոնի։ Կապի ծառայության արտադրանքի ծավալը 1955 թ. կազմել է 5,3 միլիոն, իսկ 1970 թ.՝ 29.435 հազար ռուբլի[120], օգուտները 1970 թ. հասել են 8 միլիոն ռուբլու[121]։

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին քանակական ու որակական խոշոր փոփոխություններ կատարվեցին Հանրապետության կապի տնտեսությունում։ Այդ տարիներին խոշոր վերելք ապրեցին կապի ցանցի բոլոր բնագավառները։ Դրանցից մի քանիսը նոր ստեղծվեցին, ինչպես, օրինակ, փոստի ավիատրանսպորտով փոխադրումը, ռադիոկապը, ռադիոհաղորդումները, հեռուստատեսությունը, հեռախոսային և հեռագրային միջքաղաքային բազմականալային լայն ցանցը, ֆոտո-հեռագրային կապը, բաժանորդային և հեռագրային ցանցը և այլն։

---

119 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կապի մինիստրության պլանֆինբաժնից։

120 Նույն տեղում։

121 Նույն տեղում։

6. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՈՐՏՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ոչ միայն միլիոնավոր մարդկանց աղատագրեց դարավոր ճնշումից ու շահագործումից, այլև պատմության մեջ առաջին անգամ դրեց սոցիալիստական դեմոկրատիայի հիմքը։ Դրա շնորհիվ աշխատավորները հնարավորություն ստացան ակտիվորեն մասնակցելու երկրի պետական ու տնտեսական գործերին։ Դրա վառ վկայությունը աշխատավորների դեպուտատների սովետներն են, որոնց աշխատանքներն իրենց ուսերի վրա են տանում ժողովրդի կողմից ընտրված բանվորների, ծառայողների և գյուղացիների լավագույն ներկայացուցիչները։

Կոմունիստական շինարարության արդի ժամանակաշրջանում էլ ավելի մեծ պահանջներ են դրվում աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետների առջև։

Աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետներն իրրև պետական իշխանության մարմիններ, օրենքով ընձեռված իրավունքների սահմաններում լուծում են տեղական նշանակություն ունեցող բոլոր հարցերը։ Ելնելով համապետական և քաղաքի աշխատավորության շահերից, նրանք իրենց իրավասության սահմաններում կոորդինացնում և վերահսկում են բոլոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների աշխատանքը, անկախ նրանց գերատեսչական ենթակայությունից։

Ետպատերազմյան տարիներին սովետների պատասխանատվությունը հանրային արտադրության զարգացման, քաղաքային տնտեսության ղեկավարման, սոցիալ-կուլտուրական շինարարության պլանների կատարման, բնակչության կենցաղային սպասարկումը կազմակերպելու հարցերում, ավելի է մեծացել։

Հանրապետության աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետները հաստատում են քաղաքային տնտե-

սության և քաղաքի սոցիալ-տնտեսական շինարարության տեղաբաշխման ու զարգացման պլանները և քաղաքի բյուջեն, կազմակերպում ու վերահսկում են դրանց ժամանակին կատարմանը:

Քաղաքային սովետի գործադիր կոմիտեներն իրենց նիստերում (սեսիաներում) սիստեմատիկաբար քննության են առնում բնակարանային ու կոմունալ տնտեսության զարգացման, կուլտուր-կենցաղային օբյեկտների կառուցման, ժողովրդական սպառման ապրանքների արտադրության, քաղաքի բարեկարգման, առևտրի, հասարակական սննդի, ժողովրդական կրթության, առողջապահության, մշակույթի ու բնակչության սպասարկման հետ կապված այլ հարցեր:

ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ պատմական ամենակարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանում ստեղծվեց բազմաճյուղ, առաջավոր տեխնիկայով հագեցված արդյունաբերություն: Առաջացան ու զարգացան 50-ից ավելի քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ, բարձրացավ բնակչության նյութական բարեկեցությունը: Այդ հաջողությունները արդյունք են ՍՄԿԿ առաջավոր ջոկատներից մեկի՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայկական ՍՍՀ կառավարության անդուլ աշխատանքի:

Արդյունաբերական օջախների տեղաբաշխման, փոքր ու միջին քաղաքների ինդուստրացման, քաղաքաշինության, բնակչության բարեկեցության հարցերը միշտ եղել են ՀԿԿ կենտկոմի, նրա քաղաքային ու շրջանային կոմիտեների, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի և շրջանային ու քաղաքային սովետների ուշադրության կենտրոնում: Կուսակցական և պետական վերադաս մարմիններն իրենց գործունեության ընթացքում առաջնորդվել են աշխատավորության կյանքի, աշխատանքի և հանգստի համար նորմալ պայմաններ ստեղծելու հարցերով: Այդ հարցերը եղել են ՀԿԿ կենտկոմի բյուրոյի, պլենումների, ՀՍՍՀ Մինիստրների սովետի և գործադիր կոմիտեների սեսիաների օրակարգերում:

Այդ հոգատարության շնորհիվ է, որ տարեցտարի ա-

ճում է հանրապետության քաղաքների բյուջեն: Եթե հանրապետության քաղաքային և ավանային սովետների բյուջեների կատարողականը 1950 թ. կազմել է ավելի քան 20 միլիոն ռուբլի, 1960 թ.՝ 88, ապա 1970 թ. այն հասել էր 267 միլիոն ռուբլու: Հատկապես արագ կերպով աճել են քաղաքների բարեկարգման համար նախատեսված գումարները. դրանք 1950 թ. կազմել են 4 միլիոն, 1960 թ.՝ 11, իսկ 1970 թ.՝ 40 միլիոն ռուբլի[122]:

1930-ական թվականներին քաղաքների բարեկարգման և կառուցապատման հարցերով մեծ նվիրումով են զբաղվել Հայկական ՍՍՀ ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը և նրա առաջին տեղակալ, միաժամանակ աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ Արամայիս Երզնկյանը: Նրանք մեծ երախտիք ունեն մայրաքաղաք Երևանի սոցիալիստական վերակառուցման շնորհակալ գործում:

Այդ ծանր ու դժվարին տարիներին, երբ չկային շինարարական կադրեր, շինարարական ինդուստրիա, երբ մայրաքաղաքում կառուցվող յուրաքանչյուր շենք երևույթ էր, Արամայիս Երզնկյանը անձամբ էր ղեկավարում Երևանի նոր բացվող յուրաքանչյուր փողոցի, նոր կառուցվող յուրաքանչյուր շենքի, նոր ստեղծվող գրոսայգու ստեղծման աշխատանքները:

Եռպատերազմյան տարիներին հանրապետությունում, մասնավորապես Երևանում, քաղաքաշինական աշխատանքները կապված են ՀԿԿ Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի անվան հետ: Երևանի շրջակայքի կանաչ գոտին և Միծեռնակաբերդի հսկա գրոսայգին ստեղծվեցին նրա նախաձեռնությամբ: Գր. Հարությունյանը, ունենալով քաղաքաշինական աշխատանքի փորձ և մեծ ճաշակ, իր անմիջական խորհուրդներով մեծ օգնություն էր ցույց տալիս քաղաքաշինարարներին:

Մայրաքաղաքի կառուցապատման գործում բեղմնավոր

122 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ ֆինանսների մինիստրության բյուջետային վարչությունից:

աշխատանք է կատարել նաև աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախկին նախագահ Եղիշե Վարդանյանը[123]։ Օժտված լինելով բազմակողմանի աշխատասիրությամբ, նա հմուտ կերպով ղեկավարում էր մայրաքաղաքում կատարվող քաղաքաշինական աշխատանքները։

Մայրաքաղաքի աշխատավորները ջերմ սիրով են հիշում աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախկին նախագահներ Ա. Շահգելդյանի, Ա. Կոստանյանի, Վ. Մամիկոնյանի, Ա. Ասլբյանի, Ս. Մարտիկյանի, Կ. Մատինյանի, Ա. Շահսուվարյանի, Ս. Քամալյանի, Վ. Սեկոյանի, Գ. Զոլախյանի, Գ. Փահլևանյանի, Ս. Վարդանյանի և ուրիշների ծառայությունները մայրաքաղաքի բարգավաճման գործում։

---

123 Եղիշե Վարդանյանը (1905—1958 ԹԹ.) ծնվել է Բիթլիսի նահանգի (Արևմտյան Հայաստան) Խոշգյալդի գյուղում։ 1915 թ. թուրքական յաթաղանից ազատվելով նա գալիս է Արևելյան Հայաստան։ Հետագա տարիներին նա բնակություն է հաստատում Կրասնոդար քաղաքում, ուր 1920—1929 ԹԹ. աշխատում է իբրև բանվոր։ 1927 թ. Ե. Վարդանյանն ընդունվում է կուսակցության շարքերը։

1930 թ. նա ընտանիքով տեղափոխվում է Երևան։ 1930—1934 ԹԹ. Ե. Վարդանյանը աշխատում է «Սոյուզտրանսի» Երևանյան բաժանմունքում որպես տրանսպորտային շահագործման բաժնի վարիչ, իսկ հետո՝ բաժանմունքի պետ։ Նա 1937 թ. ավարտել է Երևանի կոմունիստական համալսարանը, իսկ հետագա տարիներին՝ Համ(բ)Կ Կենտկոմին կից բարձրագույն կուսակցական դպրոցը։

Ե. Վարդանյանը 1937—1938 ԹԹ. աշխատել է որպես ՀԿ(բ)Կ Կենտկոմի հրահանգիչ, ապա Նոյեմբերյանի շրջսովետի գործկոմի նախագահ և նույն շրջանի կուսշրջկոմի առաջին քարտուղար։

1940 թ. Ե. Վարդանյանը ընտրվում է ՀԿ(բ)Կ Ստալինյան (Լենինյան) շրջկոմի առաջին քարտուղար, իսկ 1947 թ.՝ աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործկոմի նախագահ։

1953—1955 ԹԹ. նա աշխատել է որպես Հայկական ՍՍՀ շինանյութերի արդյունաբերության մինիստր, ապա մինչև 1958 թ. «Քաջարանշին» տրեստի կառավարիչ։

Ե. Վարդանյանն ընտրվել է ՍՍՀՄ և ՀՍՍՀ Գերագույն սովետների դեպուտատ և ՀԿԿ Կենտկոմի անդամ։

Լենինականցիներն իրենց քաղաքի վերակառուցման և հետագա կառուցապատման համար մեծ սիրով են հիշում աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախկին նախագահներ Ա. Եսայանին, Ա. Անանյանին, Ա. Գևորգյանին, Ս. Պետրոսյանին, Գ. Գյոդակյանին, Ս. Վարդանյանին, Գ. Սահակյանին, Լ. Քոչարյանին, Գ. Հասրաթյանին և Ս. Մատնիշյանին:

Ակադեմիկոս Արտ. Կարինյանը «Կալինինը Լենինականում»[124] հրապարակախոսական հոդվածում գրում է, որ «Այդ ժամանակ Լենինականի գործկոմի նախագահը Գևորգ Հաննեսօղլյանն էր, որ ինքն էլ ելել էր ժողովրդի ընդերքից և շատ սիրված դեմք էր ամենուրեք: Խոհուն, սրամիտ, եռանդուն այդ բանվոր-բոլշևիկը «դուզ խոսողի» համբավ ուներ: Եղակի գործիչ էր, որի համարձակությունը շատ բարձր էր գնահատում Ս. Օրջոնիկիձեն, ...Գևորգը շատ դուր եկավ Կալինինին»[125]:

---

124 Ա. Բ. Կարինյան, *Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո*, Երևան, 1976, էջ 80:

125 Գևորգ Հաննեսօղլյանը (1891—1937 թթ.) ծնվել է Ալեքսանդրապոլում: Նա կիսատ թողնելով ուսումը դառնում է գրաշարի աշակերտ: 1917 թ. Գ. Հաննեսօղլյանը ընդունվում է կուսակցության շարքերը, մասնակցում հեղափոխական շարժումներին և դառնում Ալեքսանդրապոլի բանվորների ակտիվ կազմակերպիչներից մեկը:

Մայիսյան ապստամբության պարտությունից հետո նա մեկնում է Թիֆլիս և աշխատանքի անցնում «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: Նա այստեղ ևս ակտիվորեն մասնակցում է բանվորական ցույցերին ու միտինգներին:

1921 թ. դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի ժամանակ նա նշանակվում է Հայկական II հրաձգային դնդի կոմիսար, և ապա կարմիր բանակի զորամասերի մատակարարման հատուկ կոմիտեի նախագահ:

Գ. Հաննեսօղլյանը 1926 թ. աշխատում է որպես Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի, 1928 թ.՝ Երևանի օկրուգային սովետի գործադիր կոմիտեի, 1931 թ.՝ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի նախագահ, իսկ 1932—1934 թթ.՝ Հայկական ՍՍՀ ֆինանսների ժողովրդական կոմիսար:

1934 թ. Գ. Հաննեսօղլյանն ընտրվում է ՀԿ(բ)Կ Երևանի քաղաքային

Հանրապետության քաղաքաշինության ու կոմունալ տնտեսության զարգացման բնագավառում երկարամյա, բեղմնավոր աշխատանք են կատարել աշխատավորների դեպուտատների շրջսովետի և քաղսովետի գործկոմի նախկին նախագահներ Նազար Ադոյանը (Հոկտեմբերյան), Աղվան Նալբանդյանը (Հրազդան), Շավարշ Վարդումյանը (Կիրովական), Անահիտ Մխոյանը (Ալավերդի), Խորեն Վաթինյանը (Դիլիջան) և ուրիշներ։

Սոցիալիստական նորաստեղծ քաղաքների բարեկարգման գործում հանդուն աշխատանքներ են կատարում աշխատավորների դեպուտատների քաղսովետների գործկոմների նախագահներ Տիգրան Պետիկյանը (Հրազդան), Ջավեն Վարդանյանը (Ջերմուկ), Ալբերտ Անանյանը (Ալավերդի), Վոլոդյա Ավետիսյանը (Չարենցավան), Լևոն Ավետիսյանը (Աբովյան) և ուրիշներ։

Դեռևս 1931 թ. հունիսի 15-ին ՀամԿ(բ)Կ կենտկոմի պլենումը քննարկելով «Մոսկվայի քաղաքային տնտեսության և ՍՍՀՄ քաղաքային տնտեսության զարգացման մասին» հարցերը, նշեց, որ սովետները հանդիսանում են քաղաքային տնտեսության տերը և պատասխանատու են նրա բոլոր ճյուղերի համար։ Սակայն հանրապետության աշխատավորների դեպուտատների շատ քաղաքային սովետներ իրենց իրավունքներն ու հնարավորությունները լրիվ չեն օգտագործում հատկապես քաղաքային տնտեսության աշխատանքները բարելավելու, բնակչության սպասարկումը առավել լավ հիմքերի վրա դնելու և տնտեսական ու քաղաքաշինական հարցերը լուծելու ժամանակ։

Երևանի, Լենինականի, Կիրովականի և այլ քաղաքների աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետները երբեմն հարցերը քննարկում են ձևականորեն, մակերեսո-

---

կոմիտեի առաջին քարտուղար, իսկ 1936 թ.՝ Հայկական ՍՍՀ կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ։

Նա տարիներ շարունակ եղել է ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի անդամ, պարգևատրվել է կառավարական շքանշաններով ու այլ պարգևներով։

բեն, առանց թերությունները լուրջ բացահայտելու։ Նրանց ընդունած որոշումները էապես չեն ազդում կենցաղային ծառայության, առևտրի, հասարակական սննդի կազմակերպման հարցերի հաջող լուծման վրա։ Քաղաքային սովետները հարկ եղած չափով չեն մասնակցում քաղաքային նշանակություն ունեցող հարցերի քննարկմանը։

Աշխատավորների դեպուտատների քաղաքային սովետների գործունեությունը պետք է գնահատել ոչ թե դանազան միջոցառումների, նիստերի, խորհրդակցությունների քանակով, ձևական, գործին օգուտ չբերող հարցերի քննարկումով, այլ տնտեսական ու սոցիալ-կուլտուրական աշխատանքների բնագավառում ձեռք բերված հաջողություններով։

Կոմունիստական կուսակցությունը սովետների աշխատանքի մասին ընդունած իր բազմաթիվ որոշումներում ընդգծել է, որ սովետական մարդկանց աշխատանքի, կենցաղի և հանգստի լավ պայմանների ստեղծումը սովետների կարևոր սոցիալական խնդիրն է, որի իրականացումը նպաստում է հանրային աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացմանը, կադրերին արտադրության մեջ ամրապնդելուն, աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործի հետևողական բարելավմանը[126]։

* * *

Սոցիալիստական մրցությունը ոչ միայն խոշոր դեր է կատարում ժողովրդական տնտեսության պլանների կատարման համար մղվող պայքարում, այլև մեծ չափերով խթանում է հայրենի քաղաքների բարեկարգմանը։ Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից հանրապետության տարբեր քաղաքներում հայրենի քաղաքների բարեկարգման ու կառուցապատման համար կազմակերպվել են շաբաթօրյակներ։ Երևանի շրջակայքում ստեղծված կանաչ

126 «Работу советов—на уровень новых задач», М., 1973, стр. 29.

գոտին, տրանսվայի առաջին գծերը, Օրջոնիկիձեի ասֆալտապատ պողոտան, Լենինականի Մայիսյան ապստամբության հրապարակի բարեկարգումը, Մայմեխ սարից կիրովական, Մեծամոր լճից Հոկտեմբերյան, «Ճգնավորի» աղբյուրներից Ալավերդի խմելու ջուր բերելը, ինչպես նաև Արթիկում, Ղափանում, Հրազդանում, Արտաշատում, Դիլիջանում, Էջմիածնում, Կամոյում և Հանրապետության մյուս քաղաքներում նոր բացված փողոցները, կանաչապատ պողոտաները, հրապարակները, նորատունկ զբոսայգիները և ջրային մակերեսներն արդյունք են աշխատավորների կողմից կազմակերպված բազմաթիվ, բազմամարդ շաբաթօրյակների, որոնց մասնակցում են թե՛ մեծերը և թե փոքրերը։

Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով այսօր մեզ համար ավանդույթ դարձած կոմունիստական շաբաթօրյակների դերը և կարևորությունը, գրել է. «Դա հարևանին ցույց տված օգնության չէ, որ միշտ եղել է գյուղերում, այլ մի աշխատանք, որ կատարվում է համապետական կարիքների համար, կազմակերպված է մեծ մասշտաբով և անվարձ»[127]։

Այսօր էլ եղբայրական հանրապետությունների քաղաքների միջև ծավալված մրցությունը նպաստում է աշխատանքի առաջավոր մեթոդների տարածմանը, աշխատանքային կարգապահության ամրապնդմանը, բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների նյութական պայմանների, քաղաքական գիտակցության, կուլտուրայի և պրոֆեսիոնալ որակավորման բարձրացմանը։

Ետպատերազմյան տարիներին սոցիալիստական մրցություն ծավալվեց ողջ երկրով մեկ։ Մրցության մեջ մտան արդյունաբերական և տրանսպորտի ձեռնարկությունները, արդյունաբերության տարբեր ճյուղերը և ապա քաղաքները։ 1956 թ. սկիզբ դրվեց Ուկրաինայի և Հայաստանի մայրաքաղաքների միջև ծավալված սոցիալիստական մրցությանը։ Կիևի և Երևանի աշխատավորները սոցիալիստական մրցության պարտավորություններ ստանձնեցին արդյունաբերու-

127 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 359։

թյան, տրանսպորտի, շինարարության, կոմունալ տնտեսության, առևտրի և մշակույթի տարբեր բնագավառների գծով։ Ամեն տարի պատվիրակների միջոցով Կիևում և Երևանում հանրագումարի են բերվում ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքները և վերցվում նոր պարտավորություններ։

Կիևի և Երևանի մրցությանը միացան նաև եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի մայրաքաղաքներ Բաքվի և Թբիլիսիի աշխատավորները։ Կիևի, Երևանի, Բաքվի և Թբիլիսիի միջև ծավալված սոցիալիստական մրցությունը դարձավ ավանդական։ Սոցիալիստական մրցությունը խթանում է այդ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների պլանների կատարմանը, օգնում քաղաքների կառուցապատմանը, մշակույթի զարգացմանը և միաժամանակ ամրապնդում բարեկամական ջերմ կապերը ուկրաինական և անդրկովկասյան հանրապետությունների ժողովուրդների միջև։

Դեռևս 1948 թ. մրցության մեջ մտան Լենինականի Մայիսյան ապստամբության և Կիրովաբադի Ս. Օրջոնիկիձեի անվան կոմբինատների ու Քութայիսիի տեքստիլագործները։ Այնուհետև առանձին ձեռնարկությունների մրցությունը վերածվեց քաղաքների միջև հաստատված մրցության, որը տարիների ընթացքում դարձավ լավագույն ավանդույթ։ Վերոհիշյալ երեք քաղաքների մրցությանը միացան նաև Տարտու և Ուլյանովսկ քաղաքները[128]։

Համկա-ի օրգան «Տրուդ» թերթը սոցիալիստական մրցությունում լենինականցիների ձեռք բերած հաջողությունների կապակցությամբ գրում է. «...Հայաստանում ասում են, որ լենինականցիները բոլոր փոխանցիկ դրոշները հավաքել են։ Այո՛, երկաթուղայինների, մեքենաշինարարների, տեքստիլագործների քաղաքում պահվում են միութենական,

128 Ս. Շ. Սիմոնյան, *Լենինականը նոր վերելքի ճանապարհին*, Երևան, 1970, էջ 163։

անդրկովկասյան և հանրապետական 42 փոխանցիկ կարմիր դրոշներ»[129]։

Դեռևս 1956 թ. կիրովականցիները սոցիալիստական մրցության մեջ մտան Բաթումիի աշխատավորության հետ։ 1958 թ. նրանց միացան Սոխումիի, իսկ 1960 թ.՝ Սումգայիթի աշխատավորները։

ՀԿԿ XXII համագումարին կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ ասված է, որ «ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում մեծ օգուտ է տալիս Ադրբեջանի և Հայաստանի եղբայրական հանրապետությունների մայրաքաղաքների միջև սոցիալիստական մրցությունը, ինչպես նաև Կիրովաբադի ու Քութայիսիի հետ Լենինականի մրցությունը»[130]։

Իրար հետ մրցում են նաև Դաշքեսանը, Ջեստաֆոնը, Ղափանը և շատ ուրիշ քաղաքներ։ Մրցող կողմերի ներկայացուցիչները պարբերաբար այցելում են միմյանց, կատարում են փորձի փոխանակում և միմյանց փոխադարձ օգնություն են ցույց տալիս քաղաքաշինության զանազան հարցերում։ Ստեղծագործական կոլեկտիվների փոխադարձ այցելությունները միմյանց ծանոթացնում են եղբայրական ազգերի մշակույթին, գիտության ու կուլտուրայի բնագավառներում ձեռք բերած նվաճումներին։ Մրցող քաղաքների անուններով են կոչվում հրապարակներ, փողոցներ, պուրակներ, խանութներ և այլ օբյեկտներ։ Այս միջոցառումները մեծապես օգնում են ժողովրդական տնտեսության պլանների կատարմանը, մեր սոցիալիստական հայրենիքի հզորացմանը, մեր երկրի բազմազգ ժողովուրդների սերտ համագործակցությանը։

Ամեն տարի ապրիլի վերջին կիրակին, որպես ավանդույթ, եղբայրացած քաղաքների համար համարվում է համաշխարհային օր։ Այդ օրը է՛լ ավելի է նպաստում քաղաքների միջև եղած բարեկամության, համերաշխության և հա-

129 «Труд», 4 декабря, 1964.

130 «ՀԿԿ XXII համագումարում ՀԿԿ կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿԿ համագումարին», Երևան, 1961, էջ 108։

մագործակցության ամրապնդմանը։ Համագործակցության այդ շարժումը ծնունդ է առել հիտլերյան Գերմանիայի դեմ մղված համատեղ պայքարի տարիներին։

Գերմանական ֆաշիզմին ցույց տրվող դիմադրության շարժումից էլ ծնվեց բարեկամ քաղաքների ֆեդերացիան։ Պատահական չէ, որ արտասահմանյան քաղաքների առաջին եղբայրակիցները դարձան հերոս քաղաքներ Մոսկվան, Լենինգրադը, Վոլգոգրադը։ Այժմ բարեկամ քաղաքների ֆեդերացիայի մեջ են մտնում 50 երկրներ, դրանց թվում նաև Սովետական Միությունը։

Եղբայրացած քաղաքների թվին են պատկանում մեր հանրապետության մայրաքաղաք Երևանն ու Կիրովականը։


Մի քանի տարի առաջ բարեկամական կապ հաստատվեց Երևանի և Չերնոգորիայի Սոցիալիստական Հանրապետության (Հարավսլավիա) մայրաքաղաք Տիտոգրադի միջև։ Ստեղծված կապը գնալով ընդլայնվում է և ամրապնդվում։

Երևանի պատվիրակները այցելել են Տիտոգրադ, իսկ Տիտոգրադի պատվիրակները՝ Երևան։ Երկու մայրաքաղաքներում էլ կազմակերպվել են մշակույթի օրեր։

Տիտոգրադցիների և երևանցիների միջև կնքվեց համաձայնագիր՝ ժողովրդական և քաղաքային տնտեսության, լուսավորության, մշակույթի, առողջապահության և տուրիզմի բնագավառների զարգացման և փոխադարձ օգնության, փորձի փոխանակման նպատակներով։

Երևանի և Տիտոգրադի աշխատավորության պատվիրակները փոխայցելություններ են կատարում։ Նրանք այցելում են արդյունաբերական ձեռնարկությունները, ուսումնական հաստատությունները, պետական հիմնարկները, հանդիպումներ ու ջերմ զրույցներ են ունենում դրանց կոլեկտիվների հետ։ Կատարվում են կուսակցական, պետական, արհմիութենական գործիչների, տնտեսության, գիտության, կուլտուրայի բնագավառների աշխատողների պատվիրակությունների փոխայցելություններ, ինչպես նաև գրքերի փոխանակումներ և այլն։

Երևանի և իտալական Կարրարա քաղաքի միջև 1962 թ.



Սայաթ-Նովայի անվան պողոտան Երևանում

կնքվեց բարեկամական կապերի հաստատման համաձայնագիր։ Աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետը և Կարրարայի մունիցիպալ խորհուրդը 1965 թ. հոկտեմբերին պարտավորություն վերցրեցին.

Կազմակերպել բանվորների, ինժեներների, արվեստի և դրականության ասպարեզում աշխատող ներկայացուցիչների փոխայցելություններ։ Ամառային արձակուրդներին կազմակերպել դպրոցական երեխաների հանգիստը Երևանում և Կարրարայում։ Կազմակերպել կինոֆիլմերի դիտումներ, ֆոտոցուցահանդեսներ, հրատարակել բրոշյուրներ՝ նվիրված Երևանին և Կարրարային։

Կապ ստեղծել դպրոցների աշակերտների և ուսուցիչների միջև։

Հիմնել կրծքանշան, որը կխորհրդանշի Երևանի և Կարրարայի բարեկամությունը[131]։

Եղբայրացած քաղաքների՝ Երևանի, Կարրարայի և Տիտոգրադի, ինչպես նաև Կիրովականի և ֆրանսիական Բանիյո քաղաքի աշխատավորները ակտիվ կերպով մասնակցում են եղբայրացած քաղաքների համագործակցությանը։

Երկրով մեկ ծավալված սոցիալիստական մրցությունը ոչ միայն խթանում է ժողովրդական տնտեսության պլանների կատարմանը, քաղաքների կառուցապատմանն ու բարեկարգմանը, այլև զարգացնում է կոլեկտիվիզմը, փոխադարձ օգնության վեհ զգացումը, ժողովուրդների լենինյան բարեկամության, ինտերնացիոնալիզմի ոգով աշխատավորության դաստիարակմանը։

7. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Իններորդ հնգամյակի տարիները մեր երկրի պատմության մեջ մտան իբրև սովետական ժողովրդի մեծ սխրագործությունների տարիներ՝ էկոնոմիկայի, գիտության և

131 Պայմանագիրը վերցված է աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեից։

կուլտուրայի, սովետական մարդկանց բարեկեցության վերելքի տարիներ։

Հայաստանի աշխատավորները 9-րդ հնգամյակի պլանները կատարեցին ժամկետից շուտ։ Հինգ տարվա ընթացքում արտադրության ծավալի աճը կազմեց 45 տոկոս, աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 27 տոկոսով։ Պլանից դուրս արտադրվեց ավելի քան 300 միլիոն ռուբլու արտադրանք։ Ազգային եկամուտը հնգամյակում ավելացավ 46 տոկոսով։ Յուրացվեց արտադրանքի ավելի քան 400 նոր կարևորագույն տեսակների սերիական արտադրությունը։

Հնգամյակի տարիներին շարք մտան ժամանակակից առաջավոր սարքավորումներով հագեցված 50 նոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Դրանցից են Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը, Ջարենցավանի լիդինի արտադրության գործարանը, Իջևանի «Բենտոնիտ» կոմբինատը և բիոքիմիական պրեպարատների գործարանը, Հրազդանի ցեմենտի գործարանը, թեթև ու սննդի արդյունաբերության, շինարարական ինդուստրիայի շինանյութերի արդյունաբերության և այլ ձեռնարկություններ։

Հանրապետության ունեցած պոտենցիալ հնարավորությունները առավել ռացիոնալ օգտագործելու, ժողովրդական տնտեսության առաջընթացի տեմպերը առավել բարձրացնելու խոշոր նախադրյալներ է ստեղծում 10-րդ հնգամյակը։

10-րդ հնգամյա պլանով Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության համար նախատեսված խոշոր կապիտալ ներդրումները արդյունաբերության առաջ բաց են անում հանրապետության քաղաքների (հատկապես փոքր ու միջին) հետագա զարգացման մեծ հեռանկարներ։ Քանի որ Հայաստանի տարածքը գրեթե հագեցած է քաղաքներով ու քաղաքատիպ ավաններով, առաջիկա տարիներին նոր քաղաքների կազմավորման պրոցեսը դանդաղելու է։ Քաղաքաշինությունը գերազանցապես ընթանալու է գոյություն ունեցող քաղաքների, քաղաքատիպ ավանների խոշորացման ու

հետագա բարեկարգման ուղիով։ Նոր քաղաքներ կառաջանան հանքերի և հանքային ջրերի օգտագործման, էլեկտրակայանների կառուցման վայրերում, նոր երկաթուղային հանգույցներում։ Հնգամյակների տարիներին Հանրապետության քաղաքներում կկառուցվեն նոր գործարաններ, կըստեղծվեն նոր արտադրամասեր։

Մոլիբդենի կոնցենտրատի մշակման նպատակով Կիրովականի շրջակայքում կառուցվելու է մոլիբդենի վերամշակման գործարան, որը բացի մոլիբդենից կվերամշակի նաև մի շարք կարևոր և հազվագյուտ մետաղներ։

10-րդ հնգամյա պլանով նախատեսված է Հրազդանում, Աբովյանում և Սվարանցում գոյություն ունեցող երկաթահանքերի պաշարների հիման վրա կազմակերպել նաև սև մետաղի՝ երկաթի գլանվածքի արտադրությունը, որոնց կարիքը շատ մեծ է Հանրապետության մետաղամշակման արդյունաբերության զարգացման համար։ Կառուցվում է Երևանի ղուա երկաթի փորձնաարդյունաբերական գործարանը, որով Հանրապետությունում կդրվի սև մետալուրգիայի զարգացման հիմքը։

Առաջիկա տարիներին մեծ աշխատանք կկատարվի Ալավերդու պղնձաքիմիական և Ղափանի պղնձահանքային կոմբինատները նոր տեխնիկայով զինելու և արտադրությունը ընդլայնելու ուղղությամբ։

Հանրապետության փոքր ու միջին քաղաքներում աշխատանքային ուժը լրիվ օգտագործելու նպատակով արագ տեմպերով կզարգանան մեքենաշինությունը, հատկապես սարքաշինությունն ու ավտոմատացման միջոցների արտադրությունը, քիմիական, թեթև, սննդի արդյունաբերության մեքենաշինությունը, հաստոցաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը։ Մեքենաշինական այդ գործարանները կտեղադրվեն առավելապես Հանրապետության փոքր ու միջին քաղաքներում, շրջանային կենտրոններում ու առանձին մեծ գյուղերում։

Հայաստանի քիմիական արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական կարողությունները կավելացվեն

գործող ձեռնարկությունների վերակառուցման, տեխնոլոգիական առաջավոր պրոցեսների ներդրման հաշվին։

Հանրապետությունում արդյունաբերության հետագա զարգացումը կատարվելու է առաջին հերթին աշխատանքի արտադրողականության աճի ու արտադրության ինտենսիվացման հաշվին։

Արդյունաբերության այնպիսի առաջատար ճյուղերի զարգացման հետ միասին, որոնք որոշում են հանրապետության ինդուստրիալ դեմքը (էլեկտրոնիկան, ռադիոէլեկտրոնիկան, սարքաշինությունն ու հաստոցաշինությունը), արագ տեմպերով կզարգանան արդյունաբերության երիտասարդ ճյուղերը՝ բարձրորակ էլեկտրատեխնիկական պողպատի ու ոսկու ստացումը, ավտոմոբիլաշինությունը, սպիտակուցավիտամինային կոնցենտրատների թողարկումը[132]։ Զգալիորեն կավելանա պղնձի, ցինկի, կապարի արտադրությունը՝ հանքաքարի հանույթը ավելացնելու հաշվին։

Արագ կերպով կզարգանա նաև հանրապետության թեթև արդյունաբերությունը։ Կկառուցվեն նոր արտադրամասեր և նոր ֆաբրիկաներ փոքր ու միջին քաղաքներում՝ Ջարենցավանում, Արթիկում, Ղափանում, Սիսիանում, Հրազդանում, Լուսակերտում, Հոկտեմբերյանում և այլուր։ Հնգամյակների տարիներին կստեղծվեն թեթև արդյունաբերության նոր ճյուղեր։

Սննդարդյունաբերության զարգացման համար կապիտալ ներդրումներով առաջիկա տարիներին կկառուցվեն և շահագործման կհանձնվեն գարեջրի գործարանը՝ Աբովյանում, պահածոների գործարաններ՝ Թալինում, Իջևանում, Ախթալայում, Արարատում, գինու գործարաններ՝ Փարաքարում, Իջևանում, կոնյակի գործարան՝ Այգեվանում, հանքային ջրի լցման գործարաններ՝ Հանքավանում, Բջնիում, հացի գործարաններ՝ Հոկտեմբերյանում, Աբովյանում, Լենինականում։

---

132 «Հայաստանի արդյունաբերություն», 1970, № 9, էջ 4։

10-րդ հնգամյակում նախատեսվում է կահույքի արտադրության աճը ավելացնել 2 անգամ: Այդ աճն ապահովելու համար նախատեսվում է Կիրովականում և Հոկտեմբերյանում շահագործման հանձնել կահույքի նոր ֆաբրիկաներ: Մյասնիկյանի անվան կահույքի ֆաբրիկայի վերակառուցմամբ կավելանա կահույքի արտադրությունը[133]: Խոհանոցային կահույքի արտադրանքի ծավալը ավելացնելու նպատակով Արտաշատում ու Վարդենիսում կառուցվելու են նոր գործարաններ:

Տեղական արդյունաբերության կապիտալ ներդրումները 9-րդ հնգամյակում կազմեցին 40 միլիոն ռուբլի, 8-րդ հնգամյակի 21 միլիոն ռուբլու դիմաց[134], իսկ 10-րդ հնգամյակում հանրապետության տեղական արդյունաբերությունը առավել խոշոր տեմպերով կզարգանա:

Տեղական արդյունաբերական ձեռնարկություններ կբացվեն փոքր ու միջին քաղաքներում և շրջանային կենտրոններում, նույնիսկ առանձին խոշոր գյուղերում:

10-րդ հնգամյա պլանի համաձայն Սովետական Միության արդյունաբերական արտադրության աճման մակարդակի համեմատությամբ մեր հանրապետության արդյունաբերական արտադրության մակարդակը աճելու է ամենաբարձր ցուցանիշներով, որովհետև հանրապետության հումքային ու աշխատանքային ռեսուրսները և արդյունաբերական ձեռնարկությունների տեխնիկական բարձր հագեցվածությունը հնարավորություններ են ընձեռում վերցնելու արտադրության զարգացման առավել բարձր տեմպեր: Մյուս կողմից, հանրապետության առաջ ծառացած են սոցիալ-տնտեսական մի շարք պրոբլեմներ, որոնց լուծումը ներկայացնում է կենսական անհրաժեշտություն:

Հանրապետությունում վիթխարի տեմպերով կատարվող քաղաքաշինությանը խթանելու նպատակով առաջիկա

---

133 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ փայտամշակման արդյունաբերության մինիստրության պլանբաժնից:

134 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ տեղական արդյունաբերության մինիստրության պլանֆինբաժնից:

տարիներին կզարգանա շինարարական ինդուստրիան։ Շինարարական օբյեկտները կհագեցվեն մեծ քանակությամբ էքսկավատորներով, սկրեպերներով, բուլդոզերներով, տարբեր տեսակի ավտոմեքենաներով, աշտարակային կռունկներով։ 10-րդ հնգամյակի տարիներին շինարարական ինդուստրիայի զարգացման համար կապիտալ ներդրումները կկազմեն շուրջ 200 միլիոն ռուբլի։ Այդ գումարներով երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարաններ կկառուցվեն Ղափանում, Արագածում, Ախուրյանում, Աբովյանում, Էջմիածնում, Կիրովականում և այլ վայրերում։ Դրա շնորհիվ հանրապետության առավելապես փոքր ու միջին քաղաքներում կծավալվի բնակարանային և հասարակական շենքերի շինարարություն, որը կբարելավի այդ քաղաքների բնակարանային տնտեսությունը։ Խոշոր միջոցառումներ կկատարվեն բնակչության կոմունալ սպասարկումը էլ ավելի բարելավելու ուղղությամբ։

Երևանի կառուցապատումը, մեծ մասամբ կենտրոնում, կկատարվի 9—16 հարկանի շենքերով։ Կկառուցվի Հարավային օդանավակայանի նոր շենքը, կավարտվի երիտասարդական պալատի շինարարությունը, կսկսվի սպորտի պալատի շինարարությունը։ Շահագործման կհանձնվեն Բարեկամության և Կոմիտասի տները, իսկ Էջմիածնի խճուղու մոտ ավտոտուրիստների համար կստեղծվի կառույցների մի մեծ համալիր։

Հին Նորքը կդառնա պանսիոնատների և ստեղծագործական տների գոտի։ Կկառուցվեն հյուրանոցային տիպի մի շարք շենքեր։ Կկառուցվի Արաբկիր—Դավիթաշեն կամուրջը։ Մայրաքաղաքը կհեղեղկանա քաղաքացիական կոթիվների, Հայրենական մեծ պատերազմի լեգենդար հերոսների, անվանի գրողների և արվեստագետների արձաններով։ Արձաններ կդրվեն նաև հանրապետության մյուս քաղաքներում ու շրջանային կենտրոններում։

Երևանում տրանսպորտի հարցերն արմատականորեն լուծելու համար կառուցվում է ստորգետնյա արագընթաց էլեկտրատրանսպորտ, որի շինարարությանը հատկացվել է

մի քանի տասնյակ միլիոն ռուբլի[135]: Մինչև 10-րդ հնգամյակի վերջը՝ 1980 թ., շահագործման կհանձնվի մայրաքաղաքի ստորգետնյա արագընթաց էլեկտրատրանսպորտի առաջին հերթը: Հանրապետության քաղաքներում նշանակալի չափերով կավելանա տրանսպորտի տեսակների շարժակազմը, կբարելավվի նրա օգտագործման գործակիցը:

Երևանում և հանրապետության քաղաքներում կբացվեն նոր փողոցներ, պողոտաներ, հրապարակներ, ստորգետնյա անցումներ:

Առաջիկա տարիներին հանրապետության քաղաքներում կընդարձակվի նախադպրոցական, դպրոցական և միջնակարգ-մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտական, կուլտուր-լուսավորական և առողջապահական հիմնարկների ցանցը: Դրա համար կկառուցվեն բարձրահարկ գեղեցիկ շենքեր, որոնք կզարդարեն մեր քաղաքների փողոցներն ու պողոտաները:

Արդյունաբերության տեղաբաշխմանը (հատկապես փոքր, միջին քաղաքների և շրջանների զարգացմանը) մեծապես կնպաստի երկաթուղային ցանցի ընդլայնումը, որի համար հաստատված է հեռանկարային պլան: Այդ պլանով առաջին հերթին ավարտվելու են Հրազդան—Մեղրաձոր—Համզաչիման—Դիլիջան—Իջևան—Աղստաֆա և Համզաչիման—Կիրովական երկաթուղագծերի շինարարությունը, ապա շահագործման է հանձնվելու Հրազդան—Սևան—Շորժա—Ջոդ—Ջերմուկ— Բազարչայ—Սիսիան— Դաստակերտ—Գեղի—Ղափան երկաթուղագիծը, ինչպես նաև Լենինական—Ղուկասյան—Ախալքալաքի—Ախլցխա—Խուլո—Բաթումի երկաթուղագիծը[136]:

Հանրապետության խոշոր ու միջին քաղաքներում կընդարձակվի էլեկտրաքարշային և ավտոտրանսպորտի ցանցը: Փոքր և միջին քաղաքներում կգործի ներքաղաքային ավտոտրանսպորտը:

---

135 Տվյալները վերցված են աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի պլանային հանձնաժողովից:

136. Մանրամասնությունները տե՛ս А. Г. Сагратян, նշվ. աշխ.:

Առաջիկա տարիներին շահագործման կհանձնվի Երևանի կապի տան կենտրոնական շենքը։ Այն հագեցված կլինի ժամանակակից առաջավոր սարքերով, որոնք կհեշտացնեն կապավորների աշխատանքը։ Կապի նոր տներ, հեռախոսային նոր կայաններ կկառուցվեն նաև Հանրապետության փոքր ու միջին քաղաքներում և շրջանային կենտրոններում, որոնց շնորհիվ կընդարձակվի կապի ցանցը։ Երևանի միջքաղաքային ավտոմատ հեռախոսակայանի նոր շենքի կառուցումով Հանրապետության միջքաղաքային ամբողջ կապը կավտոմատացվի։ Կընդարձակվի ռադիո-հեռուստատեսային կայանների կարողությունը։ Կարագացվի բնակչությանը նամակների, թերթերի, հեռագրերի առաքումը։

Հանրապետության քաղաքներում կընդարձակվի ջերմուղի-կոյուղու, մաքրման կայանների, ջեռուցման, գազի, հյուրանոցային տնտեսության, կենցաղսպասարկման օբյեկտների ցանցը։

Հանրապետությունում արագ տեմպերով կզարգանա օտարերկրյա տուրիզմը։ Այդ նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը մշակել է օտարերկրյա տուրիզմի զարգացման 10-ամյա պլան, որով նախատեսված է Հանրապետությունում ստեղծել տուրիստական մի քանի համալիրներ, որոնք միմյանց հետ կապված կլինեն տրանսպորտի բոլոր տեսակներով։ Նրանք կունենան հյուրանոցներ, հանդերվաններ, առանձնատներ, թատրոններ, կինոսրահներ, ջրկայաններ, սպորտային կառույցներ և այլն։

Առաջիկա տարիներին Հանրապետության քաղաքներում կընդարձակվեն կանաչապատ տարածությունները, զբոսայգիները, պուրակները, կստեղծվեն անտառապատ նոր գոտիներ և ջրային նոր մակերեսներ, որոնք կգեղեցկացնեն օրեցօր բարգավաճող մեր սոցիալիստական քաղաքները։

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

Ա

Աբգարյան Գր. 274
Աբգարյան Զ. 274
Աբգարյան Ս. 274
Աբելյան Կ. 205
Աբելյան Հ. 234, 259
Աբեղյան Մ. 230
Աբովյան Ա. 199
Աբովյան Գ. 290
Աբովյան Վ. 171
Աբրահամյան Հ. 188
Ադալյան Ս. 212
Ադոյան Ն. 335
Ադոնց Մ. 86
Ադաթյան Հ. 297
Ադաթյան Շ. 272
Ադարյան Վ. 206
Ալավերդյան Գ. 274
Ալավերդյան Ի. 189, 272
Ալավերդյան Ս. 274
Ալավերդյան Ստ. 30
Ալավերդով Կ. 30
Ալեքսանյան Ա. 244
Ալեքսանյան Ար. 140
Ալիոնյան Է. 162, 272
Ալիխանյան Ի. 234
Ահարոնյան Աբսեն 188
Ահարոնյան Ա. 269
Ահարոնով Ա. 245
Աղաբաբյան Գ. 176, 271
Աղաբաբյան Ս. 214
Աղալյան Ֆ. 171
Աղայան Ա. 16
Աղայան Ծ. 46
Աղաջանյան Գ. 108
Աղեկյան Ա. 199
Ամիրխանյան Ս. 140
Ամիրխանյան Վ. 140
Այվազյան Վ. 199
Անանյան Ա. 274
Անանյան Ալբ. 335
Անանյան Ար. 334
Անանյան Ե. 274
Անանյան Կ. 48
Անդրեասյան Ա. 213
Անդրեասյան Ս. 309
Առաքելյան Ա. 183
Առաքելյան Բ. 8
Առաքելյան Հ. 271
Աստարյան Ա. 189
Ասլանյան Ա. 38
Ասլանյան Կ. 174
Ասլանյան Մ. 274
Ասոյան Ս. 155, 185
Աստվածատրյան Բ. 148
Աստվածատրյան Զ. 205
Ասրյան Ա. 333
Ավագյան Ա. 199
Ավագյան Գ. 262
Ավագյան Հ. 14
Ավագյան Վ. 244
Ավանեսով Ա. 188

Ավետիսյան Ա. 234
Ավետիսյան Լ. 335
Ավետիսյան Խ. 38, 129
Ավետիսյան Ս. 164
Ավետիսյան Վ. 335
Ավետիսյան Գ. 154
Արազյան Ռ. 171, 259
Արարատյան Ա. 307
Արեշյան Գ. 245
Արզումանյան Բ. 157, 183, 270, 272
Արզության 34
Աֆրիկյաններ 25, 26

Բ

Բաբայան Լ. 180, 210
Բարայան Ռ. 315
Բաբաջանյան Հ. 180, 262
Բադալյան Ա. 125
Բադալյան Գ. 171, 244
Բադալյան Ռ. 183, 272
Բադալյան Ս. 262
Բադանյան Ա. 290
Բախշինյան Զ. 155, 157, 175, 188, 267, 269, 270
Բաղդասարյան Ֆ. 140
Բաղդասարով Գ. 315
Բաղդյան Ա. 296, 298
Բաղրամյան Հ. 290
Բարժանսկի 30
Բարսեղյան Խ. 29
Բելուբեկյան Վ. 170, 176, 189
Բոյաջյան Հ. 222
Բունիաթյան Ն. 148, 171, 173, 175, 186, 187, 188, 245, 259, 267, 268
Բուռնազյան Ի. 159
Բուռնազյան Ս. 315
Բուրդուկով Վ. 150

Գ

Գաբրիելյաններ 25
Գալամտերյան Ծ. 140
Գալեչյան Ս. 210
Գալստյան Ս. 244, 245
Գայանյան 27
Գասպարյան Բ. 14
Գասպարյան Ռ. 155
Գևորգյան Ա. 334
Գևորգյան Ի. 244
Գևորգյան Լ. 183, 272
Գևորգյան Ս. 140
Գեուսաշվիլի Ս. 210
Գյանջունցյան Ն. 199
Գյանջունցյան Ռ. 244
Գյոդակյան Գ. 334
Գյոզալյաններ 25, 26
Գնունի Մ. 157, 166
Գորկի Մ. 7
Գրիգորյան Ա. 211
Գրիգորյան Արծ. 157, 214
Գրիգորյան Գ. 183, 262
Գրիգորյան Հ. 183
Գրիգորյան Մ. 149, 162, 171, 176, 177, 187, 188, 189, 211, 267, 168, 269, 270, 271, 272
Գրիգորյան Ռ. 157, 162, 164, 166, 168, 170, 188
Գրիգորյան Ս. 149
Գրիգորյան Վ. 139
Գուլաբյան Ա. 188
Գուլազյան Օ. 234
Գուրզադյան 272

Դ

Դալլաքյան Յու. 183
Դաղբաշյան Ս. 221

Դանիելյան Կ. 274
Դանիելյան Հ. 211
Դանիելյան Հր. 14
Դանիելյան Մ. 274
Դանիելյան Մարգար 211
Դավթյան Լ. 128, 130
Դավթյան Հ. 154, 157, 158, 159, 165, 166, 168, 170
Դավթյան Յ. 204
Դավիդովա Է. 191
Դաբբինյան Ֆ. 183, 272
Դեմյոխին Ա. 148
Դիլանյան Է. 315
Դոլաբջյան Զ. 244
Դոխիկյան Օ. 176
Դուլյան Ս. 12

Ե

Եզիազարյան Ա. 222
Եղյան Հ. 296
Եսայան Ա. 334
Եսայան Վ. 222
Երեմյան Ս. 8
Երզնկյան Ա. 13, 297, 332
Երզնկյան Լ. 199
Երկանյան Տ. 155, 172, 188, 267, 268

Զ

Զարդարյան Ն. 147, 149, 156, 161, 170
Զաքարյան Ա. 183
Զաքարյան Զ. 159
Զաքարյան Է. 307
Զաքարյան Վ. 290
Զաքյան Հ. 186
Զաքիև Հ. 188
Զոլյան Խ. 211
Զոհրաբյան Ա. 297
Զոհրաբյան Ս. 245
Զուրաբյան Ա. 199
Զուրաբյան Ս. 59, 251, 316

Է

Էդիլյան Բ. 211
Էդիսոն 23
Էլվագովա Լ. 164, 165, 166

Թ

Թախտաջյան Ա. 15, 205
Թամանյան Ա. 145, 146, 147, 148, 150, 152, 160, 161, 164, 171, 172, 173, 175, 186, 187, 188, 208, 210, 259, 267, 268, 269
Թամանյան Գ. 175, 267
Թամանյան Յու. 189
Թամրազյան Կ. 274
Թալիրյան Ն. 25
Թաշյան Է. 164, 165
Թարխանյան Ա. 163, 165, 180, 210, 272
Թարչումանյան Հ. 14
Թովմասյան Վ. 14
Թորոսյան Զ. 183, 272
Թոփչյան Ժ. 108
Թումանյան Թ. 189
Թուխիկյան Ն. 257, 290
Թումանյան Պ. 164, 165, 166, 170, 171, 199

Ի

Իլյին Լ. 154, 187
Իկիլիկյան Հ. 14, 99
Իոֆա Լ. 12
Իսաբեկյան Հ. 13, 150, 154, 158, 159, 164, 166, 170, 172, 188, 189, 271
Իսրայելյան Մ. 19

Խաչատրյան Ռ. 177, 178, 188, 189, 210, 268, 273

Լ

Լազարյան Ե. 38
Լապտո Գ. 80, 82
Լենին Վ. Ի. 5, 6, 41, 43, 44, 47, 55, 62, 128, 219, 227, 236, 237, 247, 295, 319
Լեո 8
Լեոնովիչ Է. 206
Լևիցկի Ռ. 174
Լիստենդուրտ Ֆ. 80
Լուսինյան Մ. 274

Խ

Խալևյան Եր. 46
Խալփախչյան Հ. 171
Խանդրադյան Մ. 315
Խանոյան Ս. 297
Խանջյան Ա. 297
Խաչանյան Հ. 234
Խաչատրյան Ա. 140
Խաչատրյան Բ. 307
Խաչատրյան Լ. 148
Խաչատրյան Հ. 210, 272
Խաչատրյան Վ. 168
Խաչատրյան Վր. 245
Խաչերեսով Մ. 140
Խաչիկյան Ա. 14
Խաչիկյան Ար. 222
Խաչիկյան Ս. 163, 165
Խարադյան Ա. 234
Խոյեցյան Պ. 161, 166, 170
Խոջաբեկյան Վ. 126
Խոտիկյան Ա. 309
Խորև Բ. 92
Խրիմյան Ա. 205
Խուդավերդյան Կ. 230
Խուդավերդյան Կ. 230

Ծ

Ծովյանով Տ. 296

Կ

Կալինին 334
Կանայան Ա. 188, 189
Կանայան Ս. 307
Կաննեցյան Գ. 199
Կասյան Ս. 30, 297
Կարանյան Պ. 212
Կարապետյան Ա. 14
Կարապետյան Հ. 46
Կոզմոյան Կ. 11, 25, 154, 159, 165, 166, 170
Կարինյան Արտ. 334
Կարլիկ Լ. 156
Կիսլյակով Վ. 69
Կլելիցկի Ս. 147
Կնդեցյան Ս. 183
Կոզմոյան Կ. 11, 25, 154, 159, 161, 205, 270
Կոժևնիկով Ն. 290
Կոնդախչյան Ա. 176
Կոշկակարյան Խ. 140
Կոստանյան Ա. 333
Կորշունովա Լ. 222
Կուբլիցկայա Զ. 150
Կուտոյանց Ա. 222
Կուրտիկյան Ստ. 13, 14, 16

Հ

Հալաբյան Կ. 155, 156, 172, 174, 267, 269
Հախնազարյան Զ. 210
Հախվերդյան Ա. 205
Հակոբյան Ա. 39, 42

23—725

Հակոբյան Արշակ 108
Հակոբյան Ե. 211
Հակոբյան Թ. 9, 10, 11, 19, 25, 26, 27, 32, 275, 286, 296, 300
Հակոբյան Կ. 268, 269
Հակոբյան Կորյուն 182, 188
Հակոբյան Հ. 183
Հակոբյան Ն. 148
Հակոբյան Ռուբեն 171, 188
Հակոբյան Ռ. 309
Հակոբյան Ս. 290
Հակոբյան Սուրեն 14
Հակոբջանյան Մ. 15, 149, 156
Համազասպյան Ն. 309
Համբարձումյան Վ. 107, 118, 231
Հայկազունի Մ. 222
Հայրապետյան Հր. 309
Հանեսօղլյան Գ. 334
Հասմիկ 234
Հասրաթյան Գ. 334
Հասրաթյան Մ. 12, 13, 210, 215, 259, 260, 273
Հարոյան Ա. 309
Հարությունյան Ա. 246
Հարությունյան Արտեմ 11
Հարությունյան Արա 165, 166, 168, 210, 273
Հարությունյան Գր. 332
Հարությունյան Լ. 245
Հարությունյան Մ. 199
Հարությունյան Ն. 16
Հարությունյան Ս. 14
Հարությունյան Սարգիս 230
Հարությունյան Վ. 8, 12, 13, 155, 157, 188, 189, 210, 259, 260, 268, 273
Հացագործյան Զ. 201
Հեքիմյան Բ. 274
Հեքիմյաններ 51
Հյուսյան Վ. 183
Հովհաննիսյան Ա. 222
Հովհաննիսյան Գ. 309
Հովհաննիսյան Լ. 108, 244, 290
Հովհաննիսյան Կ. 155, 157, 176, 268
Հովհաննիսյան Մ. 201
Հովհաննիսյան Ս. 245
Հովնանյան Ս. 272, 307
Հովսեփյան Լ. 14
Հովսեփյան Լևոն 211
Հովսեփյան Ռ. 84

Ղ

Ղազախեցյան Ա. 220, 222
Ղազարյան Ա. 264
Ղազարյան Արշակ 140
Ղազարյան Գ. 213
Ղազարյան Ե. 204
Ղազարյան Կ. 159, 169
Ղազարյան Հ. 199
Ղազարյան Վ. 205
Ղալփախչյան Հ. 188
Ղարիբյան Ա. 222
Ղարիբյան Գ. 248, 250
Ղարիբյան Գուրգեն 290
Ղարիբջանյան Լ. 14, 84, 224
Ղուլաբյան Ա. 199
Ղուլղազարյան Ա. 176

Ճ

Ճուղուրյան Ա. 222

Մ

Մազմանյան Մ. 145, 150, 154, 156, 158, 159, 161, 172, 173, 175, 188, 259, 262, 267, 269
Մալխասյան Ա. 30

Մալխասյան Կ. 315
Մալխասյան Ս. 274
Մալխասյան Վ. 245
Մալոզեմով Ի. 147
Մախաթյան Լ. 205
Մակարյան Հ. 14
Մահտեսյան Յ. 15
Մազաքյան Հ. 205
Մամիկոնյան Ն. 333
Մամիչանյան Ա. 188, 272
Մանանդյան Հ. 8
Մանասարյան Ս. 148
Մանասյան Ս. 273
Մանվելյան Մ. 178, 234
Մանուկյան Ս. 164, 165, 170
Մանուկյան Փ. 154, 155, 157, 158, 160, 166, 170, 175
Մանուչարյան Լ. 148, 187
Մանուչարյան Ն. 171
Մառ Ն. 8
Մաահինյան Կ. 333
Մաանիչյան Ս. 334
Մարգարյան Հ. 157, 171, 175, 187, 188, 189, 259, 267, 268, 269, 270, 271, 272
Մարգարյան Պ. 245
Մարգարյան Ս. 199
Մարգարով Ա. 290
Մարտիկյան Ս. 333
Մարտիրոսյան Կ. 193
Մարտիրոսյան Ս. 222
Մարուքյան Տ. 164, 168, 170, 262
Մեդնիկյան Գ. 108
Մելիք-Ադամյան Ա. 108, 244
Մելիք-Հայկազյան Ի. 174
Մելիք-Հայկազյան Մ. 199
Մելիք-Մարտիրոսյան Ա. 171, 188
Մելիքյան Ա. 12, 13, 210, 215, 259, 260, 273
Մելիքյան Գ. 199
Մելիքջանյան Ա. 199
Մելիքսեթյան Գ. 213
Մելիքսեթյան Վ. 46
Մելքոնյան Ա. 140
Մելքումյան Ս. 99, 100, 192
Մեհրաբյան Ա. 245
Մեհրաբյան Գ. 157, 166
Մեննուա 19
Միդոյան Ա. 245
Մինասյան Ա. 156, 161, 170
Միրաքյան Մ. 30
Միրզա-Ավագյան Ա. 244
Միրզոյան Ն. 205
Միրզոյան Ս. 245
Միրիջանյան Ա. 164
Միքայելյան Ա. 244, 245
Միքայելյան Մ. 180, 272
Միքայելյան Ս. 140
Մխիթարյան Լ. 157
Մխոյան Ա. 335
Մկրտչյան Հ. 204
Մկրտչյան Մ. 211
Մնացականյան Տ. 108
Մնջոյան Ա. 245
Մոկացյան Մ. 290
Մովսիսյան Ա. 222
Մովսիսյան Կ. 14
Մովսիսյան Ռ. 29
Մովսիսյան Ռոլանդ 140
Մովսիսյան Ս. 222
Մոավյան Ա. 30, 297
Մուշեղյան Գ. 171, 183, 216
Մուսայելյան Ս. 35
Մուրադյան Բ. 61
Մուրզա Գ. 150, 154, 165, 175, 270

Յ

Յարալով Յու. 12
Յարոշենկո Գ. 205

Յարոշևնկո Պ. 205
Յոլյան Ռ. 244
Յուզբաշյան Կ. 156
Յուզբաշյան Ն. 242

Ն

Նալբանդյան Ա. 335
Նալբանդյան Հ. 213
Նավասարդյան Ա. 183, 184
Նեմչինովա Ն. 161
Ներսիսյան Ա. 15
Ներսիսյան Հ. 210
Ներսիսյան Հրայլյա 234
Նորյան Վ. 14

Շ

Շախկյան Գ. 14
Շախուլյան Մ. 222
Շահազիզ Երվանդ 9, 18, 20
Շահգելդյան Ա. 333
Շահինյան Ա. 222
Շահինյան Հ. 222
Շահնազարյան Հ. 199
Շահնազարյան Ս. 199, 264
Շահսուվարյան Ա. 333
Շահվերդովա Ս. 222
Շահումյան Ստ. 25, 28, 29, 30
Շարիմանյան Ս. 244
Շաթարյան Ն. 162, 164, 166
Շոպեն Ի. 22
Շչերբատով 145
Շուստով 24, 25, 29

Ո

Ոսկանյան Ա. 234
Ոսկերչյան Պ. 52

Չ

Չախալյան Յ. 150, 262
Չախալյան Վ. 246
Չարենց Ե. 259
Չերքեզյան Լ. 163, 165
Չիլյան Վ. 176
Չիսլյան Գ. 154, 171, 250, 269
Չիֆչիկյան Գ. 290
Չոլախյան Գ. 333
Չուբարյան Տ. 206

Պ

Պապիկյան Վ. 309
Պապյան Է. 150, 164, 166
Պապովյան Գ. 246
Պառկևիչ 22
Պասոյան Գ. 290
Պարոնյան Հ. 315
Պարոնյան Ռ. 244
Պետիկյան Տ. 335
Պետրոսյան Ա. 140
Պետրոսյան Աստղիկ 140
Պետրոսյան Հ. 164
Պետրոսյան Հր. 211
Պետրոսյան Մ. 174
Պետրոսյան Ս. 334
Պետրոսյան Սուրեն 140
Պետրոսյան Ք. 244
Պետրոսյան Քր. 14
Պիվազյան Ա. 246
Պիոտրովսկի Բ. 8
Պողոսյան Կ. 210
Պողոսյան Հ. 163, 165
Պողոսյան Մ. 274
Պողոսյան Մայիս 14
Պողոսյան Ս. 14
Պոսոխին Մ. 170

Ջ

Ջաղինյան Ն. 174
Ջանան Մ. 234
Ջանջուղովա Ռ. 108

Ջամիթոլաղյաններ 26

Ռ

Ռաշմաջյան Ս. 171
Ռապոպորտ Գ. 149
Ռոստոմբեկյան Խ. 176

Ս

Սագինյան Ա. 171
Սադոյան Վ. 216
Սահականուշյան 34
Սահակյան Ա. 264
Սահակյան Գ. 334
Սահակյան Մ. 177
Սահակյան Ռ. 264
Սահակյան Ս. 222
Սահրադյան Ա. 312, 348
Սաղումյան Մ. 14
Սամարցյան Ռ. 188
Սայադյան Բ. 245
Սանթրոսյան Մ. 222
Սարասյան Էդ. 149, 185
Սարաջև 29
Սարգսյան Ա. 157
Սարգսյան Բ. 183
Սարգսյան Գ. 8
Սարգսյան Խոսրով 140
Սարգսյան Ռ. 171
Սարգսյան Օ. 14
Սարիբեկյան Հ. 140
Սարյան Մ. 210
Սարվադյան Պ. 176
Սարուխանյան Ռ. 157, 166
Սարուխանյան Վ. 245
Սաֆարյան Է. 183
Սաֆարյան Ս. 171, 187, 188, 189, 259, 267, 268, 271
Սաֆյան Պ. 14
Սաֆրաստյան Մ. 166
Սեդրակյան Մ. 140
Սեկոյան Վ. 333
Սևակ Գ. 222
Սեֆիլյան Վ. 199
Սիմոնյան Ա. 10, 11, 20, 131, 148, 244
Սիմոնյան Ստ. 338
Սինանյան Հ. 246
Սլովինսկի Ն. 273
Սմբատյան Հ. 210
Սոկոլովսկի Գ. 30
Սողոմոնյան Ս. 307
Սպենդիարյան Ալ. 259
Սպորաչիկյան Ա. 205, 211
Սվետով Ֆ. 199
Ստամբոլցյան Ռ. 244
Ստեփանյան Ն. 315
Տարելնիկով Ի. 149
Տուքիասյան Ա. 290

Վ

Վաֆինյան Ա. 176
Վաֆինյան Խ. 164, 335
Վազարշյան Վ. 234
Վարդանյան Ա. 154
Վարդանյան Ե. 333
Վարդանյան Զ. 335
Վարդանյան Ն. 290
Վարդանյան Ս. 333, 334
Վարդումյան Շ. 335
Վիրաբյան Վ. 309

Տ

Տարագրոս 171
Տեր-Ազարև Հ. 201
Տեր-Ակոպովա Ի. 222
Տեր-Ավագյան Վ. 188
Տեր-Ավետիսյան Ա. 176
Տեր-Ավետիսյան Ս. 8
Տեր-Ավետիքյան Ա. 188, 268
Տեր-Ավետիքով 26, 29, 51
Տեր-Ավետիքով եր. 25
Տեր-Գաբրիելյան Ս. 297, 332
Տեր-Գաբրիելյաններ 26, 30

Տեր-Դրիգորյան Է. 27
Տեր-Դանիելյան Ա. 171
Տեր-Կարապետյան Ա. 188
Տեր-Հովսեփյան Լ. 30
Տեր-Սարգսյան 25
Տեր-Օհանյան Մ. 191
Տիգրանյան Է. 188, 271, 272
Տրոիցկայա Ե. 82

Փ

Փահլևանյան Ա. 274
Փահլևանյան Գ. 333
Փահլևանյան Մ. 274
Փարսադանյան Բ. 241, 242, 245, 246
Փափազյան Վ. 234
Փինաջյան Վ. 273
Փիրումով Բ. 148

Ք

Քաֆանյան Ա. 108, 244
Քալաշյան Ա. 166
Քալաշյան Ս. 210, 272
Քամալյան Ս. 333
Քնչևկ Հ. 244
Քոչար Գ. 155, 172, 173, 174, 175, 188, 189, 259, 267, 268, 269
Քոչարյան Լ. 334
Քուրքչյան Ս. 183, 272

Օ

Օգանեզով Գ. 148
Օհանջանյան Ա. 315
Օրբելի Հ. 8, 230
Օրջոնիկիձե Ս. 334

Ֆ

Ֆանարջյան Բ. 244
Ֆեոդորովա Ա. 32
Ֆյոդորով Ա. 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Արևելյան Հայաստանի բաղաքները նախասովետական տարիներին . 18

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Արդյունաբերության զարգացումը և բաղաքների առաջացումը սովետական Հայաստանում 41

1. Ինդուստրացումը որպես հանրապետության բաղաքների առաջացման ու զարգացման նախադրյալ 41

2. Բազմաճյուղ, տեխնիկապես հագեցված արդյունաբերության ստեղծումը հանրապետությունում 59

3. Հին բաղաքների խոշորացումը և նոր բաղաքների առաջացումն ու զարգացումը 78

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հանրապետության բաղաքային բնակչության աճն ու գրաղվածությունը 124

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Բաղաքաշինությունը Սովետական Հայաստանում 145

1. Հանրապետության բաղաքների հատակագծումն ու նախագծային ինստիտուտները 145

2. Շինանյութերի արդյունաբերությունն ու շինարարական ինդուստրիան 190

3. Հանրապետության բաղաքների կանաչապատումն ու ջրային մակերեսների ստեղծումը 202

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հանրապետության բաղաքների կուլտուրան, գիտությունը, առողջապահությունն ու բնակչության նյութական բարեկեցության աճը 219

1. Կուլտուրական կյանքի վերելքը 219

2. Առողջապահությունը 238

3. Բնակչության նյութական բարեկեցության աճը . . . 246

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Բաղաքային տնտեսության ստեղծումն ու աճը հանրապետությունում 256

1. Բնակելի և հասարակական շենքեր 256

2. Հանրապետության բաղաքների կոմունալ տնտեսությունը 274

3. Բնակչության կենցաղային սպասարկումը 291
4. Տրանսպորտի տարբեր տեսակների առնչումը և ճանապարհաշինարարության զարգացումը Հանրապետության բաղաքներում 295
5. Կապի և ռադիո-հեռուստատեսային ցանցի զարգացումը Հանրապետության բաղաքներում 319
6. Աշխատավորների դեպուտատների սովետների դերը բաղաքային տնտեսության զարգացման գործում և բաղաքների մրցությունը 330
7. Հանրապետության բաղաքների զարգացման հեռանկարները 342
Անվանացանկ 350


ԿՈԶՄՈ ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ԿՈԶՄՈՅԱՆ
КОЗМО СЕНЕКЕРИМОВИЧ КОЗМОЯН

Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում 1920—1970

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Նկարիչ Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԴՈՐՄԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչներ Է. Ա. ՍՈՒԽԻՅԱՆ, Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՖ 051185 Պատվեր 725, Հրատ. 4621, Տպաքանակ 2000
Հանձնված է շարվածքի 20/VI 1977 թ.:Ստորագրված է տպագրության. 27/XII 1977 թ.: Տպագրական 22,5 մամուլ, +12, ներդիր, պայման. 20,16 մամուլ, հրատ. 16,65, մամուլ: Թուղթ № 1, 84×108 1/32 Գինը 2 ռ. 25 կոպ.:
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Арм. ССР, Ереван, Барекамутян 24 г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան, Բարեկամության 24
Типография Издательства АН Арм. ССР, Ереван, Барекамутян, 24



II
Ա60043

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220060043